

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մարինա Գալստյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՅՍԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԻՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՅՍԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2026

ՀՏԴ 316:323(479.25)
ԳՄԴ 60.5+66.3(5Հ)
Գ 206

*Հրատարակության է երաշխավորել*
*ԵՊՀ գիտական խորհուրդը:*

**Խմբագիր՝**

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Վ. Աթանեսյան

**Գրախոսներ՝**

Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Ի. Զասլավսկայա
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Հ. Է. Գևորգյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Կ. Խաչատրյան

Գալստյան Մարինա Կարենի
Գ 206 Հայաստանի երիտասարդները անորոշության և հույսի խաչմերուկում: Մենագրություն / Մ. Կ. Գալստյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2026, 280 էջ:

«Հայաստանի երիտասարդները անորոշության և հույսի խաչմերուկում» մենագրությունը ներկայացնում է ժամանակակից հայ երիտասարդության սոցիալական իրականության բազմակողմանի վերլուծությունը՝ հիմնված քանակական և որակական հետազոտական տվյալների վրա: Աշխատությունում քննարկվում են երիտասարդների կրթական ուղիները, զբաղվածության հնարավորությունները, քաղաքական և քաղաքացիական մասնակցության պրակտիկաները, կենսակերպը, միգրացիոն տրամադրությունները և ապագայի պատկերացումները՝ հետպատերազմյան և արագ փոփոխվող հասարակական պայմաններում: Մենագրությունը բացահայտում է այն հակասական միջավայրը, որտեղ Հայաստանի երիտասարդները միաժամանակ բախվում են անորոշությանը, ռիսկերին և կառուցվածքային սահմանափակումներին, սակայն շարունակում են պահպանել հույսը՝ որպես ապագային միտված դիրքորոշում: Գիրքը նպատակ ունի նպաստելու Հայաստանում երիտասարդության հիմնախնդիրների գիտական ըմբռնմանը և երիտասարդական քաղաքականությունների մշակմանը:

*Մենագրությունը պատրաստվել է «Հայաստանի երիտասարդները հետպատերազմյան Հայաստանում. հետազոտություն և դիսկուրս» նախագծի շրջանակներում, որն իրականացվել է սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Մարինա Գալստյանի ղեկավարությամբ և Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի հետ համագործակցությամբ: Նախագիծը հնարավոր է դարձել Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան աջակցությամբ: Այս աշխատանքում արտահայտված տեսակետները և մոտեցումները պատկանում են միայն հեղինակին և պարտադիր չէ, որ արտացոլեն Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան դիրքորոշումը:*

ՀՏԴ 316:323(479.25)
ԳՄԴ 60.5+66.3(5Հ)

ISBN 978-5-8084-2763-1
https://doi.org/10.46991/YSUPH/9785808427631

© ԵՊՀ հրատ., 2026
© Գալստյան Մ., 2026

*Նվիրում եմ*

*երեխաներիս՝ Արևիկին և Արամին՝ որպես իմ ապագայի հույսեր:*

*Եվ բոլոր նրանց, ովքեր ունեն հույս:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Հեղինակի կողմից ............................................................................ 7
Երախտագիտության խոսք .................................................................. 9
ՆԱԽԱԲԱՆ ........................................................................................ 11

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ..........................................................................16
Գլուխ 1. Երիտասարդները սոցիոլոգիական տեսությունների ներքո .....16
Գլուխ 2. Երիտասարդական ուսումնասիրությունների պատմական ակնարկ ........................................................................................... 37
Գլուխ 3. Հայաստանի երիտասարդների ուսումնասիրման մեթոդաբանական առանձնահատկությունները.................................. 45

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.......................... 50
Գլուխ 4. Երիտասարդների ինքնաընկալման վերաիմաստավորումները................................................................... 50
Գլուխ 5. Երիտասարդների կրթական ուղիները և մասնագիտական ինքնության ձևավորումը................................................................. 64
Գլուխ 6. Երիտասարդները քաղաքացիական և քաղաքական մասնակցության գործընթացներում ................................................... 98
Գլուխ 7. Երիտասարդների կենսակերպը անորոշության պայմաններում ..................................................................................113

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԲԱԶՄԱՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ.......................................................................... 147
Գլուխ 8. Երիտասարդները հետպատերազմյան իրականության մեջ .. 147
Գլուխ 9. Երիտասարդների անկախացման գործընթացի առանձնահատկությունները բազմաճգնաժամի համատեքստում........186
Գլուխ 10. Երիտասարդների ապագայի ուրվագծումը հույսի հայեցակարգի ներքո...........................................................................219

ՎԵՐՋԱԲԱՆ ........................................................................................ 238
SUMMARY ........................................................................................247
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..........................................................................249
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ....................................................................................262
Հետազոտության մեթոդաբանություն ..........................................................262
Հետազոտության տվյալներ ........................................................................ 269

## Հեղինակի կողմից

Գիրքը ներկայացնում է Հայաստանի երիտասարդների կյանքի, փորձառությունների, հնարավորությունների և մարտահրավերների բազմաչափ վերլուծությունը: Նպատակն է ցույց տալ, թե ինչպես են երիտասարդների անձնական փորձառությունները, սոցիալական իրականությունը և հանրային քաղաքականության միջավայրն ու պայմանները փոխազդում միմյանց վրա՝ ձևավորելով ժամանակակից երիտասարդական կյանքի դինամիկան Հայաստանում: Գրքի վերլուծական համատեքստը երիտասարդներին դիտարկում է ոչ թե որպես առանձին սոցիալական խումբ, այլ որպես բարդ համակարգերի ակտիվ դերակատարներ, որոնց միջոցով հանրային կյանքի մի շարք ոլորտներ արտահայտվում կամ վերաիմաստավորվում են:

Հայաստանի երիտասարդները սոցիալական, տնտեսական և մշակութային զարգացման ոլորտներում ունեն բազմազան փորձառություններ: Անհրաժեշտ է նրանց փորձառությունները և ընկալումները ներգրավել երիտասարդական ուսումնասիրությունների իրականացման, երիտասարդական քաղաքականությունների մշակման, ծրագրերի ձևավորման և հանրային քննարկումների բոլոր մակարդակներում: Այս աշխատանքը հենց այդ նպատակի մասն է՝ առաջարկելով գիտական փաստերի վրա հիմնված պատկերացումներ ու եզրահանգումներ, որոնք կարող են օգտակար լինել երիտասարդական ուսումնասիրությունների, քաղաքականությունների մշակման, ծրագրային միջամտությունների և հանրային քննարկումների համատեքստում:

Ցանկացած հետազոտություն միաժամանակ և՛ ճանաչողական հնարավորություն է տալիս, և՛ սահմանափակված է տվյալ ժամանակային, տարածական և մեթոդաբանական պայմաններով: Այս առումով ներկայացված վերլուծությունը միաժամանակ արտացոլում է գիտական ճշգրտություն և պատասխանատվություն, միևնույն ժամանակ բաց է հետագա ուսումնասիրությունների, նոր մեթոդաբանական մոտեցումների և խորքային վերլուծությունների համար: Աշխատանքը չի հավակնում ապահովելու վերջնական և անփոփոխ եզրակացություններ: Ընդհակառակը՝ այն դիտարկում է երիտասարդների փորձառությունները որպես

շարժուն և բազմաշերտ սոցիալական դինամիկա, որը պահանջում է շարունակական ուսումնասիրություն, հետազոտական զգայունություն և մեթոդաբանական ճկունություն: Հետագայում նոր իրականությունը, սոցիալ-տնտեսական փոփոխությունները և հասարակական հարաբերությունների վերաձևակերպումները կարող են ընդլայնել կամ փոխակերպել այստեղ առաջարկվող եզրահանգումները: Գիրքը կարող է օգնել խորացնելու գիտական դաշտում երիտասարդության մասին վերլուծությունները, բացահայտելու հետպատերազմյան Հայաստանի սոցիալական գործընթացների այն շերտերը, որոնք հաճախ անտեսված են, և նպաստելու երիտասարդների փորձառությունների տեսական իմաստավորմանը, տվյալահեն քաղաքականությունների, կրթական միջամտությունների ու հանրային ռազմավարությունների մշակմանը: Գիրքը կարող է նպաստել Հայաստանի երիտասարդության մասին գիտելիքի հարստացմանը, նրանց խնդիրների վերաբերյալ հանրային դիսկուրսի ընդլայնմանը և ապագա քաղաքականությունների ավելի հիմնավորված, տվյալահեն ձևավորմանը:

Այս աշխատանքը հրավիրում է նոր, ավելի քննադատական ու բազմաչափ հայացք ուղղելու դեպի Հայաստանի երիտասարդությանը՝ որպես ոչ միայն հայ հասարակության ապագայի խորհրդանիշի, այլև ներկայում գործող և ներկան ձևավորող ակտիվ սուբյեկտի:

*Մայիս, 2026 թ.*

**Երախտագիտության խոսք**

Աշխատանքը հնարավոր է դարձել բազմաթիվ մարդկանց և կառույցների աջակցության շնորհիվ: Գնահատելի է բոլոր այն անհատների և կառույցների ներդրումը, ովքեր տարբեր փուլերում աջակցել են այս աշխատանքի իրականացմանը, խրախուսել են գիտական որոնումը և նպաստել երիտասարդների ձայնի լսելիությանը:

Խորին երախտագիտությունն եմ հայտնում հետազոտությանը մասնակցած յուրաքանչյուր երիտասարդի՝ տրամադրած ժամանակի և վստահության համար: Երիտասարդների անձնական փորձառությունները, մտորումները և տեսակետները առանցքային նշանակություն են ունեցել աշխատանքի բովանդակային հարստացման և վերլուծական խորության ապահովման համար: Առանց նրանց պատրաստակամության և ներգրավվածության այս աշխատանքը չէր կարող ունենալ իր ներկայիս արժեքն ու նշանակությունը:

Իմ երախտագիտությունն եմ հայտնում ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետին՝ ի դեմս ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Արթուր Մկրտիչյանի՝ իմ մասնագիտական ինքնության ձևավորման համար: Շնորհակալ եմ գրքի գիտական խմբագիր պրոֆեսոր Արթուր Աթանեսյանին, իմ գիտական ղեկավար պրոֆեսոր Մարիա Զասլավսկայային, Հասմիկ Գևորգյանին և Արտակ Խաչատրյանին՝ գրախոսման և կարևոր խորքային գիտական քննարկումների և դիտարկումների համար:

Շնորհակալություն եմ հայտնում երիտասարդ հետազոտողների թիմի յուրաքանչյուր անդամի կատարած աշխատանքի համար՝ Անժելա Գրիգորյանին, Աննա Հարությունյանին, Արևիկ Համբարձումյանին, Գայանե Եղոյանին, Գառնիկ Սահակյանին, Գոհար Գեղամյանին, Մարգարիտա Ոսկանյանին և Միլենա Սարգսյանին: Շնորհակալություն եմ հայտնում նաև աջակից թիմի յուրաքանչյուր անդամի ջանքերի և աջակցության համար՝ Աստղիկ Հախինյանին, Արարատ Ալիխանյանին, Գոհարիկ Գրիգորյանին, Լուսինե Դիլսիզյանին, Մանե Արջունցին, Մանուշակ Մնեյանին, Մեսրոպ Վարդանյանին, Նանա Հարությունյանին և Սիմա Օհանյանին:

Շնորհակալություն եմ հայտնում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ակադեմիական համայնքի ներկայացուցիչների, ինչպես նաև միջազգային, տեղական և պետական կառույցների գործընկերներին՝ համագործակցության, կառուցողական երկխոսության և փորձագիտական ներդրման համար:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Արման Մելքոնյանին աշխատանքի իրականացման ողջ ընթացքում կարևոր մասնագիտական ներդրման և աջակցության համար:

Շնորհակալություն եմ հայտնում Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեանը համագործակցության և աջակցության համար:

## ՆԱԽԱԲԱՆ

Երիտասարդության սոցիոլոգիայում «երիտասարդը» սահմանվում է որպես կոնկրետ հասարակական պայմաններում ձևավորված հասկացություն[1]: Երիտասարդների փորձառությունները կրում են պատմական ժամանակի, սոցիալական ինստիտուտների և կառուցվածքային անհավասարությունների ազդեցությունը[2]: Երիտասարդությունը ոչ միայն տարիքային խումբ է, այլև անցումայնությամբ, անորոշությամբ և ինստիտուցիոնալ կախվածությամբ բնութագրվող կյանքի փուլ, որի ընթացքում անհատը բախվում է կառուցվածքային սահմանափակումների և անհատական ընտրությունների փոխազդեցությանը[3]: Ճգնաժամային պայմաններում երիտասարդները կրկնակի խոցելի են դառնում՝ միաժամանակ չունենալով լիարժեք անկախություն և ստիպված լինելով կրել հասարակական ճգնաժամերի անմիջական հետևանքները: Անվտանգության, կրթության շարունակականության խաթարումը, զբաղվածության սահմանափակ հնարավորությունները, բնակարանային խնդիրները, ինչպես նաև քաղաքական և քաղաքացիական անորոշությունները խորացնում են այն, ինչ երիտասարդության սոցիոլոգիայում բնութագրվում է որպես «երկարաձգված անցում» դեպի անկախություն[4]:

Պատերազմը և հետպատերազմյան հասարակությունները սոցիոլոգիայի դասական և արդի հետազոտական օրակարգում դիտարկվում են որպես սոցիալական փոփոխության, ճգնաժամային վերակազմակերպումների և սոցիալական կարգի վերաձևավորման առանցքային համատեքստեր: Լայնածավալ զինված հակամարտությունները ոչ միայն խաթարում են հասարակական ինստիտուտների բնականոն գործառույթը, այլև երկարաժամկետ ազդեցություն են ունենում սոցիալական հարաբե-

---

[1] Տե՛ս Bourdieu P. Youth is just a word //Sociology in question. T. 1993. – №. 1978:
[2] Տե՛ս Bourdieu, նշվ. աշխ.; Furlong A., Cartmel F. Young people and social change: Individualization and risk in late modernity. – Open university press, 1997:
[3] Տե՛ս Elder Jr G. H. Time, human agency, and social change: Perspectives on the life course //Social psychology quarterly. – 1994:
[4] Տե՛ս Arnett J. J. Young People's Conceptions of the Transition to Adulthood. Youth & Society, 29(1), 3–23. 1997; Furlong A. Youth Studies: An Introduction. USA: Routledge, 2013:

րությունների, արժեքային համակարգերի և կենսափուլային անցումների վրա[5]: Հետպատերազմյան հասարակությունը անգամ ռազմական գործո ղությունների դադարից հետո շարունակում է ապրել անկայունության, անվտանգության մշտական սպառնալիքի և նոր պատերազմի հնարավո րության պայմաններում, ինչն այն որակապես տարբերակում է խաղաղու թյան մեջ գտնվող հասարակություններից::

Հայաստանի հետպատերազմյան իրականությունը ձևավորվել է բազմաշերտ և փոխկապակցված ճգնաժամերի համադրման պայմաննե- րում: 2020 թվականի COVID-19 համավարակը և նույն տարվա Արցախ- յան 44-օրյա պատերազմը խորապես խաթարեցին սոցիալական կյանքի առօրյա ռիթմը՝ ձևավորելով անորոշությունների, կորուստների և դրանց արձագանքելու նոր դաշտ: Այս գործընթացները էականորեն սրվեցին 2023 թվականին տեղի ունեցած ռազմական իրադարձությունների արդ- յունքում, երբ Արցախից բռնի տեղահանվեց ամբողջ բնիկ հայ բնակչու- թյունը՝ ավելի քան 120,000 մարդ: Արդյունքում Հայաստանում ձևավոր- վեց սոցիալական նոր իրականություն, որը բնութագրվում է սոցիալա- կան լարվածության աճով, սոցիալական ռեսուրսների վերաբաշխմամբ և հասարակական համախմբվածության վերաիմաստավորման անհրա- ժեշտությամբ:

Մենագրությունը նպատակ ունի համակողմանիորեն ուսումնասիրե- լու Հայաստանի երիտասարդների կյանքի դինամիկան՝ կյանքի փուլերը, հետպատերազմյան համատեքստում երիտասարդների անկախության ձեռք բերման փորձառությունները և ապագայի տեսլականները: Աշխա- տության վերլուծական հիմքը երիտասարդության սոցիոլոգիայի տեսա- կան մոտեցումների և էմպիրիկ տվյալների համադրումն է՝ ներառելով երիտասարդների ժողովրդագրական, կրթական, տնտեսական, քաղա- քացիական, առողջապահական և մշակութային բնութագրեր: Առանձին ուշադրություն է դարձվում պատերազմի, ներառյալ տեղահանության ազդեցությանը երիտասարդների փորձառությունների վրա: Աշխատու- թյան կենտրոնական հարցադրումն այն է, թե ինչպես են պատերազմը և

---

[5] Տե՛ս Beck U. Risk society: towards a new modernity, London, Sage., 1992; Giddens A. Modernity and self-identity, Cambridge, Polity Press, 1991:

դրանից բխող սոցիալական գործընթացները վերաձևավորում երիտասարդների կյանքի ընթացքը, փոփոխությունների օրինաչափությունները, անկախության ձեռքբերման ուղիները և ապագայի տեսլականները:

Մենագրությունում երիտասարդությունը դիտարկվում է ոչ թե որպես համասեռ տարիքային խումբ, այլ որպես ներքին բազմազանությամբ, սոցիալական անհավասարություններով և հարմարման տարբեր ռազմավարություններով բնութագրվող կյանքի փուլ: Աշխատանքը հենվում է երեք փոխկապակցված դրույթների վրա:

I. Անհատների կենսափուլային անցումները ձևավորվում են ոչ միայն տարիքային տրամաբանությամբ, այլև պատմական իրադարձություններով և սոցիալական ինստիտուտների գործառմամբ[6]: Պատերազմը, որպես «կենսագրական խափանում» (biographical disruption), կարող է արմատապես վերաձևավորել անհատի, հատկապես երիտասարդի կյանքի ընթացքը:
II. Ռիսկի հասարակության և արդիականության տեսությունների համաձայն՝ ժամանակակից հասարակություններում անորոշությունը նորմալացվում է, սոցիալական երաշխիքները թուլանում են, և կենսագրությունները անհատականացվում են[7]: Հետպատերազմյան պայմաններում այս գործընթացները դառնում են կառուցվածքային:
III. Երիտասարդները մանկության կախվածությունից դեպի սոցիալական, տնտեսական և քաղաքացիական անկախության ձեռք բերման անցումային փուլում գտնվող խումբ են, ընդ որում, երիտասարդների անկախությունը դիտարկվում է ոչ թե որպես միաչափ և ավարտուն վիճակ, այլ որպես բազմաչափ և շարունակական գործընթաց[8]: Երիտասարդների կյանքի փուլերի և անկախացման գործընթացի սոցիոլոգիական իմաստավորումը պահանջում է կենտրոնացում երիտասարդների ինքնության ձևավորման և կենսափուլային անցումների՝ կրթության, զբաղվածության,

[6] Տե՛ս Elder, նշվ. աշխ.:
[7] Տե՛ս Beck, Giddens, նշվ. աշխ.:
[8] Տե՛ս Furlong, նշվ. աշխ.:

ինքնուրույնության (1), քաղաքական և քաղաքացիական մասնակցության (2) և ճգնաժամային պայմաններում երիտասարդների անկախացման հիմնական ցուցանիշների վրա (3):

**Անորոշությունը**՝ որպես արդի հասարակություններում նորմալացված, և **հույսը**՝ որպես ապագային միտված կողմնորոշում, այն կենտրոնական համատեքստն են, որ ձևավորում են Հայաստանի երիտասարդների կյանքի դինամիկան: Գրքի կառուցվածքի հիմքում հենց այս տրամաբանությունն է՝ միտված ցույց տալու, թե ինչպես են ներկայի անորոշությունն ու ապագայի հանդեպ հույսը համատեղ ձևավորում երիտասարդների անկախացման գործընթացները: Այս տեսական շրջանակի համադրումը թույլ է տալիս վերլուծել Հայաստանի երիտասարդներին որպես սոցիալական բազմազանությամբ բնութագրվող խումբ՝ հարմարման տարբեր ռազմավարություններով, խոցելիության մակարդակներով և ապագայի տեսլականներով: Երիտասարդների տիպաբանության մշակումը հիմնված է այն ենթադրության վրա, որ հետպատերազմյան հասարակություններում սա հատկապես կարևոր է՝ երիտասարդների փորձառությունների հավասարեցումից, նույնացումից խուսափելու համար:

Գիրքը փորձ է տեսականացնելու երիտասարդների հետպատերազմյան փորձառությունները Հայաստանի օրինակով: Երիտասարդների անկախության չափման առաջարկվող մոտեցումը՝ երիտասարդների անկախության համաթիվը, երիտասարդների տիպաբանությունը կարող են կիրառվել հետագա գիտական հետազոտություններում, հետպատերազմյան այլ հասարակությունների երիտասարդների համեմատական ուսումնասիրություններում:

Սույն աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել բարձրագույն կրթության և հետբուհական ծրագրերում՝ որպես ուսումնական և մեթոդաբանական նյութ երիտասարդության սոցիոլոգիայի, մարդաբանության, ժողովրդագրության և հանրային քաղաքականության ոլորտներում: Միաժամանակ մենագրությունն ուղղված է հանրային քաղաքականություն մշակողներին և գործնական դերակատարներին՝ առաջարկելով երիտասարդներին ուղղված պետական քաղաքականությունների և միջամտությունների համակարգված առաջարկներ՝ հաշվի առնելով հետպատերազմյան պայմաններում ձևավորված խոցելի խմբերն ու ոլորտնե-

րը: Մենագրությունը նախատեսված է հետազոտողների, գիտնականների, դասախոսների, քաղաքականություն մշակողների և այն մասնագետների համար, ովքեր աշխատում են երիտասարդների, այդ թվում՝ պատերազմի և տեղահանության փորձառություն ունեցող երիտասարդների հետ՝ նպատակ ունենալով խթանելու նրանց սոցիալական հարմարեցումը, անկախության ձեռքբերումը և հասարակական ներգրավվածությունը հետպատերազմյան Հայաստանում:

# ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

## Գլուխ 1. Երիտասարդները սոցիոլոգիական տեսությունների ներքո

*«Մեծանալը երբեմն նկարագրվում է որպես կոլեկտիվ փորձ, որը կիսում են երիտասարդներն ամբողջ աշխարհում»[9]:*

Երիտասարդության վերաբերյալ ուսումնասիրությունները (youth studies)[10] որպես ոլորտ առավելապես զարգացել են 18-րդ դարից սկսած, իսկ երիտասարդության սոցիոլոգիայի՝ որպես սոցիոլոգիական գիտելիքի անկախ ճյուղի առանձնացումը տեղի է ունեցել ավելի ուշ՝ 20-րդ դարի 60-ական թվականներին, և փոխկապակցված է Երկրորդ աշխարհամարտի հետևանքների բացահայտման անհրաժեշտության, «երիտասարդական հեղափոխությունների» ժամանակաշրջանի հետ: Հետպատերազմյան իրավիճակը և դրա ուսումնասիրման սոցիալական հրամայականը իրական նախադրյալ ստեղծեց երիտասարդության ուսումնասիրության զարգացման և որպես անկախ գիտական ճյուղ առանձնանալու համար: Երիտասարդության սոցիոլոգիայի առանձնացումը նպաստեց երիտասարդության խնդիրների, միջսերնդային հակամարտությունների և սոցիալական փոփոխություններում երիտասարդության դերի հանդեպ հետազոտողների ուշադրության մեծացմանը: Այս փուլում հայտնի դարձան երիտասարդության վերաբերյալ մի շարք հեղինակների առանցքային գաղափարներ, մասնավորապես, Կ. Մանհայմի՝ նոր սերունդնե-

---

[9] Pollock G. Individualization and the transition from youth to adulthood. Young: Nordic Journal of Youth Research, 5, 1997, 55-68.

[10] Հայալեզու գիտական գրականության մեջ կիրառվում են «երիտասարդական ուսումնասիրություններ», «երիտասարդության վերաբերյալ ուսումնասիրություններ», «երիտասարդության ուսումնասիրություններ», սակայն առաջին տարբերակը ավելի համահունչ է միջազգային Youth Studies ակադեմիական դաշտի բովանդակությանը և սահմանվում է որպես երիտասարդության վերաբերյալ ուսումնասիրություններ:

րի՝ որպես սոցիալական առաջընթացի աղբյուրի մասին[11], Մ. Միդի՝ պատմական զարգացման տարբեր փուլերում սերունդների մշակութային շփման տեսակների և երիտասարդական մշակույթի վերաբերյալ գաղափարները[12]: Երիտասարդական ուսումնասիրությունների ձևավորման վրա էական ազդեցություն ունեցան նաև Հ. Մարկուզեի՝ երիտասարդական շարժումների վերաբերյալ վերլուծությունները[13]: Սկսած 1990-ական թվականներից՝ երիտասարդների սոցիոլոգիական իմաստավորման զարգացման հարցում կարևոր և նշանակալի ազդեցություն են ունեցել Ու. Բեկի՝ ռիսկի հասարակության[14] և Է. Գիդենսի՝ արդիականության վերաբերյալ տեսական մոտեցումները[15]:

Գրքի համար հիմք հանդիսացող տեսական դիրքորոշման ներկայացումը և հիմնավորումը ենթադրում է նաև անդրադառնալ այն բոլոր տեսական մոտեցումներին, որոնք ազդել և ձևավորել են երիտասարդական ուսումնասիրությունների գիտակարգի տեսամեթոդաբանական հիմքերը: Այդ մոտեցումներն են՝ հոգեբանական տեսությունները, վարքաբանական մոտեցումները, սոցիոլոգիական տեսությունները և այլն:

Հոգեբանական տեսությունները, այդ թվում՝ անձի զարգացման հոգեբանական ուղղությունները՝ Ֆրոյդի հոգեվերլուծությունը[16], Ադլերի, Յունգի, Էրիքսոնի[17] հոգեդինամիկ մոտեցումները, կենտրոնանալով անձի զարգացման գործընթացի վրա, ուսումնասիրում էին վարքը կառավարող գիտակից և անգիտակից մղումները, ձևավորելով գիտական տեսական ամուր հիմքեր դեռահասների և երիտասարդության ուսումնասիրության համար[18]: Վարքաբանական ուղղությունը փոխեց հոգեբանու-

[11] Տե՛ս Mannheim K. The problem of generations. In Essays on the sociology of knowledge. London: Routledge, 1952, 276-322 p.:

[12] Տե՛ս Mead M. Culture and Commitment, a Study of the Generation Gap, Garden City, N.Y.: Published for the American Museum of Natural History, Natural History Press, 1970:

[13] Տե՛ս Маркузе Г., Ванейгем Р. Молодежный бунт. Источник свободы или новое варварство, Родина, 2023:

[14] Տե՛ս Beck U. Risk Society: Towards a New Modernity, London: Sage, 1992:

[15] Տե՛ս Giddens A. Modernity and Self Identity, Oxford: Polity, 1991:

[16] Տե՛ս Doing Research with Children, A practical Guide, Greig A., J. Taylor, T. Mackay, 3rd edition, 2013, էջ 29:

[17] Տե՛ս Эриксон Э. Молодой Лютер. М. 1996:

[18] Տե՛ս Bowlby J. Child Care and the Growth of Love. Harmondsworth: Pengiun, 1953/1965:

թյան առարկան՝ մտքից դեպի վարք[19]: Այն ուշադրությունը սևեռեց վարքը պայմանավորող միջավայրային՝ արտաքին, այլ ոչ մտավոր՝ ներքին գործոնների վրա: Հոգեբանության մեջ վարքաբանական մոտեցումը զարգացրեց Սքիները, ով առաջ քաշեց վարքը կարգավորող մի շարք դրույթներ, ըստ որոնց՝ մարդը հակված է դրսևորել այն վարքը, որը խրախուսվել է և հակված չէ դրսևորել այն վարքը, որը պատժի է արժանացել[20]: Հետագայում Ալբերտ Բանդուրան, զարգացնելով իր սոցիալական ուսուցման տեսությունը, վիճարկեց վարքաբանական տեսության այս պարզ սխեման: Ըստ նրա՝ երեխան սովորում է ոչ թե ստանալով խրախուսանք կամ խուսափելով պատժից, այլ սովորում է դիտարկելով: Իր փորձերում Բանդուրան ցույց տվեց, որ պարզ դիտարկումը և ընդօրինակումը կարող են բավարար լինել սովորելու համար: Ծնողները և այլք կարող են հանդես գալ որպես վարքի մոդել, ինչը հեղինակը անվանեց դիտողական ուսուցում և մոդելավորում, ինչի համար կարևոր նշանակություն ունեն ուշադրությունը, հիշողությունը և տեղեկատվության մշակումը[21]: Ի պատասխան հոգեվերլուծական և վարքաբանական մոտեցումների՝ 1950-ական թթ. հոգեբանության մեջ զարգացավ մարդասիրական մոտեցումը, որը դեմ էր առանձին բաղադրիչներով մարդու ուսումնասիրմանը: Ջ. Բուգենթալը սահմանեց մարդասիրական մոտեցման հինգ հիմնական դրույթները, որոնք են՝

- Մարդը չի կարող բաժանվել բաղադրիչների,
- Մարդն իր մեջ ունի յուրահատուկ մարդկային ենթատեքստ,
- Մարդկային գիտակցությունը ներառում է իր մասին իմացությունը այլ մարդկանց համատեքստում,
- Մարդն ունի ընտրություններ և պատասխանատվություններ,
- Մարդը ինտենցիոնալ է և փնտրում է իմաստ, արժեք և ստեղծարարություն[22]:

---

[19] Տե՛ս Davey, G.C.L., Albery, I.P., Chandler, C., Field, A. P., Jones, D., Messer, D., Moore, S., and Stirling, C., (eds) (2004) Complete Psychology. London: Hodder and Stoughton:
[20] Տե՛ս Skinner B.F. The Behaviour of Organisms. New York: D. Appledon-Century, 1938:
[21] Տե՛ս Bandura A. Social Learning Theory. Englewood Cliffs, NJ: Prentice Hall, 1977:
[22] Տե՛ս Bugental J.F.T. The third force in psychology, Journal of Humanistic Psychology, 4 (1), 1964, էջ 19-26:

Մարդասիրական հոգեբանության ականավոր ներկայացուցիչներից Ա. Մասլոուն, որը հայտնի է իր մարդու իրացման հայեցակարգով, մշակել է մարդու իրացման համար կարևոր պահանջմունքների բուրգը ըստ առաջնահերթության: Այս մոտեցման ազդեցությունը նշանակալի է նաև մարդու ուսումնասիրության մեթոդաբանական ուղղությունների վրա: Այս ուղղությունը առաջնահերթությունը տալիս է որակական մեթոդաբանությանը, որը հնարավորություն է ընձեռում հասկանալու մարդուն ամբողջությամբ՝ բացահայտելով նրա վարքի իմաստը և նպատակը[23]:

Ժ. Պիաժեն առանձնացնում է մարդու ճանաչողական զարգացման փուլերը: Նա գտնում է, որ անձի զարգացման ընթացքում զարգանում են նրա ճանաչողական հնարավորությունները: Սակայն, մյուս կողմից, դրանք սահմանափակ են, քանի որ, կախված կոնկրետ տարիքից, մարդու ֆիզիոլոգիական հնարավորությունները սահմանափակ են: Ըստ Պիաժեի՝ երեխան ծնվում է մտավոր սխեմաներով, որոնց միջոցով նա հարմարվում է միջավայրին[24]:

Վիգոտսկու տեսության մեջ կենտրոնական է «զարգացման մերձակա գոտի» հասկացությունը: Նա կարծում էր, որ մեծահասակի կամ իր հասակակցի հետ համատեղ որևէ գործողության, վարժության կատարումը ավելի մեծ ազդեցություն ունի ճանաչողական զարգացման համար, քան դրանց միայնակ ինքնուրույն կատարումը: Զարգացման մերձակա գոտին ուսուցման այն գոտին է, որտեղ հնարավոր է երեխայի կողմից գործողության կատարումը՝ մեծահասակի կամ ուրիշների աջակցությամբ[25]:

Նշանակալի է այս տեսությունների ազդեցությունը հանրակրթության կազմակերպման և բովանդակության մշակման վրա ողջ աշխարհում: Հոգեբանական այս ուղղությունների քննադատությունը և սահմանափակումները՝ կապված միաժամանակ մարդու ներքին և արտաքին աշխարհների ուսումնասիրման դժվարությունների հետ, հիմք դրեցին նոր տեսությունների առաջացման համար: Նորերից կարելի է անդրա-

---

[23] Տե՛ս Doing Research with Children, A practical Guide, Greig A., J. Taylor, T. Mackay, 3rd edition, 2013, էջ 35:
[24] Տե՛ս նույն տեղում, էջ 36:
[25] Տե՛ս նույն տեղում, էջ 38:

դառնալ կապվածության տեսությանը, որը համարվում է նաև երիտասարդական ուսումնասիրությունների համար նշանակալի տեսական հիմքերից մեկը: Կապվածության տեսությունը, որի ներկայացուցիչը Ջ. Բոուլբին է, առաջարկեց հոգեբանական մոդել, որն ի սկզբանե կենտրոնացած էր երեխաների՝ իրենց հիմնական խնամողների հետ հարաբերությունների զարգացման նկարագրության վրա՝ կյանքի սկզբնական շրջանում: Սակայն հետագայում նրա եզրակացություններն ընդհանրացվեցին և այսօր դրանք լայնորեն կիրառվում են մարդկային հարաբերությունների, ներառյալ զույգերի միջև հարաբերությունների վերաբերյալ ուսումնասիրություններում: Իր հետազոտությունների ընթացքում Բոուլբին հայտնաբերում է, որ բոլոր երեխաները առաջնային կապվածություն են զարգացնում իրենց խնամողներից մեկի՝ սովորաբար մոր հետ: Այնուամենայնիվ, դրա բնույթը կարող է շատ տարբեր լինել՝ կախված այն բանից, թե ինչպիսին էին այդ հարաբերությունները խնամողի հետ և կախված այն բանից, թե ինչ տեսակի կապվածություն է ստեղծվել և ինչպես են ընթացել կապվածության փուլերը: Բոուլբիի կապվածության տեսության վերաբերյալ հետազոտությունները ցույց են տվել, որ անծանոթ իրավիճակում գտնվող և ծնողներից բաժանված երեխաները ծնողների հետ վերամիավորվելիս սովորաբար արձագանքում են վարքի հետևյալ երեք ձևերից մեկով.

- ապահով կապվածություն,
- անհանգիստ դիմացկուն կապվածություն,
- խուսափող կապվածություն[26]:

Հետագայում հետազոտողները ավելացրեցին չորրորդ ձևը՝ անկազմակերպ-ապակողմնորոշված կապվածություն:

Սոցիոլոգիան ուսումնասիրում է, թե ինչպես են տարբեր հասարակություններ սահմանում մանկությունը, դեռահասությունը, երիտասարդությունը՝ հիմնվելով այն դրույթի վրա, որ այդ սահմանումները ոչ թե օբյեկտիվ իրականության փաստեր են, այլ ունեն սոցիալական պայմա-

---

[26] Տե՛ս Kennedy J. H. and Kennedy C. E. Attachment theory: Implications for school psychology. Psychology in the Schools, 41, 2004, էջ 247-259:

նավորվածություն և սոցիալապես կառուցակցված են[27]: Ըստ ֆրանսիացի սոցիոլոգ և փիլիսոփա **Պիեռ Բուրդյոյի՝** դժվար է սահմանել երիտասարդության հասկացությունը, քանի որ այն ընդգրկում է բազմազան ոլորտներ: Ըստ Բուրդյոյի՝ «երիտասարդությունը պարզապես բառ է», և այն «եղել է զարգացող հայեցակարգ», որը դարերի ընթացքում վերածվել է սոցիալապես կառուցակցվող երևույթի[28]: Հետագայում արդեն հեղափոխությունների, սոցիալական շարժումների խնդիրը արդիականությամբ տեղը զիջեց այլ հիմնախնդիրների՝ երիտասարդ սերնդի կրթություն, աշխատանքի տեղավորում, զբաղվածություն, ինքնության ձևավորում և այլն: Այս նոր հարցերը խթանեցին երիտասարդության սոցիոլոգիայի զարգացման նոր փուլը: Սկսած 1990-ական թթ.՝ երիտասարդների սոցիոլոգիական իմաստավորման զարգացման հարցում կարևոր և նշանակալի ազդեցություն ունեն **Ու. Բեկի՝ ռիսկի հասարակության և Է. Գիդենսի՝ արդիականության վերաբերյալ տեսական մոտեցումները**: Բեկը և Գիդենսը պնդում են, որ ժամանակակից հասարակությունը, որը նկարագրում են Թյոննիսը, Դյուրկհայմը և Վեբերը, սկսում է քանդվել և փոխարինվում է արդիականության նոր փուլով՝ «ուշ արդիականությամբ», որը բնութագրվում է գլոբալացմամբ, ռիսկերով և անհատականացումով: Արդյունաբերական հասարակության ներսում առաջացող ռիսկերը Բեկը և Գիդենսը դիտում էին որպես արդիականությունից ուշ արդիականություն կամ ռիսկի հասարակություն անցման կարևոր գործոն[29]: Բեկը և Գիդենսը պնդում են, որ ռիսկերը ոչ թե ավելանում են, այլ դրանք հարվածում են ամբողջ աշխարհում, և հետևանքները դառնում են ավելի ճակատագրական: Նման գլոբալ ռիսկի ներուժը հնարավոր է դառնում նաև ուշ արդիականության այնպիսի բնութագրիչով պայմանա-

---

[27] Տե՛ս Doing Research with Children, A practical Guide, Greig A., J. Taylor, T. Mackay, 3rd edition, 2013, էջ 51:

[28] Տե՛ս Chisholm L., Kovacheva, S., Merico M. EUROPEAN YOUTH STUDIES Integrating research, policy and practice, Deliverable 7.1 – M.A. EYS Reader, Innsbruck, 2011:

[29] Տե՛ս Beck U. The anthropological chock: Chernobyl and the contours of the risk society. Berkley Journal of Sociology, 32, 1987, էջ 153-165: Տե՛ս Beck U. Risk society: towards a new modernity, London, Sage., 1992: Տե՛ս Giddens A. Consequences of modernity, Cambridge, Polity Press, 1990:

վորված, ինչպիսին «բազմաարդիականությունն»[30] է, երբ բնակչության ոչ բոլոր անդամներն են կիսում միևնույն արժեքներն ու նորմերը. ոմանք կարող են ավելի ավանդական լինել, մինչդեռ մյուսներն ավելի անհատականացված են: Այս զուգահեռ արդիականությունները առանձնացված չեն, այլ ավելի շուտ միահյուսված կամ խճճված են: Ոչ միայն ռիսկերն են գլոբալիզացված ուշ արդիականացման համատեքստում, այլև այն, որ և՛ ժամանակը, և՛ տարածությունը դուրս են բերվում տեղային համատեքստից (Գիդենս)[31]: Սոցիալական հարաբերությունները, տնտեսական գործարքները և տեղեկատվությունը վերակառուցվում են ավելի լայն համատեքստում՝ անցնելով ժամանակային և աշխարհագրական սահմանները. վայրը, «որտեղ դու ապրում ես», շատերի կողմից ավելի քիչ կարևոր է համարվում: Այս ասպեկտը լայնորեն տարածված է երիտասարդության հետազոտության մեջ, որտեղ «մեծանալը երբեմն նկարագրվում է որպես կոլեկտիվ փորձ, որը կիսում են երիտասարդներն ամբողջ աշխարհում»[32]: Այս երկու ուղղությունները՝ մի կողմից վայրը, որտեղ դու ապրում ես, որոշում է քո ամենօրյա կյանքը, մյուս կողմից՝ այդ նույն վայրը հարաբերական է: Երիտասարդական ուսումնասիրությունների համար նման հակասությունը բացում է հետազոտական և վերլուծական հեռանկարներ, որտեղ անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալու այնպիսի հարցերի, որոնցից է երիտասարդների ապահովվածությունը ժամանակակից տեխնոլոգիաներով, որը նրանց հնարավորություն է տալիս գլոբալ աշխարհի մաս կազմելու: Ավելի վաղ և արդի երիտասարդական ուսումնասիրությունները անդրադառնում են մեծ քաղաքներում և գյուղական բնակավայրերում երիտասարդների կենսապայմանների համեմատական ուսումնասիրություններին[33]: Վայրի փոփոխված դերը ուղեկցվում է ուշ արդիականության ընթացքում անհատականացման աճով: Ըստ Բեկի՝ մի տեսակ «կեղծ» անհատականացում

[30] Տե՛ս Therborn G. Entangled Modernities. European Journal of Social Theory, 6, 2003, 293-305:

[31] Տե՛ս Giddens A. Consequences of modernity, Cambridge, Polity Press, 1990:

[32] Pollock G. Individualization and the transition from youth to adulthood. Young: Nordic Journal of Youth Research, 5, 1997, 55-68.

[33] Տե՛ս Pollock, նշվ. աշխ.:

առաջացավ արդյունաբերական հասարակության ժամանակ[34]: Անհատները դիտվում էին որպես ազատ և հավասար, բայց նրանց ազատությունը ձևավորվում էր դասակարգով և սեռով:

Ուշ արդիականության ընթացքում անհատականացման գործընթացն ուժեղանում է բարեկեցության պետության զարգացմամբ և մինչարդիականության կառույցներից և ավանդույթներից կտրվելով: Կոլեկտիվ սոցիալական ձևերից կախված լինելու փոխարեն անհատը կախվածության մեջ է ընկնում, օրինակ, սոցիալական քաղաքականությունից, տնտեսական շուկաներից և նորաձևությունից՝ իր անձնական կենսագրությունը կառուցելու համար[35]: Ամեն ինչ դառնում է արագ փոփոխվող և ընթացիկ նախագիծ, ամեն ինչ կայուն է միայն կոնկրետ ժամանակահատվածում: Գլոբալացված հաղորդակցությունը, հիմնականում զանգվածային լրատվության միջոցներով, անհատին ընձեռում է կյանքի հնարավոր կենսագրությունների և ընտրության լայն հնարավորություն, կամ գոնե նման տպավորություն է ստեղծում[36]:

Երիտասարդների վերաբերյալ սոցիոլոգիական մեկ այլ ուղղություն՝ **քննադատական մոտեցումը,** ևս ունի կարևոր ներդրում երիտասարդների վերաբերյալ սոցիոլոգիական հասկացման ամբողջականացման գործընթացում: Սոցիոլոգիայում առկա քննադատական դպրոցը պնդում է, որ տեսությունը և հետազոտությունը չեն կարող դիտվել արժեքային չեզոքության սկզբունքի համատեքստում: Այս դրույթը բավականին լուրջ քննարկումների առիթ ստեղծեց և մարտահրավերների առաջ կանգնեցրեց սոցիոլոգիան: Այս ուղղությունը պնդում էր, որ տեսությունը և հետազոտությունը պետք է պաշտպանեն մարդու հիմնարար պահանջմունքները, արժեքները և իրավունքները: Դեռևս 1995 թ. հեղինակները առաջարկեցին հինգ հիմնական արժեքներ, որոնց շուրջ երիտասարդների

---

[34] Տե՛ս Beck U. Toward a new critical theory with a cosmopolitan intent. Constellations, 10, 2003, էջ 453-468:

[35] Տե՛ս Beck U. Risk society: towards a new modernity, London, Sage., 1992, Beck, U. & Beck-Gernshiem, E. (2001) Individualization, Cambridge, Polity Press. Տե՛ս Giddens A. Modernity and self-identity, Cambridge, Polity Press, 1991:

[36] Տե՛ս Furlong A. and Cartmel. Young people and social change: individualization and risk in late modernity, Buckingham, Open University Press, 1997:

վերաբերյալ հետազոտողների և պրակտիկ աշխատողների միջև կարող է համաձայնություն լինել՝ առողջություն, խնամք, կարեկցանք, ինքնորոշում և մասնակցություն[37]: Բացի այս հիմնախնդիրներից, երիտասարդության սոցիոլոգիան ուսումնասիրում է երիտասարդների սոցիալական և մշակութային ինքնությունը և գործելակերպը՝ օգտագործելով միջոլորտային և միջառարկայական մոտեցումներ:

Այսպիսով, խոսելով այն մասին, թե ինչպես է ձևավորվել երիտասարդների վերաբերյալ հասարակագիտական, մասնավորապես սոցիոլոգիական միտքը, կարող ենք եզրակացնել, որ երիտասարդները դիտարկվում են որպես ռիսկի, անորոշության փուլում գտնվող խումբ. իսկ ռիսկը մոդեռնիզմի տեսության անկյունաքարային հասկացություն է, որ կիրառվում է երիտասարդության վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտություններում:

Սոցիոլոգիական և հասարակագիտական գրականության մեջ բացակայում է «երիտասարդի» և «երիտասարդության» սահմանման համընդհանուր և միասնական մոտեցումը: Երիտասարդների և երիտասարդության վերաբերյալ սոցիալական տեսությունները կարելի է բաժանել երեք հիմնական ուղղությունների և մոտեցումների՝ որպես *կյանքի փուլ, սոցիալական խումբ և սերունդ*:

**Երիտասարդությունը որպես կյանքի փուլ:** Ըստ առաջին տիպի տեսությունների՝ երիտասարդությունը սահմանվում է որպես մանկության և չափահասության միջև ընկած կյանքի ոչ կայուն փուլ[38]: 20-րդ դարում պատանեկությունը և երիտասարդները՝ որպես կոնկրետ խումբ, առավել տեսանելի դարձան մի շարք գործընթացների շնորհիվ, որոնց թվում են՝ կրթական բարեփոխումները, աշխատանքային կանոնակարգերը, անչափահասների արդարադատության համակարգի վերակազմավորումը, ժամանցի ճանաչումը՝ որպես երիտասարդների գործունեություն, փորձի առանձնահատկությունը և այլն: Երիտասարդության սահմանման մեջ *անցումային* լինելու մոտեցման առկայությունը հանգեցրեց

---

[37] Տե՛ս Doing Research with Children, A practical Guide, Greig A., J. Taylor, T. Mackay, 3rd edition, 2013, էջ 54:

[38] Տե՛ս Spence J. Concepts of youth. in Working with young people. London; Thousand Oaks; New Delhi.: Open University in association with Sage, 2005, էջ 46-56:

այն բանին, որ 20-րդ դարում երիտասարդությունը սահմանվեց որպես *կյանքի ռիսկային փուլ* և խնդիր, քանի որ երիտասարդները, լինելով անկախ և հեռու հաստատված սոցիալական նորմերից, սոցիալական պառակտման պատճառ էին դառնում[39]: Երիտասարդական ուսումնասիրությունների գլոբալ համատեքստում առաջ եկավ երիտասարդների և երիտասարդության սահմանման հայեցակարգային խնդիրը: Երիտասարդության սահմանման մարտահրավերը ծագում է ոչ միայն այն փաստից, որ կյանքի փուլերի պատկերացումները շատ տարբեր են տարբեր մշակույթների և հասարակությունների միջև, այլև այն պատճառով, որ, ընդհանուր առմամբ, արագ փոփոխություններ են տեղի ունենում աշխարհի բոլոր հասարակություններում: Մասնավորապես, 20-րդ դարի երկրորդ կեսին և մինչև այսօր տեղի ունեցող փոփոխությունները կասկածի տակ են դրել «նորմալ» կյանքի ընթացքի մասին նախկինում հաստատված պատկերացումներն ու ենթադրությունները՝ հանգեցնելով կենսաբանական տարիքի և կյանքի ակնկալվող տևողության փոխկապվածության խզման[40]: Հետագա մոտեցումներում, որտեղ անցումային լինելը այլևս կենտրոնական չէր, սկսեց կարևորվել երիտասարդ լինելը՝ չափահաս և մեծահասակ լինելու համեմատ: Երիտասարդ լինելը սկսեցին դիտարկել որպես փորձելու, նոր ուղիներ փնտրելու, գործող արժեքները հարցականի տակ դնելու տարիք[41]:

**Երիտասարդությունը որպես սոցիալական խումբ:** Երիտասարդությունը, իբրև *սոցիալական խումբ,* սահմանվում է որպես «մանկության կախվածությունից մեծահասակության անկախության» անցման մեջ գտնվող խումբ: Երիտասարդները սահմանվում են որպես անհատներ, որոնք գտնվում են «հասարակության չափահաս անդամ դառնալու գործընթացում»[42]: Որպես սոցիալական խումբ՝ երիտասարդների սահմանման մեջ գերակշռող գործոն է հիմնականում տարիքը: Երիտասարդու-

---

[39] Տե՛ս Chisholm L. et al. European Youth Studies Integrating research, policy and practice, Deliverable 7.1 – M.A. EYS Reader, Innsbruck., 2011, 13 էջ:

[40] Տե՛ս Jones G. Youth, Cambridge: Polity, 2009:

[41] Տե՛ս Spence J. Concepts of youth., in Working with young people. London; Thousand Oaks; New Delhi.: Open University in association with Sage, 2005, էջ 46-56:

[42] Cieslik M. and Simpson D. Key concepts in youth studies, Sage, Los-Angeles, 2013, p. 3-8.

թյան՝ տարիքի վրա հիմնված սահմանումները հիմնականում կառուցված են հոգեբանությունից փոխառված զարգացման համընդհանուր փուլերի վրա: Նման մոտեցումը, սակայն, երիտասարդներին դիտարկում է որպես որոշակի տարիքային միատարր խումբ:

Միավորված ազգերի կազմակերպության սահմանման համաձայն՝ երիտասարդ է համարվում 15-24 տարիքային խումբը՝ վիճակագրական նպատակներից ելնելով, իսկ Եվրոպական միությունը կիրառում է 15-29 տարիքային բաժանումը[43]:

Հայաստանում փաստարկված երիտասարդական պետական քաղաքականության ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայությունը խոչընդոտում է երիտասարդության միասնական մոտեցման սահմանումը և կիրառությունը: Արդյունքում՝ երիտասարդության տարիքի սահմանման տարբեր մոտեցումներ են կիրառվում ինչպես պետական կառույցների, այնպես էլ քաղաքացիական հասարակության կառույցների կողմից: ՀՀ վիճակագրական կոմիտեն իր պաշտոնական հրապարակումներում երիտասարդների վերաբերյալ տվյալները ներկայացնում է հետևյալ տարիքային բաժանումներով՝ 16-19, 20-24, 25-29, 30-34, աշխատաշուկայի վերաբերյալ ուսումնասիրություններում երիտասարդների վերաբերյալ առանձին ցուցանիշները ներկայացված են 15-29 տարիքային խմբի համար[44]: Հայաստանում երիտասարդական պետական քաղաքականությունը կարգավորող օրենքի համաձայն.

*«Երիտասարդ՝ Հայաստանի Հանրապետության 13-35 տարեկան (ներառյալ) քաղաքացի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող 13-35 տարեկան (ներառյալ) օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում*

---

43 Տե՛ս Մարդկային զարգացման ազգային զեկույց, 2018/2019, Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Հայաստան, 2019, https://www.undp.org/sites/g/files/ zskgke326/files/migration/am/NHDR-ARM_sans-foreword.pdf, էջ 28:

44 Տե՛ս նույն տեղում:

*փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում»*[45]*:*

Չնայած երիտասարդների՝ տարիքի վրա հիմնված սահմանման հստակությանը՝ երիտասարդության սահմանումը կենսաբանական տարիքի տեսանկյունից անտեսում է երիտասարդության ամբողջական բնույթը, որը ներառում է երիտասարդների ծագմամբ, հետաքրքրություններով, կարիքներով և մարտահրավերներով պայմանավորված տարբերությունները: Թեև տարիքը կարող է լինել երիտասարդության սահմանման հստակ ցուցիչ, այն բավարար չէ անհատների չափահասության անցումը որոշելու համար: Օրինակ՝ երիտասարդները կարող են դասվել միևնույն տարիքային խմբին, սակայն նրանց սոցիալական փորձառությունները կարող են լինել բոլորովին տարբեր: Մասնավորապես առկա են տարբերություններ միևնույն երկրի գյուղական վայրերում մեծացող երիտասարդների և քաղաքային բնակավայրերում բնակվող երիտասարդների միջև: Կարող են առկա լինել նաև մի շարք այլ տարբերություններ. սոցիալ-տնտեսական ցածր դիրքում գտնվող երիտասարդները, ստիպված են աշխատել ավելի վաղ տարիքից, պատերազմական հակամարտությունների պայմաններում ապրող երիտասարդները տարբերվում են իրենց ժամանակակից այն հասակակիցներից, որոնք ապրում են ավելի անվտանգ անցումային պայմաններում: Երիտասարդության մի զգալի հատված էլ կարող է չունենալ աշխատանք, սեփական ընտանիք և ֆինանսական միջոցներ մինչև 30 տարեկանը կամ ավելին, որ հոգա իր հոգսերը: Երիտասարդության ոլորտի հետազոտող Է. Ֆուրլոնգը հիմնվում է երիտասարդության սահմանման սոցիոլոգիական ավանդույթի վրա և պնդում, որ երիտասարդության փորձառությունները առանցքային են երիտասարդության սահմանումների համար և չեն կարող անտեսվել: Մինչդեռ զարգացման առումով երիտասարդությունը կարող է որոշվել որոշակի տարիքով, մասնավորապես՝ օրինական չափահասության տարիքով: Ըստ Ֆուրլոնգի՝ երիտասարդությունը կարող է սահմանվել որպես կյանքի փուլ, որը բնութագրվում է «կիսա-կախվածությամբ» կամ մանկությունից դեպի անկախ չափահասության անցումով[46]:

---

[45] ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության մասին օրենք:
[46] Տե՛ս Furlong A. Youth Studies: An Introduction. USA: Routledge., 2013, էջ 3:

Այս անցումային շրջանը դեպի հասուն տարիք և անկախություն նշանավորվում է երիտասարդների խոցելիության որոշակի մակարդակով՝ պայմանավորված նրանց տարբեր ծագումներով և սոցիալ-տնտեսական դիրքերով, ինչպես նաև նրանց փորձով, ինքնության, ինքնարտահայտման ձևերով, արժեքներով և համոզմունքներով:

Սոցիալական գիտություններում առկա են երիտասարդությունը որպես սոցիալական խումբ մեկնաբանելու հետևյալ տեսական մոտեցումները, որոնք հիմնված չեն տարիքային սահմանման վրա.

1. Երիտասարդություն սահմանումը որպես մշակույթ, առանձնահատուկ դերեր, սոցիալական կարգավիճակ և այլն: Քսաներորդ դարի կեսերին Մանհայմը[47] (1952) և Պարսոնսը (1942) նշում են, որ երիտասարդները սկսել են միավորվել և ճանաչել իրենց ընդհանուր կյանքի ձևը (գաղափարներ, մշակույթ և այլն) և այն, ինչ նրանք կիսում էին այլ երիտասարդների հետ՝ ի տարբերություն մեծահասակների հասարակության՝ այդպիսով ստեղծելով սերնդային կոնֆլիկտի և լարվածության հնարավորություն[48]: Այս հեղինակները ավելի շատ ուշադրություն են դարձնում այն փաստին, որ տարբեր սերունդներ անցել են սոցիալականացման տարբեր ձևեր: Երիտասարդության վաղ ուսումնասիրությունները, որոնք սկսվում են 1950-ական թվականներից, հետաքրքրված էին, թե ինչը կարելի է անվանել երիտասարդական մշակույթ: Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ քսաներորդ դարի ընթացքում երիտասարդները իրենց կյանքը մեծապես պայմանավորում էին դասակարգային, ռասայական և գենդերային գործընթացներով, որոնք սահմանում են իրենց վաղ կյանքի մեծ մասը և սահմաններ դնում այն ամենի վրա, ինչ նրանք հնարավոր է դառնային միայն չափահասության միջոցով[49]:

---

[47] Տե՛ս Mannheim K. The problem of generations, in P. Kecskemeti (ed.), Essays on the Sociology of Knowledge. New York: Routledge and Kegan Paul, 1952:
[48] Տե՛ս Cieslik M. and Simpson D. Key concepts in youth studies, Sage, Los-Angeles, 2013:
[49] Տե՛ս նույն տեղում, էջ 4:

2. 1970-ական թվականներին ուսումնասիրությունները կենտրոնանում են երիտասարդների անցումների (transition) հետազոտության վրա՝ կրթությունից աշխատանքի, մանկությունից հասունության: Մակդոնալդը կարևորեց երիտասարդության մեկ այլ նշանակալի հատկություն: Մասնավորապես, նա նկատեց, որ «երիտասարդության անցումների բարդությունն այժմ առավել լայնորեն է քննարկվում, քանի որ հետազոտողներն իրենց ուշադրությունը սևեռել են անցումների տարբեր ձևերի վրա, ինչպիսիք են՝ անկախ ապրելու նպատակով ծնողական տնից երիտասարդի հեռանալը, դպրոցից աշխատանքի անցումը, ինչպես նաև ամուսնությունը և ապահով աշխատանքը, կարիերան, որոնք ավելի շատ են ժամանակ պահանջում[50]:
3. Երիտասարդության սահմանումը սոցիալական մարդաբանների կողմից սովորաբար մեկնաբանվում է մշակութային և ոչ թե կենսաբանական տեսանկյունից: Նրանք ուսումնասիրում են երիտասարդների մշակութային համոզմունքները, պահվածքը, ընտանեկան կյանքը, սոցիալական, քաղաքական խմբերը, որոնցում նրանք ներգրավված են և միմյանց հետ երիտասարդների հարաբերությունները[51]: Թեև պետք է հաշվի առնել, որ մշակութային ուսումնասիրությունների մեծ մասը «հիմնված է ոչ արևմտյան և ավանդական հասարակությունների վրա»[52]: Մշակութային համատեքստում երիտասարդության անցման գործընթացը կարող է մեկնաբանվել տարբեր ձևերով, օրինակ՝ դպրոցից հեռանալը, համալսարան գնալը և ամուսնանալը կարող են համարվել նախաձեռնման գործընթաց, այլ ոչ թե անցում մեծահասակ կյանքի:

Երիտասարդների սահմանման մեջ հիմնական չափանիշ է տարիքը, սակայն երիտասարդությունը բացառապես ժամանակագրական տարիքով սահմանելու փոխարեն երիտասարդության սոցիոլոգիան հաճախ

---

[50] Տե՛ս Furlong A. Handbook of youth and young adulthood. Roultledge, London-New York, 2009, էջ 23:

[51] Տե՛ս Kehily M.J. Understanding Youth: Perspectives, Identities and Practices. Milton Keynes: Open University Press., 2007, էջ 47:

[52] Նույն տեղում:

հասկանում է երիտասարդությունը *ինստիտուցիոնալ անցումների* (օրինակ՝ կրթության միջոցով) կամ «երիտասարդական» *մշակութային պրակտիկաների* (օրինակ՝ փոփ մշակույթը, նոր երաժշտության ժանրերը և այլն) և այդ պրակտիկաների արդյունքում ձևավորված ինքնությունների ամբողջություն[53]: Երիտասարդական ուսումնասիրությունների երկու ուղղություններն էլ իրենց ներկայիս տեսքով ծագել են 1970-ականների վերջին և 1980-ականների սկզբին: Հետագայում երիտասարդական ուսումնասիրությունները ձգտել են կամրջել, միավորել այս երկու մոտեցումները: Այս ոլորտի վերաբերյալ ուղենիշային ուսումնասիրության մեջ Ուիլիսը ցույց տվեց, թե ինչպես են մշակույթը և կառուցվածքը ազդում դպրոցի նկատմամբ բանվոր դասակարգի ընդդիմադիր վերաբերմունքի ձևավորման վրա[54]: Հետագայում արդեն երիտասարդության ուսումնասիրությունները ձգտում էին ներկայացնել երիտասարդի կյանքի ամբողջական պատկերը: Հետևաբար անցումների և մշակույթների հակասությունը վերացավ և իրականացվող հետազոտություններում վերածվեց միահյուսված մոտեցման:

**Երիտասարդությունը որպես սերունդ:** Երիտասարդության՝ *որպես սերնդի* հասարակագիտական մոտեցումները առավել մանրամասն ներկայացված են գերմանացի հեղինակ Կ. Մանհայմի՝ սերունդների վերաբերյալ տեսության, ինչպես նաև Շտրաուսի և Հոուի տեսության շրջանակներում: Երիտասարդությունը՝ որպես սերունդ, շատ ավելի ուժեղ վերլուծական գործիք է, քան «անցման մեջ գտնվող երիտասարդությունը»[55]: Ըստ այս մոտեցման՝ «երիտասարդությունը՝ որպես անցում», չափազանց սոցիալ-հոգեբանական, չափազանց դետերմինիստական է, որը թերագնահատում է երիտասարդների սեփական սուբյեկտիվության կարևորությունը: Այս մոտեցմամբ երիտասարդությունը դիտվում է որ-

---

[53] Տե՛ս Cohen P. Mods and shockers: Youth cultural studies in Britain. In A. Bennett, M. 2003: Տե՛ս նաև Furlong, A., Woodman, D. & Wyn J. Changing times, changing perspectives: Reconciling ‘transition’ and ‘cultural’ perspectives on youth and young adulthood. Journal of sociology, 47(4), 2011, 355-370:

[54] Տե՛ս Willis P. Learning to labour: How working class kids get working class jobs. Aldershot, UK: Gower, 1977:

[55] Տե՛ս Wyn J. and Woodman D. Generation, youth and social change in Australia, Journal of Youth Studies, 2006, 9:495-514.

պես «գծային գործընթաց կամ մանկության և չափահասության միջև գտնվող դիրք»[56]: Թեև Ուինի և Վուդմանի վերլուծությունը շատ կարևոր է, սակայն լիարժեքորեն չի ուսումնասիրում տարբեր սերունդների միջև փոխհարաբերությունները: Այս մոտեցման կարևոր առանձնահատկությունն այն է, որ սերունդների առանձնահատկությունը կարևորելու միջոցով հաճախ ընդգծվում են սերունդների միջև նմանությունները:

Սերունդների մասին Մանհայմի տեսությունն ունի երեք հիմնական տարր՝ *«սերունդների գտնվելու վայրը», «սերնդին պատկանելու զգացումը», «սերնդային միավորները»*[57]: «Սերունդների գտնվելու վայրը» (Generationslagerung)՝ որպես հայեցակարգ, նպատակ ունի ֆիքսելու սերնդի ժամանակավոր-կառուցվածքային դիրքը: Այստեղ է, որ հեղինակը կարևորում է «թարմ շփումը». ապագա ներգրավումները հիմնվելու են վաղ մշակութային ներգրավվածությունների և ձևավորված տրամադրությունների վրա: Երկրորդ՝ գտնվելու ընդհանուր վայրը ոչ մեխանիկորեն ձևավորում է զգացմունքները, վերաբերմունքը և միտումները, իսկ որոշ դեպքերում՝ սերնդին պատկանելու զգացումը[58]: Մանհայմը ընդգծում է, որ նույնիսկ եթե երիտասարդների մեջ ձևավորվի նույն սերնդին պատկանելու զգացում՝ կողմնորոշված դեպի նույն խնդիրներն ու մարտահրավերները, սերնդի անդամների միջև առկա են տարբերություններ և հնարավոր է՝ նույնիսկ բուռն հակադրություններ: Սերնդին այդպիսին են դարձնում «սերնդային միավորները»՝ Մանհայմի տեսության երրորդ հիմնական տարրը[59]: «Նույն կոնկրետ պատմական խնդիրներ ունեցող երիտասարդները, կարելի է ասել, նույն իրական սերնդի մի մասն են. մինչդեռ միևնույն փաստացի սերնդի այն խմբերը, որոնք մշակում են իրենց ընդհանուր փորձը առանձնահատուկ ճանապարհով, սերնդի առանձին միավորներ են»[60]: Այս իմաստով հետաքրքիր է, թե որոնք են

---

[56] Տե՛ս Furlong A. Handbook of youth and young adulthood. Roultledge, London-New York, 2009, p. 23.

[57] Տե՛ս Woodman D. and Wyn J. Youth and generation: Rethinking change and inequality in the lives of young people. London: Sage. 2015, 58.

[58] Տե՛ս Mannheim K. The problem of generations. In Essays on the sociology of knowledge. London: Routledge, 1952, 276-322 p.:

[59] Տե՛ս նույն տեղում, էջ 303:

[60] Նույն տեղում, էջ 304:

ժամանակակից աշխարհում երիտասարդ սերունդները: Ութսունական, իննսունական և երկուհազարական տարիներին ծնված տարիքային խմբերը պատկանում են երեք տարբեր սերունդների՝ համապատասխանաբար՝ «X սերունդ» կամ թվային միգրանտներ, «Y սերունդ» կամ թվային բնիկներ և «Z սերունդ» կամ ֆեյսբուքյան սերունդ: Թվային բնիկ տերմինը ստեղծել է Մարկ Պրենսկին 2001 թ. և առաջին անգամ կիրառել է «Թվային բնիկներ, թվային ներգաղթյալներ» հոդվածում՝ փորձելով բացատրել, թե ինչու են ուսուցիչները մշտապես դժվարությունների հանդիպում ուսանողների ուսուցման հարցում: Թվային բնիկները «առաջին սերունդներն են, որոնք մեծացել են այս նոր տեխնոլոգիայով: Նրանք անցկացրել են իրենց ողջ կյանքը՝ շրջապատված տեխնոլոգիաներով. օգտագործում են համակարգիչներ, տեսախաղեր, թվային երաժշտական նվագարկիչներ, տեսախցիկներ, բջջային հեռախոսներ և թվային դարաշրջանի մնացած բոլոր խաղալիքներն ու գործիքները: Մյուս կողմից, «թվային ներգաղթյալները» մինչև 1980 թվականը ծնվածներն են: «Չեն ծնվել թվային աշխարհում, բայց իրենց կյանքի ինչ-որ ավելի ուշ փուլում հիացել և որդեգրել են նոր տեխնոլոգիայի շատ ասպեկտներ»[61]:

Սերունդների համապարփակ տիպաբանություն են տվել Ու. Շտրաուսը (William Strauss) և Ն. Հոուն (Neil Howe), որը ամերիկյան հասարակությանն է վերաբերում, սակայն կիրառվում է նաև այլ հասարակությունների մասին ուսումնասիրություններում[62]: Շտրաուսի և Հոուի տեսության մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում երկու հակադիր ժամանակաշրջանների՝ ճգնաժամի և վերելքի գաղափարը: Ճգնաժամերի ժամանակաշրջանը նշանավորվում է խոշոր ցնցումներով, որոնցում հասարակությունը կենտրոնանում է հաստատությունների և սոցիալական վարքագծի վերափոխման վրա: Վերելքները բնութագրվում են մշակութային և կրոնական նորացումով, քանի որ հասարակությունը կենտրոնանում է ներաշխարհը և արժեքային համակարգերը, անհատական վարքագիծը վերափոխելու վրա: Ճգնաժամերի ժամանակ հիմնական

---

[61] Տե՛ս Prensky M. Digital natives, digital immigrants, On the horizon Vol. 9, No. 5, 2001, p. 1-5.

[62] Տե՛ս Strauss W. and Howe N. Generations: The History of America's Future, 1584 to 2069, 1991:

սպառնալիքները խթանում են հասարակության մեջ համաձայնության/կոնսենսուսի ցանկությունը, ձևավորում են անձնազոհության էթիկան և ամուր ինստիտուցիոնալ կարգի արժեքը: Շտրաուսը և Հոուն հայտնաբերեցին սերունդների հաջորդականության մի օրինաչափություն, որը հիմնված է ճգնաժամերի և վերելքների հերթափոխման վրա: Սերունդները, որոնք մեծանում են ճգնաժամի ժամանակ, ուղղակիորեն կլանում են դարաշրջանի դասերը, իսկ դրանք հետագայում ազդում են աշխարհի հանդեպ նրանց վերաբերմունքի և վարքագծի վրա: Հեղինակները նման սերունդներին անվանում են գերիշխող: Սերունդներ, որոնք ճգնաժամի կամ վերելքի ժամանակ երեխա են, ստանձնում են կախյալ դեր, որը բոլորովին այլ կերպ է ձևավորում նրանց ընկալումն ու վարքը: Նրանք այս սերունդներին անվանեցին ռեցեսիվ: Շտրաուսը և Հոուն առանձնացնում են սերունդների հետևյալ չորս տիպերը՝

- իդեալիստների սերունդ (Idealist),
- արձագանքողների/ռեակտիվների սերունդ (Reactive),
- քաղաքացիների սերունդ (Civic),
- հարմարվողների սերունդ (Adaptive)[63]:

Հեղինակները նշում են, որ այս չորս սերունդների տիպերը հաջորդում են միմյանց ֆիքսված հերթականությամբ՝ հաշվի առնելով մեկ կարևոր պայման. որ հասարակությունը ողջամիտ հաջողությամբ լուծի յուրաքանչյուր ճգնաժամը: Երբ այս պայմանը չի պահպանվում, շրջափուլը ընդհատվում է՝ շրջանցելով սերունդների որևէ տիպը[64]: Ըստ հեղինակների՝ սերունդները հաջորդում են իրար, քանի որ «մեկ սերունդը նման չէ այն սերնդին, որը մեծացրել է իրեն, այլ ավելի ընդհանրություն ունի այն սերնդի հետ, որը մեծացրել է իր ծնողների սերունդը»[65]: Հետագայում հեղինակները սերունդների տիպերի անվանումները փոխեցին՝ համապատասխանաբար կիրառելով՝ *իդեալիստների* փոխարեն *մարգարեներ* (Prophet), *արձագանքողների* փոխարեն՝ *թափառականներ* կամ *քոչվորներ* (Nomad), *քաղաքացիների* փոխարեն՝ *հերոսներ* (Hero) և *հար-*

[63] Տե՛ս Strauss W. and Howe N. Generations: The History of America's Future, 1584 to 2069, 1991, էջ 74:
[64] Տե՛ս նույն տեղում, էջ 74:
[65] Նույն տեղում, էջ 79:

*մարվողների* փոխարեն՝ *արվեստագետներ* (Artist) հասկացությունները[66]: Ամերիկյան պատմության վերլուծության արդյունքում հեղինակները առանձնացնում են 25 սերունդ: Այսպես, 1965–1984 թթ. ծնվածները պատկանում են *թափառականների* կամ *քոչվորների* սերնդին, որը կոչվում է նաև «X» կամ «13-երորդ սերունդ» (ԱՄՆ-ի սերունդների հաշվարկով): Այս սերնդին հաջորդում է *հերոսների* սերունդը՝ «Y» կամ «Միլենիալների սերունդը» (հաճախ անվանում են նաև «նեքստ», «ցանցային» և այլն), 1985–2004 թթ. ծնվածները: Հաջորդը «Z» սերունդն է, որ ծնվել է երրորդ հազարամյակում և պատկանում է *արվեստագետների* սերնդին[67]: Այս բնութագրերը ևս կարևոր են «երիտասարդություն» հասկացության ամբողջական մեկնաբանման համար, քանի որ հնարավորություն են տալիս հասկանալու, թե ինչպիսի առանձնահատկություններ ունի այսօրվա երիտասարդ սերունդը, որը, ըստ հեղինակների, քաղաքացիների/հերոսների տիպին է պատկանում և որին հաջորդելու է հարմարվողների կամ արվեստագետների տիպը:

Վերոնշյալ տեսական մոտեցումների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ երիտասարդության հասկացության վերաբերյալ այս գաղափարները սերտորեն փոխկապակցված են և կարող են քննարկվել կյանքից, խմբերից կամ անձանցից, կյանքի տարբեր տեսանկյուններից երիտասարդության կախվածության կամ անկախության ծիրում՝ երիտասարդությունը դիտարկելով որպես կախվածությունից անցում անկախության[68]: Ընդ որում՝ տեսաբանների մի մասը անկախություն ձեռք բերելը կապում է առաջին հերթին ընտանիքից ֆինանսական անկախության հետ[69], իսկ մյուս կողմից՝ կրթության, զբաղվածության,

---

[66] Տե՛ս նույն տեղում, էջ 70:

[67] Գոյություն ունեն սերունդների անվանումների և ըստ տարեթվերի բաշխման տարբեր մոտեցումներ (Twenge, Pew Research):

[68] Տե՛ս Cieslik M., Simpson D. Key concepts in Youth Studies, Sage publications Ltd, 2013:

[69] Տե՛ս Hareven T. The last stage: Historical adulthood and old age. Daedalus, 105(4), 1976, 13-27:

կարիերայի աճի հետ[70], ինչպես նաև ծնողներից առանձին ապրելու, ճանապարհորդելու հնարավորությունների հետ[71]:

**Աշխատանքի տեսական դիրքորոշումը:** Մենագրության մեջ երիտասարդությունը դիտարկվում է ոչ թե որպես տարիքային կամ կենսաբանական խումբ, այլ որպես հասարակության սոցիալական կառուցվածքում առանձնահատուկ դիրք ունեցող կյանքի փուլ: Երիտասարդները գտնվում են կախվածությունից դեպի սոցիալական, տնտեսական և քաղաքացիական անկախացում գործընթացում, որը բնութագրվում է կառուցվածքային սահմանափակումների և անհատական գործունակության փոխազդեցությամբ: Այս մոտեցման համաձայն՝ երիտասարդությունը հանդես է գալիս որպես միջանկյալ սոցիալական վիճակ, որտեղ անհատները միաժամանակ ներգրավված են կախվածության և ինքնուրույնության հարաբերություններում: Նրանք արդեն դուրս են մանկության լիակատար ինստիտուցիոնալ հսկողությունից, սակայն դեռևս չունեն լիարժեք հասանելիություն անկախության ռեսուրսներին՝ կայուն զբաղվածություն, տնտեսական ինքնուրույնություն, բնակարանային ապահովվածություն և կայացած քաղաքացիական կարգավիճակ: Այս անցումային բնույթն է, որ երիտասարդներին դարձնում է սոցիոլոգիական առումով յուրահատուկ և վերլուծության համար առանձնացված խումբ: Երիտասարդության կախվածությունից անկախության անցումը գծային կամ համընդհանուր գործընթաց չէ: Այն պայմանավորված է կոնկրետ պատմական ժամանակով, սոցիալական կառուցվածքով և քաղաքական միջավայրով: Հետպատերազմյան հասարակություններում այս անցումը հաճախ խաթարվում, երկարաձգվում կամ մասնատվում է՝ ձևավորելով անկախության ձեռքբերման բազմազան ուղիներ և անհավասար հնարավորություններ: Այս պայմաններում երիտասարդների կենսափուլային փորձառությունները չեն կարող մեկնաբանվել միայն անհատական ընտրությունների կամ պատասխանատվության շրջանակում, այլ պահան-

[70] Տե՛ս Elder G. Perspectives on the life course. In Elder G. (Ed.), Life-course dynamics: Trajectories and transitions 1968–1980 (pp. 23-50). Cornell University Press, 1985:

[71] Տե՛ս Galstyan M. Re-Conceptualising Youth: Theoretical Overview. Journal of Sociology: Bulletin of Yerevan University, 13(2 (36), 2022, 22-27:

ջում են կառուցվածքային վերլուծություն: Այս աշխատանքում երիտասարդների անկախությունը ընկալվում է որպես բազմաչափ գործընթաց, որը ներառում է տնտեսական, ֆինանսական անկախությունը, կենցաղային և մտավոր ինքնուրույնությունը, ինչպես նաև քաղաքացիական և քաղաքական սուբյեկտայնության ձևավորումը: Երիտասարդների անկախության աստիճանը դիտարկվում է ոչ թե որպես միաչափ և վերջնական վիճակ, այլ որպես դինամիկ փոփոխվող բազմաչափ գործընթաց, որը տարբեր սոցիալական խմբերի և կյանքի իրավիճակների պարագայում ստանում է տարբեր դրսևորումներ, ինչը ամփոփված է *Երիտասարդների անկախության համաթվի* հայեցակարգում[72]: Տեսական այս դիրքորոշումը թույլ է տալիս երիտասարդներին դիտարկել ոչ որպես խնդրահարույց կամ «կիսակախյալ» սոցիալական խումբ, այլ որպես սոցիալական փոփոխությունների ակտիվ կրողներ, որոնց կենսափուլային անցումները զգայուն են հասարակական ճգնաժամերի և ինստիտուցիոնալ փոփոխությունների նկատմամբ: Հատկապես հետպատերազմյան պայմաններում երիտասարդները հանդես են գալիս որպես այն խումբը, որի սոցիալական հարմարեցման ուղիները կարող են կանխորոշել հասարակության երկարաժամկետ վերարտադրության և զարգացման հնարավորությունները: Այս տեսական դիրքորոշումը աշխատության վերլուծության հիմքն է, որն էլ պայմանավորում է երիտասարդների կրթության, զբաղվածության, ընտանիքի, քաղաքացիական մասնակցության, առողջության և ապագայի պատկերացումների ուսումնասիրության տրամաբանությունը: Այն նաև թույլ է տալիս մշակել երիտասարդների տիպաբանություններ՝ հիմնված անկախության ձեռքբերման տարբեր ռազմավարությունների վրա հետպատերազմյան Հայաստանի սոցիալական իրականության համատեքստում:

[72] Տե՛ս Galstyan M. Conceptualizing and Measuring Economic and Social Aspects of Youth Independence in Armenia // Journal of Sociology: Bulletin of Yerevan University. – 2024. – T. 15. – № 1 (39), էջ 28-42:

## Գլուխ 2. Երիտասարդական ուսումնասիրությունների պատմական ակնարկ

Երիտասարդական ուսումնասիրությունները (youth studies) ձևավորվել են որպես միջառարկայական գիտակարգ, որի զարգացումը սերտորեն կապված է սոցիալական, տնտեսական և քաղաքական փոփոխությունների հետ: Ժամանակի ընթացքում երիտասարդությունը վերաիմաստավորվել է՝ կենսաբանական տարիքային խմբից վերածվելով սոցիալական կառուցվածքով և պատմականորեն պայմանավորված հասկացության: Ինչպես նշում է Ֆուրլոնգը, երիտասարդների կյանքի ուսումնասիրությունը եզակի «պատուհան է բացում սոցիալական և տնտեսական փոփոխությունների գործընթացների վրա և նպաստում է սոցիալական գիտության խոշոր տեսական հիմնահարցերի ուսումնասիրությանը»[73]: Երիտասարդական ուսումնասիրությունը սահմանվում է որպես տեղեկատվության համակարգված և գիտական որոնում՝ երիտասարդների վերաբերյալ մեր գիտելիքը բարելավելու նպատակով[74]: Ըստ Մըքքոլի՝ երիտասարդների վերաբերյալ գիտական հետազոտությունը բաժանվում է երկու մակարդակի՝ տեսական և էմպիրիկ: Տեսական մակարդակը վերաբերում է ընդհանուր հասկացություններին, սկզբունքներին, օրենքներին, հարաբերություններին, որոնց վերաբերյալ կարելի է վարկածներ առաջ քաշել: Էմպիրիկ մակարդակը վերաբերում է հասկացությունների սահմանմանը չափելի, դիտարկելի փոփոխականներով, որոնց ուսումնասիրությունը նկարագրում է հարաբերությունը այդ փոփոխականների միջև[75]: Երիտասարդական ուսումնասիրությունների սկզբնավորումից մինչև մեր օրերը դեռևս վերջնականորեն չի սահմանագծվել թեմատիկ ուղղությունների ողջ շրջանակը: Պատերազմները և հետպատերազմյան իրավիճակում երիտասարդների փորձառությունների ուսումնասիրությունը կարևոր ուղղություններից են երիտասարդա-

[73] Furlong, նշվ. աշխ.:
[74] Տե՛ս Doing Research with Children, A practical Guide, Greig A., J. Taylor, T. Mackay, 3rd edition, 2013, էջ 66:
[75] Տե՛ս նույն տեղում, էջ 68:

կան ուսումնասիրություններում, որոնց զարգացման պատմությունը կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

**Վաղ փուլ. սոցիալականացում և դեվիացիա** (20-րդ դարի սկիզբ – 20-րդ դարի կես): Երիտասարդության առաջին գիտական ուսումնասիրությունները ձևավորվել են դասական սոցիոլոգիայի և հոգեբանության շրջանակներում, որտեղ երիտասարդությունը դիտարկվում էր որպես անցումային կյանքի փուլ մանկությունից դեպի հասունություն:

**Հետպատերազմյան շրջան. երիտասարդական մշակույթ և ենթամշակույթներ** (1950–1970-ականներ): Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երիտասարդությունը սկսեց ձևավորվել որպես առանձին սոցիալական խումբ՝ զանգվածային կրթության, սպառողական մշակույթի և տնտեսական աճի պայմաններում: Առաջատար գիտական կենտրոններից մեկը՝ Ժամանակակից մշակութային ուսումնասիրությունների կենտրոնը (Centre for Contemporary Cultural Studies at the University of Birmingham) սկսում է ուսումնասիրել երիտասարդական ենթամշակույթները՝ որպես դիմադրության և ինքնության ձևավորման ձևեր: Երիտասարդությունը սկսեց դիտարկվել որպես մշակութային և սոցիալական ակտիվ դերակատար, ինչին նպաստեցին նաև 1960-ականների երիտասարդական շարժումները Եվրոպայում:

**Կառուցվածքային մոտեցումներ և անցումներ** (1970–1990-ականներ): Այս փուլում ուշադրությունը տեղափոխվեց դեպի սոցիալական անհավասարությունները և կառուցվածքային գործոնները: Տեսական մոտեցումները և տեսությունները անդրադառնում էին, թե ինչպես են սոցիալական կապիտալը և կրթական համակարգը վերարտադրում անհավասարությունները երիտասարդների միջև: Կենտրոնական թեմա դարձավ կրթությունից դեպի աշխատաշուկա անցումը (school-to-work transition):

**Ուշ արդիականություն. անհատականացում և ռիսկ** (1990–2000-ականներ): Ուշ արդիական հասարակություններում երիտասարդության անցումները դառնում են ավելի բարդ, երկարաձգված և ոչ գծային: Ու. Բեկը՝ իր «ռիսկի հասարակության» հայեցակարգով, և Է. Գիդենսը ընդգծում են կենսագրական ընտրությունների անհատականացման գործընթացը: Երիտասարդությունը սկսեց ընկալվել որպես անհատականացված և անորոշ կյանքի փուլ:

**Ժամանակակից փուլ. գլոբալացում, անհավասարություն և բազմաճգնաժամ** (2000-ականներ – մինչ այսօր): Երիտասարդական ուսումնասիրությունների արդի փուլը բնութագրվում է գլոբալ և համեմատական մոտեցումներով: Հեղինակները, հետազոտողները այժմ շեշտում են երկարաձգված անցումները և ինստիտուցիոնալ անորոշությունը: Ուշադրության կենտրոնում են թվայնացումը և սոցիալական մեդիան, հոգեկան առողջությունը, միգրացիան, քաղաքացիական մասնակցությունը: Երիտասարդությունը դիտարկվում է անորոշության և փոխկապակցված ճգնաժամերի պայմաններում ձևավորվող սոցիալական իրականության համատեքստում՝ համադրելով անցումային և կենսակերպերի մոտեցումները:

Այսպիսով, եթե ձևավորման վաղ փուլերում երիտասարդության ուսումնասիրությունները կենտրոնանում են երիտասարդների կենսաբանական և անցումային փուլի վրա՝ որպես սոցիալականորեն կառուցված և կառուցվածքային պայմանավորված գործընթացի, ապա ավելի արդի ժամանակներում կարևորվում է գործակալության (agency)[76], ինքնության և փորձառությունների վրա հիմնված մոտեցումը:

Երիտասարդական ուսումնասիրություններում շարունակվում է սոցիալական գիտություններում առկա՝ «որակական» և «քանակական» մեթոդաբանությունների միջև բանավեճը: Որակական մեթոդաբանությունը, հիմնվելով հասկացող, մեկնաբանող ավանդույթի վրա, հնարավորություն է տալիս բացահայտելու երիտասարդների սուբյեկտիվ ընկալումները, անհատական փորձը, երևույթների, գործընթացների խորությունը, իսկ քանակական մեթոդաբանությունը ուղղված է հիմնականում երևույթների տարածվածության, քանակական ցուցանիշների վերհանմանը: Որակական և քանակական մեթոդները հիմնված են՝ համապատասխանաբար կառուցողական (constructivism) և պոզիտիվիստական (positivism) տեսությունների վրա: Հետևաբար, երիտասարդության հետազոտողները, որոնք նպատակ ունեին ուսումնասիրել երիտասարդի վարքը, ինքնությունը, շարժառիթները, անհատական փորձը, ինտեր-

---

[76] Որպես Agency հասկացության հայերեն համարժեք կիրառվում են նաև գործորդություն, գործականություն և այլն:

սուբյեկտիվ նշանակությունները[77], հիմնվում էին կառուցողական մոտեցման վրա, ինչը հնարավորություն էր տալիս հասկանալու, որոնք են երիտասարդների վարքի շարժառիթները, «հասկանալ այն նշանակությունը, որը երիտասարդը դրել է իր առօրյա գործողության մեջ»[78]: Երիտասարդների առօրյա հաղորդակցությունը, տեղեկատվության որոնումը և ինքնարտահայտումը մեծապես տեղափոխվել են առցանց հարթակներ[79]: Միևնույն ժամանակ, թվայնացման գործիքների լայնատարած կիրառման պայմաններում սոցիալական իրականությունը, հատկապես երիտասարդների առօրյան, զգալիորեն տեղափոխվել են առցանց միջավայր, ինչի արդյունքում վերափոխվել են նաև սոցիալական փոխազդեցության, ինքնարտահայտման և մասնակցության ձևերը: Այս գործընթացին զուգահեռ՝ որոշակի փոփոխության են ենթարկվում տվյալների հավաքման մեթոդաբանական մոտեցումները՝ հարմարվելով թվային հասարակության նոր պայմաններին: Ժամանակակից սոցիոլոգիական, հատկապես երիտասարդական հետազոտություններում առցանց ինքնալրացվող հարցումները (online self-administered surveys) հետազոտական տվյալների հավաքագրման լայնորեն կիրառվող մեթոդ են, որոնք ոչ միայն դեմ առ դեմ հարցումների փոխարինող մեթոդ են կամ արտակարգ իրավիճակների պայմաններում կիրառվող լուծում[80]: Բազմաթիվ են աշխատությունները, որոնք վերաբերում են որակական և քանակական մոտեցումների սահմանափակումներին և համեմատությանը (տե՛ս Աղյուսակ 1):

---

[77] Տե՛ս Doing Research with Children, A practical Guide, Greig A., J. Taylor, T. Mackay, 3rd edition, 2013:
[78] Նույն տեղում, էջ 73:
[79] Տե՛ս Livingstone S., Sefton-Green J. The class: Living and learning in the digital age. NYU press, 2016. T. 1:
[80] Տե՛ս Callegaro M., Manfreda K. L., Vehovar V. Web survey methodology. – Sage, 2015:

**Աղյուսակ 1. Երիտասարդների հետ քանակական և որակական հետազոտությունների մեթոդաբանությունների համեմատությունը[81]**

| **Քանակական մեթոդաբանություն** | | **Որակական մեթոդաբանություն** |
|---|---|---|
| Երիտասարդը բնույթով օբյեկտիվորեն անկախ է ընկալումներից: Ուշադրությունը ընդհանրացման և կանխատեսման տեսությունն է | **Ենթադրություններ** | Երիտասարդը բնույթով սուբյեկտիվ է, գիտելիքը կառուցված է սիմվոլների վրա և ունի սոցիալական պայմանավորվածություն, ընկալումները իրականացվում են ուրիշների հետ համատեղ |
| Երիտասարդների շրջանում իրականացվող հետազոտությունները չափելի են, կոռելացվում են և կա հստակ ընտրանք | **Մեթոդներ** | Երիտասարդների շրջանում իրականացվող հետազոտությունները իրականացվում են բնական միջավայրում, վարքը դիտարկվում է ամբողջության մեջ, տվյալները նկարագրվում և մեկնաբանվում են |
| Վերաբերում են տարանջատված վարքին | **Հարցեր** | Երիտասարդները իրենց սոցիալական աշխարհի ակտի ստեղծողն են, հարցերը բաց են և փնտրում են անհատական հեռանկարներ |
| Վերահսկվում է և ստանդարտացված | **Համատեքստ** | Բնական, սոցիալապես կառուցված |
| Մեծ ընտրանք | **Մասնակիցները** | Մասնակիցների անհատական հեռանկարները |
| Նախապես սահմանված, ստանդարտացված | **Տվյալների հավաքագրումը** | Ոչ ստանդարտացված հարցազրույց, դիտարկում |
| Գծային մոդել, դեդուկտիվ, վիճակագրական, ավտոմատացված | **Տվյալների վերլուծություն** | Ռեկուրսիվ, ինդուկտիվ մոդել |

[81] Տե՛ս Doing Research with Children, A practical Guide, Greig A., J. Taylor, T. Mackay, 3rd edition, 2013, էջ 77:

| Քանակական մեթո-դաբանություն | | Որակական մեթոդաբա-նություն |
|---|---|---|
| Վիճակագրական կա-պերի ամփոփում | **Արդյունքներ** | Մասնակիցների մանրակր-կիտ պատումները |
| Կանխատեսել ինչ պետք է լինի | **Նպատակը** | Նկարագրել և բացատրել՝ ինչ կա |

Ժամանակի ընթացքում երիտասարդական ուսումնասիրությունների մեթոդաբանության շուրջ ձևավորված դիսկուրսում սկսեց գերիշխել այն տեսակետը, ըստ որի՝ հետազոտությունները պետք է ոչ թե քննարկեն «քանակական» թե «որակական» լինելու հարցը, այլ պետք է լինեն զգայուն երիտասարդների համար և մասնակցային՝ «պետք է ոչ թե երիտասարդների մասին, այլ երիտասարդների հետ իրականացնել հետազոտություն»[82]: «Մասնակցային հետազոտության նպատակն է երիտասարդներին հնարավորություն տալ ակտիվորեն մասնակցելու հետազոտական գործընթացի բոլոր փուլերին»[83]: Հետագայում որակական և քանակական մեթոդաբանությունների միջև առկա սահմանափակումները շրջանցելու, դրանց ուժեղ կողմերը միավորելու և փոխլրացնելու համար երիտասարդության հետազոտողները իրենց ուսումնասիրություններում սկսեցին կիրառել խառը մեթոդներ[84]:

Երիտասարդական ուսումնասիրությունների իրականացման վերաբերյալ քննարկումները վերաբերում են ոչ միայն մեթոդաբանություններին, այլև հետազոտության ողջ գործընթացին՝ պլանավորմանը, իրականացմանը և արդյունքների տարածմանը երիտասարդների շրջանում: Հետազոտություններում երիտասարդներին ներգրավելու կարևորմամբ, նրանց ձայնը լսելի դարձնելու հրամայականով պայմանավորված՝ սկսեցին մշակվել և կիրառվել *էթիկական նորմեր*[85]: Էթիկական սկզբունքնե-

[82] Roberts K. Problems and priorities for the sociology of youth, in Bennett, A., Cieslik, M. and Miles, S. (eds), Researching Youth. Basingstoke: Palgrave Macmillan, 2003, p. 13-28.
[83] Petkovic S., Ignatovich A., Galstyan M., YOUTH RESEARCH: THE ESSENTIALS, Council of Europe and European Commission, June 2019, p. 10.
[84] Տե՛ս Helve H. (ed.). Mixed methods in youth research. – Finnish Youth Research Network, 2005:
[85] Տե՛ս Cieslik M., Simpson D., Key concepts in Youth Studies, Sage publications Ltd, 2013, էջ 36:

րը, որոնք երիտասարդական ուսումնասիրությունների հիմքում են, համակարգված ձևակերպում ստացան 1978 թ. Բելմոնթի զեկույցում, որտեղ սահմանվեցին էթիկական 3 սկզբունքներ, իսկ հետագայում՝ 1979 թ., ավելացվեց ևս մեկը:

1. *Ինքնավարություն.* երիտասարդները վստահ են, որ կարող են մասնակցել հետազոտությանը որպես ազատ կամքի դրսևորում, որ նրանց ոչինչ չի սպառնում, եթե նրանք մերժեն մասնակցել հետազոտությանը:
2. *Ոչ չարամտություն.* այն նախնական տեքստում միացված էր բարերարություն, բարի գործ անելու սկզբունքի հետ և նշանակում էր չվնասել: Ըստ հեղինակների՝ վնասել հասկացությունը լայն է, դրա համար նրանք կիրառեցին «ոչ չարամտություն» հասկացությունը, ինչը նշանակում է կատարել բոլոր քայլերը՝ երիտասարդներին զերծ պահելու ամեն տեսակ ցավից, տառապանքից, վիրավորանքից և ֆիզիկական որևէ վտանգ կամ պոտենցիալ պարունակող գործընթացներից:
3. *Բարերարություն.* հետազոտողի համար հստակ է, թե ինչ է շահելու, ինչ օգուտներ է բերելու հետազոտությունը երիտասարդի և հասարակության համար, ինչ ռիսկեր է այն պարունակում վերջիններիս համար, արդյունքում հետազոտությունից սպասվելիք օգուտները արդարացնում են այդ ռիսկերը:
4. *Արդարություն.* հետազոտողները պետք է հիմնավորեն, թե ինչպես են ընտրում հետազոտության մասնակիցներին, ովքեր պետք է մասնակցեն հետազոտությանը[86]:

Էթիկական սկզբունքները պետք է հաշվի առնվեն հետազոտության պլանավորման և իրականացման ողջ ընթացքում, իսկ հնարավոր բոլոր ռիսկերը պետք է հաշվի առնվեն և կառավարվեն: Էթիկական սկզբունքներին հետևելու նպատակն է նաև «հետազոտության ամբողջականության խախտումից խուսափելը, ինչը, մասնավորապես, նշանակում է խուսափել տվյալների կեղծումից, նյութերի կեղծումից և գրագողությու-

---

[86] Տե՛ս Doing Research with Children, A practical Guide, Greig A., J. Taylor, T. Mackay, 3rd edition, 2013, էջ 247:

նից»[87]: Երիտասարդական ուսումնասիրություններում հիմնական էթիկական մարտահրավերներն առաջանում են խոցելի խմբերի, այդ թվում՝ փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող երիտասարդների, պատերազմից տուժած վայրերի (war zones) երիտասարդների հետ հետազոտություններ իրականացնելիս[88]: Այս իմաստով առաջնային է հատկապես *տեղեկացված համաձայնության ստացումը*[89]: Էթիկական հաջորդ նկատառումը կապված է *ակնկալիքների հետ*: Արդյունավետ հետազոտությունը կախված է վստահության հարաբերություններից և անկեղծ փոխանակման ու բաց մթնոլորտի ձևավորումից: Նման պայմանները կարող են հատկապես խրախուսել երիտասարդներին, ովքեր ենթարկվել են տանջանքների և ճնշումների, քանի որ հետազոտողը կարող է լինել առաջին մարդը, ով իսկապես լսում է նրանց խնդիրները և լրջորեն ընդունում նրանց մտահոգությունները, սակայն կարևոր է նրանց չմոլորեցնել կամ անիրատեսական ակնկալիքներ չառաջացնել: Վերջին տասնամյակների ընթացքում շատ գիտնականների համար կարևոր խնդիր է դարձել ավելի մեծ *հաշվետվողականության* ապահովումը հետազոտության մասնակիցների և շահակիցների նկատմամբ: Հաշվետվողականության սկզբունքի հետ սերտորեն կապված է մյուս կարևոր էթիկական պարտավորությունը՝ հետազոտության *մասնակիցների նկատմամբ հարգանքի դրսևորումը*: Երիտասարդների հետ իրականացվող հետազոտություններում կարևոր սկզբունք է *չվնասելը*, որը նշանակում է որևէ ռիսկի չենթարկել երիտասարդին, որը մինչ հետազոտությունը արդեն իսկ խոցելի է: Էթիկական սկզբունքներին հետևելու պահանջը ազդում է հետազոտության մեթոդաբանության ընտրության և հիմնավորման վրա:

---

[87] Նույն տեղում, էջ 12:

[88] Տե՛ս Petkovic S., Ignatovich A., Galstyan M., Youth Research: The Essentials, Council of Europe and European Commission, June 2019, էջ 12: Boyden J. Conducting Research with War-Affected and Displaced Children: Ethics & Methods, Cultural Survival Quarterly Magazine, Issue 24.2, 2000:

[89] Տե՛ս Doing Research with Children, A practical Guide, Greig A., J. Taylor, T. Mackay, 3rd edition, 2013, էջ 255:

## Գլուխ 3. Հայաստանի երիտասարդների ուսումնասիրման մեթոդաբանական առանձնահատկությունները

Երիտասարդների, երիտասարդության հարցերը մշտապես ուսումնասիրվել և քննարկվել են հայ հասարակագիտական և սոցիոլոգիական ժառանգության շրջանակներում: Գրիգոր Արծրունին, Գարեգին Նժդեհը, Երվանդ Լալայանը, Րաֆֆին այն հեղինակներն են, որոնք անդրադարձել են միջսերնդային փոխհարաբերություններին, կրթությանը, երիտասարդությանը: Եթե Լալայանը, ներկայացնելով տարբեր ծեսեր, նշում է ավանդույթների փոխանցման մեջ երիտասարդների դերի մասին, ապա Արծրունին, Րաֆֆին քննում են երիտասարդության դերն ու խնդիրները: «Հայ երիտասարդությունը» հոդվածում Րաֆֆին քննարկում է երիտասարդներին որպես «թարմ ուժ, մանուկ և աճող զորություն, որից կախված է ժողովրդի առաջադիմությունը և հատկապես ապագան»[90]: Հետաքրքրական է, որ Րաֆֆին աշխարհագրական դետերմինիզմին համահունչ տալիս է լեռնաբնակ և հարթավայրերում բնակվող երիտասարդների բնութագրերը[91]: Բացի աշխարհագրական գործոնից, Րաֆֆին խորությամբ ներկայացնում է «գյուղական», «գավառական քաղաքների երիտասարդության» և «ուսանող երիտասարդության» առանձնահատկությունները իր հետազոտության մեջ: Րաֆֆին ներկայացնում է հայ երիտասարդության կենցաղը, կրթությունը, հասարակական կյանքում նրա մասնակցությունը, ինքնության, ընտանիքի հարցեր: Լեոն ևս կարևորում է Րաֆֆու գործունեությունը, հատկապես գրական աշխատանքները, որոնք ուղենշային են երիտասարդության համար:

*«Րաֆֆին կարողացավ լույս հանել իր երկհատոր «Կայծերը», որ նա անվանեց վեպ-ծրագիր: Ծրագիր էր այդ վեպն այն կողմից, որ պատկերում էր մի խումբ երիտասարդների, որոնք Պարսկաստանի Սալմաստ գավառից անցնում են Վանի եւ Մուշի կողմերը ինչ-որ խորհրդավոր առաքելությամբ, որի ինչ լինելը կարելի էր մակաբերել հեշտությամբ»[92]:*

---

[90] Րաֆֆի: Երկերի ժողովածու, 9-րդ հատոր, Հայպետհրատ, Երևան, 1958 թ., էջ 388:
[91] Տե՛ս Րաֆֆի: Հայ երիտասարդությունը, «Մշակ», 1879 թ., №№ 192-195, 197-199, 201-208:
[92] Լեո: Անցյալից: Հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925:

Լեոն նաև գրում է Արծրունու մասին՝ նշելով, որ *«Երիտասարդ և առաջադեմ սերունդը նրան էր ընդունում իր հեղինակավոր առաջնորդ և պարագլուխ»[93]:* Լեոն ներկայացնում է, թե ինչպես են 19-րդ դարից սկիզբ առնում հեղափոխական, ազգային շարժումները՝ ընդգծելով երիտասարդների դերը: Նա նշում է նաև Թիֆլիսում ձևավորված «Երիտասարդ Հայաստան» հայդուկային կազմակերպության մասին, որի հիման վրա հետագայում ձևավորվեց «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը:

Ժամանակակից սոցիոլոգիական հետազոտությունները ևս հիմքեր են ստեղծել զարգացնելու Հայաստանում երիտասարդության սոցիոլոգիան: Անկախության տարիներից սկսած՝ իրականացվել են ակադեմիական և կիրառական տարբեր հետազոտություններ երիտասարդության[94], երիտասարդների հիմնախնդիրների[95], երիտասարդների ընկալումների վերաբերյալ[96]: Հայաստանում երիտասարդության ոլորտի հետազոտություններ իրականացվում են նաև տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից՝ ձևավորելով այդ կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև ոլորտային քաղաքականությունների մշակման և նախագծման, վերանայման համար փաստահեն հիմք[97]: Հայաստանում 2005 թ. ձևավորվեց երիտասարդության ազգային զեկույցների մշակման ավանդույթը[98]՝ որպես փաստարկված երիտասարդական պետա-

---

[93] Նույն տեղում, էջ 23:
[94] Տե՛ս Խաչատրյան Ա., Ուսանողը, ժամանակը և արժեքները, 1991 // Գարուն, Մանուկյան Ս., Հայաստանի երիտասարդությունը և քաղաքական գործընթացները // 21-րդ ԴԱՐ, 2016, №1 (65):
[95] Տե՛ս Atanesyan A. and Mkrtichyan A. Youth Perceptions of the War in Ukraine and its Possible Consequences (On the Case of Armenian Youth in Yerevan). Journal of Sociology: Bulletin of Yerevan University, 14(1 (37)), 2023, 7-28:
[96] Տե՛ս Атанесян А., Мелконян Н., Искандарян Л. and Хачикян А. Երևանաբնակ երիտասարդության ընկալումները Եվրոպայի եվրոպացիների մասին // 21-րդ ԴԱՐ, (6 (76)), 2017, 99-117:
[97] Տե՛ս Մարդկային զարգացման ազգային զեկույց 2018/2019, Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը, Հայաստան 2019:
[98] https://www.azatutyun.am/a/1581266.html [29.02.2026թ]:

կան քաղաքականության մեխանիզմ[99]: Հայաստանում առաջին անգամ 2006-2007 թթ. իրականացվեց երիտասարդության վերաբերյալ համալիր ուսումնասիրություն, որի արդյունքները կիրառվեցին հետագայում երիտասարդության վերաբերյալ պետական քաղաքականության մշակման գործընթացում[100]: Իսկ արդեն 2013-2019 թթ. Հայաստանում գործել է Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը, որը լինելով փաստարկված երիտասարդական քաղաքականության միակ ինստիտուցիոնալ մեխանիզմը՝ իրականացնում էր հայաստանյան երիտասարդության վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտություններ [101]:

2020 թ. պատերազմը զգալի ազդեցություն ունեցավ հայ հասարակության, մասնավորապես՝ երիտասարդության վրա, և այդ ազդեցությունը զգացվում է կյանքի բոլոր ոլորտներում: Երիտասարդներին վերաբերող հիմնախնդիրների ուսումնասիրությունը հնարավորություն կտա բացահայտելու երիտասարդների հիմնական կարիքները, խնդիրները, նպատակները, ձգտումներն ու մտահոգությունները և այդ գիտելիքները փոխանցելու երիտասարդների հետ աշխատող մասնագետներին, երիտասարդական քաղաքականություն մշակողներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով երիտասարդների սոցիալ-հոգեբանական վիճակին, կրթությանը և զբաղվածությանը, անվտանգության զգացմանը, քաղաքացիական գործընթացներում ներգրավվածությանը: Հետպատերազմյան իրավիճակը Հայաստանում լուրջ մարտահրավերներ է առաջացրել բոլոր ոլորտներում, այդ թվում՝ երիտասարդների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների, քաղաքական, քաղաքացիական կյանքին երիտասարդների ներգրավվածության համատեքստում: Այս առումով խիստ կարևորվում են Հայաստանի երիտասարդների վերաբերյալ ուսումնասի-

---

[99] Տե՛ս Մանուկյան Ս., Հայաստանի երիտասարդությունը և հայաստանյան էթնո-սոցիոմշակութային համակարգի զարգացումը, Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, Երևան, 2012:

[100] Տե՛ս «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշում, 29 հունվարի 2010 թվականի N 98-Ն, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=104611, [07.03.2026թ.]:

[101] Տե՛ս ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները, Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն ՊՈԱԿ, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2014:

րությունները հատկապես ժամանակակից բարդ և ոչ միանշանակ հասարակական փոխակերպումների համատեքստում, որոնք առաջացնում են բազմաթիվ հակասական միտումներ երիտասարդների՝ հանրային հիմնախնդիրներին արձագանքելու գործընթացներում: Նման պայմաններում երիտասարդության զարգացումը ունի ոչ գծային և հակասական բնույթ, ինչը լուրջ ազդեցություն կարող է թողնել ողջ հասարակության զարգացման հեռանկարների վրա: Սույն համատեքստում հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել, թե ինչպիսի փոփոխությունների են ենթարկվում երիտասարդների՝ նրանց ապագայի վերաբերյալ ընկալումները պատերազմի ավարտից հետո: Կարևոր է հասկանալ, թե ինչպիսի կարիքներ ունեն երիտասարդները, ինչպես է ազդել պատերազմը երիտասարդների տարբեր խմբերի վրա, որոնք են երիտասարդների դիմադրողականության վրա ազդող հիմնական գործոնները:

Առհասարակ, կոնֆլիկտները, պատերազմը և անվտանգությունը երիտասարդական ուսումնասիրությունների վաղ փուլերում և հետագա զարգացման ընթացքում երկար ժամանակ չեն դիտարկվել որպես կենտրոնական հետազոտական ուղղություններ[102]: Երիտասարդների վրա պատերազմի և կոնֆլիկտների ազդեցության մասին փաստաթղթավորված առաջին զեկույցներից է Գ. Մաչելի (Graça Machel, 1996) զեկույցը[103]: Վերջին տարիներին երիտասարդական ուսումնասիրությունների մի մասը սկսել է անդրադառնալ նաև կոնֆլիկտային իրավիճակների ազդեցությանը երիտասարդների կյանքի և անվտանգության վրա՝ փաստելով, որ պատերազմը և զինված հակամարտությունները ազդում են երիտասարդների կրթական արդյունքների, հասակակիցների հետ հարաբերությունների և առհասարակ կյանքից բավարարվածության վրա[104]: Երկարաժամկետ (լոնգիտյուդային) ուսումնասիրությունները ևս փաստում են, որ կոնֆլիկտային փորձը և հետկոնֆլիկտային միջավայրը բա-

---

[102] Տե՛ս Furlong A. Future agendas in the sociology of youth, Youth Studies Australia, University of Glasgow, September 2011:

[103] Տե՛ս Machel G. Impact of Armed Conflict on Children: Report of the Expert of the Secretary-General, Submitted Pursuant to UN General Assembly Resolution 48/157, UN, New York, 1996:

[104] Տե՛ս Reed et al, 2012:

ցաաբար են ազդում երիտասարդների հոգեկան առողջության վրա[105]: Պատերազմների ազդեցությունը երիտասարդների վրա բնութագրվում է հոգեկան առողջության մի շարք խաթարումներով՝ տրավմա, հետտրավմատիկ սթրեսային խանգարում (post-traumatic stress disorder), ապագայի հանդեպ վստահության նվազում[106]:

2016 թ. ապրիլյան պատերազմը, 2018 թ. քաղաքական վերափոխումները, COVID-19 համավարակը և 2020 թ. պատերազմը ձևավորել են բազմաճգնաժամային սոցիալական իրականություն, որի պայմաններում ձևավորվում են Հայաստանի երիտասարդների ինքնությունները, կենսափորձերը և ապագայի պատկերացումները: Հետևաբար, երիտասարդների ուսումնասիրությունը հետպատերազմյան իրականության և բազմաճգնաժամային պայմանների համատեքստում ձևավորում է վերլուծական այն շրջանակը, որի միջոցով է հնարավոր առավել խորությամբ հասկանալ Հայաստանի երիտասարդների ինքնության ձևավորման, անկախացման և ապագայի կառուցման արդի գործընթացները: Այս մենագրությունում բազմաճգնաժամը կիրառվում է որպես վերլուծական գործիք՝ նկարագրելու փոխկապակցված սոցիալական, քաղաքական, անվտանգային և տնտեսական այն անորոշությունները, որոնց պայմաններում ձևավորվում են Հայաստանի երիտասարդների ինքնությունները, կենսակերպերը և ապագայի պատկերացումները:

---

[105] Տե՛ս Betancourt et al, 2020:

[106] Տե՛ս The Role of Youth in Post-Conflict Reconstruction, Marit Woods SIT Graduate Institute, 2011:

## ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Գլուխ 4. Երիտասարդների ինքնաընկալման վերաիմաստավորումները

*«Դեռահասությունից երիտասարդություն անցումը, բացի տարիքային ընդունված նորմերից, գալիս ա պատասխանատվության շեմով, սպասումներով՝ թե ինչ սպասումներ ունեն քո հանդեպ, ու ինչ պատասխանատվություն ունես դու քո վրա դրած»[107]:*

*Երիտասարդների ինքնության ձևավորումը*

Երիտասարդի ինքնության հարցը քննարկելիս ակադեմիական գրականությունը մշտապես վերլուծում է, թե ինչ է նշանակում լինել երիտասարդ տվյալ հասարակական և պատմական համատեքստում: Քանի որ սոցիոլոգները գիտակցում են, որ ինքնությունները ձևավորվում են տարբեր կերպ՝ կախված պատմական և մշակութային համատեքստից, մեծ մասը մերժում է երիտասարդական ինքնության ձևավորման գաղափարը որպես համընդհանուր երևույթ[108]: Երիտասարդի ինքնության ուսումնասիրությունը անքակտելիորեն կապված է երիտասարդության՝ որպես սոցիալական կարգավիճակի, անցումային փուլի և հասկացության վերաիմաստավորման հետ: Տարբեր ժամանակներում և տարբեր հասարակություններում երիտասարդ լինելը տարբեր նշանակություններ և դրսևորումներ ունի:

Ինքնության դասական սոցիոլոգիական մոտեցման հիմքում Ջ. Միդի, Հ. Բլումերի, Է. Հոֆմանի մշակած սիմվոլիկ ինտերակցիոնիզմի հայեցակարգն է: Այս հայեցակարգի վրա հիմնվելով՝ երիտասարդության ժամանակակից հետազոտողները հաճախ ինքնությունը դիտարկում են

---

[107] 20 տարեկան տղա, մարզից, ֆոկուս խմբային քննարկման մասնակից:

[108] Տե՛ս Best A. Youth identity formation: Contemporary identity work //Sociology Compass. – 2011. – T. 5. – № 10, էջ 908-922:

որպես մի նախագիծ, որը կառուցվում է բազմաթիվ վայրերում, և որը ուշ արդիականության մեջ կարող է չունենալ կայուն հիմք: Հետմոդեռնիստները այս փուլը ընդգծում են՝ շեշտադրելով ինքնության հոսունությունը և անկայունությունը: Վերջինս կապված է ինքնության ճգնաժամի հետ, որի դեպքում անհատները ավելի ու ավելի են դժվարանում կայուն ինքնություններ կառուցել և պահպանել տնտեսական անկանխատեսելի կյանքի հետևանքով[109]: Այս իմաստով երիտասարդություն նշանակում է սովորել ապրել անորոշության մեջ: «Ես-ը դիտվում է որպես ռեֆլեքսիվ նախագիծ, որի համար պատասխանատու է անհատը»[110], իսկ «ինքնությունը «տրվածից» անցնում է «խնդրի»... այնպես, որ դառնալու անհրաժեշտությունը ժամանակակից կյանքի առանձնահատկությունն է»[111]: Հենց այս համատեքստում է, որ երիտասարդ լինել նշանակում է ձևավորել սեփական ինքնությունը, մտածել իր մասին՝ որպես հորինելու, վերափոխելու և կատարելագործելու կամային նախագծի[112]: Արդյունքում տեղի է ունենում անհատականացման գործընթաց, որը ներառում է ավելի ու ավելի բազմազան ինքնություններ և կենսակերպեր:

Երիտասարդների ինքնության ձևավորման վերաբերյալ հոգեբանական, սոցիոլոգիական ժամանակակից մոտեցումները կարելի է ամփոփել հետևյալ դրույթներում.

- *Ինքնության մշակութային պայմանավորվածությունը*՝ ինքնությունը միշտ ձևավորվում է այն մշակույթում, որում անհատը գտնվում է կոնկրետ ժամանակի և տարածության մեջ:
- *Ինքնությունը որպես անավարտ նախագիծ*՝ լինեն ֆորմալ փուլավորված, թե գծային, ինքնությունները կարող են դիտարկվել որպես կյանքի ընթացքում իրականացվող նախագծեր: Հետազոտողներից քչերն են այժմ պնդում, որ ֆիքսված չափահաս ինքնությունը զարգանում է երիտասարդության կամ պատանեկու-

---

109 Տե՛ս Furlong, նշվ. աշխ.:

110 Giddens, 1991, p. 75.

111 Bauman, 2000, p. 31.

112 Տե՛ս Best A. Youth identity formation: Contemporary identity work //Sociology Compass. – 2011. – T. 5. – № 10, էջ 908-922:

թյան ու շ փուլերում, ոմանք նույնիսկ պնդում են, որ ինքնության նախագծերը երբեք չեն ավարտվում:

- *Համընկնող և հակասող ինքնություններ*՝ ինքնությունները զարգանում են բազմաթիվ վայրերում այնպիսի ձևերով, որոնք կարող են համընկնել, հակասել միմյանց (էթնիկ խմբի անդամ, տղամարդ/կին, ուսանող, աշխատող): Այս ինքնություններից ոչ բոլորն են ներդաշնակ միմյանց հետ, և անհատը մեծ հնարավորություն ունի զարգացնելու (կամ իրականում ստիպված է զարգացնելու) համահունչ ինքնության սցենար, որի միջոցով փոխկապակցում է այս ինքնությունները:
- *Երիտասարդության փուլի ձգձգում*՝ սոցիալ-տնտեսական համատեքստերի բարդության աճը ազդում է ինքնության զարգացման վրա. հետազոտողների մի մասը ընդգծում է մորատորիումի (լատ. moratorius-հետաձգել) բացասական հետևանքները (ռիսկ, անկայունություն, կախվածություն), մինչդեռ մյուսները առանձնացնում են նման ձգձգման դրական կողմերը (մանկության սահմանափակումներից ազատ, ինքնուրույն լինելը, սեփական կյանքը կառավարելը, փորձելը, փորձարկելը)[113]:

Երիտասարդի սահմանումը մշտապես եղել է ակադեմիական և պրակտիկ հետազոտությունների, գիտական և քաղաքականության բանավեճերի տիրույթում: Երիտասարդության սահմանումները՝ որպես որոշակի տարիքային միջակայք, տարբեր երկրներում տարբեր են, քանի որ երիտասարդությունը ժամանակագրորեն չի սահմանվում որպես փուլ, որը կարող է կապված լինել որոշակի տարիքային միջակայքների հետ. ոչ էլ դրա վերջնական կետը կարող է կապված լինել հատուկ գործողությունների հետ[114]:

[113] Տե՛ս Furlong, A.  Youth Studies: An Introduction. USA: Routledge, 2013:
[114] Տե՛ս Furlong, նշվ. աշխ., էջ 2-3:

**Գծապատկեր 1. Երիտասարդների տարիքային շեմն ըստ երկրների[115]**




*Հայաստանի երիտասարդների ժողովրդագրական բնութագիրը*

ՀՀ երիտասարդական քաղաքականության մասին օրենքը սահմանում է. «Երիտասարդ՝ 13-ից մինչև 35 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձ»[116]: 1996 թ. սկսած՝ ՀՀ բնակչությունը ունի նվազման միտում. 1996 թ. մշտական բնակչությունը[117] կազմել է 3,248,800, իսկ 2025 թ.՝ 3,076,200 մարդ (տե՛ս Գծապատկեր 2): Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ՝ 2020 թ., նվազման միտումը ավելի է զգացվել[118]: Ընդ

---

[115] Տե՛ս Defining Youth in Contemporary National Legal and Policy Frameworks Across Europe, 2018, էջ 8, https://pjp-eu.coe.int/documents/42128013/47261653/Analytical+paper+-Youth+Age+Bojana+Perovic+4.4.16.pdf/eb59c5e2-45d8-4e70-b672-f8de0a5ca08c [29.01.2026թ.]:

[116] ՀՀ օրենքը երիտասարդական քաղաքականության մասին՝ ընդունված՝ մարտի 5, 2025:

[117] ՀՀ վիճակագրական կոմիտեն մշտական բնակչություն սահմանում է տվյալ տարածքում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և ժամանակավոր բացակայող բնակչության թվաքանակի ցուցանիշները:

[118] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2022, 2025 թ. [12.02.2026 թ.]:

որում, նվազման միտումը նկատվում է ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչության շրջանում: ՀՀ բնակչության ծերացման գործակիցն[119] աճի միտում ունի. 2011 թ. այն կազմել է 73.2 %, 2020 թ.՝ 90 %, 2024 թ.՝ 132.3 %: Երիտասարդների խնամառության գործակիցը[120] ևս աճի միտում ունի. 2019 թ. այն կազմել է 33.6 %, 2020 թ.՝ 33.8, իսկ 2024 թ.՝ 33.5 %:

**Գծապատկեր 2. ՀՀ մշտական բնակչության թվաքանակը ըստ տարիների**
*Նշում:* ¹ Ըստ մարդահամարի: * Ըստ ՀՀ 2022 թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառման տվյալների, հազ. մարդ
*Աղբյուր.* ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու




2019 թ. ՀՀ-ում 15-34 տարիքային խումբը կազմել է 864,300 մարդ, 2020 թ.՝ 840,000 մարդ, 2021 թ.՝ 823,300 մարդ, 2022 թ.՝ 804,700 մարդ: Երիտասարդ բնակչությունը ևս նվազման միտում ունի, որը նկատելի է հատկապես 20-24 և 25-29 տարիքային խմբում, ինչը գրականու-

[119] Ծերացման գործակիցը ներկայացնում է 60 և բարձր տարիքի բնակչության թվաքանակը՝ 15 տարեկանից ցածր 100 բնակչի հաշվարկով:
[120] Երիտասարդների խնամառության գործակիցը՝ 0-15 տարեկանների հարաբերակցությունն է 16-62 տարեկան 100 բնակչի հաշվով:

թյան մեջ նաև անվանում են մեծահասակ երիտասարդ (adult youth) (տե՛ս Գծապատկեր 3): Երիտասարդների թվի նվազումը Հայաստանի մարզերում ավելի նկատելի է, քան Երևանում: Դա կարելի է բացատրել Հայաստանի մարզերից դեպի մայրաքաղաք Երևան՝ կրթական և աշխատանքային նպատակներով, ինչպես նաև 2020 թ. սեպտեմբերին հակամարտության սրումից հետո Լեռնային Ղարաբաղից ավելի քան 90 հազար տեղահանվածների ժամանումով, որոնց հիմնական մասը Երևանում սկսեց բնակվել[121]:

**Գծապատկեր 3. ՀՀ երիտասարդ բնակչության թվաքանակը**
*Աղբյուր.* ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու




Առաջին ամուսնության միջին տարիքը բարձրացել է թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց շրջանում: Մինչ պատերազմը քաղաքային բնակավայրերում կանայք առաջին անգամ ամուսնացել են 28 տարեկանում, իսկ գյուղական բնակավայրերում՝ 26 տարեկանում: Տղամարդկանց հա-

[121] Տե՛ս REACH Armenia: Economic Resilience Assessment (ERA) - Report on economic/livelihood challenges of refugee-like population and host communities affected by the conflict in Nagorno Karabakh. September 2021. Accessed at https://reliefweb.int/report/armenia/reach-armenia-economic-resilience-assessment-era-report-economiclivelihood-challenges. [29.01.2026]:

մար համապատասխան ցուցանիշները եղել են 31 և 30: 2024 թ. կանանց առաջին ամուսնության միջին տարիքը կազմել է 29.1, իսկ տղամարդկանցը՝ 32.6 տարի[122]: Կանանց միջին տարիքը (և՛ առաջին անգամ մայրանալու, և՛ ընդհանրապես ծննդաբերելու) ևս աճել է: 2021 թ. առաջին ծննդաբերության ժամանակ մոր միջին տարիքը քաղաքային բնակավայրերում եղել է 26, իսկ գյուղական բնակավայրերում՝ 24, իսկ 2025 թ.՝ համապատասխանաբար 27,1 և 25[123]: Տվյալները ցույց են տալիս, որ ծննդաբերության ժամանակ մոր միջին տարիքը ցածր է կանանց ամուսնության միջին տարիքից: Սա կարող է բացատրվել այն բանով, որ ամուսնության հաշվարկները հիմնված են գրանցված ամուսնությունների թվի վրա, մինչդեռ ամուսնության գրանցումը կարող է հետաձգվել: Թեև 2022-2023 թթ. արձանագրվել է ծնելիության գումարային գործակցի[124] որոշակի բարելավում, մասնավորապես ի հաշիվ գյուղական բնակչության (այն կազմել է՝ համապատասխանաբար 2.118 և 2.543 միավոր, քաղաքային բնակավայրերի՝ 1.489 և 1.541 միավորի համեմատ), սակայն 2024 թ. աճի միտումը դանդաղել է՝ կազմելով՝ 1.714 միավոր, քաղաքայինը՝ 1.361 և գյուղականը՝ 2.396[125]: 2018-2023 թվականներին Հայաստանում որոշակիորեն աճել է մեկ կնոջ հաշվով ծնվող երեխաների միջին թվաքանակը՝ ծնելիության գումարային գործակիցը կամ պտղաբերության գործակիցը, ինչը, սակայն, չի պահպանվել 2024 թ.:

*Երիտասարդների ինքնաընկալումները*

Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության մասնակից երիտասարդների հիմնական մասը՝ 41.5%-ը, որպես երիտասարդության սկիզբ նշում է 16 տարեկանը, իսկ որպես երիտասարդության ավարտ 37%-ը նշում է 35 տարեկանը: Տարիքային սահմանների այս ընկալումը երիտասարդների համար ունի ոչ այնքան կենսաբանա-

---

[122] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2025 [09.02.2026 թ.]:

[123] Տե՛ս Հայաստանի կանայք և տղամարդիկ-2025 / Վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե:

[124] Մեկ կնոջ հաշվով ծնված երեխաների միջին թվաքանակը:

[125] Տե՛ս Հայաստանի կանայք և տղամարդիկ / Վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե, Երևան, 2022, 2025 [09.02.2026 թ.]:

կան, որքան սոցիալական և փորձառական հիմք: Երիտասարդ լինելը ընկալվում է որպես փուլ, երբ անհատը սկսում է հասկանալ հասարակական համակարգերի դերը և իր դիրքը ձևավորել դրանց նկատմամբ: Երիտասարդությունը ոչ միայն անձնական զարգացման, այլև հանրային մտածողության և քաղաքացիական դիրքավորման փուլ է: Երիտասարդության սկիզբը հաճախ կապվում է այն պահի հետ, երբ անհատը սկսում է ինքնուրույն որոշումներ կայացնել և կրել դրանց հետևանքների պատասխանատվությունը:

**Աղյուսակ 2. Երիտասարդության սկզբի և ավարտի պատկերացումները**
*Աղբյուր.* Երիտասարդների շրջանում հարցում, 13-35, %

| | Երիտասարդության սկիզբ | Երիտասարդության ավարտ |
|---|---|---|
| **Միջին** | **16.2** տարեկան | **35.1** տարեկան |
| **Մեդիանա** | **16** | **35** |
| **Սահմանային շեղում** | **≈ 1.7** | **5.4** |
| **Նվազագույն** | **13** | **22** |
| **Առավելագույն** | **26** | **45** |
| | **41.5%**-ը՝ **16** տարեկան | **37%**-ը՝ **35** տարեկան |
| | **25%**-ը՝ **13–15** տարեկան | **18.3%՝ 30, 13.2%՝ 40** |

Աղջիկները ավելի վաղ տարիքն են դիտարկում որպես երիտասարդության սկիզբ (15-16-ը), քան տղաները (16-17-ը), իսկ երիտասարդությունն ավարտվում է, ըստ աղջիկների, 32–35 տարեկանում, ըստ տղաների՝ ավելի ուշ՝ 36-40 տարեկանում: Երիտասարդների 68%-ի կարծիքով՝ երիտասարդության տևողությունը 15–24 տարի է ձգվում: Այսպիսով, տղաները երիտասարդությունը ընկալում են որպես ավելի ուշ սկսվող և ավելի ուշ ավարտվող շրջան, իսկ աղջիկները՝ ավելի վաղ սկսվող և ավելի շուտ ավարտվող: Աղջիկների դեպքում երիտասարդության ավարտի ավելի վաղ ընկալումը հաճախ կապված է ընտանեկան և խնամքի դերերի ավելի վաղ ստանձնման սոցիալական սպասումների հետ, մինչդեռ տղաների ընկալմամբ երիտասարդության երկարաձգումը զուգորդվում է *«ինքն իրեն ապացուցելու»*, մասնագիտական կայացման և նյութական ապահովման երկարատև գործընթացների հետ:

Երիտասարդի վերաբերյալ ընկալումներում գերիշխում են հետևյալ նկարագրությունները. երիտասարդը այն մարդն է,

- ով պատասխանատու է իր որոշումների համար (31%),
- ով լի է ուժով և էներգիայով (23%),
- ով ունի երազանքներ և նպատակներ, որոնք փորձում է իրագործել (20%),
- ով անկախ է և փորձում է ինքնուրույն որոշումներ կայացնել (19%),
- ով բաց է նոր գաղափարների և փոփոխությունների համար (18%):

**Գծապատկեր 4. Երբ ասում եք «երիտասարդ», ո՞ւմ եք պատկերացնում**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 13-35




Նկատելի է նաև երիտասարդների ինքնությունների որոշակի բևեռացվածությունը. մի կողմից առկա է հասարակական կյանքում մեծ ներգրավվածություն ունեցող և ապագային միտված կերպարը, մյուս կողմից՝ սոցիալապես անտարբեր և օտարված կերպարը: Այս բևեռացու-

մը հաճախ ընկալվում է ոչ թե որպես անհատական թերացում կամ մարտահրավեր, այլ որպես սոցիալական անհավասար հնարավորությունների և անորոշ միջավայրի հետևանք:

*«Ունենք ծայրահեղությունից ծայրահեղություն խումբ, ծայրահեղ հետաքրքրված, հայրենասեր, ապագայի մասին մտածող երիտասարդներ, և ունենք ծայրահեղ անտարբերություն, ում համար էական չի, թե իրանից, իրա շրջապատից դուրս ինչ է կատարվում»*[126]:

Երիտասարդության մի մասի համար երիտասարդ լինելը շարունակաբար վերաիմաստավորվում է որպես նոր բան սովորելու, կտրուկ փոփոխություններ անելու, փորձելու և հարաբերական անհոգության պահպանման ժամանակաշրջան: Քաղաքացիական, քաղաքական ներգրավվածությունը և ակտիվությունը ևս հանդիպում են երիտասարդի բնութագրումներում, երբ երիտասարդությունը ասոցացվում է քաղաքականապես ակտիվ լինելու հետ:

*«Էլեկտրիկ Երևանը իմ համար երիտասարդության շատ ակնհայտ տիպիկ օրինակ էր, որ հիմնականում էդ ցուցարարները երիտասարդներ էին, բայց համ էլ էնտեղ ինչ-որ սուգ չէր, ողբ չէր, էլի պայքար կար, բայց սենց մի տեսակ, մարդիկ գալիս էին էնտեղ ու նույնիսկ, հիմա չեմ ուզում անլրջացնել իրավիճակը, բայց հավես էր անցնում, նույնիսկ էն ժամանակ էլի, մարդիկ գիտակցում էին, որ ինչ-որ լավ բան են անում»*[127]:

Երիտասարդների քաղաքացիական ակտիվության համատեքստում երիտասարդական ինքնությունը բնութագրվում է հետևողականությամբ: Երիտասարդ լինելը նույնացվում է ոչ թե կարճատև ակտիվության, այլ դիմադրողականության, համառության և երկարատև ներգրավվածության հետ: Այս ինքնության մեջ կարևոր տեղ ունի նաև առաջնորդության և մենթորության բաղադրիչը, երբ երիտասարդը իր ինքնաիրացումը փոխպայմանավորում է ոչ միայն սեփական հաջողությամբ, այլև մյուսների զարգացմամբ, աջակցությամբ և հանրային միջավայրի ձևավորմամբ:

---

[126] Բիզնես ոլորտի երիտասարդի հետ անհատական հարցազրույցից մեջբերում:

[127] Բլոգեր, լրագրող աղջկա հետ անհատական հարցազրույցից մեջբերում:

Կարևոր է անդրադառնալ նաև համեմատվելուն, ինչը երիտասարդները դիտարկում են մի կողմից՝ հնարավորություն սեփական ուղին կառուցելու, նպատակներ սահմանելու, իսկ մյուս կողմից՝ որպես անընդհատ լարվածության մեջ գտնվելու պատճառ:

> *«Հայաստանում երիտասարդ լինել էդ նշանակում է միշտ համեմատվել սիոնմ մամինոյ պադրուգի [*ռուսերենից թարգմանաբար՝ մայրիկի ընկերուհու որդի. թարգմանությունը հեղինակի*] էդ եկել է Սովետի ժամանակվանից, հա որ ինքը էս մի բանը լավ է անում, դու էլ կամ ինչի՞ է իրա մոտ ստացվում ու քո մոտ չի ստացվում, ու էդի շատ է խանգարում»*[128]:

Այս «լավագույնի հետ» համեմատության մշակույթը խորապես արմատավորված է. այն և մի կողմից խթանում է ինքնազարգացումը, մյուս կողմից ձևավորում է բարդույթներ, հատկապես այն դեպքերում, երբ հաջողությունը ներկայացվում է որպես պարտադիր չափանիշ:

Երիտասարդության սկիզբը անմիջականորեն կապված չէ որևէ կոնկրետ իրադարձության հետ, սակայն երիտասարդների անկախ կյանք վարելու հիմնական ցուցանիշների շարքում դիտարկվում են՝

- ֆորմալ կրթության ավարտը,
- մուտքը աշխատաշուկա,
- ծնողական տնից հեռանալը,
- ամուսնանալը,
- ծնող դառնալը[129]:

Հայաստանի երիտասարդները ընդգծում են ինքնուրույն լինելու, սեփական անձի համար պատասխանատու լինելու փորձառությունը որպես երիտասարդության սկիզբ, ընդ որում նման փորձառություններ ձեռք բերելու ճանապարհի են նշում մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունվելը, հատկապես բնակության համայնքից դուրս, ծնողներից առանձին ապրելը, բանակում ծառայության անցնելը, ծնող դառնա-

---

[128] Կրթությունից, աշխատանքից դուրս գտնվող երիտասարդների հետ ֆոկուս խմբային քննարկումից մեջբերում:

[129] Տե՛ս Manzoni A. Conceptualizing and measuring youth independence multidimensionally in the United States. Acta Sociologica, 59(4), 2016, 362-377:

լը, քաղաքացիական ակտիվությունը, այդ թվում՝ կամավորությունը, ցույցերի մասնակցելը: Ընդ որում, այս իրադարձությունները ընկալվում են ոչ թե պարզապես որպես կենսափուլային անցումներ, այլ որպես ներքին վերակազմակերպման պահեր, երբ երիտասարդը ստիպված է ինքնուրույն կողմնորոշվել անորոշ միջավայրում: Ինքնուրույնությունը այստեղ ներկայացվում է ոչ թե որպես ընտրության ազատություն, այլ որպես անհրաժեշտ հմտություն՝ «*գոյատևելու, կայանալու և չկոտրվելու*» համար:

Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության մասնակից երիտասարդների հիմնական մասը երիտասարդության սկիզբը համարում է հանրակրթական դպրոցն ավարտելը: Հատկապես պարտադիր 12-ամյա կրթության անցման պարագայում, երբ ավագ դպրոցի փոխարեն աշակերտները նախընտրում են շարունակել կրթությունը մասնագիտական ուսումնական հաստատությունում, ինչը բարձրացնում է երիտասարդների ինքնուրույնությունը՝ մասնագիտության ընտրություն կատարելու, ինչպես նաև համայնքից դուրս կրթությունը շարունակելու առումով: Քոլեջների ընդունելության վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ վերջին տարիներին աճել է նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվողների թիվը[130]: Կրթական ուղու այս ընտրությունը հաճախ ընկալվում է որպես «*մեծանալու*» և ինքնուրույն կյանքի մեկնարկի հստակ սահմանագիծ, հատկապես այն դեպքերում, երբ այն ուղեկցվում է առանձին բնակվելով և ֆինանսական ինքնավարության առաջին փորձերով:

> *«Ես արդեն մի 3 տարի է մենակ եմ բնակվում, ու հիմա ավելի ինքնուրույն հասուն ժամանակահատված է իմ համար, ինձ թվում է, կյանքիս ամենալավ ու պրոդուկտիվ ժամանակահատվածներից է, որ ես հիմա ապրում եմ»[131]:*

Մանկությունից երիտասարդություն անցման հաջորդ կարևոր իրադարձությունը սոցիալական կապերի ընդլայնումն է. այդ փուլի կարևոր ցուցիչ է այն պահը, երբ ընտանիքը դադարում է լինել սոցիալական հիմ-

---

[130] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, տվյալների բազաներ:

[131] Բիզնես ոլորտի աղջկա հետ անհատական հարցազրույցից մեջբերում:

նական հենարանը, և առաջնային դեր են ստանում հասակակիցների, ընկերական և մասնագիտական շրջապատները: Այս փոփոխությունը ուղեկցվում է արժեքների, վարքագծի և ինքնաընկալման վերաձևակերպմամբ:

> *«Իմ կարծիքով մանկությունը վերջանում է էն պահին, երբ շրջապատը ավելի մեծ դեր է ունենում քո համար, քան ընտանիքը, իմ համար դա տենց է թվում, էդ պահին է, որ արդեն դու էնքան էլ ոնց որ ընտանիքի երեխա չես, այլ դու ինչ-որ շրջապատի անդամ ես, ընկերներ ունես, շրջապատ ունես, որ ավելի շատ դեր են խաղում քո կյանքում»[132]:*

Մանկությունից երիտասարդության անցման համար որպես նշանակալի իրադարձություն երիտասարդները՝ հատկապես պատերազմի մասնակից, Արցախից տեղահանված երիտասարդները նշում են պատերազմը: Պատերազմը վաղ հասունացումը կտրուկ խթանող և հաճախ տրավմատիկ գործոն դարձավ, որի հետևանքով մանկությունն ու պատանեկությունը շատերի համար ընկալվում են որպես կարճ կամ անավարտ փուլեր: Երիտասարդությունը վերածվում է սառնասրտության, ինքնակարգապահության և հոգեբանական դիմադրողականության ձևավորման շրջանի: Տղաները նաև ընդգծում են բանակ գնալու հանգամանքը:

> *«Փոփոխություն զգացի կռվից հետո, որովհետև հասկացա, որ ինչ սիտուացիա ուզում է լինի, պիտի սառնասիրտ լինես ու հավասարակշռված լինես միշտ սթափ կերպով, դա էր էլի մանկության վերջնակետը հենց կոնկրետ, որ գնացի բանակ ու կռիվը հենց սկսեց, դրանից հետո շատ բան փոխվեց իմ կյանքում»[133]:*

Երիտասարդները ծնող դառնալը ընկալում են որպես երիտասարդ լինելու, երիտասարդի ինքնության որակական փոփոխություն, երբ երիտասարդական *«փորձելու» և «փորձարկելու»* տրամաբանությունը փոխարինվում է *«կայունության և խնամքի»* առաջնահերթությամբ: Ծնող

---

[132] Կրթությունից, աշխատանքից դուրս գտնվող երիտասարդների հետ ֆոկուս խմբային քննարկումից մեջբերում:

[133] Բիզնես ոլորտի ներկայացուցիչ տղայի հետ անհատական հարցազրույցից մեջբերում:

դառնալու փորձառությունը Հայաստանի երիտասարդները համարում են երիտասարդության ավարտ, քանի որ սահմանափակվում են նրանց ազատությունները և այլ մարդու համար պատասխանատվությունն է ավելանում: Այս հանգամանքները երիտասարդները ընկալում են որպես երիտասարդությանը հակասող իրողություններ:

> *«Ես 19-ում երեխա եմ ունեցել, դրա համար ես ինձ մի քիչ փարբեր եմ համարում, այսինքն՝ ես համարում եմ, որ իմ մոփ երիփասարդությունը մի քիչ ավելի կարճա ա փևել, քան մարդկանց մեծամասնության էլի»*[134]:

Հայաստանում երիտասարդական ինքնությունը ձևավորվում է վաղ հասունացման, ինտենսիվ կենսափորձի և հավաքական պատասխանատվության պայմաններում՝ կրելով ոչ միայն անձնական, այլև սոցիալական և համայնքային նշանակություն: Երիտասարդության սկիզբը առնչվում է մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունվելու, առանձին ապրելու, բանակ գնալու, իսկ երիտասարդության ավարտը հիմնականում նույնացվում է ծնող դառնալու, փորձելու, փորձարկելու ավելի քիչ հնարավորությունների, պատասխանատվության աճի, ազատությունների սահմանափակման հետ:

[134] Բլոգեր, լրագրող աղջկա հետ անհատական հարցազրույցից մեջբերում:

## Գլուխ 5. Երիտասարդների կրթական ուղիները և մասնագիտական ինքնության ձևավորումը

Երիտասարդության վերաբերյալ ուսումնասիրություններում մշտապես էական և մեծ տեղ են զբաղեցնում կրթության, ուսուցման (ֆորմալ, ոչ ֆորմալ) խնդիրները, քանի որ երիտասարդները կյանքի մեծ մասն անցկացնում են կրթական միջավայրերում (դպրոց, քոլեջ, համալսարան), և այդ փորձառությունը կարող է ձևավորել նրանց հետագա կյանքի մեծ մասը: Հոգեբանական, ճանաչողական մի շարք մոտեցումներ և ուղղություններ ուղղված են հենց այս հարցերի ուսումնասիրմանը՝ ինչպես են երիտասարդները սովորում, ինչ գործոններ են ազդում այդ գործընթացի վրա և այլն: Երիտասարդության վերաբերյալ ուսումնասիրությունները միջգիտակարգային են. կրթության ոլորտում հետազոտությունները ավանդաբար ունեցել են սոցիոլոգիական ուժեղ ազդեցություն/ուղղվածություն և մասամբ կիսում են կրթության սոցիոլոգիայի հետ նույն օրակարգը: Երիտասարդների կրթության ուսումնասիրման հարցերում հետազոտողները հաճախ կիրառում են համակարգային, հոլիստիկ մոտեցում՝ կրթական համակարգերը մեկուսացված դիտարկելու փոխարեն դիտարկելով դրանք երիտասարդների ողջ կյանքի համատեքստերի հետ դինամիկ փոխառնչությամբ:

Կրթության վերաբերյալ երիտասարդական ուսումնասիրություններում հետազոտողները հիմնականում կենտրոնանում են հետևյալ թեմաների վրա.

- *Շարժունություն.* կրթությունը որպես անհավասարությունների հաղթահարման/վերարտադրության գործընթաց:
- *Հմտությունների զարգացում.* կրթությունը որպես գործընթաց, որի միջոցով երիտասարդները ձեռք են բերում գիտելիք և հմտություններ՝ կոշտ հմտություններ, փափուկ հմտություններ, մետահմտություններ և այլն:
- *Կենսակերպ, կենսաոճ.* կրթությունը որպես միջավայր, որը ձևավորում է կենսակերպ և կենսաոճ:

- *Ինքնություն.* կրթությունը երիտասարդների ինքնության ձևավորման գործընթաց և միջավայր[135]:

Կրթության՝ որպես երիտասարդների հմտությունների ձևավորմանը և զարգացմանը նպաստող ինստիտուտի դիտարկելու ճանապարհին կարևոր է անդրադառնալ Հայաստանի երիտասարդների գրագիտության ընդհանուր մակարդակին: 2022 թ. 15-24 տարեկանների գրագիտության մակարդակը կազմել է 99,77%, ընդ որում երիտասարդ կանանց գրագիտության մակարդակը փոքր-ինչ բարձր է (99,92%) երիտասարդ տղամարդկանց գրագիտության մակարդակից (99,65%)[136]: 2021 թ. երիտասարդության 31%-ը կազմում են զբաղվածությունից, կրթությունից և վերապատրաստումներից դուրս գտնվող երիտասարդները[137], որից 63%-ը կանայք են:

2020 թ. համավարակը և պատերազմական վիճակը խոչընդոտեցին երիտասարդների լիարժեք ընդգրկվածությանը կրթական համակարգում երիտասարդների կրթության իրավունքի լիարժեք իրացմանը[138]: Երիտասարդների կրթությունը մինչև 2020 թ. պատերազմը ուներ հետևյալ մարտահրավերները՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների թվի աճ, հատկապես տղաների շրջանում, կրթության բովանդակության և աշխատաշուկայում պահանջվող գիտելիքների, կարողությունների միջև անհամապատասխանություն, կրթության և տեխնոլոգիական զարգացումների անհամահունչություն, մասնագիտական կողմնորոշմանը նպաստող կրթությանը անհավասար հասանելիություն, հատկապես գյուղաբնակ երիտասարդների շրջանում, երիտասարդների կրթության մեջ ուսուցման, հետազոտական, գործնական հմտությունների համա-

---

[135] Տե՛ս Wyn, J., Educating for late modernity, in A. Furlong (ed.), Handbook of Youth and Young Adulthood, Abingdon: Routledge, 2009:

[136] Տե՛ս UNESCO ցուցանիշներ, https://countryeconomy.com/demography/literacy-rate/-armenia [04.04.2026]:

[137] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեն այս խումբը սահմանում է «չսովորող և չաշխատող երիտասարդներ», իսկ անգլիալեզու գրականությունը "NEET" "youth not in education and not in employment":

[138] Տե՛ս Գալստյան Մ., Հեռավար ուսուցումը Հայաստանում համավարակի ժամանակ. դիսկուրս-վերլուծություն, 37.091.3, 77-86, «Կրթությունը 21-րդ դարում», գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, թիվ 2(6), Երևան, ԵՊՀ հրատ., 2021:

դրման խնդիր, երիտասարդների պասիվ ներգրավվումը ուսումնական ողջ գործընթացում[139]: 2020 թ. պատերազմից հետո կրթության սոցիալական նշանակությունն ավելի է ընդլայնվել. այն ընկալվում է ոչ միայն որպես հմտությունների և մասնագիտության ձևավորման դաշտ, այլև որպես «նորմալացման»՝ կայունության և վերահսկելիության աղբյուր: Կրթական գործընթացը դառնում է մի մեխանիզմ, որի միջոցով վերականգնվում է խաթարված կյանքի տրամաբանությունը և անորոշ միջավայրում կառուցվում է ապագայի որոշակիության նվազագույն հիմքը: Կրթության օգտակարության չափանիշը հաճախ տեղափոխվում է «դիպլոմի արժեքից» դեպի «կիրառելի գիտելիքի արժեք». կրթությունը գնահատվում է այն չափով, որքանով այն ապահովում է աշխատաշուկայում հարմարման կարողունակություն, ինքնուրույնություն ու գործնական կողմնորոշում, և ոչ միայն այն հավաստող վկայական:

*Մասնագիտական կողմնորոշումը*

Ժամանակակից հետազոտությունները ցույց են տալիս, որ երիտասարդների մասնագիտական ընտրությունները ձևավորվում են երեք հիմնական առանցքների հատման կետում.

- Կառուցվածքային գործոններ (սոցիալական անհավասարություն, շուկա),
- Մշակութային նորմեր և պատկերացումներ,
- Թվայնացում և ապագայի անորոշություն[140]:

Այս համատեքստում կարիերայի ընտրությունը չի կարող դիտարկվել որպես միայն անհատական որոշում, այլ սոցիալականորեն կառուցված և պատմականորեն պայմանավորված գործընթաց: 81 երկրներում 690 000 դեռահասների շրջանում անցկացված ուսումնասիրությունը, որը հիմնված է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ, OECD)՝ Սովորողների միջազգային գնա-

---

[139] Տե՛ս Մարդկային զարգացման ազգային զեկույց, 2018/2019, Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Հայաստան, 2019, էջ 59-64:

[140] Տե՛ս OECD (2025), The State of Global Teenage Career Preparation, OECD Publishing, Paris, https://doi.org/10.1787/d5f8e3f2-en. [04.04.2026]:

հատման ծրագրի (Programme for International Student Assessment (PISA)) հարցման 2022 թ. տվյալների վրա, պարզել է, որ սոցիալական ծագումն ավելի մեծ դեր է խաղում ուսանողի կրթական հավակնությունների որոշման գործում, քան ակադեմիական կարողությունները: Միջին հաշվով, ՏՀԶԿ երկրներում սոցիալ-տնտեսական առումով առավելություններ ունեցող ցածր առաջադիմությամբ ուսանողները ավելի հակված են ավարտելու համալսարանական կրթությունը, քան ավելի ցածր սոցիալ-տնտեսական ծագում ունեցող բարձր առաջադիմությամբ ուսանողները:

Հայաստանում վերջին տասը տարվա պետական բուհերի ընդունելության ցուցանիշները հնարավորություն է տալիս դուրս բերելու և արձանագրելու ընդհանուր միտումները՝

- ավելացել է տեղեկատվական տեխնոլոգիաների հանդեպ հետաքրքրությունը,
- ավելացել է արվեստի հանդեպ հետաքրքրվածությունը,
- կայուն բարձր է մնացել հետաքրքրվածությունը գործարարության, տնտեսագիտության նկատմամբ,
- նվազել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների հանդեպ հետաքրքրվածությունը:

Ներկայումս մասնագիտական ընտրությունը հաճախ ընկալվում է որպես ռիսկերի նվազեցման որոշում՝ ոչ միայն *«ինչ եմ ուզում»,* այլև *«ինչն է թույլ փալիս կայուն և ապահով ապրել»* տրամաբանությամբ: Այս համատեքստում մասնագիտության ընտրությունը կապվում է ոչ այնքան մեկ որոշակի ուղու, որքան հարմարման և հետագայում ուղղություն փոխելու հնարավորության հետ՝ որպես կանխատեսելիություն ապահովող ռազմավարություն:

ՏՀԶԿ 2022 թվականի՝ Սովորողների միջազգային գնահատման ծրագրի (PISA) արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների 39%-ը այժմ կարող է դասակարգվել որպես կարիերայի անորոշության մեջ գտնվողներ[141]: Հայաստանում երիտասարդների 13-17 տարեկան աշակերտների շուրջ 27%-ը դեռևս չի որոշել, թե ինչ մասնագետ է ուզում

[141] Տե՛ս OECD (2025), նշվ. աշխ., էջ 15:

դառնալ, իսկ 73 %-ը որոշել է, ընդ որում՝ արդեն մասնագիտություն ընտրածների մեծ մասը աղջիկներ են: Հայաստանում ամենանախընտրելի 5 մասնագիտություններն են՝ ծրագրավորող, իրավաբան, ձեռնարկատեր, բժիշկ և երաժիշտ:

**Գծապատկեր 5. Երիտասարդների մասնագիտական նախընտրությունները**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 13-17




ՏՀԶԿ երկրներում ամենաշատ տարածված ցանկալի մասնագիտություններն են՝ աղջիկների համար՝ բժիշկ, ուսուցիչ, իրավաբան, բուժքույր և հոգեբան, իսկ տղաների համար՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների մասնագետ, սպորտսմեն, ինժեներ, բժիշկ և ուսուցիչ[142]:

Հայաստանում երիտասարդների մասնագիտական կողմնորոշման հիմք են հետևյալ գործոնները.

[142] Տե՛ս OECD (2025), նշվ. աշխ., էջ 21-22:

*Միկրոմակարդակ*. երիտասարդի անձը, անհատականությունը, ինքնությունը

Մասնագիտության ընտրությունը պայմանավորված է դպրոցում սիրելի առարկաներով և վաղ ձևավորված նախասիրություններով: Երիտասարդները նշում են, որ մասնագիտության ընտրության հիմքում հիմնականում ընկած է դպրոցական տարիներին ձևավորված հետաքրքրությունը որևէ առարկայի նկատմամբ:

> *«Ընտրել եմ գերմաներեն-անգլերեն հաղորդակցություն, երրորդ դասարանից սովորել եմ գերմաներեն, հետո ինչ-որ պատճառներով դպրոցս փոխել եմ, ու դպրոցում լավ էի սովորում, դրանից հետո դադարեցի էդ լեզուն կիրառել, բայց չէի ուզում, որ իմ գիտելիքները կորեն, էդ պատճառով ես ինքս որոշեցի»*[143]:

Անձնական նախասիրությունների կողքին զգալի դեր ունի նաև վերահսկելիության պահանջը. մասնագիտական ընտրությունը հաճախ ուղեկցվում է ներքին տրամաբանությամբ՝ *«ընտրել այն, ինչի մեջ հնարավոր է կայունություն կառուցել»:* Սա հատկապես արտահայտված է այն պայմաններում, երբ անորոշությունը և ճգնաժամային փորձառությունները կրթությունը դարձրել են ոչ միայն ինքնարտահայտման, այլև ինքնապաշտպանության գործիք: Մասնագիտության ընտրության հարցում երիտասարդների համար կարևոր է մասնագիտությամբ գումար վաստակելու հնարավորությունը:

*Մեզոմակարդակ*. ընտանիք

Թեև երիտասարդները շեշտում են աճող ինքնուրույնությունը, սակայն ընտանիքի սոցիալ-տնտեսական դրության, ծնողական ազդեցությունը շարունակում է մեծ լինել: Մասնագիտության ընտրության գործընթացում գործում է ընտանեկան վերահսկողության և աջակցման երկակցված մեխանիզմ: Հաճախ որևէ ոլորտում, օրինակ, ստեղծարար ոլորտներ, աշխատող ծնողները խրախուսում են, որ իրենց երեխան ընտրի այդ ոլորտի մասնագիտություն:

---

[143] Ուսանողների հետ ֆոկուս խմբային քննարկումից մեջբերում:

Մասնագիտության ընտրության հարցում վճռորոշ է ընտանիքը դերը՝ կապված մասնագիտական կրթության համար վճարելու հնարավորություններով: Ընտանիքը հաճախ ուղղորդում է երիտասարդին ընտրելու մասնագիտություն, որտեղ ավելի բարձր են անվճար սովորելու հնարավորությունը կամ ուսման վճարը համեմատաբար ցածր է:

*«Իրականում ես միշտ ուզում էի բժիշկ լինեի ու շատ լավ սովորում էի, լավ գիտեի կենսաբանություն էլ, քիմիա էլ, ուղղակի անվճար ընդունվելը մտածեցի, որ դժվար ստացվի, եթե նույնիսկ ստացվի, կարող է հետո ընկնեմ վճարովի: Իսկ իմ ընտանիքը հնարավորություն չուներ բժշկական ուսման տալու: Տենց ոնց որ 2-րդ պլան նայեցի, ինչ կարամ անեմ: Իմ մոտ շատ լավ ստացվում էր նաև մաթեմը ու ֆիզիկան: Ասեցի՝ օքեյ, մաթեմ, ֆիզիկայով ընդունվեցի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ, ավարտեցի, դրանից հետո էլ կամ դառնում են մաթեմատիկոս, կամ ծրագրավորող: Ես դառա ծրագրավորող»[144]:*

Ընտանիքի ազդեցությունը գործում է ոչ միայն ուղղորդման, այլև սահմանափակման մեխանիզմով. ֆինանսական հնարավորությունները որոշ դեպքերում ստիպում են վերանայել նախընտրած մասնագիտությունը և ընտրել ավելի հասանելի կրթական ուղի: Այս պայմաններում կրթական ընտրությունը հաճախ ունի *«երկրորդ լավագույն»* տարբերակի տրամաբանություն՝ նպատակների վերասահմանման և ռեսուրսների հարմարեցման միջոցով:

*Մակրոմակարդակ*. կրթական համակարգ

Մարզերում բնակվող երիտասարդների համար անհավասար պայմաններ են ստեղծված մասնագիտության ընտրության հարցում, քանի որ մասնագիտության ընտրությունը հաճախ պայմանավորում է ցանկալի մասնագիտությամբ սովորելու հնարավորություն տվող բուհի աշխարհագրական հեռավորությունը երիտասարդի բնակության վայրից: Երիտասարդները մատնանշում են, որ մարզերում կրթական և ֆինանսա-

---

[144] Չաշխատող, չսովորող (NEET) երիտասարդների հետ ֆոկուս խմբային քննարկումից մեջբերում:

կան սահմանափակումները խոչընդոտում են բարձրագույն կրթություն ստանալուն:

*«Իմ դասարանը որ կար, սովորում էին 25 հոգի, որից 4 հոգին են ընդունվել բարձրագույն, որովհետև ֆինանսական վիճակը թույլ չի տվել, որ իրենք շարունակեն սովորել»*[145]:

Մասնագիտական կրթության հասանելիության տարբերությունները կառուցում են տարածքային անհավասարություններ, որոնք անմիջական ազդեցություն ունեն մասնագիտական ընտրության վրա:

*«Ես կուզենայի հոգեբանություն էլ ուսումնասիրեի: Արցախում արդեն շահագրգռված էի, բայց պատերազմը սկսվեց, հիմա եկել եմ Գորիսում իմ ուզած ֆակուլտետը չկա, բաժինը չկա ստեղ, եթե ուզեմ սովորեմ, պետք ա գնամ Երևան: Երևանում էլ ծախսեր են, պիտի գումար լինի»*[146]:

Տարածքային գործոնը կրթական անհավասարության առանցքային կետերից մեկն է: Մարզային սահմանափակումները և կրթության կենտրոնացվածությունը մայրաքաղաքում և խոշոր քաղաքներում ոչ միայն նվազեցնում են կոնկրետ մասնագիտությունների հասանելիությունը, այլև խզում են կրթական շարունակականությունը՝ հատկապես տեղահանության փորձառություն ունեցող երիտասարդների համար: Կրթական ուղին հաճախ վերակազմավորվում է ոչ թե ցանկության, այլ տեղանքի, ինստիտուցիոնալ հնարավորությունների և տեղափոխության ծախսերի թելադրանքով:

Երիտասարդները նաև նախընտրում են այնպիսի մասնագիտություն ստանալ, որը հնարավորություն կտա աշխատանք գտնելու ոչ միայն այդ, այլև հարակից այլ ոլորտում, այսինքն՝ մասնագիտության ադապտիվ բնույթը հիմնական գործոն է ընտրության դեպքում, ինչը ևս ըստ էության համակարգային ազդեցություն է:

---

[145] Մարզային համայնքներից ուսանողների հետ ֆոկուս խմբային քննարկումից մեջբերում:

[146] Արցախից տեղահանված երիտասարդների հետ ֆոկուս խմբային քննարկումից մեջբերում:

*«Ուղղակի էդ ժամանակ նաև մտածում ես, որ ընտրես ինչ-որ մի բան, որ երբ որ կյանքի մի որևէ իրավիճակում հայտնվես ու որոշես փոփոխություն անես, հեշտ լինի էդ փոփոխությունը»*[147]:

«Ադապտիվ մասնագիտության» պահանջը հետպատերազմյան միջավայրում ունի պաշտպանական բնույթ. կրթական ուղին ընտրելիս առաջնային է դառնում ճկունությունը, վերաորակավորման հնարավորությունը և փոփոխության «*հեշտ իրականացվող*» սցենարը՝ որպես անկայունության պայմաններում կայունության փոխարինող: Մասնագիտության ընտրության ժամանակ երիտասարդների համար կարևոր է նաև օգտակար լինելու ցանկությունը: Օգտակար լինելու շարժառիթը հաճախ ունի նաև քաղաքացիական և հանրային իմաստավորում. կրթությունը դիտարկվում է ոչ միայն անձնական շահի, այլև հանրային դիմադրողականության և ապագայի կառուցման տրամաբանության մեջ, երբ մասնագիտական պատրաստվածությունը ընկալվում է որպես հասարակության և պետության ներուժի բաղադրիչ:

*Ֆորմալ կրթությունը*

Երիտասարդների հմտությունների ձևավորման վրա նշանակալի ազդեցություն ունեն կրթական ենթակառուցվածքները[148]:

Հանրակրթական դպրոցներ: 2025 թ. դրությամբ Հայաստանում գործել է շուրջ 1395 հանրակրթական դպրոց, որտեղ սովորել է 424 944 աշակերտ:

Ուսումնարաններ և քոլեջներ: 2025 թ. գործել է 66 ուսումնարան և 123 քոլեջ՝ համապատասխանաբար 8957 և 38920 սովորողներով: Ուսումնարանների շուրջ 24%-ը, իսկ քոլեջների 43 %-ը գտնվում է Երևանում: Համեմատաբար շատ քոլեջներ կան Սյունիքում, Շիրակում, Լոռիում, իսկ ավելի քիչ՝ Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերում: Ուսումնարանները համեմատաբար շատ են Շիրակում, Սյունիքում, Կոտայքում, իսկ ավելի քիչ Արմավիրի մարզում: Սակայն ֆորմալ կրթական համակարգի «քանակական հասանելիությունը» միշտ չէ, որ վերածվում է

[147] Ուսանողների հետ ֆոկուս խմբային քննարկումից մեջբերում:
[148] Տե՛ս Barrett, 2019:

«որակական արդյունքի». երիտասարդները կարևորում են ֆորմալ կրթական միջավայրերը՝ դպրոց, մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ որպես ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացման տարածք: Սակայն երիտասարդները քննադատում են, որ ուսումնական հաստատությունները և ֆորմալ կրթությունը հաճախ բավարար չափով չեն աջակցում իրենց՝ ռիսկի դիմելու, փորձարկելու և իրական միջավայրում կողմնորոշվելու հմտությունների ձևավորմանը:

**Գծապատկեր 6. Մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության ցուցանիշների դինամիկան 2015-2024 թթ.**
*Աղբյուր.* ՀՀ վիճակագրական կոմիտե




Բարձրագույն ուսումնական հաստատությունները: 2025 թ. Հայաստանում գործել են 68 բուհ և բուհական կրթություն տրամադրող կազմակերպություն, ներառյալ մասնաճյուղեր, որտեղ սովորել է շուրջ 76000 ուսանող, ընդ որում՝ 84%-ը պետական բուհերում, որից 85%-ը վճարովի ուսուցմամբ[149]: Բուհական համակարգը ամենակենտրոնացվածն է Հայաստանում մյուս կրթական մակարդակների համեմատ: Երևանում է

[149] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալական վիճակը, 2024 թ., https://www.armstat.am/file/article/soc_sit_2024_6.pdf [04.04.2026]:

կենտրոնացված բուհերի մեծ մասը, ինչպես նաև բուհերում սովորող ուսանողների ճնշող մեծամասնությունը: 2024-2025 թթ. ուսումնական տարում բուհ ընդունվել են շուրջ 18000 երիտասարդ: Վերջին տասը տարիների ընթացքում բուհական համակարգ ընդունելության ցուցանիշը գրեթե պահպանվել է, իսկ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելությունը ավելացել է[150]: Ընդ որում՝ 12-ամյա կրթության պարտադիր դառնալու հանգամանքով պայմանավորված քոլեջներում արձանագրվել է ցուցանիշի կրկնապատկում, քանի որ երիտասարդների մի մասը նախընտրում է ստանալ մասնագիտություն 12-ամյա պարտադիր կրթության տարիներին:

Երիտասարդների կրթական ուղու և աշխատաշուկայի իրական պահանջների միջև գոյություն ունեցող հակասությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից տնտեսության պայմաններում կրթությունից ակնկալվում է ոչ միայն տեսական գիտելիքների փոխանցում, այլև գործնական միջավայրում կիրառելի հմտությունների ձևավորում: Աշխատաշուկան բարձրացնում է պահանջները պրակտիկ կարողությունների, պրոֆեսիոնալ փորձառության, խնդիրների իրական լուծման հմտությունների և «իրական կյանքի» իրավիճակներին դիմակայելու պատրաստվածության նկատմամբ, մինչդեռ կրթական համակարգերը շարունակում են մնալ տեսաբանորեն ծանրաբեռնված: Այս համատեքստում կրթության արժեքը սահմանվում է ոչ թե ստացած գիտելիքների ծավալով, այլ դրանց կիրառելիությամբ[151]: Հետազոտությունները ցույց են տալիս, որ գործատուները առաջնահերթ կարևորում են կիրառական և փափուկ հմտությունները՝ ներառյալ թիմային աշխատանքը, հաղորդակցությունը, քննադատական մտածողությունը և խնդիրների լուծման կարողությունները[152]: Երիտասարդների կրթական ուղին հաճախ դառնում է «անկատար»՝ չապահովելով ակադեմիական և գործնական ոլորտների

[150] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, տվյալների բազաներ:
[151] Տե՛ս Handel, 2003:
[152] Տե՛ս Զասլավսկայա և այլք, 2025:

ինտեգրումը, ինչը հանգեցնում է հմտությունների անհամապատասխանության (skills mismatch) լայնորեն արձանագրվող երևույթին[153]:

Հայաստանում ուսանողները բարձրագույն կրթությունը դիտարկում են որպես միջավայր, որտեղ կարողանում են զարգացնել ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, մասնագիտական ինքնության վերաիմաստավորումը: Ընդ որում, մասնագիտության նկատմամբ վերաբերմունքը հաճախ վերաձևավորվում է ուսման ընթացքում: Մասնագիտական ինքնությունը կայուն և նախապես կանխորոշված գործընթաց չէ: Մասնագիտության ընտրությունը հաճախ չի ավարտվում ընդունելությամբ. գիտական կամ մասնագիտական ինքնությունը զարգանում և փոխվում է բուհում: Երիտասարդների մի մասը ուսման ընթացքում ներգրավվելով կամավոր կամ գիտական խմբերում՝ ապագայում փոխում է վերաբերմունքը ոլորտի նկատմամբ՝ հաճախ հիասթափվելով համակարգային սահմանափակումների պատճառով, և հակառակը, ոգևորվում է՝ գիտակցելով մասնագիտության ներուժը: Ընդ որում, մասնագիտական ընտրության, հետագայում այդ ընտրության ամրապնդման համար վճռորոշ, շրջադարձային են 2-3-րդ կուրսերը, երբ շատ ուսանողներ բարձրաձայնում են ճգնաժամի մասին՝ կապված հետագա կարիերայի ուղու հետ: Կարող ենք այն անվանել «միջին կուրսերի ճգնաժամ» կամ «2-րդ կուրսի համախտանիշ»:

Երիտասարդները բարձր են գնահատում ուսանողական կյանքը որպես ինքնազարգացման միջավայր, բայց քննադատում են համակարգի արդյունավետությունը: Հանրակրթության և մասնագիտական կրթության որակի և արդյունավետության հետ կապված խնդիրների մասին են փաստում նաև ոլորտային զեկույցները և հետազոտությունը, հատկապես նյութատեխնիկական ապահովվածության պակասը, այդ թվում՝ շենքային պայմանները, լաբորատոր պայմանները, աշխատաշուկայի պահանջարկին մասնագիտական հմտությունների անհամապատասխանությունը:

Հայաստանի կրթական համակարգը վերջին տասնամյակներում ենթարկվել է կառուցվածքային մի շարք փոփոխությունների, սակայն ոլոր-

---

[153] Տե՛ս Handel, 2003:

տային զեկույցների և գնահատականների համադրությունը ցույց է տալիս, որ ինչպես հանրակրթության, այնպես էլ մասնագիտական կրթության ոլորտում շարունակում են առկա մնալ խորքային, համակարգային խնդիրներ[154]: Այս խնդիրները ձևավորվում են ոչ միայն կրթական հաստատությունների կարողությունների սահմանափակություններով, այլև լայն սոցիալ-տնտեսական համատեքստի ազդեցությամբ, ինչը զգալիորեն ազդում է երիտասարդների կրթական ուղիների ընտրությունների, մասնագիտական կողմնորոշման և աշխատանքի անցման ուղիների վրա: Այս ամենը ձևավորում է երիտասարդների կրթության և մասնագիտական ինքնության զարգացող, բայց հաճախ անորոշ և անհավասար ուղիներ: Միաժամանակ, մասնագիտական ինքնությունը հաճախ կայուն և վերջնական չէ նաև այն պատճառով, որ կրթական շարունակականությունը կարող է խզվել պատերազմով կամ տեղահանությամբ: Այդպիսի պայմաններում կրթական ընտրությունները վերաիմաստավորվում են, մասնագիտական նպատակները վերադասավորվում, իսկ կրթությունը դառնում է հարմարման շարունակական գործընթաց՝ անընդհատ փոփոխվող պայմաններին համապատասխանելու նպատակով:

*Ոչ ֆորմալ կրթությունը*

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ երիտասարդների ոչ ֆորմալ կրթությունը դարձել է հմտությունների զարգացման, սոցիալական ներառման և քաղաքացիական ներգրավվածության կարևոր միջոց: Այն լրացնում է ֆորմալ կրթության բացերը՝ ապահովելով կիրառելի հմտություններ, փորձառություն և հասարակական մասնակցության հնարավորություններ[155]:

Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության մասնակից երիտասարդների 33 %-ը վերջին մեկ տարվա ընթացքում մասնակցել է որևէ կարճաժամկետ դասընթացի: Ընդ որում, մարզային

---

[154] Տե՛ս Education Sector Analysis for Armenia, UNIFEF, 2022, https://www.unicef.org/armenia/media/15496/file/Education%20Sector%20Analysis%20for%20Armenia.pdf [04.04.2026]:

[155] Տե՛ս UNESCO guidelines for the recognition, validation and accreditation of the outcomes of non-formal and informal learning, 2012:

բաշխմամբ, առավել ակտիվ են եղել Սյունիքի, Տավուշի երիտասարդները, ինչը կարող է պայմանավորված լինեն ոչ միայն երիտասարդի նախաձեռնողականությամբ, այլև այս մարզերում առաջարկվող կարճաժամկետ դասընթացների հնարավորությունների առկայությամբ: Առավել քիչ են նման դասընթացների մասնակցել Երևան քաղաքի, Արարատի, Արմավիրի, Լոռիի և Կոտայքի մարզերի երիտասարդները: Երիտասարդները մասնակցել են հետևյալ բովանդակությամբ կարճաժամկետ դասընթացների.

- Օտար լեզուներ,
- Մեդիա, հաղորդակցություն և բովանդակության ստեղծում,
- Համակարգչային հմտություններ,
- Ծրագրավորում և տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- Հաշվապահություն, ֆինանսներ, բիզնես պլանավորում,
- Թվային մարքեթինգ և գովազդ. SMM, Google Ads:

Ոչ ֆորմալ կրթության աճող պահանջարկը կապվում է ֆորմալ կրթության սահմանափակումները լրացնելու անհրաժեշտության հետ: Կարճաժամկետ դասընթացները, ինքնակրթությունը և աշխատանքի ընթացքում ուսուցումը ընկալվում են որպես արագ արձագանքման գործիքներ՝ մրցունակ մնալու, հմտությունները թարմացնելու և «գիտելիքի հնացման» զգացողությունը նվազեցնելու համար: Այն հարցին, թե որ տարբերակը կնախընտրեք նոր բան սովորելու համար, երիտասարդների շրջանում ամենատարածված պատասխաններն են՝ կրկին կարճաժամկետ դասընթացները (24,3%), ինքնակրթությունը (25,2%), որից հետո նախընտրությունը տրվում է ուսուցմանը աշխատանքի ընթացքում (17,2%), կրթական հաստատությանը (13,2%) և առցանց հարթակներին (12,7%): Կրթությունը շատ դեպքերում վերածվում է շարունակական «ինքնաներդրման» գործընթացի, որտեղ կարևորվում է ոչ թե ինստիտուցիոնալ ուղու «միանգամյա ավարտը», այլ վերապատրաստումների, ինքնուրույն ուսումնառության և գործնական փորձի կուտակման շարունականությունը:

*Երիտասարդների հմտությունները, կարողությունները և ուժեղ կողմերը*

Երիտասարդի աշխատանքային հաջողությունների, հոգեբանական բարեկեցության և քաղաքացիական մասնակցության վրա ազդում են ոչ միայն հմտությունները կամ գիտելիքը, այլև անձի ներքին ուժերը և որակները[156]: Հետազոտությունները փաստում են, որ բնավորության ուժեղ կողմերը, օրինակ՝ «*հույսը, բարությունը, սոցիալական ինտելեկտը, ինքնատիրապետումը և հեռանկարը, կարող են պաշտպանել սթրեսի և տրավմայի բացասական հետևանքներից՝ կանխելով կամ մեղմացնելով դրանց հետևանքով առաջացող խանգարումները*»[157]:

Հայաստանի երիտասարդների, ներառյալ տարբեր ոլորտներում առաջնորդության փորձառություն ունեցող երիտասարդների, ուժեղ կողմերն են՝

- թվային հմտությունները,
- բարձր դիմադրողականությունը, չհանձնվելու ունակությունը,
- բարդ իրավիճակներում հարմարվելու կարողությունը,
- ստեղծագործական ունակությունը՝ գրել, նկարել, ստեղծել որևէ իր,
- զգացմունքային լինելը,
- խուճապի չմատնվելը, սթափ դատելը,
- արագ կողմնորոշվելու, արագ որոշում կայացնելու կարողությունը,
- հույսը և լավատեսությունը,
- նպատակասլացությունը,
- աշխատասիրությունը:

Երիտասարդները նաև նշում են, թե որ հմտությունները, կարողությունները կցանկանային զարգացնել և բարելավել՝

- հաղորդակցության հմտություններ,
- ինքնաներկայացնելու, ինքնագովազդելու հմտություն (վաճառելու հմտություն, մեդիա բովանդակություն մշակելու հմտություն),
- ղեկավարելու հմտություն,

---

[156] Տե՛ս Park, 2004:
[157] Park, նշվ. աշխ.:

- բանակցելու հմտություն,
- զգացմունքները կառավարելու կարողություն:

Երիտասարդների հմտությունների «զարգացման պահանջը» հաճախ կապվում է ոչ միայն անձնական աճի, այլև ինքնաներկայացման և սոցիալական առաջխաղացման հետ: «Ինքնագովազդելու, ինքնաներկայացնելու» պահանջը դիտարկվում է որպես ժամանակակից աշխատաշուկայում գոյատևելու և արժեք ստեղծելու պայման՝ հատկապես այն միջավայրում, որտեղ մրցակցությունը բարձր է, իսկ հնարավորությունները՝ անհավասար բաշխված:

Երիտասարդների մեծ մասն ունի կրթության հետ կապված որևէ նպատակ, հիմնականում ցանկանում են շարունակել ինքնակրթվել, ընդունվել բուհ կամ մասնակցել կարճաժամկետ դասընթացի: Կրթության հետ կապված որևէ նպատակ չունեցող երիտասարդների հիմնական մասը 23-35 տարիքային խմբից է, նաև նկատելի է տղաների ներկայացվածությունը այս խմբում: Ըստ բնակության վայրի տարբերություններ չեն նկատվում:

**Գծապատկեր 7. Ո՞րն է կրթության հետ կապված Ձեր հիմնական նպատակը առաջիկա 3 տարվա համար**
*Աղբյուր.* Երիտասարդների շրջանում հարցում, 13-35



Երիտասարդների շրջանում կրթական նպատակի բացակայությունը որոշ դեպքերում պայմանավորված է ոչ թե մոտիվացիայի պակասով, այլ երկարատև հոգնածությամբ, սոցիալ-տնտեսական ճնշումներով և «կայունության» առաջնահերթությամբ, երբ կրթությունը ժամանակավորապես հետ է մղվում որպես հետագա փուլ տեղափոխվող նպատակ: Այսօր Հայաստանի երիտասարդների մասնագիտության ընտրությունն ավելի շատ որոշվում է կրթական սոցիալականացման վաղ փուլով, կրթական հնարավորությունների հասանելիության առանձնահատկություններով, այլ ոչ թե աշխատաշուկայի հաշվարկներով: Կրթական ուղու ընտրության «ոչ հաշվարկային» բնույթը հաճախ պայմանավորված է նաև անորոշության կառավարման տրամաբանությամբ. մասնագիտության ընտրությունը դառնում է ոչ թե աշխատաշուկայի սառը հաշվարկ, այլ կայունության փնտրտուք, ճկունության ապահովում և հնարավոր կորուստների նվազեցում: Այս համատեքստում կրթությունը հանդես է գալիս ոչ միայն որպես սոցիալական շարժունության գործիք, այլև որպես դիմադրողականության և ինքնության պահպանման մեխանիզմ: Հայաստանի կրթական լանդշաֆտը բնութագրվում է միաժամանակ հասանելիության մեծացմամբ և որակի, արդյունավետության ու հավասարության խորացող խնդիրներով: Հանրակրթական դպրոցների լայն ցանցը, մասնագիտական ֆորմալ կրթական հնարավորությունները չեն կարողանում ամբողջությամբ ապահովել այն հիմնարար կարողությունները, որոնք անհրաժեշտ են երիտասարդներին՝ կայացած մասնագիտական ինքնություն ձևավորելու և աշխատաշուկա մուտք գործելու համար: Կրթական համակարգի բարելավման վերաբերյալ ակնկալիքները հաճախ ուղղված են ոչ միայն ենթակառուցվածքների կամ ծրագրերի արդիականացմանը, այլև պրակտիկ կողմնորոշման, փորձարարական կրթության և իրական միջավայրում փորձ ձեռք բերելու հնարավորությունների ընդլայնմանը՝ դեռ դպրոցական փուլից սկսած: Մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգերում պահպանվում է տարածքային անհավասարությունը, նյութատեխնիկական հին ենթակառուցվածքները, աշխատաշուկայի պահանջարկին ոչ համահունչ ծրագրերը և մասնագիտական կողմնորոշման բացակայությունը, ինչի հետևանքով մասնագիտության

ընտրությունն ու մասնագիտական ինքնությունը հաճախ ձևավորվում են փորձով, փոփոխություններով և երբեմն հիասթափությամբ:

*Երիտասարդների զբաղվածությունը և կրթությունից աշխատաշուկա անցման գործընթացը*

Երիտասարդների զբաղվածությունը, աշխատանքը լայնորեն ուսումնասիրվող ուղղություն է երիտասարդական ուսումնասիրություններում: Երիտասարդության սոցիոլոգիայում զբաղվածության հիմնախնդիրները ուսումնասիրվում են դպրոցից աշխատանք անցման շրջանակներում: Ընդ որում, տարբեր երկրներում և տարբեր ժամանակաշրջաններում տնտեսական ցնցումները բերեցին երիտասարդների շրջանում գործազրկության մակարդակի բարձրացման, ինչի վերաբերյալ երիտասարդական ուսումնասիրությունները փաստեցին, որ կրթությունից աշխատաշուկա անցման գործընթացը գծային չէ և տևում է երկար ժամանակ: Ընդ որում, երիտասարդների գործազրկության աճը տնտեսապես կայուն երկրներում ևս բավականին մտահոգիչ խնդիր է, ինչի շուրջ ձևավորված դիսկուրսը ամփոփվեց «կորուսյալ սերունդ» հասկացության ձևավորման մեջ: 2009 թ. բրիտանական «The Guardian» ամսագիրը տպեց մի հոդված, որը վերաբերում էր երիտասարդների գործազրկության բարձր ցուցանիշներին և կիրառեց «կորուսյալ սերունդ» հասկացությունը[158], որը մտավ գիտական շրջանակ, և հետագայում, երբ կրկին երիտասարդների գործազրկության ցուցանիշները աճեցին COVID-19 համավարակի ժամանակ, սկսվեց կիրառվել «նոր կորուսյալ սերունդ» հասկացությունը[159]:

Երիտասարդների զբաղվածության վերաբերյալ ուսումնասիրությունները կենտրոնանում են նաև նոր զբաղմունքների, զբաղվածության նոր ձևերի արդյունքում նոր տիպի երիտասարդի կամ երիտասարդի նոր ինքնության ձևավորման հարցերի վրա: Ինչպես նաև այս շրջանակը նե-

---

[158] Տե՛ս The lost generation: surge in joblessness hits young, https://www.theguardian.com/business/2009/aug/13/surge-in-joblessness-hits-young [23.04.2026թ.]:

[159] Տե՛ս A New Lost Generation? Youth Employment in Corona Times, https://www.tilburguniversity.edu/campus/studium-generale/a-new-lost-generation, նաև տե՛ս Europe can't afford to lose another generation to youth unemployment [23.04.2026թ.]:

րառում է հարցեր՝ կապված երիտասարդության ներգրավմանը ոչ ֆորմալ զբաղվածության մեջ: Երիտասարդական ուսումնասիրությունները ձևավորման սկզբից մինչ այժմ անդրադառնում են երիտասարդների աշխատանքի և զբաղվածության օրինաչափություններին: Ավանդաբար այս ոլորտում շատ ուսումնասիրություններ նվիրված են եղել կրթությունից աշխատանք անցման, աշխատանքում ինտեգրման, սոցիալական վերարտադրության գործընթացներին, որոնք դրսևորվում են երիտասարդների վաղ կարիերայի ընթացքում:

Կրթությունից աշխատանք անցումը երիտասարդական ուսումնասիրությունների ամենակենտրոնական ոլորտներից է: Կրթության և աշխատանքի միջև եղած ուղիները, որոնք նախկինում համարվել են «գծային և կանխատեսելի, այժմ փոխարինվել են մի շարք գործոնություններով, որոնք պակաս կանխատեսելի են և ներառում են հաճախակի ընդմիջումներ, նահանջներ և կարգավիճակների խառնուրդ»[160]:

Երիտասարդների զբաղվածության մակարդակն ամբողջ աշխարհում բնութագրվում է էական տարբերություններով՝ պայմանավորված երկրների տնտեսական զարգացման մակարդակով, կրթական համակարգերի արդյունավետությամբ և աշխատաշուկայի ինստիտուցիոնալ առանձնահատկություններով: 2024 թ. տվյալների համաձայն՝ աշխարհում 15-24 տարեկան երիտասարդների գործազրկության մակարդակը մոտ 13% է, իսկ զբաղվածության մակարդակը՝ 37-40%: Միևնույն ժամանակ, 15-29 տարեկան երիտասարդների շրջանում NEET երիտասարդների մասնաբաժինը հասնում է մոտ 23%-ի[161]: Եվրոպական միությունում երիտասարդների զբաղվածության ցուցանիշները համեմատաբար բարենպաստ են: 2024 թվականի տվյալներով, 15-24 տարեկանների գործազրկությունը 14.5% է[162], իսկ 15-29 տարեկանների զբաղվածության մակարդակը՝ 50-55% միջակայքում է: NEET երիտասարդների ցուցանիշը 11-

---

[160] Furlong, A. & Cartmel, F., Young People and Social Change: New Perspectives, Buckingham: Open University Press, 2007.

[161] Տե՛ս International Labour Organization, “Global Employment Trends for Youth 2024”, https://www.ilo.org/sites/default/files/2024-09/GET_2024_EN%20web.pdf [04.04.2026]:

[162] Տե՛ս Eurostat, 2024, https://ec.europa.eu/eurostat/web/products-euro-indicators/w/3-04032026-ap [04.04.2026]:

12% է, ինչը գրեթե երկու անգամ ցածր է գլոբալ միջինից[163]: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մեջ ընդգրկված երկրներում 2024 թ. տվյալներով երիտասարդների գործազրկությունը 12-13% է, զբաղվածության մակարդակը՝ շուրջ 52%, իսկ NEET ցուցանիշը՝ 13-14%[164]: ՏՀԶԿ տվյալների առանձին ներկայացումը թույլ է տալիս գնահատել Հայաստանի դիրքը ոչ միայն եվրոպական, այլև գլոբալ զարգացած տնտեսությունների համատեքստում: Տարբեր երկրներում երիտասարդների զբաղվածության համեմատական վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մի քանի հստակ ձևավորված միտումներ: Արևմտյան և Հյուսիսային Եվրոպայի երկրներում, ինչպիսիք են Գերմանիան, Նիդերլանդները, Ավստրիան և Դանիան, երիտասարդների գործազրկության մակարդակը հիմնականում ցածր է և գտնվում է 6-10% միջակայքում, իսկ զբաղվածությունը բարձր է և հաճախ գերազանցում է 60%-ը: Այս երկրներում կրթության և աշխատաշուկայի միջև ձևավորված են արդյունավետ կապեր, որոնք ապահովում են երիտասարդների արագ անցումը կրթությունից դեպի աշխատանք: Մասնագիտական կրթության զարգացած համակարգերը և ուսման ընթացքում աշխատանքի հնարավորությունները էապես նվազեցնում են գործազրկության ռիսկերը: Միևնույն ժամանակ հակառակ միտումներ են նկատվում Հարավային Եվրոպայի երկրներում, մասնավորապես Իսպանիայում, Հունաստանում և Իտալիայում, որտեղ երիտասարդների գործազրկությունը շարունակում է մնալ բարձր՝ 20-30% սահմաններում: Այս երկրներում աշխատաշուկայի կառուցվածքային սահմանափակումները և երիտասարդների համար առաջին աշխատանքի հասանելիության խնդիրները հանգեցնում են երկարատև անցումային փուլերի և զբաղվածության ավելի ցածր մակարդակի: Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային երկրների խումբը ներկայացնում է միջանկյալ, սակայն ոչ համասեռ պատկեր: Լեհաստանը և Չեխիան մոտեցել են Արևմտյան Եվրոպայի ցուցանիշներին, մինչդեռ

---

163 Տե՛ս Eurostat, 2024, https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/-Statistics_on_young_people_neither_in_employment_nor_in_education_or_training [04.04.2026]:

164 Տե՛ս OECD Data, 2024, https://data.oecd.org/youthinac/youth-not-in-employment-education-or-training-neet.htm [04.04.2026]:

Ռումինիայում, Բուլղարիայում, Վրաստանում պահպանվում են ավելի բարձր գործազրկության և NEET մակարդակներ: Սա պայմանավորված է աշխատաշուկայի կառուցվածքային խնդիրներով, ոչ ֆորմալ զբաղվածության բարձր մակարդակով և կրթության ու աշխատանքի միջև կապերի թուլությամբ: Հայաստանը այս համատեքստում առանձնանում է որպես առավել խնդրահարույց դեպքերից մեկը: Երիտասարդների գործազրկության մակարդակը՝ 15-29 տարեկանների շրջանում 21.5%, զգալիորեն գերազանցում է ինչպես գլոբալ, այնպես էլ եվրոպական միջին ցուցանիշները և նույնիսկ բարձր է Հարավային Եվրոպայի բարձր գործազրկությամբ երկրներից: Միևնույն ժամանակ, NEET ցուցանիշի բարձր մակարդակը՝ 23,3% 15-29 տարեկանների շրջանում, որը հատկապես բարձր է կանանց շրջանում՝ 32,6%, ցույց է տալիս, որ երիտասարդների զգալի հատված դուրս է ոչ միայն աշխատաշուկայից, այլև կրթական համակարգից: Հայաստանի առանձնահատկություններից է նաև զբաղվածության կառուցվածքը, որտեղ մեծ դեր ունեն ոչ ֆորմալ և ժամանակավոր զբաղվածության ձևերը, ինչպես նաև ինքնազբաղվածությունը: Այս պայմաններում աշխատանքը հաճախ ընկալվում է ոչ թե որպես կարիերայի զարգացման ուղի, այլ որպես նվազագույն սոցիալ-տնտեսական կայունություն ապահովելու միջոց: Արդյունքում, երիտասարդների համար կրթությունից աշխատանքի անցման գործընթացը երկարաձգվում է, և մեծանում են ինչպես գործազրկության, այնպես էլ սոցիալական դուրսմղման ռիսկերը: Երիտասարդների զբաղվածության բարձր ցուցանիշները սերտորեն կապված են կրթության և աշխատաշուկայի միջև համակարգված կապերի, ակտիվ զբաղվածության քաղաքականության կիրառման և սոցիալական աջակցության կայուն մեխանիզմների հետ: Հայաստանում այս գործոնների սահմանափակ զարգացածությունը հանգեցնում է նրան, որ երիտասարդների զգալի մասը գտնվում է կրթությունից դեպի աշխատանք երկարատև անցումային փուլում:

**Երիտասարդների զբաղվածության ընդհանուր բնութագիրը Հայաստանում:** Հայաստանում աշխատուժի մասնակցության մակարդակն ավելի բարձր է տղամարդկանց, քան կանանց շրջանում: 2024 թ. 15-74 տարեկան արական սեռի բնակչության 70.6%-ը և իգական սեռի բնակչության 49.0%-ը եղել են զբաղված կամ ակտիվորեն փնտրել աշխա-

տանք: 2024 թ. իգական սեռի 15-29 տարիքային խմբի երիտասարդների 33%-ը և արական սեռի երիտասարդների 15%-ը չեն սովորել և չեն աշխատել (121.9 հազար մարդ): Ընդ որում, աղջիկների և կանանց 24%-ը եղել են գործազուրկ (չեն աշխատել և աշխատանք չեն փնտրել), մինչդեռ արական սեռի երիտասարդների 52%-ը չի սովորել, չի աշխատել, բայց փնտրել է աշխատանք: Աշխատանք չունեցող և աշխատանք չփնտրող 4 կանանցից 3-ը (78%) աշխատանք չփնտրելու պատճառը նշում են երեխայի նախադպրոցական փուլում գտնվելը, երեխայի (երեխաների) խնամքով զբաղվածությունը կամ տնային տնտեսության վարման հետ կապված այլ աշխատանքները, ընտանեկան հանգամանքները: Աշխատանք չունեցող և աշխատանք չփնտրող տղամարդկանց 33%-ը աշխատանք չի փնտրել հիվանդության/վնասվածքի/պատահարի պատճառով, 13%-ը՝ իրենց բնակավայրում աշխատանք չլինելու կամ աշխատանք գտնելու հույս չունենալու պատճառով: Չսովորող և չաշխատող (NEET)[165] աղջիկները և կանայք գերակշռում են բոլոր տարիքային խմբերում, իսկ NEET երիտասարդներ ավելի շատ հանդիպում են 25-29 տարեկան կանանց շրջանում՝ մոտ 55%, իսկ ավելի քիչ՝ 15-19 տարեկան տղաների շրջանում՝ մոտ 6%[166]: Զբաղվածությունը հայաստանյան երիտասարդների առջև ծառացած մարտահրավերներից է, գործազրկությունը մշտապես ավելի բարձր է եղել երիտասարդների շրջանում, բնակչության մյուս տարիքային խմբերի համեմատ (տե՛ս Գծապատկեր 8): Թեև երիտասարդների գործազրկության մակարդակը վերջին չորս տարիներին նվազման միտում ունի, բայց այն շարունակում է դեռևս բարձր լինել. 15-24 տարեկան երիտասարդ կանանց շրջանում գործազրկության մակարդակը 2025 թ. հասել է մինչև 32,4%-ի, իսկ տղամարդկանց շրջանում՝ 23.4%: Գործազրկության մակարդակն ավելի բարձր է երիտասարդ կանանց շրջանում՝ համեմատած նույն տարիքային խմբի արական սեռի բնակչության

---

[165] NEET- not in education, employment, or training հասկացությունը կիրառվում է կրթությունից և աշխատաշուկայից դուրս գտնվող երիտասարդների սահմանման համար: Այն լայնորեն սկսվել է կիրառվել 1999 թ. անգլիալեզու գրականության մեջ, որին նախորդել է status zer0 հասկացությունը, 1996 թ.:

[166] Տե՛ս Հայաստանի կանայք և տղամարդիկ-2025 / Վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե:

հետ: Համեմատության համար պետք է նշել նաև, որ 15-29 տարեկան երիտասարդների խումբը ունի ամենաբարձր գործազրկության մակարդակը՝ ՀՀ բնակչության մյուս տարիքային խմբերի հետ համեմատ (տե՛ս Գծապատկեր 8):

**Գծապատկեր 8. Գործազրկության մակարդակը ըստ տարիքային խմբերի**
*Աղբյուր*. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2025




Աշխատուժից դուրս երիտասարդ բնակչության (անձինք, ովքեր չեն աշխատում կամ աշխատանք չեն փնտրում, ինչպիսիք են ուսանողները, տնային տնտեսության աշխատողները, հաշմանդամություն ունեցող անձինք, խնամակալները) հիմնական մասը կանայք են: Գենդերային խզումը հատկապես ակնհայտ է 24-35 տարիքային խմբում: Մինչ 2020 թ. 44-օրյա պատերազմը աշխատաշուկայում երիտասարդների լիարժեք ներգրավմանը խոչընդոտում էր աշխատատեղերի պակասը, երիտասարդների շրջանում փափուկ հմտությունների պակասը[167]: Իսկ 2020 թ. հետո

[167] Տե՛ս Galstyan M. Development of Human Capital in Armenia: Youth Employment and Youth Policy, Управление человеческими ресурсами в сфере физической культуры, спор-

գործազրկության վրա էական էր համավարակի և պատերազմի ազդեցությունը:

Վերջին տարիներին զբաղվածության խնդիրը երիտասարդների համար առավել հաճախ ընկալվում է ոչ թե կարիերայի «նորմալ» զարգացման տրամաբանությամբ, այլ կայունության և անվտանգության նվազագույն շեմ ապահովելու անհրաժեշտությամբ: Աշխատանքը շատ դեպքերում դառնում է առաջին հերթին գոյատևման գործիք՝ սոցիալ-տնտեսական անորոշության պայմաններում, ինչի հետևանքով մասնագիտական ինքնաիրացման և երկարաժամկետ կարիերային պլանավորման նպատակները հաճախ տեղափոխվում են երկրորդ պլան:

Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտությանը մասնակցած երիտասարդների 46%-ը վերջին 2 շաբաթների ընթացքում կատարել է վարձատրվող աշխատանք: Տղաների շրջանում զբաղվածության ցուցանիշը ավելի բարձր է, տարիքի աճին զուգահեռ աճում է նաև զբաղվածության ցուցանիշը: Զբաղվածության ցուցանիշը ավելի բարձր է ամուսնացած երիտասարդների շրջանում: Զբաղվածության ցուցանիշը բարձր է Երևանում, այնուհետև՝ գյուղական բնակավայրերում, իսկ ավելի ցածր է մարզի քաղաքներում: Ըստ մարզերի՝ զբաղվածության ցուցանիշը բարձր է Երևանում, Արագածոտնի, Արարատի մարզերում, իսկ ամենացածրը՝ Տավուշի և Արմավիրի մարզերում: Վարձատրվող աշխատանք ունեցող երիտասարդների մեծ մասն ունի մշտական և գրանցված աշխատանք՝ 56.5 %-ը, իսկ 13.4 %-ը՝ ժամանակավոր և չգրանցված: Մշտական և գրանցված աշխատանք ունեցող երիտասարդների հիմնական մասը 23-29 տարիքային խմբից է, իսկ ժամանակավոր է և չգրանցված աշխատանք ունեցողների մեջ ճնշող մեծամասնությունը 18-22 տարիքի երիտասարդներն են: Աշխատանքի «կայունության» և «գրանցված լինելու» հարցը երիտասարդների համար ունի ոչ միայն իրավական, այլև հոգեբանական նշանակություն. այն ընկալվում է որպես կանխատեսելիություն, արժանապատվության և «կյանքը վերահսկելի դարձնելու» պայման: Միևնույն ժամանակ, ժամանակավոր կամ չգրանցված զբաղ-

---

та и здорового образа жизни: сб. науч. ст. Всерос. науч.-практ. конф. с междунар. Участием, С.-Петербург, 23–25 мая 2019 г. – СПб.: ПОЛИТЕХ-ПРЕСС, 2019, էջ 58:

վածությունը հաճախ ոչ թե ազատ ընտրության արդյունք է, այլ երիտասարդի՝ շուկա մուտք գործելու, փորձ ձեռք բերելու կամ նվազագույն եկամուտ ապահովելու հարկադրված տարբերակ: Վարձատրվող մշտական և գրանցված աշխատանք ունեցող երիտասարդների մեծ մասն ունի բակալավրի կամ մագիստրոսի կրթություն, իսկ չգրանցված և ժամանակավոր աշխատանք ունեցող երիտասարդների մի մասի կրթական մակարդակը հանրակրթական դպրոցն է, իսկ մյուս մասը՝ ուսանողներն են: Ընդ որում, ուսանողների շուրջ մեկ երրորդը կատարում է վարձատրվող աշխատանք՝ սովորելուն զուգահեռ: Վարձատրվող աշխատանք ունեցող երիտասարդների հիմնական մասը վարձու աշխատող է պետական կամ մասնավոր ոլորտում՝ 62%, 24%-ը ինքնազբաղված է, իսկ 8%-ը ունի սեփական գրանցված բիզնես: Ինքնազբաղված երիտասարդների հիմնական մասը արական սեռի ներկայացուցիչներ են՝ 30-35 տարիքի: Ըստ բնակավայրի՝ որևէ առանձնահատկություն չի նկատվում: Ինքնազբաղվածությունը երիտասարդների մի մասի համար հարմարման ռազմավարություն է՝ «սեփական գործն ունենալու» և «մյուսներից կախվածություն չզգալու» տրամաբանությամբ: Այն հաճախ ընկալվում է ոչ միայն որպես եկամտի աղբյուր, այլև որպես ինքնության և ինքնահաստատման միջոց՝ «անգործությունից» կամ այլոց որոշումներից կախվածությունից խուսափելու համար: Սակայն շուկա մուտք գործելու գործընթացը հաճախ բնութագրվում է ռեսուրսների սահմանափակությամբ, մրցունակության խնդիրներով և հարմարման երկար փուլերով, ինչը ինքնազբաղվածությունը դարձնում է ոչ թե հեշտ լուծում, այլ բարձր ռիսկային ուղի: Երիտասարդների մի մասի համար ինքնազբաղվածության ընտրությունը պայմանավորված է ոչ միայն եկամտի աղբյուր ունենալու անհրաժեշտությամբ, այլև աշխատանքի նկատմամբ վերահսկողություն պահպանելու ձգտմամբ: Աշխատանքը դիտարկվում է որպես ժամանակի կառավարման, ճկուն գրաֆիկի և ինքնավարության միջոց: Որոշ երիտասարդներ գիտակցաբար խուսափում են ֆիքսված աշխատաժամանակով և խիստ կառավարվող աշխատանքային միջավայրերից՝ փորձելով ստեղծել զբաղվածության այնպիսի մոդելներ, որոնք թույլ են տալիս համադրել եկամտաբեր աշխատանքը, հանրային գործունեությունը և անձնական

կյանքը: Երիտասարդների հիմնական մասը զբաղված է կրթության, գյուղատնտեսության, մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտներում:

**Գծապատկեր 9. Երիտասարդների զբաղվածության ոլորտները**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Հայաստանում երիտասարդների զբաղվածության ոլորտում ըստ սեռի տարբերություններ նկատելի է հետևյալ ոլորտներում. աղջիկներն ավելի շատ ներգրավված են կրթության, քաղաքացիական հասարակության, սպասարկման ոլորտներում, իսկ տղաները՝ գյուղատնտեսության, մեծածախ և մանրածախ առևտրի, արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի, առաքման ծառայությունների ոլորտներում: Երիտասարդների առաջին վարձատրվող աշխատանքի մեկնարկի միջին տարիքը 19.3 է, մինչդեռ մեդիանը՝ 20 տարի, ինչը ցույց է տալիս, որ հարցվածների կեսը աշխատանքի է անցել մինչև 20 տարեկան դառնալը: Հայաստանում աշխատանք ունեցող երիտասարդների հիմնական մասը չի աշխատում իր մասնագիտությամբ՝ 38.2%-ը, 26.5%-ը աշխատում է իր, իսկ 18.7%-ը հարակից մասնագիտությամբ: Ընդ որում, իր մասնագիտությամբ աշխատողների մեջ ավելի շատ են իգական սեռի ներկայացուցիչները, 23-29 տարիքային խմբի երիտասարդները, իսկ ըստ բնակավայրի՝ Երևան քաղաքի երիտասարդները: Ոչ իր մասնագի-

տությամբ աշխատողների մեջ ավելի շատ են մարզի քաղաքի, արական սեռի՝ 18-22 տարիքային խմբի երիտասարդները: Իրենց մասնագիտությամբ աշխատում են հիմնականում կրթության, առողջապահության, սոցիալական աշխատանքի, ՏՏ ոլորտի, հանրային կառավարման և անվտանգության ոլորտներում աշխատող երիտասարդները, իսկ ոչ իրենց մասնագիտությամբ՝ մեծածախ, մանրածախ առևտրի, գյուղատնտեսության, տրանսպորտի, առաքման ծառայությունների ոլորտներում աշխատողները:

*«Հիմա ուրիշ ոլորտում եմ, և՛ հանրային կապերում, և՛ մարկետինգում, ինձ շատ օգնում է լրագրությունը, որովհետև շատ փոխկապակցված են իրար, բայց մեկ օր որպես լրագրող չեմ աշխատել»*[168]:

Իրենց մասնագիտությամբ աշխատող երիտասարդների մեջ մեծ է մագիստրոսական կրթություն ունեցողների տեսակարար կշիռը, իսկ այլ մասնագիտությամբ աշխատողների մեջ՝ ուսանողների, հատկապես նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների տեսակարար կշիռը: Մասնագիտությամբ չաշխատող երիտասարդների հիմնական մասը նշում է, որ չի կարողացել ըստ մասնագիտության աշխատանք գտնել, կամ սկսել է աշխատել ոչ իր մասնագիտությամբ, երբ դեռ սովորում էր: Մասնագիտության և աշխատանքի ոլորտների համընկնումը դիտվում է որպես պատահականություն, ոչ թե պլանավորման արդյունք: Երիտասարդներից շատերը նշում են, որ իրենց ներկայիս աշխատանքը չեն որոնել որպես մասնագիտական նպատակ, այլ հաճախ առաջարկվել է որպես հնարավորություն: Մասնագիտական ինքնությունը կայուն և նախապես կանխորոշված գործընթաց չէ. մասնագիտության նկատմամբ վերաբերմունքը հաճախ վերաձևավորվում է ուսման ընթացքում: Երիտասարդների մի մասը, ներգրավվելով կամավոր կամ գիտական խմբերում, ապագայում փոխում է վերաբերմունքը ոլորտի նկատմամբ՝ հաճախ հիասթափվելով համակարգային սահմանափակումների պատճառով: Այսինքն՝ մասնագիտության ընտրությունը հաճախ չի ավարտվում ընդունելությամբ. գիտական կամ

[168] 28 տարեկան աղջկա հետ անհատական հարցազրույցից մեջբերում, Երևան:

մասնագիտական ինքնությունը զարգանում և փոխվում է բուհում, իսկ հետագայում աշխատաշուկայում: Մասնագիտությամբ չաշխատելու խնդիրը հաճախ պայմանավորված չէ միայն աշխատատեղերի պակասով կամ անհամապատասխանությամբ: Աշխատանքը մի մասի համար ընտրություն է «անմիջապես եկամուտ ունենալու» տրամաբանությամբ, ինչի հետևանքով կրթական և մասնագիտական նպատակները հետաձգվում են կամ մնում կիսատ: Այս պայմաններում մասնագիտական ուղիների փոփոխականությունն ընկալվում է ոչ թե որպես անկայունություն, այլ որպես սոցիալական հարմարման ռազմավարություն՝ անորոշ միջավայրում նվազագույն կայունություն ապահովելու համար: Աշխատանք ստանալու հարցում ամենաշատը երիտասարդները նշում են անձնային որակների և հմտությունների գործոնը, ինչպես նաև կրթությունը և մասնագիտացումը, համեմատաբար ավելի քիչ է նշվել անձնական կապերի կարևորությունը:

**Գծապատկեր 10. Ի՞նչն է ունեցել ամենամեծ ազդեցությունը աշխատանք ստանալու հարցում**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Աշխատանք ունեցող երիտասարդների շուրջ 46%-ը պլանավորում է փոխել իր աշխատանքի վայրը: Ընդ որում, նման պլաններ ունեն 18-22 տարեկան երիտասարդները: Առկա է կապ եկամտի չափի և աշխատանքի վայրի փոփոխման պլանավորման միջև՝ աշխատանքի վայրը փոխելու պլաններ ունեցող երիտասարդների մեջ շատ են միջին եկամուտ

ունեցող երիտասարդները՝ 150-300,000 ՀՀ դրամ ամսեկան եկամուտ ունեցող: Որպես աշխատանքի վայրը փոխելու պատճառ երիտասարդները հիմնականում նշում են, որ ցանկանում են ավելի բարձր աշխատավարձ ստանալ: Աշխատանքի վայրի փոփոխման հաճախականությունը միշտ չէ, որ խոսում է «անպատասխանատվության» կամ «քմահաճության» մասին: Այն ավելի հաճախ արտացոլում է այն հանգամանքը, որ զբաղվածության դաշտը ընկալվում է որպես շարունակական փորձարկման տարածք, որտեղ երիտասարդը փորձում է գտնել ոչ միայն ավելի բարձր եկամուտ, այլև ավելի արդար, կանխատեսելի և իր արժեքներին համահունչ աշխատանքային միջավայր: Երիտասարդների զբաղվածության կայունությունը և մրցունակության զգացումը հաճախ պայմանավորված են ոչ միայն կրթությամբ կամ շուկայական պահանջներին համապատասխանությամբ, այլև կուտակված կենսափորձով: Օրինակ՝ հանրային գործունեության, պատերազմական փորձառությունների և երկարատև ոչ ֆորմալ աշխատանքի միջով անցած երիտասարդների մեջ ձևավորվում է բարձր դիմադրողականություն և ճգնաժամային իրավիճակներում գործելու կարողություն: Այս դեպքում երիտասարդները իրենց մրցունակությունը ընկալում են որպես զարգացող գործընթաց՝ հիմնված հարմարվելու, նոր հմտություններ յուրացնելու և տարբեր ոլորտներ համադրելու վրա, այլ ոչ թե մեկ ֆիքսված մասնագիտական կարգավիճակի: Երիտասարդների գրեթե 15%-ը պլանավորում է առաջիկա մեկ տարվա ընթացքում մեկնել այլ երկիր աշխատելու նպատակով: Արտագնա աշխատանքի պլանավորումը հաճախ ընկալվում է ոչ միայն տնտեսական շարժունության, այլև ապագայի վերահսկելիության որոնման համատեքստում: Այս տրամաբանության մեջ «աշխատանքի տեղը փոխելը» և «երկիր փոխելը» դիտարկվում են նույն շղթայի տարբեր աստիճաններ՝ պայմանավորված եկամտի, կայունության և կյանքի որակի սպասումներով: Աշխատանք չունեցող երիտասարդների մեծ մասը՝ ավելի քան 39%-ը, երբեք չի աշխատել: Երբեք չաշխատած երիտասարդների մեջ մեծ է իգական սեռի ներկայացուցիչների, ինչպես նաև 18-22 տարեկան երիտասարդների մասնաբաժինը: Իսկ 3 տարուց ավելի չաշխատած երիտասարդների մեջ շատ են 30-35 տարեկան, ամուսնացած իգական սեռի ներկայացուցիչները:

**Գծապատկեր 11. Որքա՞ն ժամանակ է, որ չեք աշխատում**
*Աղբյուր.* Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Չաշխատելու պատճառների շարքում երիտասարդները ամենահաճախ նշում են հետևյալ տարբերակները.

- Չեմ գտնում աշխատանք, որը համապատասխանում է իմ ակնկալիքներին:
- Չեմ ստանում աշխատանքի առաջարկ, որի դիմաց աշխատավարձը համապատասխանում է իմ ակնկալիքներին:
- Դեռ սովորում եմ, դժվար է համատեղել:

Ցանկալի աշխատանքի վերաբերյալ պատկերացումները և ակնկալիքները նույնպես կարևոր է քննարկել: Երիտասարդների մեծ մասը նախընտրում է լավ վարձատրվող աշխատանք, իսկ ցանկալի աշխատանքի բնութագրերում հաճախ նշվում են նաև կայունությունն ու անվտանգությունը: Բարձր վարձատրությանը առավել մեծ նշանակություն են տալիս արական սեռի երիտասարդները: Տարիքային խմբերի համեմատությամբ՝ բարձր վարձատրության կարևորությունը ավելի ընդգծված է 23-35 տարեկանների շրջանում: Մասնագիտությանը համապատասխան աշխատանք ունենալը կարևորում է երիտասարդների միայն 9,9 %: Համեմատելու համար նշենք, որ 2022 թ. Սովորողների միջազգային գնահատման ծրագրին (PISA) մասնակցող բոլոր ՏՀԶԿ երկրներում, աշխա-

տանքի սպասելիքներ հայտնած ուսանողների միջինում 58%-ը նշում է, որ ակնկալում է աշխատել իր մասնագիտությամբ[169]:

**Գծապատկեր 12. Եթե հնարավորություն ունենաք ընտրելու, ապա ո՞ր տեսակի աշխատանքը կնախընտրեիք կատարել Հայաստանում**
*Աղբյուր.* Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Երիտասարդները այսօր ավելի շատ ակնկալիքներ ունեն աշխատանքից, քան նախկինում՝ *«300,000 աշխապավարձ, կամավորություն չեն ուզում անել, չեն ուզում իրենց պարտականություններից դուրս աշխատանք անել, աշխապել հանգստի հաշվին»:*

> *«Այսինքն՝ իրենք* [երիտասարդները՝ նշում հեղինակի կողմից] *անընդհատ ինչ-որ որոնումների մեջ են, 3 ամիս էստեղ, հետո իրենք որոշում են, որ չէ, էս իրանց դուր չի գալիս, գնում են փոփոխությունների, մենք [*ավելի մեծ տարիքի երիտասարդները՝ նշում հեղինակի կողմից*] մի քիչ ավելի կայունություն ենք սիրել»*[170]*:*

Հայաստանում զբաղվածության դաշտը բնութագրվում է բարձր անկայունությամբ, կառուցվածքային անհավասարություններով և ինստիտուցիոնալ խոչընդոտներով, որոնք հատկապես սրված են Արցախից տեղահանված երիտասարդների համար: Արցախից տեղահանված երի-

[169] Տե՛ս OECD 2025, էջ 25:
[170] Բիզնես ոլորտի աղջկա հետ անհատական հարցազրույցից մեջբերում:

տասարդների համար զբաղվածությունը ոչ միայն եկամտի աղբյուր է, այլև սոցիալական ինտեգրման, արժանապատվության և ապագայի նկատմամբ վերահսկողության զգացման առանցքային մեխանիզմ: Տեղական աշխատաշուկան սահմանափակ է թե՛ առաջարկվող աշխատատեղերի քանակով, թե՛ դրանց որակով: Առկա աշխատանքների մեծ մասը կենտրոնացած է ծառայությունների և մանր առևտրի ոլորտներում՝ ցածր վարձատրությամբ և առանց երկարաժամկետ զարգացման հեռանկարների: Մասնագիտական կրթության և իրական աշխատաշուկայի պահանջների միջև առկա է ակնհայտ անհամապատասխանություն, ինչի արդյունքում երիտասարդները հաճախ աշխատում են իրենց կրթությանը չհամապատասխանող ոլորտներում: Արցախից տեղահանված երիտասարդների համար մասնավոր հատվածում զբաղվածությունը բախվում է աշխատանքային իրավունքների ոտնահարման, իսկ պետական հատվածը երիտասարդների պատկերացմամբ ավելի կայուն և պաշտպանված զբաղվածության դաշտ է, սակայն այն նաև ընկալվում է որպես փակ և դժվար հասանելի՝ քաղաքացիության կարգավիճակի և փաստաթղթերի պատճառով:

> *«Հիմնականում մարդիկ աշխատում են մասնավոր տեղերում, իսկ մասնավոր տեղերում ժամավճարը շատ, աշխատավարձը քիչ, ինչը նաև հանդիսանում ա մեր երիտասարդների խնդիրներից մեկը: Պետական համակարգում աշխատանքի տեղ չկա, մարդկանց 50-60 %-ը բարձրագույն կրթություն չունեն, ստիպված մասնավոր կազմակերպություններ են գնում, մասնավորն էլ իրա ժամնա դնում, աշխատավարձը քիչ սահմանում: Պահանջում են փաստաթղթեր, արխիվային հիմքեր չկան, օրինակ ծննդյան վկայականի վերականգնման հարցը, կես արխիվը վերականգնել են կեսը չկա, պետք է դիմեն նոտար, դատարան, այստեղ, այնտեղ ավելորդ քաշքշուք է»*[171]*:*

Պետական համակարգը իրականացրել է ծրագրեր՝ ուղղված Արցախից տեղահանված և 2016 թ. ու 2020 թ. պատերազմների մասնակից երիտասարդների զբաղվածության ապահովմանը: 2025 թ. զբաղվածու-

---

[171] Արցախից տեղահանված երիտասարդների հետ ֆոկուս խմբային քննարկումից մեջբերում:

թյան ծրագրերում ընդգրկված 16-29 տարեկան 162 գործազուրկ երիտասարդ մասնակցել է «Ադրբեջանի կողմից 2016 և 2020 և 2022 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած, ինչպես նաև 2020 թվականից հետո ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման» ծրագրին, իսկ 210 երիտասարդ մասնակցել է «2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպում և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրում» ծրագրին[172]: Աշխատաշուկայում կայուն և արժանապատիվ աշխատանքի բացակայության պայմաններում երիտասարդների մի մասը, այդ թվում՝ Արցախից տեղահանված երիտասարդները, դիմում են ինքնազբաղվածությանը: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ Հայաստանում զբաղված երիտասարդների մեծ մասը վարձու աշխատողներ են՝ շուրջ 72.6 %, իսկ ինքնազբաղված է շուրջ 26 %-ը[173]: Սակայն ինքնազբաղվածությունն ինքնին ուղեկցվում է ռիսկերով՝ սկզբնական կապիտալի, տարածքի, հաճախորդների ցանցի և ինստիտուցիոնալ աջակցության պակաս: Արդյունքում այն հազվադեպ է վերածվում կայուն տնտեսական հիմքի և հաճախ պահպանում է խոցելիության բարձր մակարդակ:

Երիտասարդների մասնագիտության ընտրության ճանապարհը հաճախ դինամիկ և ընտրության ընթացքում փոփոխվող գործընթաց է, ոչ թե փուլ, որը ավարտվում է մասնագիտական կրթությամբ: Երիտասարդների գրեթե կեսը աշխատում է, ընդ որում, նրանց մեծ մասը ցանկանում է փոխել իր աշխատանքի վայրը: Աշխատաշուկա մուտք գործելու մեկնարկային տարիքը հիմնականում 19 է: Երիտասարդների մեծ մասը աշխատում է ոչ իր մասնագիտությամբ: Զբաղվածության վերաբերյալ երիտասարդների մոտեցումները կարելի է դիտարկել երեք ընդհանուր տրամաբանությամբ. (ա) «կայունություն ապահովել»՝ նույնիսկ մասնագիտական նախասիրություններից դուրս աշխատանքի միջոցով, (բ)

---

[172] Միասնական սոցիալական ծառայության կողմից տրամադրված տվյալներ:
[173] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե / Աշխատանքի շուկան Հայաստանում, 2025:

«ինքնահաստատվել»՝ բազմաաշխատանքային կամ ինքնազբաղվածության մոդելով, (գ) «արժանապատիվ միջավայր գտնել»՝ աշխատանքի շարունակական փոփոխությունների և որոնումների միջոցով: Այս երեք տրամաբանությունները փոխկապակցված են և որոշ չափով պայմանավորված են սոցիալ-տնտեսական անորոշությամբ, աշխատաշուկայի կառուցվածքային սահմանափակումներով և երիտասարդների բարձրացված սպասումներով՝ թե՛ եկամտի, թե՛ աշխատանքի որակի նկատմամբ:

## Գլուխ 6. Երիտասարդները քաղաքացիական և քաղաքական մասնակցության գործընթացներում

*«Նրանց համար, ում խոսելու ժամանակը գուցե դեռ չի եկել, լռությունը կարող է լինել քաղաքացիական մնալու միակ հնարավորությունը»*[174]:

Քաղաքականության և երիտասարդների փոխառնչության վերաբերյալ ուսումնասիրություններում գերիշխում է երկու տարածված տեսակետ.

1. երիտասարդները հետաքրքրված չեն քաղաքական մասնակցության ավանդական ձևերով (կուսակցություններին անդամակցություն, ընտրություններին մասնակցություն),
2. երիտասարդները նախընտրում են քաղաքական և քաղաքացիական մասնակցության ոչ ավանդական ձևեր, որոնք ներառում են կամավորությունը, ցույցերին մասնակցությունը, լռության պրակտիկաները և թվային մասնակցությունը: Սակայն երիտասարդության վերաբերյալ ուսումնասիրություններում կիրառվող մեթոդաբանությունները հաճախ բավարար չափով զգայուն չեն այս մասնակցության ձևերի նկատմամբ: Արդյունքում երիտասարդների նման մասնակցության փորձառությունները մնում են մասամբ կամ ամբողջությամբ անտեսանելի:

Արդիականության պայմաններում ավելի մեծ կարևորություն է ստանում «կյանքի քաղաքականությունը» (life politics, lifestyle politics), ի տարբերություն «ազատագրական քաղաքականության» (emancipatory politics), որը բնորոշ էր ավանդական հասարակություններին: Ազատագրական քաղաքականությունը վերաբերում է ազատագրության պայքարին, սոցիալական իրավունքի ընդլայնմանը, կոլեկտիվ խնդիրներին: Կյանքի քաղաքականությունը, ըստ Գիդենսի, «*ինքնաիրացման քաղաքականություն է՝ ռեֆլեքսիվորեն ձևավորված կյանքի պայմաններում*»:

---

[174] Տե՛ս Eastmond M., Selimovic J. M. Silence as possibility in postwar everyday life //International Journal of Transitional Justice. – 2012. – T. 6. – № 3, էջ 502-524:

Այսինքն՝ այսօր քաղաքական բնույթի հարցերը հաճախ կապված են մարդու ինքնության, անձնական ընտրությունների և կենսակերպի ձևավորման հետ: Դրանք մարդկանց կապում են սոցիալական և քաղաքական աշխարհի հետ անուղղակիորեն, առանց այն միջնորդող ավանդական սոցիալական խմբերի (կուսակցություններ, միություններ): Քաղաքական մասնակցության ձևերը ավելի անհատականացվում են (ատոմացված քաղաքացիություն), և երիտասարդները քաղաքական դաշտ են մտնում ոչ թե սոցիալական խմբի միջոցով, այլ որպես իրենց ինքնությունը ձևավորող անհատներ: Այնուամենայնիվ, կյանքի քաղաքականությունը և ազատագրման քաղաքականությունը սերտորեն փոխկապակցված են. քաղաքական շարժումները կարող են միաժամանակ ներգրավվել և՛ գլոբալ ռիսկերը նվազեցնելու, և՛ այլընտրանքային կենսակերպեր զարգացնելու իրավունքը պաշտպանելու պայքարում:

*Երիտասարդների քաղաքական մասնակցության ընդհանուր բնութագիրը*

Աշխարհի տարբեր երկրներում երիտասարդների մասնակցությունը ընտրական գործընթացներին շարունակում է մնալ համեմատաբար ցածր, համեմատած ավագ տարիքային խմբերի հետ: Միևնույն ժամանակ, երկրների միջև առկա են քաղաքական գործընթացներում երիտասարդների մասնակցության զգալի տարբերություններ: Տարբեր հետազոտությունների համաձայն՝ երիտասարդների ընտրական ակտիվությունը մեծապես կախված է քաղաքական համակարգի նկատմամբ վստահությունից, մասնակցության մշակույթից և ինստիտուցիոնալ պայմաններից[175]: Երիտասարդների մասնակցությունը ընտրական գործընթացներին տարբեր երկրներում ունի հետևյալ պատկերը. Հյուսիսային Եվրոպայի երկրներում երիտասարդների մասնակցությունը ընտրություններում համեմատաբար բարձր է. օրինակ՝ Շվեդիայում երիտասարդների 75-80%-ն է մասնակցում ընտրություններին, Գերմանիայում՝ 65-70%-ը,

---

[175] Տե՛ս OECD (2024) - Youth civic engagement, https://www.oecd.org/en/publications/promoting-youth-volunteering-and-civic-service-engagement_39659e6a-en.html [25.04.2026]:

Նիդերլանդներում՝ շուրջ 65%-ը: Արևմտյան Եվրոպայում ցուցանիշները ավելի ցածր են. Ֆրանսիայում և Իսպանիայում երիտասարդների ընտրական մասնակցությունը հիմնականում տատանվում է 55-60%-ի միջակայքում: Միևնույն ժամանակ, անգլոսաքսոնական երկրներում նկատվում է ավելի ցածր ներգրավվածություն. Միացյալ Նահանգներում 2024 թվականի ընտրություններում 18-29 տարեկանների մասնակցությունը մոտ 47% էր[176], իսկ Միացյալ Թագավորությունում այն սովորաբար չի գերազանցում 50-55%-ը: Հարավային Եվրոպայում և հետխորհրդային տարածքում ցուցանիշները հաճախ ավելի ցածր են. Հունաստանում երիտասարդների մասնակցությունը 45-50% է, Վրաստանում՝ 40-45%: 2024 թվականի եվրոպական ընտրություններում մինչև 25 տարեկանների մասնակցությունը կազմել է ընդամենը 36%[177]: Ընդհանուր առմամբ, միջազգային տվյալները ցույց են տալիս, որ տարբեր երկրներում երիտասարդների մասնակցությունը ընտրություններին միջին հաշվով զգալիորեն ցածր է, քան ավագ տարիքային խմբերին, և այդ տարբերությունը հաճախ հասնում է 15-20%-ի[178]: Միաժամանակ, քաղաքական կուսակցություններին և ֆորմալ քաղաքական կառույցներին անդամակցությունը երիտասարդների շրջանում մնում է սահմանափակ՝ հիմնականում 5-15% միջակայքում, ինչը բնորոշ է գրեթե բոլոր զարգացած և զարգացող երկրներին: Տարբեր երկրներում ձևավորվում է համեմատաբար միասնական պատկեր. երիտասարդները հետաքրքրված են քաղաքական գործընթացներով, սակայն ընտրական և ինստիտուցիոնալ մասնակցության մակարդակը մնում է սահմանափակ՝ հատկապես այն դեպքերում, երբ պետական մակարդակում որոշումների վրա սեփական ազդեցության ընկալումը ցածր մակարդակի վրա է:

---

176 Տե՛ս New Data: Nearly Half of Youth Voted in 2024, https://circle.tufts.edu/latest-research/new-data-nearly-half-youth-voted-2024 [25.04.2026]:

177 Տե՛ս Youth turnout in the 2024 European elections: a closer look at the under-25 vote, https://feps-europe.eu/youth-turnout-in-the-2024-european-elections-a-closer-look-at-the-under-25-vote/:

178 https://ourworldindata.org/data-insights/young-people-are-less-likely-to-vote-than-older-people-often-considerably-so [25.04.2026]:

Մինչ 2020 թ. 44-օրյա պատերազմը Հայաստանի երիտասարդների քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը բավականին հակասական գնահատականների է արժանացել ինչպես ակադեմիական գրականության մեջ, այնպես էլ պրակտիկ հետազոտություններում: Մի մասը ընդգծում է «քաղաքական գործընթացների նկատմամբ երիտասարդների անտարբերությունը, անհաղորդությունը»[179], իսկ մյուս մասը շեշտում է երիտասարդների ոչ ինստիտուցիոնալ մասնակցության մակարդակի աճի միտումը, խոսքը հատկապես երիտասարդական նախաձեռնությունների, շարժումների մասին է[180]: 2018 թ. հանրային դիսկուրսում սահմանված «թավշյա հեղափոխությանը» երիտասարդների մասնակցությունը ևս փորձագիտական համայնքի կողմից գնահատվեց որպես աննախադեպ, քանի որ «*թավշյա հեղափոխությունն առաջին դեպքն էր, որ շարժման ղեկավարները և գործողությունների գլխավոր դերակատարները մեծամասամբ երիտասարդներն էին*»[181]: Ընդ որում, երիտասարդների շրջանում ոչ ինստիտուցիոնալ մասնակցության աճի միտումը նկատելի է ինչպես Հայաստանում, այնպես էլ գլոբալ աշխարհում: «*Քաղաքական մասնակցության ոչ ավանդական ձևերն ավելի տարածված են դարձել երիտասարդների շրջանում, այդ թվում՝ ցույցեր և սոցիալական շարժումներ*»[182]: 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո գրանցվել է երիտասարդների շրջանում աբսենտիստների (ընտրություններին չմասնակցողների) թվի ավելացում[183]: Այդուհանդերձ, աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները վկայում են, որ երիտասարդների ճնշող մեծամասնությունը հետաքրքրված է Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական իրադարձու-

---

179 Գալստյան Մ., Երիտասարդների մասնակցության հարթակները ՀՀ կրթական համակարգում // Բանբեր Ռուս-հայկական համալսարանի, 2020:

180 Տե՛ս Մարդկային զարգացման ազգային զեկույց 2018/2019, Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը, Հայաստան, 2019:

181 Նույն տեղում, էջ 52:

182 Galstyan M., Youth political participation in contemporary world: literature review, 2019, Youth Partnership[13.02.2026].

183 Տե՛ս Գալստյան Մ., ՀՀ երիտասարդների քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը հետպատերազմյան իրականությունում. ընկալումներ և պրակտիկաներ // Վերլուծական տեղեկագիր (ՔՄՀԿ) 16, 2023, 55-78 DOI: 10.56673/18294502-23.16-79, էջ 97:

թյուններով՝ 76% և 64%: Հետաքրքրական է նման հակասության քննումը: Երիտասարդների մեծ մասը՝ 57%-ը, նշում է, որ կարող է ազդեցություն ունենալ համայնքի համար կարևոր որոշումների կայացման գործընթացում, իսկ երկրի համար՝ 26%-ը: Այսինքն, 74%-ը համաձայն չէ այն դատողության հետ, որ կարող է ազդեցություն ունենալ երկրի համար կարևոր որոշումների կայացման գործընթացում: Միաժամանակ առկա է «երիտասարդների ձայնի» լեգիտիմացման խնդիր: Շատ երիտասարդներ իրենց մասնակցությունը նկարագրում են որպես երկրորդական կամ ձևական՝ առանց իրական ազդեցության որոշումների կայացման վրա: Սա չի հանգեցնում բաց հակադրության, այլ ձևավորում է հեռացման ռազմավարություն, որտեղ երիտասարդները կենտրոնանում են սեփական դաշտում գործելու վրա՝ նվազեցնելով սպասելիքները պետական կամ քաղաքական կառույցներից: Ընտրելու իրավունք ունեցող տարիքի երիտասարդների գրեթե մեկ երրորդն է պատրաստ մասնակցելու ՏԻՄ և մի փոքր ավելի քիչ մասը ԱԺ ընտրություններին, իսկ շուրջ 15%-ը դժվարացել կամ հրաժարվել է պատասխանել հարցին:

**Գծապատկեր 13. Եթե առաջիկա կիրակի օրը լինեին ՏԻՄ և ԱԺ ընտրություններ, ապա կմասնակցեի՞ք**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության մասնակից երիտասարդների մեծ մասը որևէ կազմակերպության անդամ չէ: Հասարակական կազմակերպությունների անդամների շրջանում շատ են աղջիկները և 13-22 տարիքային խմբի երիտասարդները: Ընդ

որում, կազմակերպություններին չանդամակցելը պարտադիր չէ ընկալել որպես պասիվություն: Շատ երիտասարդներ գիտակցաբար խուսափում են ֆորմալ անդամակցությունից՝ այն կապելով ձևականության, ազդեցության սահմանափակության կամ վերահսկելիության ռիսկի առկայության հետ: Փոխարենը քաղաքացիական մասնակցությունը նրանց համար արտահայտվում է գործնական քայլերի միջոցով՝ համայնքային նախաձեռնություններին միանալ, կոնկրետ խնդիր լուծել կամ աջակցել տեղական գործընթացներին առանց ինստիտուցիոնալ պարտավորությունների:

**Գծապատկեր 14. Անդամակցություն կազմակերպություններին, (Այո, Ոչ)**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 13-35




*Երիտասարդների քաղաքացիական մասնակցության ընդհանուր բնութագիրը*

Երիտասարդների քաղաքացիական մասնակցության միջազգային միտումները էապես տարբերվում են քաղաքական մասնակցությունից: Մասնավորապես՝ երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը ավելի բարձր է քաղաքականի համեմատ, ինչպես նաև ավելի բազմազան են ներգրավվածության ոլորտները: Միջազգային հետազոտությունների համաձայն՝ երիտասարդներն առավել ակտիվ են ոչ ֆորմալ և անմիջական ազդեցություն ունեցող մասնակցության ձևերում[184]: Կամավորական գործունեությունը քաղաքացիական մասնակցության առավել

[184] Տե՛ս OECD (2024) - Youth civic engagement, https://www.oecd.org/en/publications/promoting-youth-volunteering-and-civic-service-engagement_39659e6a-en.html [04.04.2026]:

տարածված ձևերից է: Տարբեր երկրներում երիտասարդների կամավո-րական ներգրավվածությունը ունի հետևյալ պատկերը. Նիդեռլանդնե-րում և Շվեդիայում այն հասնում է 40-45%-ի, Գերմանիայում՝ 30-35%-ի, Միացյալ Թագավորությունում և ԱՄՆ-ում՝ 30-40%-ի: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում ցուցանիշները համեմատաբար ցածր են. Լեհաստանում՝ մոտ 20–25%, Հունաստանում՝ 20%, Վրաստանում՝ 20-25%[185]: ՏՀԶԿ երկրներում երիտասարդների միջինը 20-25%-ն է ներգ-րավված կամավորական գործունեության մեջ: Այս ձևը դիտարկվում է որպես քաղաքացիական մասնակցության առավել հասանելի և ցածր ռիսկային ձև, որը միաժամանակ ապահովում է անմիջական սոցիալա-կան ազդեցություն[186]: Բացի կամավորական գործունեությունից, երիտա-սարդների քաղաքացիական ներգրավվածությունը արտահայտվում է նաև նվիրատվությունների, բարեգործական նախաձեռնությունների և համայնքային գործունեության միջոցով: Այս ձևերը հաճախ առավել տա-րածված են ավելի բարձր տարիքային խմբերի երիտասարդների շրջա-նում, ինչը պայմանավորված է ֆինանսական հնարավորությունների աճով[187]: Միևնույն ժամանակ, քաղաքացիական շարժումներին և բողոքի ակցիաներին մասնակցությունը համեմատաբար սահմանափակ է. տար-բեր երկրներում երիտասարդների միայն 10-20%-ն է մասնակցել նման գործողությունների, ինչը պայմանավորված է այդ ձևերի բարձր ռիսկայ-նությամբ և քաղաքական կոնֆլիկտայնությամբ[188]: Տեղեկատվական մասնակցության տեսանկյունից սոցիալական մեդիան դարձել է հիմնա-կան հարթակը գրեթե բոլոր երկրներում: Սակայն միջազգային ուսում-նասիրությունները ցույց են տալիս, որ թվային միջավայրում արտա-հայտված ակտիվությունը հաճախ չի վերածվում ուղղակի մասնակցու-թյան՝ ձևավորելով մասնակցության այնպիսի մոդել, որտեղ տեղեկաց-

---

[185] Տե՛ս Eurostat, Volunteering statistics, https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=Volunteering_statistics [04.04.2026]:
[186] Տե՛ս OECD (2023) - Government at a Glance (Civic engagement section), https://www.oecd.org/gov/government-at-a-glance/ [04.04.2026]:
[187] Տե՛ս UN World Youth Report (2023), https://www.un.org/development/desa/youth/world-youth-report.html [04.04.2026]:
[188] Տե՛ս World Values Survey (Wave 7 dataset), https://www.worldvaluessurvey.org/WVSContents.jsp [04.04.2026]:

ված լինելը և դիրքորոշում ունենալը չեն ուղեկցվում կազմակերպված կամ ֆիզիկական ներգրավվածությամբ[189]:

Հայաստանում երիտասարդների քաղաքացիական մասնակցության առավել տարածված ձևեր են կամավորական գործունեությունը, նվիրատվությունները և համայնքային ներգրավվածությունը, մինչդեռ քաղաքացիական շարժումներին մասնակցությունը մնում է սահմանափակ: Այս պատկերը լիովին համադրելի է միջազգային միտումների հետ և վկայում է, որ երիտասարդների մասնակցությունը առավելապես կենտրոնանում է այն ոլորտներում, որտեղ հնարավոր է անմիջական և տեսանելի ազդեցություն ունենալ: Տարիքի հետ նվազում է կամավորական աշխատանքներով զբաղվելը, սակայն աճում է նվիրատվություն կատարելը, ինչը վկայում է, որ երիտասարդները ֆինանսական անկախություն և կայունություն ձեռք բերելով՝ տարիքին զուգընթաց ցանկանում են հանրային օգտակար գործունեությամբ զբաղվել:

**Գծապատկեր 15. Արդյոք Դո՞ւք… (Այո, Ոչ)**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




[189] Տե՛ս Reuters Digital News Report 2024, https://www.digitalnewsreport.org/ [04.04.2026], OECD Trust Survey (2024), https://www.oecd.org/en/publications/oecd-survey-on-drivers-of-trust-in-public-institutions-2024-results_9a20554b-en.html [04.04.2026]:

Հայաստանում երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքներում ներգրավվածությունը աճել է սոցիալական շարժումների համեմատ: Կամավորական աշխատանքների և հասարակական ակտիվության հետաքրքիր օրինաչափություններ կարելի է նկատել հատկապես 44-օրյա պատերազմից հետո, երբ սկսեցին ձևավորվել բազմաթիվ երիտասարդական նախաձեռնություններ, հասարակական կազմակերպություններ՝ ուղղված ինքնության պահպանությանը, կրթական խնդիրների հասցեագրմանը: Մինչ 44-օրյա պատերազմը երիտասարդների կողմից կամավորությունը դիտարկվում էր որպես աշխատանք գտնելու, աշխատանքային փորձ ձեռք բերելու միջոց[190], իսկ պատերազմից հետո կամավորական աշխատանքները հայաստանյան երիտասարդների կողմից կիրառվում են որպես հանրօգուտ գործունեություն ծավալելու, խմբին աջակցելու, մասնակցության միջոց: Ընդ որում, 44-օրյա պատերազմի ընթացքում և հետպատերազմյան շրջանում հայաստանյան երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքներում ներգրավվածության մակարդակը աճել է, երիտասարդները հակված են կատարելու կամավորական աշխատանքներ, օգնելու մյուսներին[191]: Առհասարակ պատերազմի ընթացքում և հետպատերազմյան գործընթացներում օրինաչափ է կամավորական գործունեության աճի միտումը երիտասարդների շրջանում[192]: Հայաստանում քաղաքացիական մասնակցության հետևյալ ձևերում ավելի բարձր ցուցանիշներ ունեն աղջիկները՝ կամավորական աշխատանքներ, նվիրատվություն, մասնակցություն բարեգործական միջոցառումներին: Ըստ տարիքային խմբերի՝ կամավորական աշխատանքների, բարեգործական միջոցառումներին, համայնքում հանրային քննարկումների և հանդիպումների մասնակցության ցուցանիշները բարձր են 18-22 տարիքային խմբի երիտասարդների շրջանում: Նվի-

---

190 Տե՛ս Մարդկային զարգացման ազգային զեկույց 2018/2019, Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը, Հայաստան, 2019, էջ 54:

191 Տե՛ս Գալստյան Մ., ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարումը հետպատերազմյան իրականությունում. սոցիոլոգիական վերլուծություն // Տարածաշրջան և աշխարհ, 2023 թ., № 1:

192 Տե՛ս Taylor L. K., Townsend, D., Merrilees C. E., Goeke-Morey M. C., Shirlow P., & Cummings, E. M. Adolescent Civic Engagement and Perceived Political Conflict. Youth & Society, 2017:

բատվություն կատարելու ցուցանիշը ավելի բարձր է 30-35 տարիքային խմբում: 2018 թ. քաղաքական և քաղաքացիական գործընթացներում բողոքի ցույցերին մեծ թվով երիտասարդներ մասնակցեցին, սակայն դրանց հաջորդած քաղաքական իրադարձությունները, ներառյալ 2020 թ. պատերազմը, երիտասարդներին հիասթափության, այդ փորձառության իմաստավորման և վերաիմաստավորման անհրաժեշտության հրամայականի առջև կանգնեցրին:

*«Ես հատուկ Ռուսաստանից վերադարձել եմ 2018 թ., որ մասնակցեմ ցույցերին, հետո էլի ակտիվ ներգրավված եմ եղել տարբեր պրոցեսների, բայց մի անգամ ցույցերի ժամանակ շատ լուրջ հիասթափություն ապրեցի՝ ցույցի մասնակիցները հայհոյում էին, հասկացա, որ պետք է կրթության միջոցով հասնել փոփոխությունների»[193]:*

Երիտասարդների մասնակցությունը քաղաքացիական շարժումներին և ցույցերին միշտ չէ, որ հանգեցնում է անմիջական քաղաքական արդյունքների, ինչի հետևանքով այն հաճախ ուղեկցվում է հիասթափության զգացումով: Սակայն այդ հիասթափությունը պարտադիր չէ մեկնաբանել որպես ապաքաղաքականացում: Այն քաղաքական սոցիալականացման և մասնակցության ձևերի վերաիմաստավորման փուլ է, որի ընթացքում երիտասարդները վերաձևակերպում են իրենց ներգրավման ռազմավարությունները՝ տեղափոխվելով ոչ ֆորմալ, համայնքային կամ մասնագիտական մասնակցության դաշտ: Միջազգային փորձը ևս ցույց է տալիս, որ երիտասարդները կարող են մասնակցել փողոցային և ոչ ինստիտուցիոնալ քաղաքականությանը, սակայն այդ մասնակցությունը հազվադեպ է վերածվում երկարաժամկետ քաղաքական ներգրավման[194]:

*Մասնակցության խոչընդոտները և ռիսկերը*

Երիտասարդները հետաքրքրված են Հայաստանում սոցիալ-քաղաքական իրադարձություններով, սակայն ակտիվ դերակատարում չեն

---

[193] Պատերազմի մասնակից տղայի հետ անհատական հարցազրույցից մեջբերում:
[194] Տե՛ս Cuzzocrea, V., Bello, B.G., & Kazepov, Y. (Eds.). (2020). Italian Youth in International Context: Belonging, Constraints and Opportunities (1st ed.). Routledge:

ստանձնում կամ չեն ցանկանում ավելի ակտիվ քաղաքական գործունեություն ծավալել: Հիմնական պատճառների շարքում նշվում է քաղաքական համակարգում հաջողության հասնելու ճանապարհին անհաջողության ռիսկը, քաղաքական ոլորտում ատելության խոսքի առկայության հանգամանքը: Երիտասարդները քաղաքականությունը համարում են ռիսկային ոլորտ՝ ներդրված ջանքերի և ցանկալի արդյունքին չհասնելու առումով:

*«Կարող ես շատ ջանք թափես, աշխատես, բայց արդյունքը լինի 0, դա ամենաշատն ա վանում քաղաքականության մեջ երիտասարդներին»[195]:*

Հայաստանում երիտասարդների քաղաքացիական և քաղաքական մասնակցության սահմանափակումները հաճախ ձևավորվում են շատ ավելի վաղ փուլում՝ դեռ կրթական համակարգում: Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության մասնակից երիտասարդների մի մասի դիտարկմամբ՝ դպրոցական միջավայրում նախաձեռնողականության, ինքնուրույն կարծիք ձևավորելու և հանրային պատասխանատվության զարգացումը ոչ միայն չի խրախուսվել, այլև երբեմն ուղղակիորեն ճնշվել է: Սա ձևավորում է մի իրավիճակ, երբ երիտասարդը դեռևս մինչև քաղաքական կամ քաղաքացիական դաշտ մտնելը սովորում է խուսափել նախաձեռնությունից, պատասխանատվությունից և բարձրաձայնումից: Արդյունքում քաղաքական մասնակցության պասիվությունը պայմանավորված է ոչ միայն անվստահությամբ կամ ռիսկայնության ընկալմամբ, այլև սոցիալականացման ընթացքում ձևավորված վարքագծային սահմանափակումներով: Առկա է մասնակցության այլընտրանքային տրամաբանություն, որտեղ «փոխել» նշանակում է ոչ թե մտնել քաղաքական դաշտ, այլ ազդեցություն ունենալ սեփական մասնագիտական, համայնքային կամ սոցիալական գործունեության միջոցով: Քաղաքական ներգրավվածությունը հաճախ ընկալվում է որպես բարձր ռիսկայնություն ունեցող դաշտ՝ մշտական վարկաբեկման, ատելության խոսքի և արդյունքի անորոշության պայմաններում, ինչի հե-

---

[195] Ուսանողների հետ ֆոկուս խմբային քննարկումից մեջբերում:

տեսանքով երիտասարդները նախընտրում են *«իրենց գործն անել»*՝ պահպանելով կյանքի վերահսկելիությունն ու արժանապատվությունը: Երիտասարդների մյուս մասի համար մասնակցությունն առաջին հերթին ընկալվում է որպես պետական համակարգում պատասխանատու ծառայություն, օրենքի պահպանում և համայնքի առօրյա խնդիրների լուծում: Քաղաքացիական ներգրավվածությունն այստեղ դրսևորվում է ոչ թե հրապարակային դիրքորոշմամբ կամ քաղաքական պայքարով, այլ *«իր գործը ճիշտ անելու»* էթիկայով, որտեղ օրենքի հավասար կիրառումը, պատասխանատվությունը և հաշվետվողականությունը դիտարկվում են որպես հանրային ներդրման հիմնական ձև:

*Տեղեկատվության աղբյուրներ*

Հայաստանի երիտասարդների համար թվային միջավայրը քաղաքացիական մասնակցության հասանելի, բայց սահմանափակ հարթակ է: Սոցիալական մեդիան, ուղիղ եթերները և հանրային խոսքը հնարավորություն են տալիս արտահայտելու դիրքորոշում և արձագանքելու իրադարձություններին, սակայն շատ երիտասարդներ չեն նույնացնում այս մասնակցությունը «իրական ազդեցության» հետ: Արդյունքում ձևավորվում է մասնակցության մի ձև, որտեղ տեղեկացված լինելը և դիրքորոշում ունենալը պարտադիր չէ, որ վերածվեն ֆիզիկական կամ կազմակերպված ներգրավվածության: Հայաստանի երիտասարդները օգտվում են տեղեկատվության ստացման հետևյալ աղբյուրներից՝ սոցիալական մեդիա, ընտանիքի անդամներ, ընկերներ, հեռուստատեսություն:

**Գծապատկեր 16. Արդյո՞ք օգտվում եք տեղեկատվության ստացման հետևյալ աղբյուրներից**

*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Ընդ որում, այդ աղբյուրներից օգտվողների վստահությունը աղբյուրների նկատմամբ ունի հետևյալ նկարագիրը: Երիտասարդների մեծ մասը վստահելի տեղեկատվության աղբյուր է համարում ընտանիքի անդամներին, ընկերներին և գործընկերներին, առավել պակաս է վստահությունը սոցիալական մեդիայի և հեռուստատեսության նկատմամբ:

**Գծապատկեր 17. Արդյո՞ք օգտվում եք տեղեկատվության ստացման հետևյալ աղբյուրներից**

*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Հետպատերազմյան իրականությանը բնորոշ խուճապի, սթրեսի և տրավմաների խթանող գործոն երիտասարդները նշում են մեդիայի, հատկապես սոցիալական մեդիայում տարածվող լուրերի, այդ թվում՝ կեղծ, տեղեկությունների մասին: Երիտասարդների շրջանում, հատկապես 18-19 տարեկանների, նկատվում է նաև սոցիալական մեդիայից հրաժարում կամ լռություն թվային տիրույթում:

Այսօր Հայաստանում երիտասարդների քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը բնութագրվում է հետաքրքրվածության և իրական ազդեցության զգացման միջև առկա էական անհամապատասխանությամբ: Երիտասարդների մեծ մասը վստահ է, որ կարող է ազդեցություն ունենալ համայնքի համար կարևոր որոշումների կայացման գործընթացում, մինչդեռ երկրի մակարդակում նման վստահություն ունեն ավելի փոքր թվով երիտասարդներ: Քաղաքական մասնակցության ինստիտուցիոնալ ձևերի վերաբերյալ տվյալները ցույց են տալիս համեմատաբար չափավոր պատրաստակամություն ընտրություններին մասնակցելու հարցում: Ընտրելու իրավունք ունեցող երիտասարդների միայն մեկ երրորդն է պատրաստ մասնակցելու ՏԻՄ ընտրություններին և Ազգային ժողովի ընտրություններին: Սա կարող է վկայել ինչպես անվստահության, այնպես էլ քաղաքական անորոշության մասին: Երիտասարդների

մեծ մասը որևէ կազմակերպության անդամ չէ: Հասարակական կազմակերպությունների անդամների շրջանում գերակշռում են աղջիկները և 13–22 տարիքային խմբի երիտասարդները, ինչը մատնանշում է քաղաքացիական ակտիվության սեռային և տարիքային տարբերակվածությունը: Չնայած քաղաքական ինստիտուցիոնալ մասնակցության սահմանափակությանը՝ երիտասարդների ճնշող մեծամասնությունը հետաքրքրված է սոցիալ-քաղաքական իրադարձություններով ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհում: Քաղաքացիական մասնակցության առավել տարածված ձևը կամավորական գործունեությունն է, մինչդեռ ամենացածր ցուցանիշը գրանցվում է քաղաքացիական շարժումներին մասնակցության դեպքում: Աղջիկները համեմատաբար ավելի ակտիվ են քաղաքացիական մասնակցության մի շարք ձևերում, մասնավորապես՝ կամավորական աշխատանքներում, նվիրատվություններում և բարեգործական միջոցառումներին մասնակցության հարցում: Տարիքային կտրվածքով առավել բարձր ակտիվություն է նկատվում 18–22 տարեկանների շրջանում՝ կամավորության, բարեգործական միջոցառումների, ինչպես նաև համայնքային հանրային քննարկումներին և հանդիպումներին մասնակցության առումով: Երիտասարդները հետաքրքրված են սոցիալ-քաղաքական գործընթացներով, սակայն խուսափում են ավելի ակտիվ քաղաքական ներգրավվածությունից՝ ընտրելով լռության պրակտիկան: Որպես հիմնական խոչընդոտներ նշվում են քաղաքական դաշտում ատելության խոսքի առկայությունը և քաղաքականությունը որպես բարձր ռիսկայնություն ունեցող ոլորտ ընկալելը՝ ներդրված ջանքերի և ցանկալի արդյունքների միջև անհամապատասխանության պատճառով: Այս հանգամանքները սահմանափակում են երիտասարդների պատրաստակամությունը ստանձնելու ավելի ակտիվ դեր քաղաքական կյանքում:

## Գլուխ 7. Երիտասարդների կենսակերպը անորոշության պայմաններում

*«Մարքեթինգի նպատակը դառնում է ոչ միայն մարդկանց ոգևորելը այն բանով, ինչ ունեն, այլև այն բանով, թե ովքեր են նրանք»*[196]:

Ժամանակակից հասարակություններում երիտասարդության սոցիոլոգիական ուսումնասիրությունները հաճախ ձևավորվում են «կառուցվածքային», «անցումային» և «մշակութային» մոտեցումների միջև տեսական հակասությունների ու բանավեճերի շրջանակում: Այս հակասությունները դժվարացնում են երիտասարդների կյանքի ամբողջական ընկալումը՝ հատկապես այն պայմաններում, երբ սոցիալական իրականությունը բնութագրվում է արագ փոփոխություններով, գլոբալիզացիայով, ռիսկերի աճով և մշակութային բազմազանության խորացմամբ: Այս համատեքստում կարևոր նշանակություն է ստանում «կենսակերպ» (lifestyle) հասկացությունը, որը թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես են երիտասարդները ձևավորում իրենց առօրյա վարքը, սոցիալական հարաբերությունները և ինքնությունը՝ փոփոխվող աշխարհի պայմաններում: Կենսակերպը դիտարկվում է որպես միջնորդող հարթություն, որտեղ հատվում են սոցիալական կառուցվածքները և մշակութային ընտրությունները[197]: Արդիականության պայմաններում երիտասարդների՝ դեպի մեծահասակություն անցման գործընթացները դարձել են ավելի անհատականացված և անորոշ: Ավանդական, գծային կենսագրական ուղիները կորցնում են իրենց կայունությունը, և երիտասարդները ստիպված են ինքնուրույն կառուցել իրենց կյանքի ուղիները ընտրությունների, փորձարկումների և փոփոխվող հնարավորությունների պայմաններում: Այս գործընթացում կենսակերպը դառնում է ոչ միայն առօրյա վարքի արտահայտություն, այլև ինքնության կառուցման կարևոր մեխանիզմ: Երիտասարդների կենսակերպերը ձևավորվում են տարբեր սոցիալ-մշակու-

---

[196] Wyn, J. Youth Health and Welfare: The Cultural Politics of Education and Wellbeing, Melbourne: Oxford University Press, 2009.

[197] Տե՛ս Miles S. Youth lifestyles in a changing world. – McGraw-Hill Education (UK), 2000:

թային ազդեցությունների ներքո՝ ներառյալ մեդիայի, սպառողական մշակույթի, ժամանցի ձևերի և խմբային փորձառությունների: Այդպիսի երևույթները, ինչպիսիք են առողջությունը, ազատ ժամանակի կազմակերպումը, սպառման ձևերը և թվային միջավայրերը, դառնում են ինքնության արտահայտման և հաստատման կարևոր հարթակներ: Այսպիսով, կենսակերպի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես են երիտասարդները կառուցում իրենց «ով լինելը» արագ փոփոխվող, բազմաշերտ և հաճախ անորոշ սոցիալական իրականության պայմաններում՝ համադրելով անցումային և մշակութային մոտեցումները: Այն միավորում է կառուցվածքային սահմանափակումներն ու անհատական ընտրությունները՝ բացահայտելով երիտասարդության փորձառությունների բազմազանությունն ու բարդությունը ժամանակակից աշխարհում:

*Երիտասարդների առողջության մարտահրավերները Հայաստանում. նախապատերազմյան խնդիրներից մինչև հետպատերազմյան հոգեկան ճգնաժամ*

Երիտասարդների առողջության հիմնախնդիրները կարևոր տեղ են զբաղեցնում երիտասարդական ուսումնասիրություններում, սակայն դրանց շեշտադրումները և ուղղվածությունները ժամանակի ընթացքում փոխվել են: Մինչ 20-րդ դարը բավականին բարձր էր երեխաների և երիտասարդների մահացության ցուցանիշը՝ 1,000 երեխայից 100-ը մահանում էր մինչ մեկ տարին լրանալը: 20-րդ դարից հետո իրավիճակը բարելավվեց՝ կապված կանխարգելող առողջապահության համակարգի ներդրման՝ իմունիզացիա և այլն, հետևաբար հենց կանխարգելումը և բուժումը դարձան հետազոտությունների թեմաները: Իսկ 1980-1990-ական թթ. բարձր էր հանկարծամահությունների թիվը երեխաների շրջանում: Օրինակ՝ Մանուկների մահացությունների ուսումնասիրման հիմնադրամի կողմից իրականացված հետազոտությունների արդյունքում փոփոխություններ իրականացվեցին երեխաների խնամքի պրակտիկաների մեջ՝ սենյակի օպտիմալ ջերմաստիճանի սահմանում, երեխայի մոտ

ծխախոտ օգտագործելու արգելում և այլն[198]: Հետագայում արդեն ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի տարածումը ևս պայմանավորեց այս խնդրի հետ կապված երիտասարդական ուսումնասիրությունները, որոնց շրջանակներում կիրառվում էր միջգիտակարգային մոտեցում՝ հիմնվելով բժշկագիտության, հոգեբանության, սոցիոլոգիայի գիտելիքների վրա: Հետազոտությունները հիմնականում կենտրոնանում էին կանխարգելման և թերապևտիկ մոտեցումների վրա: Դեռահասների և երիտասարդների առողջության վերաբերյալ նշանակալի է եղել Գրանվիլ Սթենլի Հոլի դերը: Նա առաջին հոգեբանն էր, ով գիտական հիմքի վրա դրեց «դեռահասություն» հասկացությունը՝ փորձելով միավորել հոգեբանության, սոցիոլոգիայի, բժշկության և կրթության մոտեցումները: Հոլը դեռահասությունը նկարագրում է որպես «փոթորկի և սթրեսի» ժամանակաշրջան: Ըստ Հոլի՝ դեռահասությունը մի կողմից բնութագրվում է կենսաբանական և մարմնական փոփոխություններին բարդ հարմարվողականությամբ, մյուս կողմից, դա անկայուն և խնդրահարույց կյանքի փուլ է մանկության նախառացիոնալության և հասուն տարիքի ռացիոնալության միջև, որը կարիք ունի հսկողության, պաշտպանության և առաջնորդության: Հոլի՝ դեռահասության՝ որպես հուզական ցնցումների փուլի վերաբերյալ գիտելիքը երկար ժամանակ երիտասարդության վերաբերյալ ուսումնասիրությունների հիմք էր[199]: Երիտասարդները հաճախ դիտարկվում են որպես առողջության և ֆիզիկական հնարավորությունների գագաթնակետում գտնվող ժողովրդագրական խումբ. ֆիզիկական պատրաստվածությունը, էներգիան և ուժը այն բնութագրիչներն են, որոնց միջոցով սովորաբար նկարագրվում է երիտասարդությունը՝ որպես կյանքի «ծաղկման» փուլ[200]: Երիտասարդությունն ու պատանեկությունը այն փուլն են, երբ անհատները սկսում են գիտակցաբար պատասխանատվություն ստանձնել սեփական առողջության համար՝ ճանաչելով իրենց առողջական կարիքները, ձևավորելով առողջ կենսակերպի հիմքերը և սովորելով նվազեցնել առողջության համար

---

[198] Տե՛ս Chisholm L., Kovacheva, S., Merico M. EUROPEAN YOUTH STUDIES Integrating research, policy and practice, Deliverable 7.1 – M.A. EYS Reader, Innsbruck. 2011, էջ 15:
[199] Տե՛ս նույն տեղում, էջ 15:
[200] Տե՛ս Furlong, A. Youth Studies: An Introduction. USA: Routledge, 2013:

ռիսկային վարքագծերի ազդեցությունը: Երիտասարդության վերաբերյալ արդի ուսումնասիրությունները մատնանշում են, որ երիտասարդների առողջությունը ժամանակի ընթացքում վատթարացել է: Ընդ որում, երիտասարդական ուսումնասիրություններում նման վատթարացման վրա ազդող գործոնների շարքում քննարկվում են հետևյալ գործընթացները.

- Պասիվ կենսակերպ. ժամանակակից երիտասարդությունը դարձել է նստակյաց՝ ավելի շատ ժամանակ անցկացնելով էկրանների առջև, ավելի քիչ ժամանակ անցկացնելով առողջարար զբաղմունքներով, սպորտով:
- Ճարպակալում. «արագ սննդի» տարածումը, զուգորդված նստակյաց կենսակերպի հետ, հանգեցրել է երիտասարդների լուրջ գերքաշության:
- Հոգեկան առողջության վատթարացում. աճող անորոշությունը, աշխատաշուկա անցնելու ձգձգումները, 2020 թ. համավարակի սահմանափակումները, գլոբալ, տարածաշրջանային կոնֆլիկտները, հետկոնֆլիկտային իրավիճակները հանգեցրել են անհանգստության, անապահովության, ինքնավստահության հանդեպ կասկածի, սթրեսի և դեպրեսիայի, ինչն էլ իր հերթին հանգեցնում է նաև ինքնավնասման պրակտիկայի, այդ թվում՝ վնասակար սովորությունների տարածման:
- Անհատականացման և միայնության աճ. անկախության, սեփական կյանքի նկատմամբ անձնական պատասխանատվությունը, անհատականացվածությունը հանգեցնում են սոցիալական կապերի և աջակցության կորստի, ինչը կարևոր է դիմադրողականության համար:
- Բարեկեցության զգացողության անկում. նյութապաշտության աճը («մշակութային խարդախություն»), քարոզում է այնպիսի կենսակերպը, որը հիմնված է տնտեսական աճի օգուտների վրա՝ անտեսելով հոգեբանական հետևանքները: Նյութապաշտությունը (փողի և ունեցվածքի ձգտումը) ծնում է դժգոհություն, դեպրեսիա, անհանգստություն, զայրույթ, մեկուսացում և օտարացում[201]:

---

[201] Տե՛ս Wyn, J. Youth Health and Welfare: The Cultural Politics of Education and Wellbeing, Melbourne: Oxford University Press, 2009:

Մինչ 44-օրյա պատերազմը հայաստանյան երիտասարդների շրջանում առկա էին առողջության հետ կապված լուրջ խնդիրներ՝ առողջապահական ծառայությունների հասանելիություն և դիմելիություն, հատկապես գյուղական բնակավայրերում, վնասակար սովորությունների տարածվածություն, հատկապես տղաների շրջանում՝ ծխախոտի, ալկոհոլի օգտագործում, երիտասարդների շրջանում հակասական դիրքորոշում սեռականության, սեռական և վերարտադրողական առողջության վերաբերյալ, առողջ սննդի, առողջապահական կրթության որակի հետ կապված խնդիրներ[202]: Բնակչության, մասնավորապես երիտասարդների առողջության վրա ազդող բացասական գործոններից են նաև «դեգրադացված էկոհամակարգերը»[203]: Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության մասնակից երիտասարդների 61%-ը բավարարված է համայնքում առկա առողջապահական ծառայությունների որակից, 8%-ը բոլորովին բավարարված չէ, իսկ 31%-ը բավարարված չէ: Համայնքում առկա առողջապահական ծառայությունների որակից երիտասարդների գոհունակության ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է Երևան քաղաքում՝ 80%, Կոտայքի, Լոռիի մարզերում՝ շուրջ 67%, իսկ ամենացածր ցուցանիշները գրանցվել են Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերում: Համայնքներում բացակայում են որակյալ առողջապահական ծառայությունները, խնդիրը սուր է հատկապես սահմանամերձ համայնքներում:

> *«Եթե որևէ մեկին միջափ է խայթում, պետք է շփապ հակաթույն ներարկել, ինչը առկա չէ համայնքում»[204]:*

Մինչ 44-օրյա պատերազմը Հայաստանում 15 տարեկան և բարձր բնակչության շրջանում արձանագրվել են առողջ կենսակերպի և առողջության պահպանման հետ կապված հետևյալ խնդիրները՝ ծխախոտի

---

[202] Տե՛ս Մարդկային զարգացման ազգային զեկույց, 2018/2019, Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Հայաստան, 2019 https://www.undp.org/sites/g/files/ zskgke326/files/migration/am/NHDR-ARM_sans-foreword.pdf, էջ 69, [12.02.2024թ.], էջ 69-71:

[203] Տե՛ս նույն տեղում, էջ 73:

[204] Սահմանամերձ համայնքում բնակվող երիտասարդների հետ ֆոկուս խմբային քննարկումից մեջբերում:

ամենօրյա օգտագործում, գիրություն ու ճարպակալում, ֆիզիկական թերակտիվություն, ալկոհոլի օգտագործման չարաշահում, առողջապահական ծառայություններից օգտվելու պրակտիկայի պակաս կամ բացակայություն[205]: Ալկոհոլի օգտագործման հիմնական ցուցանիշը (օրական 20 գրամ ալկոհոլ օգտագործող մարդկանց թիվը) 2022 թ. կազմել է 2,8%, ինչը զգալիորեն ցածր է 2016 թ. համեմատ (7,9%): Տղամարդկանց շրջանում այս ցուցանիշը կազմում է 6,2%, իսկ կանանց շրջանում այն չի հայտնաբերվել (2016 թ.՝ 0,7%): Սակայն մտահոգիչ է, որ կանանց շրջանում ալկոհոլի օգտագործումը սկսել է «երիտասարդանալ»: Դրա մասին է վկայում այն փաստը, որ երբևէ ալկոհոլ օգտագործած կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը տարիքի հետ մեծանում է. այն հավասար է 82%-ի 15-19 տարեկան աղջիկների և 20-34 տարեկան կանանց համար, իսկ ավելի բարձր տարիքային խմբերում նվազում է մինչև 78%, 72%, 68%: Նույն միտումն առկա է նաև վերջին 12 ամսում և վերջին 30 օրվա ընթացքում ալկոհոլ օգտագործած մարդկանց շրջանում[206]: Հայաստանում ծխողների մեծ մասը տղամարդիկ են: Ըստ ծխախոտի օգտագործման հիմնական ցուցանիշի՝ ամեն օր ծխող տղամարդկանց ցուցանիշը 2022 թ. կազմել է 53,2%, ինչը 2016 թ. համեմատ էապես չի փոխվել (53,4%), կանանց ցուցանիշը նույնպես չի կրել փոփոխություն՝ 2022 թ. և 2016 թ. ամեն օր ծխողների թիվը կազմել է համապատասխանաբար 2,0% և 2,3%: Արական սեռի ծխողների թիվը զգալիորեն ավելանում է տարիքի հետ՝ 15-19 տարիքային խմբում ցուցանիշը 14,7% է, իսկ 20-34 տարիքային խմբում հասնում է 60,6%-ի[207]: Երիտասարդների արդի մարտահրավերների շարքում կարևոր է նշել նաև վնասակար սովորությունների տարածման միտումը, որի մասին նաև բարձրաձայնում են երիտասարդների հետ աշխատող մասնագետները: Ըստ պաշտոնական տվյալ-

---

[205] Տե՛ս Մարդկային զարգացման ազգային զեկույց, 2018/2019, Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Հայաստան, 2019 https://www.undp.org/sites/g/files/ zskgke326/files/migration/am/-NHDR-ARM_sans-foreword.pdf, էջ 69, [12.02.2024 թ.]:
[206] Տե՛ս Առողջապահության համակարգի գործունեության գնահատում, 2022, https://nih.am/assets/pdf/atvk/034a311b3e152c3bd512a99c97994151.pdf, էջ 12 [04.04.2026]:
[207] Տե՛ս նույն տեղում, էջ 11:

ների՝ 2023 թ. հանրապետության իրավապահ մարմինների կողմից հայտնաբերվել է թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների հետ կապված հանցագործությունների 5070 դեպք (2022 թ.՝ 2266). գրանցվել է 2804 դեպքով կամ 123.7%-ով աճ[208]: Մամուլում ևս շրջանառվեցին լուրեր դպրոցում թմրամիջոցների շրջանառության մասին:

> *«Թմրանյութը մտել ա դպրոց, որը նախկինում, եթե լսեինք, անպատկերացնելի բան կթվար»[209]:*

*Երիտասարդների ֆիզիկական և հոգեկան առողջության ինքնագնահատականը*

Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության մասնակից երիտասարդների մեծ մասը լավ կամ շատ լավ է գնահատել իր առողջական վիճակը, բավարար է գնահատել 17.7%-ը, իսկ վատ և շատ վատ՝ 1.7 %-ը: Տվյալների համաձայն՝ անձնական եկամուտը զգալիորեն կապված է առողջության ինքնագնահատականի հետ: Ցածր եկամուտ ունեցողները հաճախ իրենց առողջությունը գնահատում են «բավարար» կամ «լավ», մինչդեռ բարձր եկամուտ ունեցողները՝ «լավ» կամ «շատ լավ»: Եկամտի մակարդակի և առողջության ինքնագնահատականի միջև արձանագրվել է վիճակագրորեն նշանակալի կապ ($\chi^2$ = 42.2, $p < .001$):

Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության մասնակից երիտասարդների շուրջ 41%-ը հազվադեպ է զբաղվում ֆիզիկական ակտիվությամբ կամ ընդհանրապես չի մարզվում: Տվյալները ցույց են տալիս հստակ օրինաչափություն. ֆիզիկապես ավելի ակտիվ երիտասարդները իրենց առողջական վիճակը զգալիորեն ավելի բարձր են գնահատում, մինչդեռ քիչ ակտիվ և չմարզվող երիտասարդների շրջանում առողջության ինքնագնահատականը համեմատաբար ավելի ցածր է: Այս կապը հաստատվում է ինչպես հաճախությունների բաշխմամբ, այնպես էլ $\chi^2$ (chi-square) վիճակագրական թեստով: Քիչ մարզվող

---

[208] Տե՛ս https://mia.gov.am/2024/06/26/26/ [04.04.2026]:

[209] Երիտասարդական ՀԿ նախագահի հետ անհատական հարցազրույցից մեջբերում:

երիտասարդների մեջ գերակշռում են ցածր եկամուտ ունեցողները, ինչպես նաև իգական սեռի ներկայացուցիչները և 30-35 տարիքային խմբի երիտասարդները: Միևնույն ժամանակ, հաճախ մարզվողների շրջանում սեռային և տարիքային էական տարբերություններ չեն արձանագրվել:

**Գծապատկեր 18. Առողջական վիճակի ինքնագնահատական**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 13-35




Պատերազմը ծնում է ոչ միայն անվտանգային ռիսկեր, սոցիալ-տնտեսական մարտահրավերներ, այլև ֆիզիկական և հոգեկան առողջության խնդիրներ: Հետպատերազմյան Հայաստանում հոգեկան առողջության խնդիրները սրվեցին, հատկապես Արցախից տեղահանված երեխաների և երիտասարդների, 44-օրյա պատերազմի մասնակիցների շրջանում: Բացի 44-օրյա պատերազմի և տեղահանության բարդ փորձառությունից, հոգեկան առողջության վրա բացասական ազդեցություն ունեցան հատկապես մեդիայում շրջանառվող պատերազմական հանցագործությունների տեսանյութերի տարածումը հասարակության լայն զանգվածների շրջանում: Երիտասարդների շրջանում առավել հաճախ արձանագրվում են ուրախության, հոգնածության և թուլության զգացողությունները, մինչդեռ տխրությունը, ոգևորությունը և զայրույթը համեմատաբար ավելի հազվադեպ են նշվում: Տարիքային կտրվածքով նկատվում են տարբեր զգացմունքային պրոֆիլներ. 30–35 տարեկան երիտասարդների շրջանում ավելի հաճախ են հանդիպում հոգնածու-

թյան և թուլության զգացողությունները, մինչդեռ 18–22 տարեկաններն ավելի հաճախ են նշում վախի և անորոշության զգացողությունները: Ընդհանուր առմամբ, երիտասարդների զգալի մասը գտնվում է դրական զգացմունքային վիճակում: Հոգեկան բարեկեցության հաշվարկված միջին արժեքը կազմում է 0.45, ինչը վկայում է, որ միջինը դրական զգացումները գերակշռում են բացասականներից: Մեդիան (0.50), ինչպես նաև վստահության միջակայքը (0.39–0.51), հաստատում են հոգեկան բարեկեցության միջինից բարձր մակարդակը: Միևնույն ժամանակ, ստանդարտ շեղման հարաբերականորեն բարձր արժեքը (0.78) և ցուցանիշների լայն տիրույթը (–1.93-ից մինչև 2.86) վկայում են երիտասարդների հոգեկան վիճակի զգալի անհատական տարբերությունների մասին: Երիտասարդների մեծ մասը գտնվում է բավարար և դրական հոգեկան վիճակում, առկա են նաև համեմատաբար փոքր խմբեր՝ ցածր կամ շատ բարձր հոգեկան բարեկեցությամբ:

**Գծապատկեր 19. Վերջին մեկ ամսվա ընթացքում որքա՞ն հաճախ եք զգացել հետևյալը**

*Աղբյուր. Երիտասարդների* շրջանում հարցում, 13-35




Տղաների հոգեկան բարեկեցությունը միջինում ավելի բարձր է, քան աղջիկների մոտ, ընդ որում՝ աղջիկների շրջանում նաև ավելի մեծ է սփռվածությունը (variability) (Std. Dev. = 0.86): Սա համապատասխանում է սթրեսային, տագնապային, հոգնածության զգացումներ ունենալու

վերաբերյալ ցուցանիշներին՝ իգական սեռի մեջ բացասական զգացողությունները ավելի հաճախադեպ են: Տղաները ավելի կայուն ու ավելի բարձր բարեկեցություն ունեն, իսկ աղջիկները՝ ավելի ցածր միջին բարեկեցություն, ավելի շատ սթրեսային զգացողություններ, հուզական սրության մեծ տատանումներ: Երևանում և գյուղերում հոգեկան բարեկեցությունը մոտ է իրար՝ համեմատաբար ցածր, իսկ մարզային քաղաքներում այն միջին հաշվով ավելի բարձր է: Երիտասարդների կյանքում բավականին շատ են վախերը, անհանգստությունները, սթրեսը՝ կապված տարբեր դերերի համադրման, տարբեր պատասխանատվությունների, ինչպես նաև արտաքին միջավայրային պայմանների և հանգամանքների հետ: Երիտասարդ ծնողների շրջանում հոգեկան ծանրաբեռնվածությունը շարունակական բնույթի է: Ծնող լինելը հաճախ ուղեկցվում է մշտական լարվածությամբ, պատասխանատվության զգացման կտրուկ աճով և *«չկանգնելու, դադար չփալու»* ներքին պահանջով, երբ հանգիստը կամ սեփական կարիքների վրա կենտրոնանալը ընկալվում է որպես անթույլատրելի: Այս վիճակը նպաստում է հյուծվածության կուտակմանը և հոգեկան վերականգնման հնարավորությունների սահմանափակմանը: Երիտասարդների մի մասի մեջ հոգեկան ծանրաբեռնվածությունը կուտակային բնույթի է: Սթրեսի և տագնապի աղբյուրները կապված են ոչ միայն 44-օրյա պատերազմի և 2023 թ. տեղահանության փորձառության հետ, այլև առօրյա սոցիալ-տնտեսական ճնշումների՝ բնակարանային անորոշության, ֆինանսական պարտավորությունների և ընտանիքի հանդեպ պատասխանատվության աճի հետ: Երիտասարդների մի մասը նշում է, որ մշտական անորոշությունը և *«հետ չկանգնելու»* անհրաժեշտությունը ձևավորում են շարունակական լարված վիճակ, որը ժամանակի ընթացքում դառնում է նորմալացված, սակայն չի նվազեցնում հոգեպես հյուծվելու ռիսկերը: Երիտասարդերի մեծ մասը խոստովանում է պարբերական կամ մշտական տագնապի և սթրեսի մասին: Այս վիճակները հաճախ կապվում են 44-օրյա պատերազմի փորձառության, ապագայի անորոշության, ֆինանսական խոցելիության և աշխատանքային անապահովության հետ: Պետք է նաև նկատի ունենալ, որ երեխաների և երիտասարդների շրջանում անհանգստության, դեպրեսիայի և սոցիալական դժվարությունների կտրուկ աճը և միտումները կապված են

սմարթֆոնների արագ տարածման և անկախ, խաղային մանկության անկման հետ: Այս հանգամանքը մանրամասն ուսումնասիրվել է Ջ. Հայթի «Անհանգիստ սերունդ» ուղենիշային աշխատանքում: Երիտասարդները չունեն լարվածության և սթրեսի հաղթահարման հստակ մեխանիզմներ, ինչը վկայում է հոգեբանական աջակցության հասանելիության սահմանափակության մասին:

Հայաստանի երիտասարդների համար լարվածության հաղթահարման միջոցներ են ընթերցանությունը, հոգեբանական գրականության ուսումնասիրությունը, տեղեկատվության հավաքագրումը և ընտանեկան աջակցությունը: Լարվածության հաղթահարման ռազմավարությունները հիմնականում անհատական և ոչ ֆորմալ բնույթի են՝ քիչ հենվելով ինստիտուցիոնալ ռեսուրսների վրա:

> *«Ես աշխատանքի մեջ խորանալով, որտեղ երբ որ շատ գործ ունեմ անելու, ոնց որ էդ մտքերը 2-րդ պլան են մնում, ու ազատ ժամանակ չի մնում լուրերին ծանոթանալ էդ պահին: Սենց բան, ինչ-որ տենց կարևոր բան է, դեպք է տեղի ունեցած լինում, մի քանի օր հետո ես դրա մասին տեղեկանում: Ես հիմա նաև շատ էդ լրատվական կայքերից եմ ապաբաժանորդագրվել, ոնց որ փորձում եմ մաքսիմալ էդ ամեն ինչից հեռու լինել, մյուս կողմից էլ ինքս ինձ երբեմն մեղադրում եմ, որ ես էլ եմ սկսում դասվել էն մարդկանց շարքին, ովքեր որ իմ նման էդ էս անտարբերության շղթան սենց խորացնում են: Բայց առանց դրա հնարավոր չէ, այսինքն, եթե անընդհատ էդ բացասականի մեջ մնաս, դու չես կարա թեկուզ քո աշխատանքում ինչ-որ մի հատ դրական բան բերես»[210]:*

Երիտասարդների հոգեկան ծանրաբեռնվածության հաղթահարման տարբեր ռիսկային ինքնակարգավորման մոդելներ կան: Երիտասարդների մի մասը սթրեսն ու տագնապը կառավարում է աշխատանքի գերբեռնվածության, մշտական զբաղվածության և «չկանգնելու» ռազմավարության միջոցով: Այս մոտեցումը մի կողմից օգնում է ժամանակավորապես նվազեցնել անհանգստությունը և վերահսկելիության զգացում ստեղծել, սակայն մյուս կողմից կարող է հանգեցնել հյուծման, հանգստի

---

[210] Բիզնես ոլորտի աղջկա հետ հարցազրույցից մեջբերում:

նկատմամբ մեղքի զգացման և երկարաժամկետ բարեկեցության խոցելիության աճի: Այսպիսով, ինքնակարգավորումը հաճախ փոխարինում է ինստիտուցիոնալ հոգեբանական աջակցության բացակայությանը՝ միաժամանակ ստեղծելով նոր ռիսկեր: Առողջության, այդ թվում՝ հոգեկան առողջության հետ կապված խնդիրները, առավել սուր է արտահայտված Արցախից տեղահանված, 44-օրյա պատերազմի մասնակից երիտասարդների շրջանում: Ըստ պաշտոնական տվյալների՝ 44-օրյա պատերազմում շուրջ 11 000 անձ վիրավորում է ստացել: Պատերազմի արդյունքում հաշմանդամություն ձեռք բերած երիտասարդները ոչ միշտ են կարողանում օգտվել առողջապահական ծառայություններից, զուգահեռաբար չեն կարողանում վերադառնալ իրենց նախկին զբաղվածությանը, ինչը հանգեցնում է բազմակի խոցելիության: Վերականգնողական ծառայությունները ոչ միշտ են հասցեագրում նման ծառայությունների կարիք ունեցող երիտասարդների կարիքների ողջ ծավալը:

Մտահոգիչ է նաև ինքնասպանության և ինքնասպանության փորձերի թիվը երիտասարդների շրջանում: Ըստ Վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2024 թ. կտրուկ աճել է 18-29 տարիքային խմբում ինքնասպանության փորձերի թիվը. 2022 թ. այն կազմել է 89, իսկ 2024 թ.՝ 162, որից 102-ը՝ տղաներ, 60-ը՝ աղջիկներ: Ինքնասպանությունների թիվը այս տարիքային խմբում նվազել է՝ 2022 թ.՝ 37, իսկ 2024 թ.՝ 18[211]: Ինքնասպանության փորձերի թիվը աճել է նաև տարիքային մյուս խմբերում. առավել մեծ թվով ինքնասպանության փորձերը, ըստ պաշտոնական վիճակագրության, կայուն բարձր են 30-65 տղամարդկանց շրջանում. 2024 թ.՝ 287: Նման մտահոգիչ վիճակագրությունը կարիք ունի խորքային վերլուծության և պատճառների բացահայտման:

*Երիտասարդների անցումը դեպի ինքնուրույն կյանք*

Մանկության կախվածությունից դեպի երիտասարդական կյանքի անկախության անցման գործընթացում առանցքային են երեք հիմնական անցումները՝ կրթությունից աշխատանքի, ծագման ընտանիքից նոր ձևավորած ընտանիքի (domestic transition), ծնողների, խնամակալների

[211] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե / Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2025, էջ 38:

բնակարանից տեղափոխում, առանձնացում (housing transition)[212]: Պատահական չէ, որ երիտասարդական ուսումնասիրություններում այս երեք անցումները ուսումնասիրվում են սերտ փոխառնչության մեջ: Կրթությունից աշխատանքի անցման ձգձգումը կարող է հանգեցնել այն ժամանակահատվածի երկարացմանը, որի ընթացքում երիտասարդները կախված են մնում իրենց ընտանիքներից, իսկ որոշ երկրներում՝ պետությունից: Զբաղվածության միջոցով ֆինանսական անկախությունը երիտասարդներին տրամադրում է ռեսուրսներ՝ ծնողական տնից դուրս գալու և բնակության ավելի ինքնուրույն ձևեր հաստատելու համար: Երիտասարդների հարաբերությունները ընտանիքից դուրս, մասնավորապես՝ ընկերների և ընկերուհիների հետ, կարող են ազդել անցումային ուղիների վերաբերյալ որոշումների վրա: Այս հարաբերությունները ևս կարևոր ուղղություն են երիտասարդության մասին ուսումնասիրություններում: «Յո-յո անցումներ» (Yo-Yo transitions) հասկացությունը նշյալ ուսումնասիրություններում կիրառվում է երիտասարդների կախվածության և անկախության միջև տատանվող ճոճանակի գաղափարը ներկայացնելու համար: Յո-յո անցումները ցույց են տալիս, որ մեծահասակ դառնալը գծային գործընթաց չէ. կախվածությունից անկախություն և հակառակ անցումները կրկնվող են: Յո-յո անցումները հաճախ ներառում են ծնողների հետ ապրելու և ֆինանսապես կամ սոցիալապես անկախ լինելու կրկնվող փորձառությունները[213]:

*Ընտանիքը երիտասարդի կյանքում. աջակցություն և կախվածություն*

Երիտասարդների մեծ մասը նախընտրում է ինքնուրույն որոշում կայացնել (51%), իսկ ավելի քիչ մասը դիմում է ընտանիքի անդամներին՝ ծնողներին (25.9%) և ամուսնուն կամ կնոջը (10.2%): Ընտանիքը երիտասարդների համար միաժամանակ և՛ անվտանգության ու հոգեբանական աջակցության հիմնական աղբյուր է, և՛ անկախացման գործընթացը

[212] Տե՛ս Furlong, A. Youth Studies: An Introduction. USA: Routledge, 2013:

[213] Տե՛ս Biggart A., Walther A. Coping with yo-yo-transitions. Young adults' struggle for support, between family and state in comparative perspective //A New Youth?, Routledge, 2016, էջ 41-62:

սահմանափակող գործոն: Երիտասարդների մի մասը շարունակում է ապրել ծնողական ընտանիքում ոչ թե սեփական ընտրությամբ, այլ բնակարանային խնդիրների, ֆինանսական անապահովության և այլընտրանքների բացակայության պատճառով: Այս երկակիությունը ձևավորում է կախվածության և ինքնավարության միջև մշտական լարվածություն:

*«Ես արդեն 3 տարի է մենակ եմ բնակվում, ու հիմա ավելի ինքնուրույն, հասուն ժամանակահատվածն է իմ համար»*[214]:

Ընդ որում, երիտասարդների կեսը ինքնուրույն է թե՛ կրթության, թե՛ աշխատանքի և թե՛ անձնական այլ հարցերում, իսկ մյուս մասը կրթության հարցերում դիմում է ծնողներին, աշխատանքի հարցերում՝ ծնողներին, զուգընկերոջը և ընկերներին, անձնական այլ հարցերում՝ կրկին ծնողներին, զուգընկերոջը և ընկերներին: Հետազոտության մասնակից 18-35 տարեկան երիտասարդների շուրջ 37%-ը ամուսնացած է, 56%-ը՝ չամուսնացած, իսկ 7%-ը ամուսնական այլ կարգավիճակ ունի (ամուսնալուծված, այրի): Մոտ 7%-ն է նշում ընտանիք ստեղծելը որպես իր կյանքի հիմնական նպատակ առաջիկա 1-3 տարվա համար:

*«Էս պահին ճիշտն ասած տենց պլաններ չունեմ ընտանիք կազմելու, ամուսնանալու...ուղղակի էս պահին ինքս ներքուստ պատրաստ չեմ էդ լուրջ որոշմանը: Ինձ համար էդ շատ լուրջ որոշում ա»*[215]:

*Բնակարանային պայմանները և անկախ ապրելու հնարավորությունները*

Հետազոտության մասնակից երիտասարդների 65%-ը բավարարված է բնակարանային պայմաններից, 20%-ը բավարարված չէ, իսկ 15%-ը լիովին բավարարված է: Բնակարանային պայմաններից ավելի քիչ են բավարարված աղջիկները: Երիտասարդների մեծ մասը չի ցանկանում փոխել իր բնակավայրը: Աղջիկները, տղաների համեմատ, ավելի շատ են ցանկություն հայտնել փոխել բնակավայրը: Տարիքի աճին

---

[214] 28 տարեկան աղջկա հետ անհատական հարցազրույց, Երևան:
[215] Մեջքերում անհատական հարցազրույցից, 23 տարեկան, տղա, Երևան:

զուգահեռ՝ բնակավայրը փոխելու ցանկությունը նվազում է: Ընդ որում, բնակավայրը փոխելու ցանկություն ավելի շատ հայտնել են 18-22 տարեկան երիտասարդները: Սա սոցիոլոգիական օրինաչափություն է, ըստ որի՝ կյանքի ավելի վաղ փուլերում երիտասարդներն ավելի շարժունակ են և բաց փոփոխությունների նկատմամբ (life-course effect): Տարիքային խմբերի միջև առկա է հստակ և վիճակագրորեն նշանակալի կապ բնակավայրը փոխելու մտադրության հետ ($\chi^2(6)=35.3$, $p<.001$): Մասնավորապես, 18-–22 տարեկանները առավել շարժունակ են. նրանց շուրջ 43%-ը պատրաստ է տեղափոխվել («այո» կամ «ավելի շուտ այո»), մինչդեռ 23–29 տարեկանների շրջանում գերակշռում է «ավելի շուտ ոչ» պատասխանը (41%): Իսկ 30–35 տարեկանների շրջանում տեղափոխվելու ցանկությունը ամենացածրն է, նրանց 37%-ը նշում է «ոչ»: Այսպիսով, տարիքի աճին զուգահեռ նվազում է բնակավայրը փոխելու պատրաստակամությունը:

**Գծապատկեր 20. Արդյո՞ք ցանկություն ունեք փոխելու Ձեր բնակավայրը**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Փոքր ընտանիքներում բնակվող երիտասարդները ավելի շատ են հակված տեղափոխվելու, քան մեծ ընտանիքներում բնակվող երիտասարդները, բայց այս միտումը վիճակագրորեն թույլ է (p=.066): Իսկ համայնքի կամ թաղամասի վերջին երկու տարիների փոփոխությունների

սուբյեկտիվ գնահատումը անմիջականորեն կապված է բնակավայրը փոխելու մտադրության հետ ($\chi^2(9)=62.7$, $p<.001$): Այն երիտասարդները, ովքեր կարծում են, որ իրենց բնակավայրի վիճակը վատթարացել է, զգալիորեն ավելի հաճախ են ցանկանում տեղափոխվել (65%-ից ավելին նշել են «այո» կամ «ավելի շուտ այո»): Մինչդեռ, այն երիտասարդները, ովքեր իրենց համայնքի միջավայրը գնահատում են որպես բարելավված կամ հիմնականում անփոփոխ, ավելի հաճախ են նախընտրում մնալ նույն բնակավայրում: (41%՝ «ոչ», 27%՝ «ավելի շուտ ոչ»): Այսպիսով, համայնքի սոցիալական և ֆիզիկական միջավայրի վատթարացումը ուժեղացնում է միգրացիոն տրամադրությունները, մինչդեռ բարելավված կամ կայուն միջավայրը նպաստում է տեղում մնալու ընտրությանը:

**Գծապատկեր 21. Վերջին երկու տարիների ընթացքում Ձեր համայնքի/թաղամասի վիճակն ընդհանուր առմամբ ինչպե՞ս է փոխվել**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Հետազոտության մասնակից երիտասարդների շուրջ 10%-ը նշում է, որ պլանավորում է մեկնել այլ երկիր մշտական բնության: Միգրացիոն նման տրամադրություններն առավել արտահայտված են Երևանում բնակվող երիտասարդների շրջանում: Տարիքային խմբերից ավելի բարձր է այս ցուցանիշը 18-22 տարիքային խմբի երիտասարդների շրջանում: Բարձր կրթական մակարդակ ունեցող՝ բակալավրի և մագիստրոսի աստիճանով երիտասարդների շրջանում ևս միգրացիոն

մտադրությունները համեմատաբար ավելի բարձր են: Վերջիններիս մեջ զգալի են չամուսնացած երիտասարդների և աղջիկների տեսակարար կշիռները: Հատկանշական է, որ միգրացիոն մտադրություններ ունեցող երիտասարդների շրջանում ներկայացված են ինչպես ցածր, այնպես էլ բարձր եկամուտ ունեցող խմբերը: Բացի այդ, ավելի փոքր ընտանիքներում ապրող երիտասարդներն են ավելի հակված մեկնելու այլ երկիր մշտական բնակության: Երիտասարդների 50%-ը չի ցանկանում ընտանիքից առանձին ապրել, շուրջ 16%-ը նշում է, որ ցանկանում է ընտանիքից առանձին ապրել, իսկ 9%-ը դժվարացել է հարցին պատասխանել: Չամուսնացած երիտասարդների 52%-ը չի ցանկանում ընտանիքից առանձին ապրել, նման ցանկություն ունի շուրջ 29%-ը, իսկ 18%-ը դժվարացել է պատասխանել:

*Ընկերական հարաբերությունները և սիրային հարաբերությունները երիտասարդների կյանքում*

Երիտասարդների կենսակերպի կարևոր բաղադրիչ է ընկերական և սիրային հարաբերությունների կառուցումը: Ընկերները հանդես են գալիս երիտասարդների օգնության անմիջական շրջանակը: Այս հարաբերություններում կան մարտահրավերներ, որոնց թվում հարաբերություններում փոխադարձ վստահության ձևավորումն է:

> *«Հիմա տղա-աղջիկ հարաբերությունների մոդելն է շատ փոխվել, չգիտեմ, կոնկրետ իմ դեպքում, բարեբախտաբար, հիմա տենց չի, բայց ես էլ եմ հանդիպել, մի տեսակ, շատ տարածված ա, ընկերներիցս շատերն են ասում, որ հատկապես տղամարդիկ, ոնց որ չեն կարող հստակ ձևակերպել՝ ի՞նչ են ուզում աղջիկներից, այսինքն՝ լիքը ընկերուհիներ ունեմ, որտեղ ինչ-որ տղաներ հայտնվում, կորում, հայտնվում, կորում, հայտնվում, կորում են, կամ ինչ-որ իրենք հարաբերությունների մեջ են իբր, բայց չեն սահմանում էդ հարաբերությունը, էդ աղջիկը չի հասկանում՝ էս տղեն իր ընկերն է, թե ի՞նչ է, ու երբ որ փորձում է հստակ տա էդ հարցը, էդ տղեն անընդհատ մանևրում է, խուսափում է»[216]:*

[216] Բլոգեր աղջկա հետ հարցազրույց:

Ընկերների դերը չի սահմանափակվում միայն զգացմունքային աջակցությամբ. նրանք հաճախ ձևավորում են փոխօգնության ցանցեր՝ աշխատանքի, ծառայությունների, տեղեկատվության և փոքր ռեսուրսների փոխանակման միջոցով: Այս սոցիալական կապերը նպաստում են անվտանգության, վստահության և կայունության զգացման պահպանմանը և հատկապես այն երիտասարդների համար, ովքեր գտնվում են անկախացման գործընթացում: Ընկերական, հատկապես սիրային հարաբերություններում առկա են վստահության, սահմանումների անորոշության և հարաբերությունների «լղոզվածության» խնդիրներ, որոնք արտացոլում են ինչպես սեռային դերերի փոփոխությունը, այնպես էլ ժամանակակից հարաբերությունների մոդելների անկայունությունը: Հարաբերությունների սահմանված չլինելը, անորոշությունը և պատասխանատվությունից խուսափելու վարքագիծը երիտասարդների համար զգացմունքային անապահովության աղբյուր են: Երիտասարդների մեծ մասը շարունակում է ապրել ծնողական ընտանիքում: Որոշում կայացնելու հարցում նրանք գերադասում են ինքնուրույնությունը, գործնականում լայնորեն հենվում են ծնողների, զուգընկերների և ընկերների աջակցության վրա: Սա վկայում է անցումային փուլի բնորոշ երկակիության մասին՝ ինքնավարության ձգտման և կախվածության պահպանման համակցությամբ: Ընտանեկան միջավայրը երիտասարդների համար ունի երկակի դեր: Մի կողմից այն հիմնական հուզական և սոցիալական հենարան է՝ ապահովելով անվտանգություն, աջակցություն և կայունություն, մյուս կողմից՝ կարող է սահմանափակել երիտասարդների անկախացման հնարավորությունները: Երիտասարդների մի մասը շարունակում է ապրել ծնողական ընտանիքում ոչ այնքան սեփական ընտրությամբ, որքան բնակարանային բարձր գների, սոցիալ-տնտեսական անապահովության և անկախ ապրելու սահմանափակ հնարավորությունների պատճառով: Այս համատեքստում ընտանիքի հետ համատեղ ապրելը հաճախ ընկալվում է որպես անհրաժեշտ հարմարվողական լուծում, այլ ոչ թե անցումային փուլից գիտակցված հրաժարում: Բնակարանային պայմանների գնահատման տվյալները բացահայտում են սեռային տարբերություններ՝ աղջիկների շրջանում նկատվում է ավելի բարձր դժգոհություն, ինչպես նաև հստակ օրինաչափություն, ըստ որի տարիքային աճը

նվազեցնում է բնակավայր փոխելու պատրաստակամությունը: 18–22 տարեկան երիտասարդները առավել շարժունակ են, մինչդեռ 30–35 տարեկանների շրջանում գերակշռում է տեղում մնալու նախընտրությունը: Բնակավայրի սոցիալական միջավայրի ընկալվող վատթարացումը էականորեն բարձրացնում է տեղափոխվելու մտադրությունները, ինչը վկայում է, որ երիտասարդների միգրացիոն տրամադրությունները ոչ միայն անհատական, այլև կառուցվածքային պայմանավորվածություն ունեն: Միգրացիոն մտադրությունները առավել արտահայտված են երիտասարդ, չամուսնացած, կրթական բարձր մակարդակ ունեցող և քաղաքաբնակ երիտասարդների շրջանում, հատկապես Երևանում: Միևնույն ժամանակ, երիտասարդների կեսից ավելին դեռևս չի ցանկանում ընտանիքից առանձին ապրել, ինչը ցույց է տալիս, որ անկախության ձգտումը հաճախ սահմանափակվում է տնտեսական անապահովությամբ, բնակարանային խնդիրներով և սոցիալական աջակցության կարիքով: Սեփական բնակարան ունենալու հնարավորությունը հաճախ պայմանավորված է ոչ թե աշխատանքի արդյունքով, այլ ծնողական աջակցությամբ, հիփոթեքային վարկերի հասանելիությամբ կամ երկարաժամկետ պարտավորություններ ստանձնելու պատրաստակամությամբ: Այս իրավիճակը ձևավորում է սերնդային անհավասարության զգացում և հոգեբանական ճնշում, քանի որ երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունները երիտասարդների կողմից ընկալվում են որպես ազատության սահմանափակում և ապագայի նկատմամբ անորոշության խորացում: Հայաստանի երիտասարդների անցումները անկախության ոչ գծային, հաճախ խզված և հակասական բնույթի են: Անկախության ձգտումը, միգրացիոն տրամադրությունները, ընտանիքից շարունակվող կախվածությունը և հարաբերությունների ոլորտում անորոշությունները ձևավորում են սոցիալական մի իրականություն, որտեղ երիտասարդների ապագայակենտրոն ընտրությունները պայմանավորված են ոչ միայն անհատական ցանկություններով, այլև կառուցվածքային սահմանափակումներով, տնտեսական անապահովությամբ և անորոշությամբ:

*Երիտասարդների բարեկեցությունը*

Երիտասարդների վերաբերյալ ուսումնասիրությունների ոլորտում բարեկեցության հայեցակարգին նվիրված բազմաթիվ գիտական աշխատանքներ են կատարվել՝ որպես երիտասարդական ինքնության և կենսակերպի համալիր մոտեցման մաս[217], ինչպես նաև բարեկեցության սոցիալական և անձնական բնութագրիչների միջև փոխհարաբերությունների ուսումնասիրություններ՝ հատկապես երիտասարդների հոգեկան առողջության հետ կապված[218]: Չնայած բարեկեցության հայեցակարգի լայնորեն կիրառմանը և այն չափելու բազմաթիվ փորձերին՝ բացակայում է երիտասարդների բարեկեցության վերաբերյալ միասնական մոտեցումը. «Փոքր կոնսենսուս կա այն մասին, թե ինչպես պետք է հասկացվի բարեկեցությունը: Ինչպես պնդում են Մորոուն և Մայոլը, բարեկեցությունը տարածված, բայց «հայեցակարգային առումով մշուշոտ» տերմին է, որը, ըստ Էրոուտի և Ուայթինգի, գործում է «ինչպես մշակութային պատրանք. այն նման է ամուր կառուցվածքի», բայց մանրակրկիտ ուսումնասիրելիս «այն մասնատվում է կամ անհետանում»[219]: Վերջին տարիներին բարեկեցությունը չափող գլոբալ և ազգային ինդեքսների զարգացումը վկայում է դրա կարևորության մասին՝ որպես ամբողջ բնակչության և առանձին խմբերի, այդ թվում՝ երիտասարդների կյանքի որակի բնութագրիչ (The Global Youth Wellbeing Index, OECD How's Life):

Հարցմանը մասնակցած երիտասարդների մեծ մասը գոհ է իր կյանքի որակից: Ամենատարածված և կենտրոնական գնահատականը 7 է՝ 1-10 սանդղակով: Շատ քչերն են դժգոհ (1 միավոր (բոլորովին գոհ չեմ) → միայն 0.1%), բայց նաև քչերն են ամբողջությամբ գոհ իրենց կյանքի որակից (10 միավոր (շատ գոհ եմ) → 5.5%): Այսպես.

- 1-3 (շատ ցածր գոհունակություն) → 1.8%
- 4-6 (միջինից ցածր) → 16.0%
- 7-8 (միջինից բարձր) → 69.5%

---

[217] Տե՛ս Wyn, 2009:
[218] Տե՛ս Wyn, Cuervo, and Landstedt 2015:
[219] Տե՛ս McLeod J., Wright K. What does wellbeing do? An approach to defamiliarize keywords in youth studies //Journal of youth studies. – 2016. – Т. 19. – № 6, էջ 776-792:

- 9-10 (շատ բարձր գոհունակություն) → 12.7%

Ըստ սեռի կյանքի որակից բավարարվածության գնահատականներում տարբերություն չի արձանագրվել, իսկ ըստ տարիքի բարձր գոհունակություն ունեն 13-17 և 23-29 տարիքային խմբերի երիտասարդները: Հայաստանում երիտասարդների շրջանում առկա է բարեկեցության արժեքային վերաիմաստավորման միտում: Երիտասարդների մի մասը քննադատաբար է վերաբերվում ցուցադրական սպառման և նյութական «հաջողության» մոդելներին՝ դրանք կապելով վարկային ծանրաբեռնվածության, սոցիալական ճնշման և ներքին անհավասարակշռության հետ: Բարեկեցությունը նրանց ընկալմամբ ավելի շատ կապված է ներքին կայունության, ինքնակարգավորման և պատասխանատվության զգացման հետ, քան արտաքին ցուցադրականության: Այս արժեքային հակադրությունը վկայում է բարեկեցության ոչ միայն նյութական, այլև խորապես նորմատիվ և մշակութային բնույթի մասին: Ընտանիքներ, որտեղ ապրում են երիտասարդները, հիմնականում կարողանում են ապահովել բազային կարիքները՝ կոմունալ ծառայությունները, սնունդը և դեղորայքը: Սակայն ոչ բազային ծառայությունները՝ հագուստ/կոշիկ, մշակութային ծախսեր, ռեստորաններ և հատկապես հանգստի ուղևորություններ, զգալիորեն սահմանափակ են: Ամսվա կտրվածքով ընտանեկան ծախսերը ամենից սերտորեն կապված են «հանգստանալու մեկնելուն» հատկացվող ծախսի հետ (r = .194), և թույլ են կապված սննդի, հագուստի, ջեռուցման, մշակութային ծախսերի հետ: Երբ ընտանիքը ամսական ավելի շատ գումար է ծախսում, առաջին հերթին դա արտահայտվում է ոչ առաջնային, «միջին/բարձր մակարդակի» սպառման մեջ՝ հանգստի ուղևորություններ, տոմսեր, մշակութային ծախսեր, ռեստորաններ: Մինչդեռ առաջնային անհրաժեշտության ծախսերը (կոմունալ, սնունդ, դեղ) գրեթե ամեն ընտանիք կարողանում է անել՝ անկախ ամսական ծախսից:

**Գծապատկեր 22. Վերջին 12 ամիսների ընթացքում Ձեր տան անդամները ի՞նչ հաճախականությամբ են ի վիճակի եղել...**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Spearman կոռելյացիան ցույց է տալիս, որ տնային տնտեսությունների ամսական միջին ծախսերն ունեն թույլ, բայց կարևոր կապ այն գործողությունների հետ, որոնք պահանջում են ավելի բարձր եկամուտ կամ խնայողություններ: Ամենաուժեղ կապը դիտվում է հանգստի մեկնելու հնարավորության (r=.19, p<.001) և մշակութային միջոցառումների տոմսեր գնելու (r=.13, p<.001) հետ: Spearman կոռելյացիան ցույց է տալիս, որ ընտանիքի անդամների թվի աճը թույլ, բայց վիճակագրորեն նշանակալի բացասական կապ ունի ոչ առաջնային ծախսերի իրականացման հետ: Ավելի մեծ կազմ ունեցող ընտանիքներում զգալիորեն նվազում է դրսում սնվելու (r=–.113, p=.002) և հանգստի մեկնելու հնարավորությունը (r=–.080, p=.030): Սակայն առաջնային կարիքների ապահովման հետ (սնունդ, ջեռուցում, դեղորայք) ընտանիքի չափը գրեթե կապ չունի, ինչը վկայում է դրանց պարտադիր և առաջնահերթ բնույթի մասին:

Ընդհանուր առմամբ, երիտասարդների առողջությունն ու բարեկեցությունը Հայաստանում ձևավորվում են բազմակի ճնշումների խաչմերուկում՝ սոցիալ-տնտեսական անհավասարություններ, պատերազմական և հետկոնֆլիկտային փորձառություններ, ապագայի անորոշություն, նստակյաց կենսակերպ, հոգեկան առողջության խնդիրներ և ինստիտու-

ցիոնալ աջակցության սահմանափակություն: Թեև երիտասարդների մեծ մասը պահպանում է հարաբերականորեն դրական ինքնազգացողությունը և բարձր է գնահատում իր կյանքի որակը, տվյալները վկայում են թաքնված խոցելիության, սթրեսի կուտակման և դիմադրողականության անհատականացման մասին: Երիտասարդների բարեկեցությունը գնալով ավելի է կախված դառնում ոչ թե համակարգային աջակցությունից, այլ անձնական ռեսուրսներից, ընտանիքի և ինքնակարգավորման մեխանիզմներից: Սա կարևոր հիմք է տալիս դիտարկելու երիտասարդների առողջությունն ու բարեկեցությունը ոչ միայն որպես անհատական պատասխանատվության հարց, այլև որպես սոցիալական արդարության, հանրային քաղաքականության և հետպատերազմյան վերականգնման առանցքային ուղղություն:

*Երիտասարդների օրվա և ազատ ժամանակի պլանավորումը*

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում կրթական համակարգում ներգրավվածության ձևերի փոփոխությունները, աշխատաշուկայի երկարատև անցումները և կախվածության ժամանակահատվածի երկարաձգումը ազդեցություն են ունեցել երիտասարդների կենսակերպի և ազատ ժամանակի կազմակերպման, անցկացման եղանակների վրա: Թեև ժամանցային պրակտիկաներն ու կենսակերպը շարունակում են որոշակիորեն արտացոլել սեռային տարբերությունները և սոցիալական կարգավիճակը, սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ այդ տարբերությունները ժամանակի ընթացքում զգալիորեն մեղմացել են՝ ժամանցի հնարավորություններ ստեղծող ենթակառուցվածքների տարածման և կյանքի փուլերի ուշացման ընդհանուր փորձի ազդեցությամբ: Արդյունքում երիտասարդները ավելի երկար ժամանակ են մնում կիսակախյալ վիճակում և ավելի շատ ժամանակ անցկացնում հասակակիցների շրջապատում, ինչը ձևավորում է նրանց որդեգրած կենսակերպը, ինչպես նաև այն սոցիալական խմբերն ու սպառողական ապրանքները, որոնց հետ նրանք նույնականանում են: Երիտասարդների ժամանցային նախասիրությունները կրում են տեղական և ազգային մշակույթների և պայմանականությունների, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաների ազդեցությունը: Հատկապես ազատ ժամանակի կազմակերպումը վիր-

տուալ տիրույթում նշանակալի ազդեցություն ունի երիտասարդների հոգեկան առողջության վրա[220]: Եթե նախորդ սերունդները՝ 1980-1990-ական թթ., իրենց ազատ ժամանակը կազմակերպում էին խաղի շուրջ՝ «խաղի վրա հիմնված մանկություն», ապա 2000-ականներին խաղը հետզհետե վերանում է, և մանկությունը վերափոխվում է, և ի հայտ է գալիս «հեռախոսի վրա հիմնված մանկությունը»[221]:

Հայաստանում երիտասարդների օրվա պլանավորման հիմքում առաջնային դերերի իրականացման սկզբունքն է, եթե երիտասարդը սովորում է, աշխատում է կամ զբաղված է երեխայի խնամքով, օրվա հիմնական մասը այդ դերի իրականացմանն է ուղղված: Հետաքրքրական է դիտարկել, թե ինչպես են երիտասարդները օրվա ընթացքում կազմակերպում իրենց ազատ ժամանակը:

> *«Հիմնական մասը անցնում է համալսարանում, համալսարանից հետո իմ զբաղվածությունը՝ անհափական լեզուներ եմ պարապում, այսինքն կարելի է ասել՝ օրվա մեծ մասը կրթության ոլորտում է անցնում»[222]:*

Հայաստանում երիտասարդների մեծ մասի համար ժամանցը ինքնուրույն պլանավորվող ոլորտ չէ, այլ ձևավորվում է առաջնային դերերի՝ ուսման, աշխատանքի և ընտանեկան պարտավորությունների ավարտից հետո մնացած ժամանակի շրջանակում: Շատ երիտասարդներ նկարագրում են իրենց առօրյան որպես «լցված» կամ «խիտ», որտեղ ազատ ժամանակը հաճախ ընկալվում է ոչ թե որպես ռեսուրս, այլ որպես կարճ ընդմիջում ֆունկցիոնալ պարտականությունների միջև: Այս հանգամանքը նպաստում է ժամանցի պրագմատիկ ընկալմանը՝ այն օգտագործվում է հիմնականում հոգնածությունը նվազեցնելու կամ մտքերը *«անջատելու»* համար, այլ ոչ թե ինքնարտահայտման կամ ստեղծագործական փորձարկումների նպատակով: Միևնույն ժամանակ, երիտասարդների մի մասի համար օրվա պլանավորման հիմքում ազատ ժամանակի բա-

---

[220] Տե՛ս Haidt J., The Anxious Generation: How the Great Rewiring of Childhood Is Causing an Epidemic of Mental Illness, published by Penguin Press, 2024:
[221] Տե՛ս Haidt, նշվ. աշխ.:
[222] Ուսանողների հետ ֆոկուս խմբային քննարկումից մեջբերում:

ցակայության նպատակադրումն է, քանի որ ազատ ժամանակը վերածվում է մտածելու, մտորումների (rumination) ժամանակի[223], իսկ արդյունքում՝ տագնապայնության աղբյուրի: Այս երևույթը քննարկվում է հոգեբանության մեջ որպես քոփինգ ռազմավարության դրսևորում՝ պայմանավորված ինքնակարգավորման և ինքնաանդրադարձի հմտությունների սահմանափակությամբ, ինչը մատնանշում է երիտասարդների շրջանում դիմադրողականության, ինքնաճանաչման, ինքնակառավարման հմտությունների զարգացման անհրաժեշտության մասին[224]: Նման հիմնարար հմտությունների ձևավորումը պետք է սկսել վաղ մանկության կրթությունից և շարունակել ողջ կյանքում, քանի որ հատկապես ինքնակարգավորման զարգացման գործում սոցիալականացման գործակալների՝ ծնողների, ուսուցիչների և հասակակիցների դերը շատ կարևոր է[225]: Դիմադրողականությունը ևս ոչ թե անհատական կամ *«ուժեղ անհատի»* որակ է, այլ մի կարողություն, որը կարելի է ձևավորել, ընդ որում՝ այն ոչ միայն վաղ մանկության տարիքում, այլև ողջ կյանքի ընթացքում կարելի է վերականգնել և զարգացնել համապատասխան համայնքային և ինստիտուցիոնալ աջակցության, քաղաքականության միջոցով[226]:

> *«Ես այնպես եմ օրս պլանավորում, որ մի վայրկյան ազատ րոպե չունենամ, որ միտքս միշտ զբաղված լինի»[227]:*

Ծնող դառնալը երիտասարդների օրվա պլանավորման, այդ թվում՝ ժամանցային պրակտիկաներում, առաջացնում է կտրուկ վերափոխում: Երեխաների խնամքը ոչ միայն կրճատում է ազատ ժամանակը, այլև փոխում է դրա բովանդակությունն ու ռիթմը. ժամանցը տեղափոխվում է տնային միջավայր և համադրվում առօրյա խնամքի ու կենցաղային գոր-

[223] Տե՛ս Nolen-Hoeksema S. The role of rumination in depressive disorders and mixed anxiety/depressive symptoms //Journal of abnormal psychology. – 2000. – T. 109. – № 3, էջ 504:
[224] Տե՛ս Lazarus R. S. Stress, appraisal, and coping. – Springer, 1984. – T. 445:
[225] Տե՛ս Zimmerman B. J. Attaining self-regulation: A social cognitive perspective //Self-regulation: Theory, research, and applications/Academic. – 2000:
[226] Տե՛ս Masten A. S. Ordinary magic: Resilience processes in development //American psychologist. – 2001. – T. 56. – № 3, էջ 227:
[227] Աշխատող ուսանողների հետ ֆոկուս խմբային քննարկումից մեջբերում:

ծունեության հետ: Այս համատեքստում ժամանցը կորցնում է սոցիալական և ինքնարտահայտման բաղադրիչի մի մասը և վերածվում է գործառական հանգստի՝ ուղղված ֆիզիկական և հոգեբանական վերականգնմանը:

*«Մինչև բալիկներիս ունենալը փենց թեթև, լավ կյանքով էի ապրում, աշխատում էի, շատ ճանապարհորդում էինք, փենց ընկերներիս հետ էի շատ հանդիպում: Հիմա էդ ամեն ինչը փենց շատ ավելի քիչ ա դարձել: Հիմա շատ ավելի շատ ժամանակ եմ անցկացնում փանը ինչ-որ առօրյա գործերով երեխաների հետ»*[228]:

Երիտասարդների ազատ ժամանակի կազմակերպման մեջ գերակշռում են սոցիալական շփման և թվային ժամանցի ձևերը: Ամենատարածված զբաղմունքը ընկերների հետ շփումն է, որին հաջորդում է սոցիալական մեդիայում ժամանակ անցկացնելը և երաժշտություն լսելը: Միևնույն ժամանակ նկատելի տեղ ունեն նաև ընտանեկան պարտավորություններին առնչվող զբաղմունքները:

[228] Չաշխատող երիտասարդ մայրերի հետ ֆոկուս խմբային քննարկումից մեջբերում:

**Գծապատկեր 23. Ինչպե՞ս եք սովորաբար անցկացնում Ձեր ազատ ժամանակը**

*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Երիտասարդների ժամանցը հիմնականում կենտրոնացած է սոցիալական շփման և թվային գործունեությունների շուրջ: Ընկերների և ընտանիքի անդամների հետ շփումը, սոցիալական մեդիայում ժամանակ անցկացնելը և ֆիլմերի կամ տեսանյութերի դիտումը այն զբաղմունքներն են, որոնք երիտասարդների մեծ մասը իրականացնում է հաճախ կամ մշտապես (տե՛ս Գծապատկեր 23): Սոցիալական մեդիան երիտասարդների համար հաճախ հանդես է գալիս ոչ միայն որպես ժամանցի միջոց, այլև որպես ֆիզիկական սոցիալականացման և հանրային միջավայրերի բացակայությունը փոխարինող տարածք: Շատ երիտասարդներ նշում են, որ թվային հարթակները թույլ են տալիս պահպանել կապերը, հետևել մշակութային գործընթացներին և զգալ «ներգրավվածություն» նույնիսկ այն պայմաններում, երբ ժամանակի, ֆինանսական միջոցների կամ տարածական սահմանափակումների պատճառով ֆիզիկական ժամանցի հնարավորությունները սահմանափակ են: Այսպիսով, սոցիալական մեդիան դառնում է հիբրիդային տարածք, միաժամանակ՝ ժամանցի, սոցիալական կապերի և ինքնության ձևավորման հարթակ:

**Գծապատկեր 24. Ազատ ժամանակ ինչո՞վ եք հիմնականում նախընտրում զբաղվել, % նշումներից**

*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 13-17




Երիտասարդների մեծ մասը 1-2 ժամ ամեն օր անցկացնում է սոցիալական մեդիայում, ընդ որում՝ արական սեռի ներկայացուցիչների մեծ մասն է այդքան ժամանակ անցկացնում սոցիալական մեդիայում, իսկ իգական սեռի մեծ մասը՝ 2-3 ժամ կամ 3 ժամից ավել: 3 ժամից ավել սոցիալական մեդիայում ժամանակ է անցկացնում 18-22 տարիքային խմբի երիտասարդների մեծ մասը, իսկ 1-2 ժամ՝ 30-35 տարեկան երիտասարդների մեծ մասը: Սոցիալական մեդիայում 3 ժամից ավել ժամանակ է անցկացնում ուսանող երիտասարդների մեծ մասը: Ըստ ամուսնական կարգավիճակի ևս հետաքրքրական են տվյալները՝ 3 ժամից ավել սոցիալական մեդիայում ժամանակ անցկացնող երիտասարդների մեծ մասը չամուսնացած են:

**Գծապատկեր 25. Օրվա մեջ միջինը քանի՞ ժամ եք անցկացնում սոցիալական մեդիայում (Youtube, Facebook, TikTok, Instagram և այլն)**

*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Երիտասարդների թվային միջավայրում ներգրավվածությունը Հայաստանում չափազանց բարձր է և կենտրոնացած է մի քանի հիմնական հարթակների շուրջ: Ամենալայն կիրառվող հարթակը YouTube-ն է, որից օգտվում է երիտասարդների ճնշող մեծամասնությունը, ինչին հաջորդում են Facebook-ը և Instagram-ը՝ որպես հաղորդակցման, ժամանցի և տեղեկատվության ստացման հիմնական հարթակներ: Հատկանշական է, որ երիտասարդների ավելի քան կեսը արդեն օգտագործում է արհեստական բանականության գործիքներ (օրինակ՝ ChatGPT), ինչպես նաև Telegram-ը և TikTok-ը, ինչը վկայում է թվային պրակտիկաների արագ փոփոխության և նոր տեխնոլոգիաների ակտիվ ներթափանցման մասին երիտասարդների առօրյա կյանք:

**Գծապատկեր 26. Օգտագործո՞ւմ եք հետևյալ հարթակները և գործիքները**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Հայաստանի երիտասարդների համար ժամանցը նոր իմաստավորումներ և նշանակություններ է ստացել. նրանք նախընտրում են ազատ ժամանակ նոր հմտություններ ձեռք բերելը: Երիտասարդների մեծ մասը ֆինանսական միջոցներ ունենալու պարագայում կցանկանար ավելի շատ ճանապարհորդել Հայաստանում և արտերկրում, մյուս նախընտրությունը ժամանցի վայրերում ազատ ժամանակ անցկացնելն է և սպորտով զբաղվելը: Հետաքրքրական է դիտարկել, որ երիտասարդների մի մասը նշում է, որ ազատ ժամանակ կցանկանար նոր հմտություն սովորել:

**Գծապատկեր 27. Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ ունենալու պարագայում ինչպե՞ս կտնօրինեք Ձեր ազատ ժամանակը**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Երիտասարդների կողմից նախընտրելի նոր հմտությունները համադրում են ինչպես կրթական-մշակութային, այնպես էլ աշխատաշուկայի պահանջարկի վրա հիմնված գործնական ուղղություններ: Նոր հմտություն սովորելու առումով երիտասարդները ավելի շատ նշում են օտար լեզուներ սովորելը, երաժշտական գործիքի տիրապետելը, մեդիա հմտությունները, ձեռնարկատիրական հմտությունները: Թվային և ստեղծագործական հմտությունները զբաղեցնում են երկրորդ կարևոր դիրքը. վիդեո մոնտաժը, բլոգինգը, համակարգչային դիզայնը և գրաֆիկան, ինչպես նաև ծրագրավորումը և տվյալագիտությունը վկայում են, որ երիտասարդները ժամանցը հաճախ կապում են ապագա մասնագիտացման, ինքնարտահայտման և եկամտի հնարավոր աղբյուրների հետ:

**Գծապատկեր 28. Եթե նոր բան սովորելու հնարավորություն ունենայիք, ի՞նչ կսովորեիք**

*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 13-35




Թեև տնից դուրս ազատ ժամանակ անցկացնելը պարբերաբար տեղափոխվել է տուն՝ պայմանավորված տեղեկատվական տեխնոլոգիաների, համացանցի տարածման հետ[229], այնուամենայնիվ սոցիալականացումը, սոցիալական կապերի ձևավորումը, ակտիվ ժամանցը ենթադրում են տնից դուրս ազատ ժամանակի անցկացում, այդ թվում՝ մշակութային մասնակցության միջոցով:

Հայաստանի երիտասարդների ժամանցային պրակտիկաները ձևավորվում են միաժամանակ գլոբալ միտումների, տեղական մշակութային նորմերի, սոցիալ-տնտեսական պայմանների և կյանքի փուլային առանձնահատկությունների ազդեցությամբ: Երիտասարդների օրվա կառուցվածքում առաջնային դերերի՝ ուսման և աշխատանքի իրականացումն ունի կենտրոնական տեղ, ինչի արդյունքում ազատ ժամանակը կազմակերպվում է երկրորդային սկզբունքով: Այնուամենայնիվ, ազատ ժամանակը ինքնարտահայտման, սոցիալական կապերի պահպանման և հո-

---

[229] Տե՛ս Furlong, նշվ. աշխ., էջ 148:

գեբանական վերականգնման կարևոր հարթակ է: Տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդների հիմնական ժամանցային նախասիրություն-ները կենտրոնացած են սոցիալական շփման (ընկերների հետ ժամա-նակ անցկացնել), թվային միջավայրում ներկայության (սոցիալական մե-դիա), երաժշտության լսման և ընտանիքի անդամներին օգնելու շուրջ: Սա վկայում է, որ երիտասարդների ժամանցը համատեղում է ինչպես հասակակիցների հետ փոխհարաբերությունների, այնպես էլ ընտանե-կան պարտավորությունների տարրերը: Սոցիալական մեդիան զբաղեց-նում է առանցքային տեղ երիտասարդների առօրյայում. թվային միջա-վայրը դարձել է ոչ միայն ժամանցի, այլև սոցիալականացման, ինքնու-թյան ձևավորման և պատկանելիության կառուցման հիմնական տա-րածք: Միևնույն ժամանակ, երիտասարդների նախընտրությունները պայմանավորված են տնտեսական ռեսուրսների հասանելիությամբ: Ֆի-նանսական հնարավորությունների առկայության դեպքում երիտասարդ-ները կցանկանային ավելի շատ ճանապարհորդել, հաճախել ժամանցի վայրեր, զբաղվել սպորտով և ներդրում կատարել ինքնազարգացման մեջ: Հատկանշական է, որ երիտասարդների զգալի մասը ազատ ժամա-նակի իդեալական օգտագործման մեջ ընդգծում է նոր հմտություններ սովորելու ցանկությունը՝ հատկապես օտար լեզուներ, երաժշտական գործիքներ, մեդիա և ձեռնարկատիրական հմտություններ: Սա վկայում է, որ երիտասարդների ժամանցը հաճախ ունի նաև գործիքային, ապա-գային ուղղված բաղադրիչ: Ընդհանուր առմամբ, երիտասարդների ժա-մանցային պրակտիկաները Հայաստանում արտացոլում են ուշացած անցումների, կիսակախյալության երկարաձգման և անհատական պա-տասխանատվության աճի համատեքստը: Երիտասարդներն ավելի եր-կար են մնում հասակակիցների խմբերում, ձևավորում են հիբրիդային կենսակերպեր՝ համադրելով ավանդական ընտանեկան նորմերը, գլոբալ մշակութային մոդելները և թվային միջավայրի հնարավորությունները: Ժամանցը այս համատեքստում հանդես է գալիս ոչ միայն որպես հան-գիստ, այլև որպես սոցիալական հարմարման, դիմադրողականության և ինքնության կառուցման կարևոր մեխանիզմ: Այս կենսակերպային պրակտիկաները ոչ միայն արտացոլում են երիտասարդների առօրյա վարքագիծը, այլև ձևավորում են երիտասարդների ինքնության կառուց-

ման հիմքերը՝ որոշելով նրանց պատկանելիության, ընտրությունների և ապագայի ընկալումները, քանի որ կենսակերպը՝ որպես ավանդական կենսագրական ուղիների անկայունության պայմաններում ինքնության կառուցման կարևոր մեխանիզմ, կառուցվածքային սահմանափակումնե-րի և անհատական ընտրությունների միջև միջնորդող հարթություն է:

## ՄԱՍ ԵՐՐՈՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԲԱԶՄԱՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

### Գլուխ 8. Երիտասարդները հետպատերազմյան իրականության մեջ

*«Որպես փղա իմ մեծանալու վրա շատ-շատ մեծ ազդեցություն ա ունեցել պատերազմը, դրանից հետո դու արդեն հասուն մարդ ես դառնում»[230]:*

Երիտասարդությունը սահմանվում է անցումային տարիք՝ անցում կախվածությունից անկախության, անցում դպրոցից աշխատանքի, անցում ծնողների հետ համատեղ կյանքից ինքնուրույն կյանք: Արտակարգ իրավիճակների, այդ թվում պատերազմի ժամանակ այդ անցումները ընթանում են ճգնաժամային իրավիճակներում կամ տնտեսական ցնցումների ժամանակ, որոնք կարող են խոչընդոտել դրանց[231]: Նման բազմաճգնաժամային իրավիճակներ վերջին տարիներին կարելի է համարել COVID-19 համավարակը, պատերազմները, երբ ապագայի հանդեպ անորոշությունը, կյանքի բնականոն հունը ամբողջությամբ և ամենուր խաթարված էր: Այս նոր իրողությունները նոր մարտահրավեր էին մարդկության, այդ թվում՝ երիտասարդների համար:

*«Աշխարհն այլևս ինքնըստինքյան ընդունված վայր չէ, և բազմաճգնաժամի իրավիճակը՝ այսինքն՝ տարբեր տեսակի զուգահեռ և փոխկապակցված ճգնաժամերի զարգացումը, սնուցում է անկայունության և անապահովության զգացողությունները: Մեր ապրած անհանգիստ ժամանակներում անորոշությունը ամենատարածված տերմիններից մեկն է, որը սահմանում է երեխաների և երիտասարդների կյանքը ներկայում և դրանք կանխատեսում է ապագայի մեջ: Անթիվ պաշտոնական զեկույցներ և հրապարակումներ ընդ-*

---

[230] 23 տարեկան տղայի հետ անհատական հարցազրույցից մեջբերում, Երևան:

[231] Տե՛ս Children and Youth in Crisis Protecting and Promoting Human Development in Times of Economic Shocks Mattias Lundberg and Alice Wuermli Editors, 2012 International Bank for Reconstruction and Development / The World Bank, էջ 189:

*գծում են, թե ինչպես են տնտեսական, շրջակա միջավայրի, տեխնոլոգիական և հասարակական ցնցումները ազդում հատկապես այս փարիքային խմբերի վրա՝ փոխելով նրանց մանկության և պատանեկության փորձառությունների պայմանները, նրանց մշակույթների կառուցվածքն ու դրսևորումները, նրանց կյանքի ընթացքի և անցումների բնույթը, ինչպես նաև սեփական ապագան կառուցելու նրանց կարողությունները»*[232]:

«Բազմաճգնաժամ» (polycrisis) հասկացությունը վերջին տասնամյակում դարձել է կարևոր վերլուծական գործիք արևմտաեվրոպական և հյուսիսամերիկյան քաղաքական գիտության և հասարակագիտական դիսկուրսում: Տերմինի լայն կիրառումը հաճախ կապվում է Եվրոպական հանձնաժողովի նախկին նախագահ Ժան-Կլոդ Յունկերի հետ (Jean-Claude Juncker), ով 2016 թվականին Աթենքում ունեցած ելույթում բնութագրեց Եվրոպայում ձևավորված իրավիճակը որպես «բազմաճգնաժամ»՝ նկատի ունենալով անվտանգության սպառնալիքների, միգրացիոն ճգնաժամի և Բրեքսիթի (Brexit) շուրջ առաջացած քաղաքական անորոշության համաժամանակյա և փոխկապակցված բնույթը[233]: Այս ձևակերպումը հետագայում լայնորեն կիրառվեց եվրոպական ինտեգրման խնդիրները ուսումնասիրող գիտնականների կողմից՝ նկարագրելու 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո եվրոպական միությունում կուտակված և փոխկապակցված ճգնաժամային գործընթացները[234]: Անգլիալեզու ակադեմիական դաշտում «բազմաճգնաժամ» հասկացության տարածումը հատկապես ակտիվացավ 2020-ականներին՝ մեծապես պայմանավորված պատմաբան Ադամ Թուզի (Adam Tooze) աշխատանքներով: Թուզը, զարգացնելով Յունկերի կիրառած հասկացությունը, այն օգտագործում է ժամանակակից գլոբալ իրավիճակը նկարագրելու համար՝ ընդգծելով, որ համավարակը, տնտե-

---

[232] Ferreira V. S., de Almeida A. N. Re-Envisioning Youth Studies in Times of Global Risks: an Introduction //Youth and Globalization. – 2023. – T. 5. – № 1, էջ 1-13.

[233] Տե՛ս Murphy C. The polycrisis diagnosis and its problems //Diamond, P. Skrzypek, A.(eds.), The politics of polycrisis, Bonn, Dietz. – 2024, էջ 37-52:

[234] Տե՛ս Zeitlin J., Nicoli F., Laffan B. Introduction: The European Union beyond the polycrisis? Integration and politicization in an age of shifting cleavages //Journal of European Public Policy. – 2019:

սական անկայունությունը, աշխարհաքաղաքական լարվածությունը և մատակարարման շղթաների խաթարումները հանդես են գալիս ոչ թե առանձին ճգնաժամեր, այլ որպես փոխկապակցված համակարգ[235]: Տեսական առումով, բազմաճգնաժամը սահմանվում է որպես քաղաքական, տնտեսական և սոցիալական խանգարումների համադրություն, որոնք իրենց փոխազդեցության արդյունքում դառնում են ավելի խորքային, լայնածավալ և հետևանքային, քան առանձին վերցված ճգնաժամերը: Կարևոր է, որ այս ճգնաժամերը ոչ միայն համընկնում են ժամանակի մեջ, այլև փոխկապակցվում են տարբեր մակարդակներում՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային՝ ձևավորելով փոխադարձ ուժեղացման մեխանիզմներ[236]: Բազմաճգնաժամի առանցքային առանձնահատկություններից է արմատական անորոշության (radical uncertainty) աճը, երբ ապագայի կանխատեսելիությունը նվազում է, իսկ ռիսկերը ստանում են համակարգային բնույթ: Այս պայմաններում տարբեր ճգնաժամեր, ունենալով տարբեր ծագում և ներքին տրամաբանություն, միաժամանակ համադրվում և ներդաշնակեցվում են՝ ստեղծելով «խտացված» և բազմաշերտ ճգնաժամային միջավայր: Միևնույն ժամանակ, բազմաճգնաժամի հայեցակարգը ենթակա է քննադատության: Որոշ հեղինակներ նշում են, որ «բազմաճգնաժամային» մտածողությունը կարող է հանգեցնել քաղաքական և սոցիալական դերակատարների գործողունակության (agency) թուլացման, քանի որ իրավիճակը ներկայացվում է որպես չափազանց բարդ և անկառավարելի[237]: Այս մոտեցումը հատկապես կարևոր է սոցիալ-քաղաքական միջամտությունների և քաղաքականության մշակման տեսանկյունից, որտեղ բազմաճգնաժամի ընկալումը կարող է ինչպես խթանել համակարգային մտածողությունը, այնպես էլ սահմանափակել գործողությունների հստակությունը:

---

[235] Տե՛ս Tooze A. Shutdown: How Covid shook the world's economy. – Penguin UK, 2021.; Tooze, 2022:

[236] Տե՛ս Tooze A. Welcome to the world of the polycrisis //Financial Times. – 2022. – Т. 28. – № 10, էջ 2023:

[237] Տե՛ս Zeitlin J., Nicoli F., Laffan B. Introduction: The European Union beyond the polycrisis? Integration and politicization in an age of shifting cleavages //Journal of European Public Policy. – 2019. – Т. 26. – № 7, էջ 963-976:

Այսպիսով, բազմաճգնաժամի հայեցակարգը հնարավորություն է տալիս վերաիմաստավորելու ժամանակակից հասարակությունների զարգացումը՝ որպես փոխկապակցված և փոխազդող ճգնաժամերի համակարգ, որտեղ անորոշությունը, ռիսկերի կուտակումը և փոխադարձ ուժեղացման գործընթացները դառնում են կենտրոնական վերլուծական առանցքներ: Բազմաճգնաժամի դարաշրջանում երիտասարդները հայտնվում են կառուցվածքային «անտեսանելիության» մեջ, ինչը վտանգում է ինչպես սոցիալական արդարությունը, այնպես էլ արդյունավետ քաղաքականության մշակումը[238]: Բազմաճգնաժամային պայմանները, այսինքն՝ տարբեր տեսակի զուգահեռ և փոխկապակցված ճգնաժամերի զարգացումը, սնուցում են անկայունության և անապահովության զգացողությունները: Արդի ժամանակներում անորոշությունը ամենատարածված տերմիններից մեկն է, որը սահմանում է երիտասարդների կյանքը ներկայում և դրանք կանխատեսում է ապագայում: Հետևաբար, ժամանակակից գլոբալ ռիսկերի և ճգնաժամերի համատեքստում անհրաժեշտություն է առաջանում վերաիմաստավորել երիտասարդության ուսումնասիրությունները[239]:

*COVID-19 համավարակը որպես ճգնաժամ*

Բազմաթիվ ուսումնասիրություններ են իրականացվել և իրականացվում՝ սոցիալական տարբեր խմբերի, այդ թվում երիտասարդների վրա համավարակի ազդեցության վերաբերյալ[240]: «COVID-19 կամ արգելափակման սերունդ» հասկացությունը սկսվեց շրջանառվել ԶԼՄ-ներում՝ նկարագրելու, թե «ինչպես երիտասարդները կարող են սպիներ կրել գալիք տասնամյակների ընթացքում՝ աշխատաշուկայի և հոգեկան

---

[238] Տե՛ս Bessant J., Watts R. Young and invisible in a time of polycrisis: reframing the problem and finding solutions //Journal of Youth Studies. – 2025, էջ 1-18:
[239] Տե՛ս Ferreira V. S., de Almeida A. N. Re-Envisioning Youth Studies in Times of Global Risks: an Introduction //Youth and Globalization. – 2023. – T. 5. – № 1, էջ 1-13:
[240] Տե՛ս https://pjp-eu.coe.int/en/web/youth-partnership/national-realities-in-europe-resources [23.04.2026]:

առողջության արդյունքների առումով»[241]: Երիտասարդների վրա մեծ ազդեցություն են թողել COVID-19-ի տարածումը դանդաղեցնելու նպատակով կիրառվող ազգային արգելափակումները, զսպման քաղաքականությունը և ճանապարհորդության սահմանափակումները, որոնք էապես փոխեցին երիտասարդների առօրյա կյանքը՝ երիտասարդների կրթության և վերապատրաստման ապահովումը և նրանց անցումը աշխատաշուկա[242]: Համավարակի սկսվելուց ի վեր աշխարհում յուրաքանչյուր վեց երիտասարդից ավելին ազատվել է աշխատանքից և դադարեցրել է աշխատանքը[243]: COVID-19 համավարակի ազդեցությունը երիտասարդների կենսապահովման վրա ավելի ծանր է եղել, քան տարեցների համար, կա նաև մեծ անհավասարություն երիտասարդների միջև: 2020 թ. փետրվար-ապրիլ ընկած կարճ ժամանակահատվածում երիտասարդների աշխատաշուկայում ներգրավվածության մակարդակը էականորեն նվազել է տարբեր երկրներում տարբեր չափերով, իսկ մինչև 2020 թ. մայիսը երիտասարդության և COVID-19-ի գլոբալ հետազոտության վաղ արդյունքները ցույց տվեցին, որ նույնիսկ այն երիտասարդները, ովքեր չեն կորցրել իրենց աշխատանքը, այնուամենայնիվ ավելի քիչ աշխատանք ունեն. միջինը 23 % կրճատվել է աշխատանքային ժամերը[244]:

Համավարակի հետևանքով շատ երիտասարդներ բախվեցին հետևյալ խնդիրների և մարտահրավերների հետ՝

- ֆինանսական մարտահրավերներ, անհրաժեշտ ռեսուրսների բացակայություն, հատկապես սոցիալապես անապահով երիտասարդների համար,
- անորոշ աշխատանքային և կենցաղային իրավիճակներ,
- սոցիալական մեկուսացման և երիտասարդների շրջանում հոգեկան առողջության խնդիրների աճ,

---

[241] Barford A., Coutts A., and Sahai G., Youth Employment in Times of COVID A global review of COVID-19 policy responses to tackle (un)employment and disadvantage among young people, International Labour Organization 2021 First published 2021.
[242] Տե՛ս նույն տեղում:
[243] Տե՛ս ILO, ILO Monitor: COVID-19 and the World of Work. Fourth Edition; էջ 3, (2020h):
[244] Տե՛ս Barford A., Coutts A., and Sahai G., Youth Employment in Times of COVID A global review of COVID-19 policy responses to tackle (un)employment and disadvantage among young people, International Labour Organization, 2021:

- ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երիտասարդության մասնակցությունը դրական միտում ուներ, որը տեսանելի է ընտրություններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և հասարակական շարժումներին երիտասարդների մասնակցության դեպքում, սակայն COVID-19-ը ազդել է մասնակցության որոշ ուղիների վրա, ինչպիսիք են բողոքի ցույցերը, երթերը կամ մասնակցությունը երիտասարդական տարբեր խորհուրդներում և հարթակներում համավարակի սահմանափակումների պատճառով: Այս համատեքստում թվային ակտիվիզմը մեծ զարգացում է ապրել՝ ներառյալ համաշխարհային, տեղական և «գլոբալ» նախաձեռնությունները: Այնուամենայնիվ, կան ռիսկեր՝ կապված երիտասարդության առցանց մասնակցության հետ, այդ թվում՝ ավելի մեծ բևեռացում, ոտնձգություն, ահաբեկում և ատելության խոսք, ապատեղեկատվություն և սահմանափակ գաղտնիություն,
- երիտասարդների հետ աշխատանքը ևս անցավ հարմարման գործընթաց՝ ներառելով նոր հիբրիդային մեթոդներ[245]:

Համավարակը դեռևս կթողնի իր ազդեցությունը երիտասարդների վրա ապագայում, քանի որ հոգեկան առողջության խաթարումը, կրթությունից և աշխատաշուկայից դուրս մնալու ազդեցությունը երկարատև հետևանքներ է ունեցել երիտասարդների վրա: Սակայն կարևոր է արձանագրել, որ նման համատեքստում երիտասարդներին պետք է դիտարկել ոչ թե միայն խնդիր, այլ ակտիվ սուբյեկտ և ռեսուրս: Նման մոտեցման ձևավորման համար հատկապես նշանակալի և հեղափոխական է եղել իտալացի սոցիոլոգ Ալեսանդրո Կավալիի դեռևս 1980-ականներին իրականացված ուսումնասիրությունները, որով նա փաստեց, որ երիտասարդները այլևս միայն խնդիր չեն կամ հանրային քաղաքականության օբյեկտ, այլ նրանք անկախ ակտիվ սոցիալական ակտորներ են, որոնք կառուցում են իրենց ուսուցումը և ակտիվ քաղաքացիությունը: Այս

---

245 Տե՛ս Escamilla A., Lonean I., Brazienė R., Petkovic S., Meta-analysis of research on the impact of Covid-19 on the youth sector, December 2021 https://pjp-eu.coe.int/documents/42128013/72351197/Meta+analysis+of+research+on+the+Impact+of+Covid-19+on+the+youth+sector%2C+12-2021.pdf/de8544e4-a246-3b14-580b-7bbdb1d27973 [05.05.2026]:

տեսությունը խրախուսեց երիտասարդների ինքնության ձևավորման և կենսագրության կառուցման նոր ձևերի, նոր անկախ չափահասության անցման ձևերի ուսումնասիրությունները[246]: Թեև Եվրախորհուրդը պաշտոնապես բարձրաձայնել և արձանագրել է երիտասարդության վերաբերյալ հետազոտությունների անհրաժեշտությունը դեռևս 1967 թ. Խորհրդարանական վեհաժողովի թիվ 265 հրամանում: Այն վերահաստատեց երիտասարդական հետազոտության դերը որպես երիտասարդական ոլորտի հիմնական տարր՝ Եվրոպայում երիտասարդների իրավիճակի վերաբերյալ գիտելիքների ստեղծման գործում[247]:

*Հետպատերազմյան հասարակությունների բնութագրերը և խնդիրները*

Հակամարտությունների, պատերազմների վերաբերյալ սոցիոլոգիական գիտելիքը հիմնականում ամփոփվում է ռազմական սոցիոլոգիայում՝ որպես միջին մակարդակի տեսություն: «Ռազմական սոցիոլոգիայի» ուսումնասիրության տիրույթում են՝ բանակը՝ որպես սոցիալական ինստիտուտ և սոցիալական փոքր խումբ, պատերազմը՝ որպես մարդկային գործունեության յուրահատուկ ձև՝ սոցիալական ուրույն հարաբերություններով, պատերազմի և բանակի հետ առնչվող սոցիալական այլ հանրույթների վարքը, ռազմական կյանքի օրինաչափությունները, ինչպես նաև ռազմական ոլորտի զարգացումը՝ որպես սոցիալական գործընթաց, որը շարժման մեջ է դրվում դրանում գործող սուբյեկտների ակտիվությամբ և շահերով[248]: Ռազմական սոցիոլոգիայի տեսաբան Ս. Մալեշևիչը նշում է, որ ռազմական սոցիոլոգիան համեմատաբար քիչ ուսումնասիրվող ուղղություններից է[249]:

---

[246] Տե՛ս Youth in Europe / edited by Alessandro Cavalli and Olivier Galland. Cavalli, Alessandro, editor.; Galland, Olivier, editor. London: Pinter; 1995:
[247] Տե՛ս Petkovic S., Ignatovich A., Galstyan M., YOUTH RESEARCH: THE ESSENTIALS, Council of Europe and European Commission, June 2019, էջ 13:
[248] Տե՛ս «Ռազմական սոցիոլոգիա. Ուսումնական նյութերի ժողովածու» / Պրոֆ. Լյուդմիլա Հարությունյանի խմբագրությամբ: Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2005, էջ 14:
[249] Տե՛ս Malesevic S. How Pacifist Were the Founding Fathers? War and Violence in Classical Sociology, European Journal of Social Theory, 13(2), 2010:

Պատերազմն ուսումնասիրող որոշ գիտնականներ պնդում են, որ պատերազմի բնույթը փոխվել է առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ, ինչպես նաև այդ պատերազմներից հետո, պատերազմի բնույթը կտրուկ փոխվել է նաև վերջին 30 տարիների ընթացքում, քանի որ պատերազմի նոր տեսակ է հայտնվել, որտեղ կենտրոնական դերակատարություն ունեն ոչ թե մարդկային ռեսուրսը և զենքը, այլ տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք գտնվում են ռազմական պլանավորման և մարտավարության կենտրոնում: Գրականության մեջ այն անվանվում է նոր պատերազմ[250]:

> *«Գլոբալիզացիայի ազդեցությունը տեսանելի է նոր պատերազմներից շատերում: Այս պատերազմներում գլոբալ ներկայությունը կարող է ներառել միջազգային թղթակիցներ, վարձկան զորքեր և ռազմական խորհրդատուներ, ինչպես նաև սփյուռքի կամավորներ, միջազգային գործակալությունների իսկական «բանակ», ինչպիսիք են միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները՝ Կարմիր խաչ, ՄԱԿ, Եվրոպական միությունը և այլն»*[251]:

Սոցիոլոգիայի համատեքստում հետպատերազմյան իրականությանն առաջիններից է անդրադարձել Պ. Սորոկինը 1944 թ.[252]: Սորոկինը քննարկել է պատերազմի ընթացքում արևմտյան բնակչության սոցիալական շերտավորման հետ կապված փոփոխությունները, ինչպես նաև մատնանշել, թե այս փոփոխություններից որոնք կշարունակվեն հետպատերազմյան անցողիկ շրջանում և որոնք կավարտվեն[253]: Սորոկինը առանձնացրել է շերտավորման հետևյալ փոփոխությունները՝

1. միջսեռային շերտավորում,
2. միջտարիքային շերտավորում,
3. միջռասայական շերտավորում,

---

[250] Տե՛ս Giddens A. Sociology, Revised and updated with Philip W. Sutton polity, 6th edition, Polity Press, 2009:

[251] Kaldor M. New and Old Wars: Organized Violence in a Global Era, 2nd edn (Cambridge: Polity, 2007.

[252] Տե՛ս Sorokin P. A., War and Post-War Changes in Social Stratifications of the Euro-American Population, American Sociological Review, Vol. 10, No. 2, 1944 Annual Meeting Papers, Apr., 1945, 294-303 p.:

[253] Տե՛ս նույն տեղում:

4. միջընտանեկան և ազգակցական շերտավորում,
5. միջէթնիկ, միջազգային շերտավորում,
6. միջպետական շերտավորում,
7. տնտեսական շերտավորում,
8. զբաղվածության շերտավորում,
9. սոցիալական դասակարգերի շերտավորում,
10. կրոնական շերտավորում,
11. քաղաքական կուսակցությունների շերտավորում,
12. այլ շերտավորում[254]:

Սորոկինը պնդում է, որ պատերազմից հետո նվազել է սեռերի միջև առկա անհավասարությունը: Պատերազմից հետո երիտասարդ տարիքային խմբերը, հատկապես 18-21 տիրույթում, արագորեն բարձրացրել են իրենց դիրքը հասարակությունում: Սորոկինը նշում է, որ այս միտումը կպահպանվի հետպատերազմյան իրականությունում: Պատերազմի ընթացքում և դրանից հետո պետք է ակնկալել հեղինակությունների հեղհեղուկ և արագ փոփոխվող հաջորդականություն: Այսօրվա բարձր վարկանիշ ունեցող հեղինակությունը (լինի անձ, թե խումբ) վաղը կզրկվի դրանից: Պատերազմից հետո «*ամբողջ կառուցվածքը լինելու է շփոթված, հակասական և անհանգիստ*»[255]:

Ներկայացնենք հետպատերազմյան հասարակությունների մյուս բնութագրական կողմերը՝

- հետպատերազմյան հասարակությունները նույնական չեն խաղաղության պայմաններում գտնվող հասարակություններին, քանի որ նույնիսկ լայնածավալ զինված հակամարտությունների դադարից, խաղաղության կամ հրադադարի պայմանագրեր ստորագրելուց հետո կարող են շարունակվել զինված բախումները, ինչը հիմք է տալիս բնութագրելու նման հետպատերազմյան հասարա-

[254] Տե՛ս Sorokin P. A. War and Post-War Changes in Social Stratifications of the Euro-American Population, American Sociological Review, Vol. 10, No. 2, 1944 Annual Meeting Papers (Apr., 1945), էջ 294-300:
[255] Նույն տեղում, էջ 301:

կությունները որպես «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» իրավիճակում գտնվող[256],

- պատմական իրադարձությունները տարբեր կերպ են ազդում մարդկանց կյանքի վրա. պատերազմը այն պատմական իրադարձությունն է, որը ազդում է մի քանի սերնդի ճակատագրի վրա՝ «ստիպելով նրանց վերանայել նախկին արժեքները, ազատվել անցյալի պատրանքից և սովորել ապրել կենցաղի նոր օրենքներով»[257],
- հետպատերազմյան հասարակությունը բնութագրվում է որպես հասարակություն, որը «դուրս է եկել պատերազմից»[258],
- հետպատերազմյան հասարակությանը ավելի լավ հասկանալու համար պետք է նաև փորձել հասկանալ պատերազմի սոցիալ-հոգեբանական կողմերը, որոնք էլ հետագայում ձևավորում են հետպատերազմյան հասարակությունը,
- պատերազմներից հետո տեղի է ունենում պարադոքսալ մի բան. չնայած հազարավոր մարդկային կորուստներին՝ մարդիկ սկսում են գիտակցել ամեն մի զինվորի, ամեն մի մարդու անփոխարինելիությունը, անձնական պատասխանատվությունը, սեփական ազատությունը, ինչպես նաև անձնազոհության պատրաստ լինելու փաստը,
- կարևորվում է խաղաղաշինության միջամտությունների ուսումնասիրումը և գնահատումը[259],
- կարևորվում է զինված հակամարտությունների և սոցիալական համախմբվածության փոխառնչությունները, մասնավորապես սոցիալական համախմբվածության երեք հիմնական բաղադրիչնե-

[256] Տե՛ս Höglund K., Kovacs M. S. Beyond the absence of war: the diversity of peace in post-settlement societies //Review of International studies. – 2010. – Т. 36. – № 2, էջ 367-390:
[257] Зубкова Е. Послевоенное советское общество: политика и повседневность, 1945-1953 г., Москва, 2000.
[258] Տե՛ս նույն տեղում, էջ 17:
[259] Տե՛ս Mysak Y. Reclaiming Everyday Peace: Local Voices in Measurement and Evaluation after War, Nordic Journal of Human Rights, 39:1, 2021, էջ 95-97:

րը՝ վստահությունը, ներառական ինքնությունը և համագործակցությունը հանուն ընդհանուր բարօրության[260],

- հետպատերազմյան հասարակությունների բնութագրական կողմերից են նաև սպառողական վարքագծի աճը՝ պայմանավորված մարդկանց տնտեսական վիճակով[261]. *«Հարստությունը անուղղակիորեն փոխեց հասարակությունը՝ նոր իմաստներ տալով դասակարգ, տարիք և սեռ հասկացություններին: Տարիքը, որն առավել անտեսված սոցիալական փոփոխականներից մեկն էր այդ ժամանակ, նույնպես վերաիմաստավորվել է հարստության տարածմամբ: Եթե երեխաներն այսօր ավելի վաղ են մեծանում, դա մասամբ պայմանավորված է այն բանով, որ նրանք ավելի շատ փող ունեն ծախսելու և ավելի շատ ազատություն ծախսելու համար»*[262]: Մասնավորապես, հետպատերազմյան բրիտանական հասարակությունում դեռահասները չէին ընդվզում. նրանք փող էին ծախսում իրենց հագուստի, ձայնագրությունների, աուդիո սարքավորումների և զվարճանքների վրա այնպիսի մասշտաբով, որն աներևակայելի կլիներ նախորդ սերունդների համար[263],
- հետպատերազմյան հասարակություններում գենդերային դերերը ևս փոխվում են, մասնավորապես զբաղվածության ոլորտում կանանց և տղամարդկանց աշխատանքների միջև տարբերակումը կրճատվում է: Հետպատերազմյան հասարակությունը բնութագրվում է աճող գործազրկությամբ, մասնավորապես նվազում է տղամարդկանց տնտեսական ակտիվության մակարդակը, քանի որ ավելի շատ տղամարդիկ կա՛մ երիտասարդության տարիներին դարձել են ուսանող և հետաձգել մուտքը աշխատաշուկա, կա՛մ ավելի վաղ են անցել թոշակի, քան նախկինում: Չենք կարող

---

[260] Տե՛ս Fiedler C., Rohles C, Social Cohesion After Armed Conflict a Literature Review, Bonn 2021:
[261] Տե՛ս Understanding post-war British society, Edited by James Obelkevich and Peter Catterall, 1994 The Institute of Contemporary British History:
[262] Նույն տեղում:
[263] Տե՛ս Understanding post-war British society, Edited by James Obelkevich and Peter Catterall, 1994 The Institute of Contemporary British History, էջ 149:

պնդել, որ այս գործընթացները բուն պատերազմի ազդեցության արդյունքներ են, այլ, օրինակ, հասարակական գործընթացների՝ կրթական, տնտեսական և այլ համակարգերի զարգացման տրամաբանությունը:

Հետպատերազմյան հասարակությանը բնութագրող մարտահրավերներից են՝

- ժողովրդագրական խնդիրները, քանի որ ցանկացած պատերազմ հանգեցնում է մարդկային անռելի կորուստների, օրինակ՝ խորհրդային հասարակությունում մասնագիտական հաշվարկները մատնանշում էին, որ պատերազմի ժամանակ զոհվել է 25-27 մլն մարդ, որոնց մեծ մասը՝ 20 մլն-ը, երիտասարդ տարիքի տղամարդիկ էին: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ 2020 թ. 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների և քաղաքացիական անձանց թիվը 3822 է, անհայտ է 187 զինծառայողի և 21 քաղաքացիական անձի գտնվելու վայրը՝ 2022 թ. մարտի 21-ի դրությամբ՝ համաձայն ՀՀ քննչական կոմիտեի[264],
- արդյունքում հետպատերազմյան հասարակությունը վերածվում է կանացի հասարակության, որտեղ առաջ են գալիս բազմաթիվ խնդիրներ, որոնց թվում «կանանց միայնությունը»,
- սա կարող է հանգեցնել մեկ այլ խնդրի. առանց հայրերի մեծացած սերունդը գրանցում է հանցավորության համեմատաբար բարձր մակարդակ: Չնայած այդ հանգամանքին, օրինակ, հետպատերազմյան խորհրդային հասարակությունը կարողացավ կենսունակ լինել. ծնելիության մակարդակը բարձրացավ, միայնակ մայրերի թիվը ևս,
- հետպատերազմյան հասարակության խնդիրների շարքում են նաև երիտասարդների առողջական վատ վիճակը, հոգեկան առողջության խնդիրները,

---

[264] ՀՀ քննչական կոմիտե, Տեղեկատվություն՝ 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքով զոհված, գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և քաղաքացիական անձանց վերաբերյալ, https://www.investigative.am/news/teghekatvvouthyvoun-44-orya-arcakhyan-paterazmi-hetevanqvov-zvohvats-gtnvelvou-vayrn-anhayt-zintsarayvoghneri-ev-qaghaqaciakan-andzanc-veraberyal [03.06.2026]:

- հետպատերազմյան ժողովրդագրական խնդիրները կարող են հանգեցնել յուրահատուկ սոցիումների առաջացմանը, որտեղ ավելի մեծ դեր ունեն բակը, հարևանությունը, որոնք մարդու կյանքում ավելի կարևոր են, քան ազգակցական կապերը,
- հետպատերազմյան հասարակության սոցիալական բաղադրությունը նման չէ «նորմալ» հասարակությունների կառուցվածքին՝ այդ կառուցվածքի բնույթը որոշում են ոչ թե ավանդական կատեգորիաները՝ գյուղաբնակներ, քաղաքաբնակներ և այլն, այլ պատերազմի ժամանակ ձևավորված սոցիումները, որոնց թվում են պատերազմի մասնակիցները, օրինակ՝ հետպատերազմյան խորհրդային հասարակությունում վետերանները (фронтовики)[265],
- հետպատերազմյան հասարակությունները բախվում են պատերազմի մասնակիցների սոցիալ-հոգեբանական խնդիրների սրմանը՝ բնակարանային պայմաններ, աշխատանք, առողջական խնդիրներ, անօթևան երեխաներ,
- պատերազմներից հետո, հատկապես երկարատև պատերազմներից, մարդկանց մեջ ձևավորվում է «խաղաղության անհագ ցանկություն», ինչը կանխում է ցանկացած քաղաքական ցնցումներ, թեև, օրինակ, խորհրդային հասարակությունում Երկրորդ աշխարհամարտից հետո բավականին հասունացած էր առճակատումը իշխանության և ժողովրդի միջև[266],
- հակամարտությունները նվազեցնում են սոցիալական համախմբվածության մակարդակը[267]: Թե՛ ուղղահայաց (քաղաքական վստահություն), թե՛ հորիզոնական (սոցիալական վստահություն) վստահությունը տուժում է կոնֆլիկտի պատճառով: Համագործակցության վերաբերյալ վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ պատերազմը չի նպաստում համագործակցությունների աճին: Բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են այն մա-

---

[265] Տե՛ս Зубкова Е. Послевоенное советское общество: политика и повседневность, 1945-1953 г.» (Москва, 2000), էջ 28:
[266] Տե՛ս նույն տեղում, էջ 101:
[267] Տե՛ս Fiedler C., Rohles C., Social Cohesion After Armed Conflict a Literature Review, Bonn 2021, էջ 3:

սին, թե ինչպես է համագործակցությունը նվազում կոնֆլիկտի արդյունքում, ինչպես նաև բացահայտում են կոնֆլիկտի բացասական ազդեցությունը խմբերից դուրս համագործակցության վրա: Ինչ վերաբերում է քաղաքական մասնակցությանը, ուսումնասիրությունները վկայում են հետտրավմատիկ աճի ազդեցության մասին: Գոյություն ունեցող հետազոտությունները մատնանշում են խմբային նույնականացման մակարդակի աճը և ազգային ինքնության մակարդակի նվազումը[268]:

Պատերազմի մասնակիցների անձնական հիշողությունների հիման վրա իրականացված հետպատերազմյան հասարակությունների վերաբերյալ ուսումնասիրությունները ընդհանրացնելով՝ հետազոտողները նշում են, որ իր բոլոր բացասական կողմերով հանդերձ՝ պատերազմը ունի հետևյալ «դրական կողմերը».

- ազատ լինելու զգացումը,
- սեփական անձի և փոքր խմբի նկատմամբ անձնական պատասխանատվության աճը,
- քննադատական մտածողության մակարդակի աճը. մարդիկ սկսում են քննադատաբար մտածել: Դրան նպաստում է այն, որ պատերազմի ժամանակ տարբեր խավերի, բնակավայրերի մարդիկ սկսում են հաղորդակցվել միմյանց հետ՝ գյուղաբնակը քաղաքաբնակի, ուսանողը՝ կրթություն չունեցողի, հարուստը՝ աղքատի. օրինակ՝ հետխորհրդային հասարակության դեպքում եվրոպական երկրներում գտնվելով զինվորները ծանոթացել են եվրոպական մշակույթի առանձնահատկություններին[269]:

Հետպատերազմյան հայկական հասարակության մասին ևս բազմաթիվ հասարակագիտական անդրադարձներ են առկա: Այդ աշխատություններում սոցիոլոգիական, պատմագիտական, էթնոքաղաքագիտական մոտեցումների հիման վրա Արցախյան պատերազմը դիտարկվում և քննարկվում է 1980-ական թվականներին հասարակության մեջ ձևավոր-

---

[268] Տե՛ս Գալստյան Մ., Կորուսյա՞լ, թե՞ ուսյալ սերունդ. երիտասարդները հետպատերազմյան իրականությունում, Արցախի պետական համալսարանի ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ, ISSN 1829-4383, Պրակ 1, 2023, էջ 290-308:
[269] Տե՛ս նույն տեղում, էջ 102:

վող փոփոխությունների համատեքստում: Հ. Քոթանջյանը մասնավորապես անդրադառնում է ազգային և էթնիկ ինքնագիտակցության համատարած արագ աճին, տարաբնույթ ազգային շարժումների զարգացմանը, ազգամիջյան հակասությունների սրմանը և այդ տարիներին բնորոշ այլ առանձնահատկությունների[270]:

Հետպատերազմյան հասարակությունները տարբերվում են հասարակությունների «նորմալ» վիճակից, ինչը արդիական է դարձնում տարբեր խմբերի սոցիալական հարմարման առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Երիտասարդների վարքի, ամենօրյա կյանքի վրա հետպատերազմյան իրականության և պայմանների ազդեցության վերաբերյալ սոցիոլոգիական ակադեմիական գրականությունը համեմատաբար ավելի քիչ է: Հետպատերազմյան իրականությանը վերաբերող ակադեմիական գրականությունը վերաբերում է հիմնականում խաղաղաշինական միջամտություններին, այդ թվում՝ միջէթնիկ հանդուրժողականությանը և համերաշխությանը, հետպատերազմյան տնտեսական համակարգին, մշակութային ժառանգության վերականգնմանը[271]: Շատ ավելի քիչ են հետպատերազմյան իրականության մեզո- և միկրոմակարդակում ազդեցության վերաբերյալ ուսումնասիրությունները: Կոնֆլիկտները, պատերազմը և անվտանգությունը կենտրոնական հետազոտական խնդիր չեն դիտարկվել երիտասարդական ուսումնասիրությունների հարացույցում նախնական և զարգացման տարբեր փուլերում, սակայն դրանց կարևորությունն այժմ ակնհայտ է ավելի քան երբևէ [272]: Սրանք հարցեր են, որոնք, անշուշտ, արժանի են ավելի մեծ ուշադրության երիտասարդության սոցիոլոգիայում: Այս թեման արդիական է նաև հայկական իրականությունում, քանի որ 2020 թ. 44-օրյան, դրան հաջորդած շարունակական սրացումները, 2023 թ. ցավալի իրադարձությունները պատերազմը մշտապես

---

[270] Տե՛ս Գալստյան 2023, նշվ. աշխ., էջ 299:

[271] Տե՛ս Barakat S. Necessary conditions for integrated approaches to the post-conflict recovery of cultural heritage in the Arab World, International Journal of Heritage Studies, 27:5, 2021, էջ 433-448:

[272] Տե՛ս Furlong A. Future agendas in the sociology of youth, Youth Studies Australia, University of Glasgow, September 2011:

արդիական և անվտանգային սպառնալիք են դարձնում հայաստանյան հասարակության համար: Այս հանգամանքը կարևոր է Հայաստանի՝ որպես հետպատերազմյան հասարակության դիտարկման և ուսումնասիրման մեթոդաբանական տեսանկյունից, քանի որ, ի տարբերություն հետպատերազմյան այն հասարակություններին, որտեղ զինված կոնֆլիկտը ունեցել է վերջնական կարգավորում, Հայաստանում լայնածավալ պատերազմին հաջորդող սահմանային շարունակական լարվածությունը պատերազմը արդիականացնում է, և դրանով է առանձնահատուկ նաև հետպատերազմյան հայաստանյան հասարակությունը:

Վերջին տարիներին երիտասարդության վերաբերյալ ուսումնասիրությունների մի մասը սկսել է անդրադառնալ նաև կոնֆլիկտային իրավիճակների ազդեցությանը երիտասարդների կյանքի և անվտանգության վրա[273]: Դեռևս տասը տարի առաջ արձանագրվել է, որ մոտ միլիարդ երեխաներ են ապրում պատերազմական գոտիներում և ահաբեկչության շրջաններում[274]: Հատկապես տագնապալի է հոգեկան խանգարումների բեռը, որն առաջանում է կոնֆլիկտների հետ կապված անտեսման, չարաշահման և շահագործման արդյունքում: Առկա են հետազոտական տվյալներ այն մասին, որ կան տարբերություններ պատերազմից տուժած երիտասարդների և ընդհանուր բնակչության հոգեկան առողջության միջև[275]: Պատերազմական, կոնֆլիկտի իրավիճակներում գտնված երիտասարդների շրջանում գրանցված ամենատարածված հոգեկան խանգարումներն են հետտրավմատիկ սթրեսային խանգարումը

---

[273] Տե՛ս Boyden, Jo, Jo de Berry, Thomas Feeny and Jason Hart. January 2002. Children Affected by Armed Conflict in South Asia: A review of trends and issues identified through secondary research. RSC Working Paper No. 7. Refugee Studies Center, University of Oxford, Oxford, UK:

[274] Տե՛ս War Child UK, War: The Next Generation – The Future of War and Its Impact on Children, 2013:

[275] Տե՛ս Slone M. and Man S. Effects of War, Terrorism, and Armed Conflict on Young Children: A Systematic Review, Child Psychiatry and Human Development, Vol. 47, No 6, 2016; Vindya Attanayake, Rachel McKay, Michel Joffres, Sonal Singh, Frederick Burkle Jr. and Edward Mills, “Prevalence of Mental Disorders among Children Exposed to War: A Systematic Review of 7,920 Children”, Medicine, Conflict and Survival, Vol. 25, No. 1, 2009:

(post-traumatic stress disorder) և դեպրեսիան[276]: Մյուս գրանցված խանգարումները ներառում են սուր սթրեսային ռեակցիաները, ուշադրության պակասի հիպերակտիվության խանգարումը (attention deficit hyperactivity disorder), խուճապի խանգարումը, մանկությանը հատուկ անհանգստության խանգարումները և քնի խանգարումները: Բացի այդ, երեխաները, որոնք ապրել են զինված հակամարտությունների պայմաններում, հաճախ ունենում են համակցված հոգեախտաբանություններ: Խանգարման ախտանիշները տարիքին զուգընթաց մեծանում են, ընդ որում՝ դպրոցական տարիքի երեխաները ավելի խոցելի են[277]:

Պատերազմը և զինված հակամարտությունները ազդում են երիտասարդների կրթական արդյունքների, հասակակիցների հետ հարաբերությունների և, առհասարակ, կյանքից բավարարվածության վրա[278]: Լոնգիտուդային ուսումնասիրությունները փաստում են, որ կոնֆլիկտային փորձը և հետկոնֆլիկտային միջավայրը կարող են բացասաբար ազդել երիտասարդների հոգեկան առողջության վրա: Միևնույն ժամանակ, պաշտպանիչ գործոնների առկայությունը, ներառյալ ընտանիքի և համայնքի կողմից ընդունումը, կարող են նպաստել պատերազմի բացասական հետևանքների նվազման վրա՝ դրանով իսկ նվազեցնելով հոգեկան խանգարումների վտանգը[279]:

Ինչպես արդեն նշվել է, հետպատերազմյան հասարակությունների բնութագրական կողմերից է ազատության, անկախության ձգտումը, ինչը հատկապես հատկանշական է երիտասարդների համար. պատահական չէ, որ հետպատերազմյան հասարակությունների մասին ուղենի-

---

[276] Տե՛ս The Role of Youth in Post-Conflict Reconstruction (The Case of Liberia), Marit Woods SIT Graduate Institute, 2011, Claudia Catani, "Mental Health of Children Living in War Zones: A Risk and Protection Perspective", World Psychiatry, Vol. 17, № 1, 2018:

[277] Տե՛ս John A. Shaw. Children Exposed to War/Terrorism. Clinical Child and Family Psychology Review, Vol. 6, № 4, 2003:

[278] Տե՛ս Ruth V. Reed, Mina Fazel, Lynne Jones, Catherine Panter-Brick and Alan Stein, Mental Health of Displaced and Refugee Children Resettled in Low-Income and Middle-Income Countries: Risk and Protective Factors, The Lancet, Vol. 379, № 9812, 2012:

[279] Տե՛ս Theresa S. Betancourt, Dana L. Thomson, Robert T. Brennan, Cara M. Antonaccio, Stephen E. Gilman and Tyler J. VanderWeele, "Stigma and Acceptance of Sierra Leone's Child Soldiers: A Prospective Longitudinal Study of Adult Mental Health and Social Functioning", Journal of the American Academy of Child & Adolescent Psychiatry, 2019:

շային աշխատություններից մեկում՝ «Հետպատերազմյան խորհրդային հասարակություն» մենագրության մեջ, հեղինակը անդրադառնում է երիտասարդությանը՝ «Ազատականացման պատրանք» վերնագրված հատվածում վերլուծելով երիտասարդական շարժումները, առավել ինքնուրույն և ազատ կյանքի՝ երիտասարդների ձգտումները: Ինքնուրույնության և անկախության ձգտումները պայմանավորված էին պատերազմի ընթացքում մանկության ճնշված անկախությամբ, ինչը դրսևորվում էր գաղափարախոսական և կուսակցական գործունեության նկատմամբ հետաքրքրության նվազմամբ և անձնական, ընկերական, ոչ ֆորմալ հարաբերությունների հանդեպ հետաքրքրության աճով: Դրան նպաստել է, իհարկե, եվրոպական երկրների հետ ծանոթանալը և հաղորդակցվելը: Հեղինակը հիշատակում է, որ հետպատերազմական խորհրդային երիտասարդները քիչ հետաքրքրվածություն ունեին քաղաքական, կուսակցական գործունեությամբ: Հեղինակը նշում է, որ ինչպես ողջ հասարակությունը, այնպես էլ երիտասարդները երկակի կյանք էին վարում՝ մեկը՝ «ցուցադրական մյուսների համար, մյուսը՝ իրական, որը ցույց էին տալիս իրենց մտերիմ շրջանակին»[280]: Նման իրական կյանքի դրվագներից էր ոչ ֆորմալ խմբերի ձևավորումը, որը կա՛մ ուներ մասնագիտական ուղղվածություն («Искатели правды», «Есенинцы»), կա՛մ ուղղակի ընկերական խմբակներ էին՝ ժամանցի համար, կա՛մ ընկերական կապեր էին պահպանում բուհն ավարտելուց հետո («Тесное содружество»): Մասնագիտական խմբակների մի մասը ուղղված էր դպրոցական կամ բուհական կրթական ծրագրից դուրս գրականության ուսումնասիրությանը և քննարկումներին, ինչը չէր խրախուսվում, հաճախ նաև արգելվում էր ղեկավարության կողմից: Այս խմբակները և միությունները չունեին քաղաքական որևէ գիծ: Երիտասարդական միավորումների մյուս մասը ուներ հստակ քաղաքական ուղղվածություն, որոնց անդամները 16-20 տարեկան էին, որոշ դեպքերում ավելի փոքր, և ուներ իշխանափոխության նպատակադրումներ («Армия революции» и Союз борьбы за дело

---

[280] Зубкова Е. Послевоенное советское общество: политика и повседневность, 1945-1953 г., с. 137.

революции)[281]: Քանի որ քարոզչությունը հակադրվում էր իրականությանը, երիտասարդները փորձում էին տեսության մեջ այդ հակասության համար պատասխաններ գտնել: Երիտասարդական միավորումները զերծ էին բռնի մեթոդներից, աշխատում էին համոզչական մեթոդներով իրենց շարքերը մեծացնել: Քաղաքական ուղղվածությամբ երիտասարդական միավորումները իշխանության կողմից սահմանվում էին «հակամիութենական» կամ «ահաբեկչական», իսկ անդամները հաճախ պատժվում էին, եթե հայտնաբերվում էին:

Հետպատերազմյան խորհրդային հասարակության և երիտասարդների վերաբերյալ ուսումնասիրությունները հիմնականում անդրադառնում են նաև՝

1. պատերազմից հետո խոցելի երիտասարդների կենսափորձին՝ մանկատների երեխաներին և երիտասարդներին,
2. «ազգի թշնամի» համարված մարդկանց երեխաների կամ «սոցիալապես վտանգավոր երեխաների» ճակատագրին,
3. պատերազմից հետո առաջին տասնամյակում կոմունիստական երիտասարդական միության դերին[282]:

Սիերա Լեոնեի, Բոսնիա և Հերցեգովինայի, Կոսովոյի հակամարտությունների, դրանց հաջորդած իրադարձությունների մարդաբանական և ազգագրական մոտեցումների հիման վրա իրականացված ուսումնասիրությունները թույլ են տալիս դուրս բերել այս տարածաշրջաններում հետպատերազմյան երիտասարդների բնութագրական գծերը[283]՝

- այս տարածաշրջաններում տեղի ունեցած զինված հակամարտությունների ազդեցությունը երիտասարդների վրա հիմնականում դրսևորվել է զբաղվածության փոփոխություններով[284],

---

[281] Տե՛ս նույն տեղում, էջ 148:
[282] Коммунистический союз молодежи, առավել շատ կիրառվում էր հապավումը՝ комсомол.
[283] Տե՛ս Palmberger M. Between Past and Future: Young People’s Strategies for Living a “Normal Life” in Postwar Bosnia and Herzegovina, In Montgomery W. David (ed.), Everyday Life in the Balkans. Bloomington, IN: Indiana University Press, 2018, 107-116:
[284] Տե՛ս Fanthorpe R. and Maconachie R., Beyond The ‘Crisis of Youth’? Mining, Farming, And Civil Society in Post-War Sierra Leone, 2010. Published by Oxford University Press:

- երիտասարդների շրջանում տարածված են խուսափելու, լռելու վարքի մոդելը, պրակտիկան[285]: Բոսնիա և Հերցեգովինայի իրադարձությունների վերլուծությունները վկայում են այն մասին, որ պատերազմի անցյալի իրադարձությունները ճնշող և սպառնալից են գնահատվում երիտասարդների կողմից: Երիտասարդները նախընտրում են «հեռու պահել» իրենց ներկա կյանքը քաղաքականացված հասարակությունից[286]: Լռության, լռելու պրակտիկայի մասին ևս հետաքրքիր մեկնաբանություններ են հանդիպում, հատկապես, եթե երիտասարդները շարունակում են ապրել այն քաղաքում, որտեղ տեղի են ունեցել զինված հակամարտությունները: Լռությունը, ինչպես հիշեցնում է Պ. Կոներտոնը, «միանական երևույթ չէ. կա, ավելի շուտ, լռությունների բազմակարծություն»[287]: Առանձնացնելով անձնական հիշողությունները կոլեկտիվ հիշողություններից՝ մարդը իրեն պաշտպանված է զգում կոլեկտիվ դժվար փորձառություններից[288],
- երիտասարդները, փոխանակ ձգտելու տապալել կամ փոխել հովանավորչական համակարգը, որը լայնորեն կապ ունի պատերազմ ծնելու հետ, ձգտում են մաս կազմել և պատկանել այդ համակարգին[289]: *«Քաղաքային երիտասարդությունը հիմնականում պահպանողական սոցիալական ուժ է, այլ ոչ թե ապստամբ կամ հեղափոխական. երիտասարդները ցանկանում են ունենալ կայուն եկամուտ, ընտանիք կազմել և հարգված լինել: Մեծահասակները շփոթում են իրենց երեխաների պահպանողական արժեքները (ծնողների նկատմամբ հոգատարություն) ու ցանկությունները*

---

[285] Տե՛ս Silence as Possibility in Postwar Everyday Life, Marita Eastmond, Johanna Mannergren Selimovicy, Published by Oxford University Press, 2012:
[286] Տե՛ս նույն տեղում:
[287] Connerton P. The Spirit of Mourning: History, Memory and the Body. Cambridge: Cambridge University Press, 2011, p. 53.
[288] Տե՛ս Jacob C. Memories of the American Jewish Aliyah: Connecting Individual and Collective Experience. In Social Memory and History: Anthropological Perspectives, edited by J. Climo and M.G. Cattell, 2002, 111–127. Lanham, MD: AltaMira Press:
[289] Տե՛ս Bolten C. I Did It to Save My Life: Love and Survival in Sierra Leone, University of California Press, 2012:

*արմատական արժեքների (սոցիալական ցնցումների ցանկություն, գլոբալ ներգրավվածություն) հետ»*[290],

- միևնույն ժամանակ մեծահասակներն իրենց վտանգված են զգում երիտասարդների՝ տեխնոլոգիաների և գլոբալիզացիայի թակարդում գտնվելու պատճառով՝ առաջացնելով միջսերնդային բախում[291]: Հետաքրքրական է, որ միջսերնդային այս բախումը հանգում է երիտասարդներին որպես «պատերազմի սերունդ» և «կորուսյալ սերունդ» սահմանելուն: Այն երիտասարդների, որոնց մանկությունն անցել է պատերազմից ավերված երկրում, նախապատերազմյան հիշողությունները շատ սահմանափակ են (եթե այդպիսիք կան առհասարակ): Ավագ սերունդները այդ երիտասարդներին ներկայացնում են որպես էթնոազգային ատելության ազդեցության տակ գտնվողների, որի պատճառով մեծահասակները (տեղացիներ, ինչպես նաև օտարերկրացիներ) հաճախ այդ երիտասարդներին անվանում են «կորուսյալ սերունդ», որը ենթարկվել է «ազգայնական քարոզչության մանիպուլյացիայի»[292]: Այս կարծրատիպային պատկերացումները, սակայն, կտրականապես մերժվում են երիտասարդության կողմից: Երիտասարդներն իրենց դիրքավորում են որպես պատերազմից քիչ տուժած՝ պայմանավորելով այն իրենց երիտասարդ տարիքով[293]:
- պատերազմից հետո ապրելով ոչ համախմբված միջավայրում, երիտասարդների միջև զգալի սոցիալական անջրպետ կարող է ստեղծվել: Արդյունքում երիտասարդները կարող են օտարել իրենց պետական ինստիտուտներից[294]: Այս ամենով է պայմանավորված, օրինակ, Բոսնիա-Հերցեգովինայի հետպատերազմյան

---

[290] Նույն տեղում:

[291] Տե՛ս Bolten C. Serious Youth in Sierra Leone: An Ethnography of Performance and Global Connection  New York: Oxford University Press, 2020:

[292] Տե՛ս Գալստյան, նշվ. աշխ., 2023, էջ 303:

[293] Տե՛ս Palmberger M. Between Past and Future: Young People’s Strategies for Living a “Normal Life” in Postwar Bosnia and Herzegovina, In Montgomery W. David (ed.),  Everyday Life in the Balkans. Bloomington, IN: Indiana University Press, 2018, էջ 107-116:

[294] Տե՛ս Hromadžić A. Citizens of an empty nation: youth and state-making in postwar Bosnia-Herzegovina. Philadelphia, PA: University of Pennsylvania Press. 239 pp., 2015, էջ 108:

«բարոյականության անկումը», ինչն էլ հետևաբար նպաստում է «ցինիզմին, լքվածությանը, հրաժարմանը և պետությունից երիտասարդության անջատմանը»[295]:

Այսպիսով, ներկայացնելով հետպատերազմյան հասարակություններում երիտասարդների խնդիրները, այդ խնդիրների լուծմանն ուղղված երիտասարդների պրակտիկաների առանձնահատկությունները՝ ակնհայտ է դառնում, որ երիտասարդների՝ որպես սոցիոլոգիայի ուսումնասիրության օբյեկտի դիտարկումն այս համատեքստում չափազանց կարևոր է: Սոցիոլոգիայի տեսանկյունից երիտասարդների դիտարկումը լուրջ հիմքեր է ստեղծում հետպատերազմյան հայաստանյան երիտասարդության ուսումնասիրման համար:

*44-օրյա պատերազմը որպես ճգնաժամ*

Հայաստանի և Արցախի վրա նշանակալի ազդեցություն ունեցավ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմը՝ առաջացնելով անվտանգային, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական աղետալի հետևանքներ[296]: Ըստ պաշտոնական աղբյուրի՝ պատերազմում զոհերի թիվը 3822 է, անհետ կորած է շուրջ 200 անձ, նշվում է նաև շուրջ 11 000 վիրավոր անձանց մասին, թեև վերջնական թվերը դեռևս ճշգրտված չեն, և պաշտոնական թվերի շուրջ առկա է հասարակական բանավեճ: 2023 թ. Արցախյան պատերազմից հետո տեղի ունեցած նոր իրադարձությունները ավելի սրեցին սոցիալական լարվածությունը. Արցախի ամբողջ բնիկ հայ բնակչությունը՝ ավելի քան 120,000 մարդ, բռնի տեղահանվեց Հայաստան: 44-օրյա պատերազմը երիտասարդների կյանքում ունեցել է բազմաշերտ ազդեցություն՝ միաժամանակ խաթարելով անվտանգությունը, խորացնելով տրավման, բայց նաև ձևավորելով դիմակայունություն, պատասխանատվության զգացում և սոցիալական կապերի նոր ձևեր: Արցախյան երկրորդ պատերազմի սոցիալ-հոգեբանական ազդեցության և հետևանքնե-

---

[295] Նույն տեղում, էջ 156:

[296] Տե՛ս Խաչիկյան Ա., Ժողովրդագրական մարտահրավերները ՀՀ և Արցախի պաշտպանական հնարավորությունների համատեքստում // Գիտական Արցախ / Научный Арцах / Scientific Artsakh. 2022, №3 (14), էջ 21:

րի վերաբերյալ գրականությունը հիմնականում անդրադառնում է պատերազմի տնտեսական[297], կրթական[298], ժողովրդագրական[299], քաղաքական, անվտանգային[300], հոգեբանական, ասպեկտներին: Հետպատերազմյան հետազոտությունների մի մասը վերաբերում է պատերազմի հետևանքով տեղահանված անձանց կենսափորձին[301], պատերազմի մասին պատերազմի մասնակիցների, այդ թվում՝ երիտասարդների սուբյեկտիվ ընկալումներին և մտորումներին[302]. «*Պատերազմում մահվան վտանգը սեփական մարմնի վրա զգալը և ամբողջ պատասխանատվությունը իրենց սերնդի վրա թողնելը շատ երիտասարդների մեջ առաջացրել է պետության ապագայի հանդեպ պատասխանատվությունը ստանձնելու իրավունքի գիտակցություն*»[303]:

*Պատերազմը որպես կենսագրական խափանում. անցումային ուղիների խաթարումը*

Հետազոտության մասնակից երիտասարդների մեծ մասը անմիջական մասնակցություն չի ունեցել 44-օրյա պատերազմական գործողություններին, մի մասը մասնակցել է անմիջականորեն՝ որպես զինծա-

---

[297] Տե՛ս Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է. Պատերազմի տնտեսական հետևանքները և դրանց չեզոքացման հիմնական միջոցառումների բովանդակությունը // Գիտական Արցախ / Научный Арцах / Scientific Artsakh. 2021. №4 (11). URL: https://cyberleninka.ru/article/n/economic-consequences-of-war-and-content-of-the-main-measures-for-their-neutralization, [13.02.2023]:

[298] Տե՛ս Sargsyan D., Papoyan V. & Galstyan A. Transformation of Professional Psychosocial Competencies in Crisis Conditions: The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project # 21T-5A044. Bulletin of Yerevan University E: Philosophy, Psychology, 13(1 (37), 2022, 52-58:

[299] Տե՛ս Խաչիկյան Ա., Ժողովրդագրական մարտահրավերները ՀՀ և Արցախի պաշտպանական հնարավորությունների համատեքստում // Գիտական Արցախ / Научный Арцах / Scientific Artsakh, 2022. №3 (14):

[300] Տե՛ս Gevondyan A. The 44-Day War in Nagorno Karabakh and South Caucasus Geopolitical Role Transformation Processes. Bulletin of Yerevan University D: International Relations and Political Sciences 13 (1 (37):9-22, 2022:

[301] Տե՛ս Մխիթարյան Է. Մ., Փախստականների և տեղահանված անձանց կարգավիճակի սոցիալ-հոգեբանական ընկալումները // Հոգեբանական հիմնախնդիրներ գիտական պարբերական, N 2 (2), Երևան, 2022, տե՛ս Պատերազմը, ապագայի անորոշությունը և խաղաղ համակեցությունը, Սոցիոսկոպ ՀԿ, 2022 թ.:

[302] Տե՛ս Թադևոսյան Ա., Պատերազմը մասնակիցների պատմություններում: Մարդաբանական հետազոտություն- Երևան, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2022:

[303] Նույն տեղում, էջ 115:

ռայող, կամավոր կամ ապրել է Արցախում պատերազմի ժամանակ, իսկ մոտ մեկ երրորդը ունեցել է ոչ անմիջական մասնակցություն՝ կամավոր է եղել թիկունքում, ֆինանսական կամ այլ նյութական աջակցություն է տրամադրել:

**Գծապատկեր 29. Մասնակցե՞լ եք արդյոք 2020 թ. սեպտեմբերին սկսված Արցախյան պատերազմին**

*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




44-օրյա պատերազմը երիտասարդների կյանքում ընկալվում է ոչ միայն որպես արտաքին քաղաքական կամ ռազմական իրադարձություն, այլ որպես կենսագրական սահմանագիծ: Երիտասարդների խոսքում բազմիցս կրկնվում է *«կյանքը պատերազմից առաջ և հետո»* բաժանման մոտիվը, ինչը վկայում է պատերազմի՝ որպես կենսագրական խափանում (biographical disruption) հանդես գալու մասին: 44-օրյա պատերազմը համընկել է երիտասարդների մի մասի կյանքի առավել զգայուն և ձևավորվող փուլերի հետ՝ 9-11-րդ դասարան, դպրոցի ավարտական, բուհ ընդունելության, նախաբանակային շրջան, բուհի առաջին կուրս, ինքնության ակտիվ կառուցման փուլ: Արդյունքում երիտասարդների նորմատիվ անցումները (կրթություն, մասնագիտության ընտրություն, ինքնուրույնացման գործընթաց) տեղի են ունեցել խաթարված, անորոշ և բարձր սթրեսային պայմաններում: Նման ճգնաժամային միջամտությունները կարող են խզել երիտասարդության «գծային» անցումների տրամաբանությունը՝ առաջացնելով կոտրված, ձգձգված կամ հակասա-

կան ուղիներ, ինչը արտահայտվում է *«ավելի արագ մեծանալու», «հասունանալու», «մանկությունը կորցնելու»* ձևակերպումներով, մանավանդ որ պատերազմին նախորդել էին COVID-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների պայմանները: 44-օրյա պատերազմի ազդեցության խորությունը երիտասարդների վրա պայմանավորված չէ միայն անմիջական մասնակցությամբ: Նույնիսկ նրանք, ովքեր չեն եղել առաջնագծում, պատերազմը ապրում են որպես ուժեղ կենսագրական խափանում՝ կապված սպասման, անհանգստության, տեղեկատվական ծանրաբեռնվածության և հարազատների անվտանգության մշտական մտահոգության հետ: Այսպիսով, 44-օրյա պատերազմը հանդես է գալիս որպես համընդհանուր փորձառություն, որը տարբեր ձևերով, բայց համադրելի խորությամբ ներթափանցել է երիտասարդների կենսագրական ուղիների մեջ: 44-օրյա պատերազմը երիտասարդների համար ոչ միայն խաթարում է անցումային ուղիները, այլև փոխել է ժամանակի սուբյեկտիվ ընկալումը: Հաճախ հանդիպում է «ժամանակի սեղմման» զգացումը, երբ ապագան ընկալվում է ոչ թե որպես աստիճանական կառուցման գործընթաց, այլ որպես մշտական շտապողականություն և հետաձգման անհնարինություն: Սա ուժեղացնում է ճնշումը երիտասարդների վրա՝ ստիպելով արագ կայացնել կարևոր որոշումներ՝ կրթության, աշխատանքի կամ ընտանիքի վերաբերյալ, առանց դրանց էության և հետևանքների լիարժեք իմաստավորման հնարավորության:

*Զգացմունքային դաշտը. կոլեկտիվ տրավմա և ֆոնային անապահովություն*

Երիտասարդների խոսքում հստակ առանձնանում է խորապես տրավմատիկ զգացմունքային դաշտ, որը ներառում է կորուստի վախ, մեղավորության զգացում, անարդարության ապրում և մշտական սթրեսային ֆոն: Այս վախերը վերաբերում են ոչ միայն կոնկրետ մարդկանց կորստին, այլև տարածքին, հայրենիքին, ոչ թե մասնավոր, այլ կենսական, գոյաբանական անապահովությանը: Երիտասարդների մեջ արտահայտված է նաև *«ողջ մնալու մեղավորությունը»* և *«լիարժեք ապրելու մեղավորությունը»* վիրավորված կամ զոհված մարդկանց հանդեպ, ինչը բնորոշ է հետկոնֆլիկտային հասարակություններին և նկարագրվում է

որպես վերապրածի մեղք (survivor's guilt[304]): Բացի այդ, նկատելի է արդարության խաթարման ուժեղ զգացում՝ հատկապես համեմատության մեջ դնելով իրենց փորձառությունը այլ երկրների երիտասարդների հետ: Այս համեմատական դաշտը ձևավորում է «հարկադրված հասունության» զգացում, որը խորացնում է ներքին լարվածությունը:

44-օրյա պատերազմին մասնակցած երիտասարդների համար պատերազմը ավարտված անցյալ չէ, այլ շարունակվում է որպես մշտական ներկայություն: Պատերազմը վերարտադրվում է առօրյա կյանքի մանր դրվագներում՝ լուրեր դիտելու, ձայների, ֆիզիկական զգացողությունների, ինչպես նաև անվտանգության հետ կապված փոքր որոշումների («փաստաթղթերը մեկ տեղում պահել», «պատրաստ լինել ամեն ինչի») մակարդակում: Այս շարունակական ներկայությունը ձևավորում է «ֆոնային լարվածության» վիճակ, երբ նույնիսկ հարաբերական խաղաղության պայմաններում երիտասարդները մնում են վախի, սպասման, պատրաստվածության և զգոնության ռեժիմում: Այս ամենը վկայում է, որ պատերազմը կոլեկտիվ տրավմայի աղբյուր է, որի հետևանքները չեն սահմանափակվում ժամանակային առումով և շարունակում են ներկա լինել երիտասարդների առօրյա կյանքում ֆոնային սթրեսի, մշտական վտանգի սպասման և ապագայի անորոշության ձևով:

*Անվստահություն ինստիտուտների և ապագայի նկատմամբ*

Հետազոտության մեջ առանձնապես ուժեղ է ինստիտուցիոնալ անվստահության գիծը: Թեև հետազոտության մասնակից երիտասարդները հաճախ խուսափում են ուղիղ քաղաքական գնահատականներից, նրանց խոսքում ակնհայտ է անվստահությունը պետության, պետական համակարգերի, որոշումների և ընդհանրապես ապագայի կանխատեսելիության նկատմամբ: *«Չգիտես ինչին հավատաս», «չգիտես ինչի շուրջը համախմբվես», «սայլը չի շարժվում»* ձևակերպումները վկայում են խորքային հուսահատության և անորոշության մասին: Ինստիտուցիոնալ

---

[304] Տե՛ս Goveas J., Coomarasamy S. Why am I still here? The impact of survivor guilt on the mental health and settlement process of refugee youth //Today's youth and mental health: Hope, power, and resilience. – Cham: Springer International Publishing, 2018, էջ 101-117:

անվստահությունը երիտասարդների շրջանում արտահայտվում է ոչ միայն քաղաքական մակարդակում, այլև առօրյա պլանավորման դաշտում: Երիտասարդների համար դժվարացել է երկարաժամկետ նպատակների ձևակերպումը՝ պայմանավորված կանոնների փոփոխականությամբ, անվտանգության անկայունությամբ և «խաղի կանոնների» անորոշությամբ: Այս իրավիճակում գերակշռում է կարճաժամկետ մտածողությունը՝ «*ապրենք այսօրը*», ինչը սահմանափակում է կրթական, մասնագիտական և սոցիալական ներդրումների հեռանկարայնությունը:

**Գծապատկեր 30. Որքանո՞վ եք համաձայն, որ 2020 թ. պատերազմը և դրան հաջորդած իրադարձություններն ազդել են Ձեր կյանքի տարբեր կողմերի վրա, որոնք ներկայացված են ստորև դատողություններում**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Արցախից տեղահանված երիտասարդների համար ապագայի պլանավորումը հաճախ դժվար է ոչ միայն քաղաքական անվստահության, այլև կյանքի հիմնական ոլորտների անկայունության պատճառով: Նրանց առօրյայում ավելի շատ տեղ է զբաղեցնում «գործելու անհրաժեշտությունը»՝ լուծել ընթացիկ խնդիրները, վերականգնել ռեսուրսները, կայունացնել կենցաղը, և ավելի քիչ՝ երկարաժամկետ նպատակների ձևակերպումը: Այդ պատճառով որոշումները հաճախ ընդունվում են նվազագույն կայունություն ապահովելու տրամաբանությամբ:

Երիտասարդների մեծ մասը նշում է, որ 44-օրյա պատերազմից հետո նվազել է կառավարության և պաշտոնական տեղեկատվության հանդեպ վստահությունը, նվազել է ապագայի նկատմամբ վստահությունը, «նվազել է հոգեկան և հուզական կայունությունը:

Երիտասարդների համար անվտանգությունը սահմանափակված չէ ֆիզիկական պաշտպանության կամ տարածքային անվտանգության հարցերով: Այն ավելի հաճախ վերաիմաստավորվում է որպես գոյաբանական անվտանգություն՝ կապված կանխատեսելի կյանքի, կայուն աշխատանքի, իմաստավորված ապագայի և վերահսկելի միջավայրի հետ: Այս իմաստով նույնիսկ ֆորմալ անվտանգ միջավայրում երիտասարդները կարող են չզգալ ներքին ապահովություն, քանի որ խախտված է կյանքի շարունակականության և պլանավորման զգացումը: Այս անվստահությունը ունի ոչ միայն քաղաքական, այլև սոցիալական և բարոյական բաղադրիչ: Երիտասարդները կորցրել են հստակ հենարանները, որոնց շուրջը հնարավոր կլիներ կառուցել ապագայի տեսլականը:

*Հույսի ճգնաժամ և ապագայի փակված հորիզոններ*

Երիտասարդները հաճախ նշում են ապագան պատկերացնելու դժվարության մասին: Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության մասնակից երիտասարդները բարձրաձայնում են ոչ թե պարզապես անորոշության, այլ ապագան *«չերևալու», «չնկարելու», «պատկերացնել չկարողանալու»* մասին: Սա կարևոր տարբերակում է. այստեղ խոսքը ոչ թե վատ ապագայի, այլ ապագայի հորիզոնի փակվելու մասին է:

Հատկանշական է, որ արտագաղթի թեման հիմնականում ձևակերպվում է ոչ թե որպես ցանկություն, այլ որպես վախ՝ հնարավոր հարկադրանքի տեսքով: Այսինքն՝ երիտասարդները չեն ընտրում հեռանալ, այլ վախենում են, որ կարող են զրկվել մնալու հնարավորությունից: Սա լրջագույն սահմանափակում է երիտասարդների գործողությունների համար, քանի որ ընտրության սուբյեկտիվ զգացումը փոխարինվում է «ճակատագրականության» տրամաբանությամբ: Սա կարելի է կապել ապագայի «փակվածության» (blocked futures) գաղափարի հետ, երբ երիտասարդները չեն կարողանում կառուցել կենսագրական նախագծեր, քանի

որ սոցիալական պայմանների շարունակական փոփոխությունները չեն ապահովում դրանց իրագործելիությունը[305]։

Արցախից տեղահանված երիտասարդների համար տեղափոխվելու հարցը հաճախ դառնում է ոչ թե բացառիկ ընտրություն, այլ մշտապես «բաց մնացող տարբերակ»։ Նրանց խոսքում նկատվում է շարժունակության բարձր պատրաստակամություն ինչպես Հայաստանի ներսում, այնպես էլ երկրից դուրս, քանի որ նրանց մեջ կայունության զգացումը դեռևս լիարժեք չի վերականգնվել։ Միևնույն ժամանակ, «գնալ/մնալ»-ը հաճախ ուղեկցվում է ներքին երկվությամբ՝ անվտանգության և պատկանելության միջև ընտրության ծանրությամբ։

*Գործելու երկակի դինամիկա. պատասխանատվության աճ և անզորության զգացում*

Մի կողմից՝ 44-օրյա պատերազմը և հետպատերազմյան իրավիճակը խթանել են պատասխանատվության զգացումը, մասնագիտական ընտրությունների քաղաքական և բարոյական իմաստավորումը *(«պետք են լավ դիվանագետներ», «պետք է զարգացնել գիտությունը», «պետք է ուժեղացնել պաշտպանությունը»):* Սա վկայում է, որ երիտասարդների մեջ ձևավորվում է ծառայության և ներդրման էթիկական դիրքորոշում։ Մյուս կողմից՝ նույն երիտասարդները հաճախ արտահայտում են անզորության զգացում՝ *«որպես անհատ ոչինչ չեմ կարող փոխել», «իմ ակտիվությունը անիմաստ էր», «ռեզուլտատ չկա»:* Այս հակասությունը ցույց է տալիս երիտասարդների և նրանց գործողությունների կառուցվածքային սահմանափակումը. մոտիվացիան և պատրաստակամությունը բախվում են համակարգային փակուղիներին։ Այս երկակիությունը շատ կարևոր վերլուծական կետ է. երիտասարդները ոչ թե պասիվ են, այլ հաճախ ակտիվությունից հիասթափված։ Նրանց նախաձեռնողականությունը խաթարվում է ոչ թե ներքին անտարբերության, այլ արտաքին անարդյունավետության պատճառով։ Երկակիությունը հաճախ լուծվում է «նեղ դաշ-

---

[305] Տե՛ս Anđić T. Futurelessness, migration, or a lucky break: narrative tropes of the ‘blocked future’among Serbian high school students //Journal of Youth studies. – 2020. – T. 23. – № 4, էջ 430-446:

տում ազդեցություն ունենալու» ռազմավարությամբ: Երիտասարդները նախընտրում են կենտրոնանալ ընտանիքի, աշխատանքի, մասնագիտական կամ փոքր համայնքային միջավայրի վրա, որտեղ իրենց ներդրումը տեսանելի և վերահսկելի է: Այս ընտրությունը չի նշանակում հասարակական խնդիրներից հրաժարում, այլ արտացոլում է ազդեցության ռացիոնալ սահմանափակում՝ պայմանավորված լայն համակարգերի անարդյունավետության ընկալմամբ:

Արցախից տեղահանված երիտասարդների շրջանում այդ «նեղ դաշտի» ռազմավարությունը հաճախ ստանում է նաև ինքնապահպանական նշանակություն: Նրանց համար կարևոր է պահպանել գործելու կարողությունը՝ առօրյա ռեժիմ, աշխատանքի/ուսման շարունակություն, ընտանիքին աջակցելու պարտավորություններ, որովհետև հենց այդ վերահսկելի փոքր քայլերն են տալիս կայունության նվազագույն զգացում: Այս իմաստով ակտիվությունը հաճախ ոչ թե հանրային դաշտում է, այլ սեփական կյանքի վերակազմավորման և «նորմալացման» մեջ:

*Քաղաքացիական ակտիվությունից դեպի հիասթափություն. սոցիալական այրման գործընթաց*

Երիտասարդները ապրում են մշտական անորոշության և հոգեբանական ճնշման պայմաններում: Ապագայի պատկերացման կորուստը թուլացնում է երկարաժամկետ քաղաքական ներգրավվածությունը և նպաստում հիասթափությանն ու հոգնածությանը: Այս համատեքստում երիտասարդական մասնակցությունը հաճախ դառնում է կարճաժամկետ և զգացմունքային, ոչ թե կառուցվածքային փոփոխության վրա հիմնված[306]: Այս իմաստով կարևոր է քննարկել երիտասարդության՝ ակտիվությունից դեպի պասիվացում անցումը: Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության մասնակից երիտասարդները նկարագրում են իրենց ներգրավվածությունը ուսանողական կառույցներում, գիտական գործունեությունում, կամավորական նախաձեռնություններում, և հետագայում այդ ամենից հրաժարվելու որոշումը՝ արդյունքի բացակայության պատճառով: Այս անցումը բնորոշվում է հոգնածությամբ,

---

[306] Տե՛ս Berardi F. After the future. – AK press, 2011:

էներգիայի սպառմամբ, հիասթափությամբ և «անիմաստության» զգացումով: Տեսականորեն սա կարելի է բնութագրել որպես սոցիալական այրում (burnout), երբ երկարատև ներգրավվածությունը առանց տեսանելի արդյունքի հանգեցնում է ինքնապաշտպանական նահանջի: Այստեղ պասիվացումը հանդես է գալիս ոչ թե որպես անտարբերություն, այլ որպես հոգեբանական և սոցիալական պաշտպանական մեխանիզմ: Արցախից տեղահանված երիտասարդների դեպքում «այրումը» երբեմն ձևավորվում է ոչ միայն հանրային ակտիվությունից հիասթափությամբ, այլև մշտական կենցաղային և հոգեբանական ռեսուրսների սպառմամբ: Երբ օրակարգը երկար ժամանակ մնում է «վերականգնման ռեժիմում», նույնիսկ փոքր ձախողումները կարող են ընկալվել որպես ծանր հարված՝ խորացնելով հոգնածությունն ու անօգնականության զգացումը: Այդ պատճառով հեռացումը և լռությունը հաճախ դառնում են ոչ թե անտարբերություն, այլ ուժ հավաքելու փորձ:

*«Անփարբերության և լռության» դիսկուրսի բարդությունը*

Առկա են հակասական գնահատականներ երիտասարդների անտարբերության և լռելու վերաբերյալ: Մի կողմից դա կարելի է կապել անտեղյակության, մյուս կողմից՝ հիասթափության, ինչպես նաև, վախի կամ անզորության զգացման հետ: Այս բազմաձայնությունը ցույց է տալիս, որ «անտարբերություն» եզրը միատարր չէ և ծածկում է տարբեր սոցիալական վիճակներ՝ անզորություն, անվստահություն, հոգնածություն, պաշտպանական անջատում: Հետպատերազմյան հասարակություններում այս անտարբերությունը համադրելի է լռության պրակտիկայի հետ, երբ երիտասարդները ձգտում են հեռու լինել, անջատ լինել պատերազմող մեծահասակներից և համակարգերից: Լռությունը ոչ թե պասիվ, այլ ակտիվ դիրքորոշում է: Լռությունը և հանրային դիսկուրսներից հեռանալու միտումը կարելի է դիտարկել որպես վերահսկողության վերականգնման փորձ: Լռելով երիտասարդները սահմանում են իրենց ներգրավվածության սահմանները, նվազեցնում են տեղեկատվական և հուզական ծանրաբեռնվածությունը և փորձում են պահպանել ներքին հավասարակշռությունը: Այս լռությունը ոչ թե քաղաքական կամ սոցիալական անտարբերություն է, այլ սոցիալական հարմարման, պաշտպա-

նողական պրակտիկա՝ ձևավորված երկարատև ճնշման և անորոշության պայմաններում[307]:

44-օրյա պատերազմից հետո հաջորդած քաղաքական իրադարձություններում կարող ենք տեսնել Հայաստանի երիտասարդների կողմից ցուցադրվող *«զգուշավոր, անփարբեր, պասիվ»* որակավորում ստացած վարքի ձևեր, որոնք մեծամասամբ որևէ գործողություն չանելու, չմասնակցելու, լուռ լինելու պրակտիկաներ են, ինչը դրսևորվում է նաև թվային տիրույթում: Սակայն այդ պրակտիկաները՝ լռությունները, ևս բազմակարծություններ են և ունեն բազմակի մեկնաբանություններ: Լռությունը կարող է լինել.

- **Բողոքի արտահայտման միջոց:**

Թեև հասարակական դիսկուրսում առկա է միտում լռությունը հավասարեցնելու ենթարկվելուն, համաձայնվելուն, քանի որ իրավունքների պաշտպանության շրջանակներում շեշտադրված է խոսելու իրավունքը, այնուամենայնիվ հետպատերազմյան հասարակություններում լռությունը բողոքելու և պահանջներ ներկայացնելու միջոց է, որը հատկապես մարգինալացված դիրքերից կարող է արվել: «Լռությունը միանական երևույթ չէ. գոյություն ունի լռությունների բազմակարծություն»[308]:

- **Հաղորդակցության ձև:**

Հաճախ լռությունը հասկացվում է որպես ժխտման ձև, բայց դա կարող է օգնել ստեղծելու «նորմալության» զգացում: Ճգնաժամային իրավիճակներում ամենօրյա սոցիալական փոխազդեցությունը օգտագործում է լռությունը որպես հարաբերություններին հարգանք և վստահություն հաղորդող միջոց: «Լուռ» պնդումները կարող են նաև «խոսել» մարգինալ դիրքից՝ կապված գերիշխող նարատիվների հետ և բարոյական պահանջներ ներկայացնել: Լռությունը կարող է հանդես գալիս որպես պրագմատիկ և երբեմն արդյունավետ ռազմավարություն համակեցության համար, նույնիսկ երբ հասարակության մեջ առկա է շարունակվող պառակտում:

---

307 Տե՛ս Eastmond, Selimovic, 2012:

308 Connerton P. The Spirit of Mourning: History, Memory and the Body. Cambridge: Cambridge University Press, 2011.

- **Բովանդակություն:**

Լռությունն ավելին է, քան խոսքի բացակայությունը. այն սոցիալական հաղորդակցության ձև է, որը նույնքան հարուստ և բազմակողմանի է, որքան խոսքը և նարատիվը/պատումը: Լռությունը փոխանցում է սոցիալական իմաստների լայն շրջանակ, որոնք, ինչպես խոսքը, միշտ գտնվում են և կարող են հասկացվել միայն սոցիալական համատեքստում: Լռությունը կարող է օգտագործվել՝ նշելու հաստատումը, մերժումը կամ ժխտումը, հարգանք, կարեկցանք կամ հիացմունք, ինչպես նաև ծաղր կամ կասկած, կամ դա կարող է ազդարարել ամոթի, վախի կամ անտեղյակության անզորությունը[309]:

- **Հիշողության կառուցման միջոց:**

Լռությունը կոնֆլիկտներից, պատերազմից հետո հաճախ ավելի զգացմունքային բովանդակություն ունի և վիճելի է, քանի որ սերտորեն կապված է բռնության, կորստի և վախի հետ: Անհատի համար հիշվող ցավալի բաները կարող են չասված մնալ՝ վախենալով հատուցումից կամ սոցիալական ամոթից, կամ պարզապես դիմադրել արտահայտմանը: Հետկոնֆլիկտային իրավիճակներում հիշելու ձևերը քննելիս պետք է հաշվի առնել ավելի լայն քաղաքական ենթատեքստը, քանի որ պատերազմից անմիջապես հետո հասարակական-քաղաքական կյանքի դերակատարները պայքարում են պատերազմի իրենց վարկածը քարոզելու՝ հերոսներին և մեղավորներին ներկայացնելու համար. շտապել հիշել (rush to memory)[310]:

- **Համակեցության ռազմավարություն:**

Մարդիկ ամենօրյա սոցիալական շփումներում ակտիվորեն օգտագործում են լռությունը, որը կարող է զորացնել՝ հաղորդելով հարգանք և նույնիսկ վստահություն՝ այդպիսով ձևավորելով և պահպանելով կարևոր հարաբերություններ: Լռությունը կարող է ընկալվել որպես պրագմատիկ և որպես համակեցության ռազմավարություն, որպես «նորմալ կյանքով» ապրելու հնարավորություն:

---

309 Տե՛ս Connerton P. The Spirit of Mourning: History, Memory and the Body. Cambridge: Cambridge University Press, 2011:
310 Տե՛ս Edkins, նշվ. աշխ.:

Լռությունը որպես անցյալի ցավոտ հարցերին չանդրադառնալու միջոց է, «կյանքը նորմալացնելու» պայքարի ձև է, ինքնին «նորմալացնող» դիսկուրս է:

Որոշ դեպքերում լուռ պնդումները «խոսում են» մարգինալ դիրքից՝ կապված գերիշխող նարատիվների հետ և ծառայում են մեկ ուրիշի դեմ (բարոյական) պահանջներ ներկայացնելուն: Այս դեպքերում լռությունը կարող է լինել ռազմավարական ընտրություն և մատնանշել ազատությունը և հակամարտությունները ճանաչելու ցանկությունը, այլ ոչ թե անզորությունը:

Ըստ բրազիլիացի կրթության փիլիսոփա Պաուլո Ֆրեյրեի՝ լռության մշակույթը վերաբերում է այն իրավիճակին, երբ ճնշված մարդիկ իշխանության պակասի պատճառով զրկված են իրենց մտքերն ու փորձառությունները արտահայտելու և դրանց հիման վրա գործելու հնարավորությունից: Այս լռեցումը կարող է առաջանալ վախի, կրթության հասանելիության բացակայության պատճառով: Լռության մշակույթը պահպանում է ստատուս քվոն: Ըստ Ֆրեյրեի՝ լռության մշակույթը կոտրելը կարևոր քայլ է դեպի ազատագրում[311]:

- **Սոցիալական հարմարման պրակտիկա:**

Լռությունը հաճախ միջոց է գոյատևելու հետպատերազմյան իրականությունում: Քաղաքացիական պասիվությունը ուղեկցվում է զբաղվածության ակտիվությամբ:

> *«Ես ուզում եմ շեշտը դնել պատերազմից փուժած, այսպես ասած, պատերազմին մասնակցած անձանց վերաբերյալ: Ես ինքս անձամբ իմ փորձից եմ ուզում ասել, որ ցանկացած ազատ րոպե ազդում է պատերազմում ընկերներ կորցրած, առողջություն կորցրած անձանց, ազդում է անմիջապես իրենց հոգեկան վիճակի վրա: Ազատ մի րոպեն, իմ կարծիքով, բոլորը հիշում են իրենց զոհված ընկերներին ու այդ պահերը, պետք է, որ բոլորը աշխատեն ու այնպիսի աշխատանքով, որ իրենք անընդհատ զբաղված լինեն»[312]:*

---

[311] Տե՛ս Freire, P. (1994). Pedagogy of the oppressed (3rd ed.). New York: Continuum Publishing Company:

[312] Անհատական հարցազրույց, 21տ., ար. սեռ, գյուղական բնակավայր:

*Արվեստը որպես դիմադրողականության և ամոքման միջոց պատերազմից հետո*

Երիտասարդների՝ մշակութային ոլորտում մասնակցությունը տեսության մեջ բաժանվում է երկու տիպի. ակտիվ՝ ներգրավվում ստեղծագործական գործունեության մեջ, և պասիվ՝ մասնակցություն մշակութային կյանքին[313]: Ակտիվ մշակութային մասնակցությունը նշանակում է, որ երիտասարդը իրականացնում է մշակութային, ստեղծագործական որևէ գործունեություն: 2020 թ. հետո երիտասարդների կողմից ստեղծվել են տարբեր ստեղծագործություններ պատերազմի թեմայով: Ընդ որում, այս երևույթը բավականին տարածված պրակտիկա է պատերազմի մասնակիցների վերականգնման գործընթացում, ինչը կարող է դրսևորվել ինքնակամ, նաև որպես նպատակուղղված թերապիայի մաս: Գրականության մեջ այս երևույթը կրում է «թիթեռնիկի հպում» սիմվոլիկ անվանումը, քանի որ բնության ամենահայտնի մոտիվներից մեկը, որը ներկայացված է պատերազմի մասնակցած տղամարդկանց ձեռագործ աշխատանքներում, թիթեռնիկն է[314]:

44-օրյա պատերազմից հետո երիտասարդների շրջանում նկատելի է ակտիվ ստեղծագործական գործունեությամբ զբաղվելու միտում. երիտասարդներ, որոնք նախկինում ստեղծագործ չեն եղել, սկսեցին նկարել, քանդակել, գրել, երգել, ինչը դարձավ նրանց համար նաև հիմնական զբաղվածություն:

---

313 Տե՛ս Cultural participation as a driver of social and economic impact, https://www.oecd-ilibrary.org/docserver/44b3088a-en.pdf?expires=1713710076&id=id&accname=guest&checksum=3065CB20D14938C36AE7E532EC9B60C0 [05.03.2026]:

314 Տե՛ս Carden-Coyne A. Butterfly touch: Rehabilitation, nature and the haptic arts in the First World War. Critical Military Studies, 2019:

**Աղյուսակ 3. Երիտասարդների ստեղծագործականությունը պատերազմից հետո**



© Photo provided by Erik Grigoryan

Երբ 2020 թ. պատերազմը սկսվեց, երիտասարդի զինծառայության ավարտին չորս ամիս էր մնացել: Տանկի մեխանիկ-վարորդ երիտասարդը վիրավորվում է հոկտեմբերի 24-ին Մատաղիսում, կասետային ռումբի պայթյունից: Պատերազմից հետո սովորում է նոր մասնագիտություն՝ քանդակագործություն և ստեղծում է 50 քանդակ, որոնք ամփոփվում են «Կուճիր հույզեր» խորագրով ցուցահանդեսում:



© Sputnik / Asatur Yesayants

Երիտասարդ ստեղծագործողը 25 տարեկանում մասնակցել է երկու պատերազմի: Ապրիլյան պատերազմի ժամանակ ժամկետային զինծառայող էր, բայց վիրավորվեց դրանից հետո՝ նույն տարվա հուլիսին, մարտական գործողությունների ժամանակ: 44-օրյա պատերազմի ժամանակ ընկերների հետ կամավոր առաջնագիծ մեկնեց ու մինչև վերջին օրն այնտեղ էր: Պատերազմից հետո սկսեց նկարել, քանդակել, կոլաժներ ստեղծել տարբեր նյութերով:




*44 DAYS: Diary from an Invisible War*[315]

1994 թ. Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում ծնված երիտասարդ աղջիկը սովորել է Արցախի պետական համալսարանի քաղաքագիտության բաժնում և ունի մագիստրոսի կոչում: 2020 թ. նա աշխատում էր ՍիվիլՆեթ հայկական լրատվամիջոցում՝ Արցախի համար աշխատող թիմում: 44-օրյա պատերազմի օրերին օրագիր էր գրում, որտեղ պատմում էր անձնական, մարդկանց հույզերի, իրադարձությունների մասին: Հետագայում օրագրի հիման վրա գրում է «44 օր. օրագիր անտեսանելի պատերազմից» գիրքը, որի հիման վրա նկարվել է «Անտեսանելի հանրապետություն» ֆիլմը:

---

[315] Նկարի աղբյուրը՝ https://www.44daysbook.com/ [10.02.2026 թ.]:

Պատերազմի մասնակիցների վրա արվեստը և ստեղծագործական *գործունեությունն ունեն* ամոքիչ ազդեցություն. «*Վիրավորները վկայում էին, որ արվեստի և արհեստի ստեղծագործական գործունեությունը հակազդեց ժամանակակից պատերազմի դաժանությանը՝ մեղմորեն դիմադրելով ֆիզիկական և հուզական փառապանքներին և վերականգնող ազդեցություն ապահովելով մշակութային լայն պրակտիկաների միջոցով*»[316]:

*Հայաստանում մնալու որոշումը՝ որպես հույսի և դիմադրության ձև*

Չնայած բոլոր դժվարություններին՝ երիտասարդները հստակ ձևակերպում են Հայաստանում մնալու իրենց որոշումը որպես գիտակցված և արժեքային դիրքորոշում: Այս համատեքստում հույսը հանդես է գալիս ոչ թե որպես լավատեսական սպասում, այլ որպես բարոյական ընտրություն և դիմադրության յուրահատուկ ձև: «Մնալու հույսը» կարելի է դիտարկել որպես պատկանելիության զգացման, պատասխանատվության և սոցիալական ներգրավվածության համադրություն, որը հակադրվում է անորոշությանը և վախին:

Երիտասարդների մեծ մասը համաձայն է այն դատողությանը, որ Հայաստանը անվտանգ երկիր է և իրեն ապահով է զգում իր համայնքում: Սակայն առաջին դատողության հետ համաձայն չէ երիտասարդների գրեթե մեկ երրորդը:

---

[316] Carden-Coyne A. Butterfly touch: Rehabilitation, nature and the haptic arts in the First World War. Critical Military Studies, 2019.

**Գծապատկեր 31. Որքանո՞վ եք համաձայն հետևյալ դատողությունների հետ**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 13-35




Պատերազմի և հետպատերազմյան գործոններով պայմանավորված սթրեսային իրավիճակները հաղթահարելու գործընթացը կառուցվում է ընտանիքի, երեխաների, համայնքի, հասակակիցների և ոչ ֆորմալ աջակցող ցանցերի միջոցով, մինչդեռ ինստիտուցիոնալ աջակցությունը ընկալվում է սահմանափակ կամ անբավարար: Պատերազմից հետո ձևավորված դիմակայունությունը չի նշանակում վերականգնում կամ «նորմալացում», այլ ավելի շուտ՝ մշտական գիտակցում անորոշության պայմանների առկայության: Այս համատեքստում երիտասարդների փոր-ձառությունը բնութագրվում է ուժի և խոցելիության միաժամանակյա ներկայությամբ:

Այս կարծրատիպային պատկերացումները հաճախ անտեսում են այն հանգամանքը, որ պատերազմական կամ հետպատերազմյան միջա-վայրում մեծացած երիտասարդները ոչ միայն կրում են պատերազմի հետևանքները, այլև ձևավորում են նոր սոցիալական փորձառություններ և ռազմավարություններ՝ հարմարվելու այդ իրականությանը: Երիտա-սարդները նման պայմաններում զարգացնում են դիմակայության (resilience) տարբեր մեխանիզմներ, վերաիմաստավորում իրենց ինքնու-թյունը և փորձում կառուցել ապագայի նոր պատկերացումներ՝ հաճախ համատեղելով անվտանգության, կայունության և ինքնուրույնության ձգտումները: Այս համատեքստում կարևոր է երիտասարդներին դիտար-կել ոչ միայն որպես պատերազմի հետևանքներից տուժած կամ «կորու-սյալ սերունդ», այլև որպես սոցիալական ակտիվ դերակատարներ,

որոնք ունեն իրենց գործակալությունը (agency) և կարող են նպաստել հասարակության վերականգնման, սոցիալական համախմբվածության և խաղաղաշինության գործընթացներին: Հետպատերազմյան հասարակություններում երիտասարդների փորձառության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալու, թե ինչպես են ձևավորվում սոցիալական նոր արժեքներ, կենսագրական ռազմավարություններ և ապագայի պատկերացումներ՝ անորոշության և անվտանգության մշտական սպառնալիքների պայմաններում:

Հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների հույսն ու վստահությունը գտնվում են խորը հակասական և խոցելի վիճակում: Պատերազմը և դրա հետևանքները խաթարել են կենսագրական անցումները, խորացրել են անապահովությունը, նվազեցրել են ինստիտուցիոնալ վստահությունը և փակել են ապագայի հորիզոնները: Միևնույն ժամանակ, նույն այդ փորձառությունները ձևավորել են ուժեղ բարոյական պատասխանատվություն, պատկանելիության զգացում և ծառայելու պատրաստակամություն: Երիտասարդները փորձում են ակտիվ գործել լարված դաշտում՝ մշտապես բախվելով կառուցվածքային սահմանափակումների: Արդյունքում, ակտիվությունը հաճախ վերածվում է հիասթափության, իսկ հույսը՝ խոցելի, բայց չվերացած կողմնորոշման: Այս համատեքստում հույսը պետք է ընկալել ոչ թե որպես պարզ հոգեբանական վիճակ, այլ որպես սոցիալապես պայմանավորված, քաղաքականապես լարված և բարոյականորեն բեռնավորված պրակտիկա:

## Գլուխ 9. Երիտասարդների անկախացման գործընթացի առանձնահատկությունները բազմաճգնաժամի համատեքստում

Երիտասարդությունը մանկության և դեռահասության սոցիալ-տնտեսական կախվածությունից դեպի հասունությանը բնորոշ հարաբերական անկախություն անցնելու փուլ է: Սակայն այս անցումը հստակ և գծային գործընթաց չէ. այն բարդ է, բազմաշերտ և հաճախ ուղեկցվում է անորոշությամբ, ինչը հատկապես բնորոշ է ժամանակակից՝ բարձր ռիսկայնությամբ հասարակություններին[317]: Ընդհանուր առմամբ սոցիալ-տնտեսական անկախությունը կարելի է սահմանել որպես տնտեսական, այդ թվում՝ ֆինանսական, ինչպես նաև սոցիալական կազմակերպման (կապված սոցիալական փոխգործունեության, սոցիալական դերերի կատարման հետ) հիմնախնդիրների լուծման ունակություն[318]: Հետևելով Ջ. Լևիին և Յ. Շմիդտին՝ երիտասարդությունն ավարտվում է, երբ անձն ինտեգրվում է հասարակության մեջ, ինչը սերտորեն կապված է երիտասարդի սոցիալ-տնտեսական անկախության հետ[319]: Որոշ հասարակություններում հասունությունն արտահայտվում է (կամ արտահայտվում էր) այդ կարգավիճակի ճանաչման հստակ արարողություններով (օրինակ՝ որոշ հասարակություններում մինչ այժմ էլ պահպանվում են հասունության ծիսակատարությունները), սակայն ժամանակակից հասարակություններում հասունությունը ստացել է ավելի անորոշ սահմաններ և արտահայտվում է հիմնականում սոցիալ-տնտեսական անկախությունն իրացնելու ունակության միջոցով[320]: Ըստ այդմ՝ անկախության հիմնախնդիրը ժամանակակից հասարակություններում ստանում է հատուկ հնչեղություն՝ կապված երիտասարդներին հասունության պատրաստելու և հատկապես աշխատաշուկայում նրա խոցելի վիճակի հետ: Ընդհանուր

---

[317] Տե՛ս Valentine, G. and Skelton. Re-Defining “Norms”: D/Deaf Young People’s Transitions to Independence. The Sociological Review, 55(1), 2007, 104-123:

[318] Տե՛ս Hoffman J. Psychological separation of late adolescents from their parents// Journal of Counseling Psychology. 1984. № 31, էջ 170-178:

[319] Տե՛ս Levi G. and Schmitt J. C. History of Youth in the West. Paris, 1996:

[320] Թեև չափահասության, ամուսնության կամ զինակոչման տարիքները որոշ դեպքերում կարող են համարվել հասունության ֆորմալ տարիք, սակայն, ըստ էության, այդ չափանիշները բավարար չեն բնութագրելու հասունության ամբողջական գործընթացը:

առմամբ ավելանում է երիտասարդների տեսակարար կշիռը տնտեսապես ոչ ակտիվ բնակչության կազմում, որոշ երկրներում արձանագրվում է երիտասարդության հարաբերական աղքատացում՝ համեմատած մեծահասակների հետ[321]:

Ակադեմիական գրականության մեջ հաճախ անկախությունը կիրառվում է ազատություն, ինքնուրույնություն, ինքնավարություն, ինքնաբավություն, սուբյեկտայնություն (agency) հասկացությունների հետ սերտ փոխառնչություններով[322]:

> *«Պատմական մի ժամանակաշրջանում, երբ կախվածությունը համարվում է անցանկալի, անկախությունը, որևէ մեկի համար «բեռ չլինելու» իմաստով, դարձել է իդեալ ինչպես անձնական, այնպես էլ հասարակական ասպարեզներում: ... կախվածությունը կապված է դժվարությունների հետ, այն ժամանակակից արևմտյան հասարակության մեջ օրինակելի քաղաքացու ցանկալի բնութագրերի հակասությունն է. աղքատ լինելու իմաստով աջակցության կարիքը ամոթի աղբյուր է: Անկախությունն այսպես կախվածության նկատմամբ բարոյական բարձր դիրք ունի»*[323]:

Օքսֆորդի բառարանը «անկախությունը» սահմանում է երեք իմաստով՝

1. անկախություն (ինչ-որ մեկից/ինչ-որ բանից) (երկրի) ազատություն այլ երկրների կողմից քաղաքական վերահսկողությունից,
2. այն ժամանակը, երբ երկիրն ազատություն է ստանում մեկ այլ երկրի քաղաքական վերահսկողությունից,
3. սեփական կյանքը կազմակերպելու, սեփական որոշումներ կայացնելու և այլնի ազատություն՝ առանց այլ մարդկանց օգնության կարիքի[324]:

---

321 Տե՛ս Cordón J. A. F. Youth residential independence and autonomy: A comparative study //Journal of family issues. – 1997. – Т. 18. – № 6, с. 576-607; Iacovou M. Cross-national comparative research with longitudinal data: research into youth poverty //Twenty-First Century Society. – 2009. – Т. 4. – № 2, с. 149-160.
322 Տե՛ս Nilsen A. Independence and relationality in notions of adulthood across generations, gender and social class. The Sociological Review, 69(1), 123-138:
323 Նույն տեղում, էջ 126:
324 https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/independence_1 [23.04.2026]:

Անկախությունը հաճախ նաև սահմանվում է որպես կախվածության հականիշ կամ հակաթեզ, որպես «համընդհանուր ցանկալի նպատակ»[325]:

Անկախության, ինքնավարության հարցը լայնորեն քննարկվում է հատկապես առավել խոցելի խմբերի վերաբերյալ հասարակագիտական դիսկուրսում: Հոգատարության հետ սերտ փոխառնչություններով՝ «անկախությունը պետք է հասկանալ ոչ թե որպես ինքնուրույն գործունեություն իրականացնելու հնարավորություն՝ առանց օգնության (*հոգատարության*), այլ որպես կարողություն վերահսկելու օգնությունը, որն անհրաժեշտ է ընտրված նպատակներին և խնդիրների լուծմանը հասնելու համար»[326], այս իմաստով անկախությունը ոչ թե հակադրվում է կախվածությանը՝ «այլ անձի հետ գործնական, սոցիալական կամ տնտեսական կապերի բացակայությանը», այլ դիտարկվում է որպես «հարաբերական ինքնավարություն»[327]:

Երիտասարդության ոլորտի հետազոտողների կողմից, անկախության հասկացությանը զուգահեռ, կիրառվում է նաև անհատականություն (individualism) հասկացությունը, որտեղ անկախություն ձեռք բերելու ցուցիչ են դիտարկվում «սեփական արարքների համար պատասխանատվություն կրելը, սեփական արժեքների և հավատամքների որոշումը առանց ծնողների և այլոց ազդեցության և ծնողների հետ հավասար հարաբերություններ ունենալը»[328]: Ֆունկցիոնալիստական տեսություններում կիրառվում է փոխկախվածություն (interdependence) հասկացությունը՝ որպես հարաբերական անկախություն:

325 Տե՛ս Fine M. and Glendinning C. Dependence, independence or inter-dependence? Revisiting the concepts of “care” and “dependency.” Ageing and Society, 25(04), 601-621. 2005:
326 Նույն տեղում, էջ 610:
327 Նույն տեղում, էջ 615:
328 Arnett, J. J. Young People’s Conceptions of the Transition to Adulthood. Youth & Society, 29(1), 1997, 3-23.

*Երիտասարդների անկախության համաթիվը*

Երիտասարդությունը դիտարկելով որպես մանկության կախվածությունից դեպի հասունության հարաբերական անկախություն անցման փուլ՝ առանցքային է դառնում անկախության չափման խնդիրը: Երիտասարդական ուսումնասիրությունների զարգացման ողջ ընթացքում բազմաթիվ են եղել ինչպես տեսական քննարկումների, այնպես էլ էմպիրիկ հետազոտությունների վրա հիմնված փորձերը[329]: Դրանք բոլորն ուղղված են երիտասարդների անկախության սահմանման էմպիրիկ ցուցանիշների դուրսբերմանը և չափմանը: Գիտական գրականության մեջ առանձնացվում են տարբեր մոտեցումներ: Հեղինակների մի մասի համար կենտրոնական հասկացություն է երիտասարդության անկախության համար նշանակալի ոլորտի սահմանումը՝ ֆինանսական անկախությունը[330], ծնողական տնից հեռանալը [331], մտավոր անկախությունը[332]: Որոշ ուսումնասիրողներ փորձել են չափել այս ուղղությունները միասին: Մյուսները փորձում են ոչ միայն սահմանել ոլորտները, այլև մշակել ցուցիչների հստակ և համալիր համակարգ, որով հնարավոր է չափել անկախությունը: Հետազոտողները և գիտնականները փորձել են նաև երիտասարդների անկախության սահմանման համար դուրս բերել ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ, հոգեբանական ասպեկտները[333]:

---

[329] Տե՛ս Alwin D. F. From Obedience to Autonomy: Changes in Traits Desired in Children, 1924-1978. Public Opinion Quarterly, 52(1), 1988. Arnett J. J. Young People's Conceptions of the Transition to Adulthood. Youth & Society, 29(1), 1997, 3–23:

[330] Տե՛ս Lee J. and Mortimer J.T. Family socialization, economic self-efficacy, and the attainment of financial independence in early adulthood. Longitudinal and Life Course Studies 1(1): 2009, 45–62:

[331] Տե՛ս Settersten R.A. The contemporary context of young adulthood in the USA: From demography to development, from private troubles to public issues. In: Booth A, Brown SL, Landale NS, et al. (eds) Early Adulthood in a Family Context (Vol. 2). New York: Springer Science & Business Media, 2012, pp.3–26: White N. R. Not under my roof!': Young people's experience of home. Youth & Society 34(2): 2002, 214–231:

[332] Տե՛ս Pallas A.M.A subjective approach to schooling and the transition to adulthood. Advances in Life Course Research 11(1): 2006, 173–197. Johnson M.K., Berg J.A. and Sirotzki T. Differentiation in self-perceived adulthood: Extending the confluence model of subjective age identity. Social Psychology Quarterly 70(3): 2007, 243–261:

[333] Տե՛ս Silva J.M. Constructing adulthood in an age of uncertainty. American Sociological Review 77(4), 2012, 505–522:

Ամերիկացի սոցիոլոգ Ա. Մանզոնին, հղում կատարելով Թ. Հարեվանին, նշում է, որ երիտասարդների անկախ կյանք վարելու հիմնական ցուցանիշների շարքում հիմնականում դիտարկվում են՝

- ֆորմալ կրթության ավարտը,
- մուտքը աշխատաշուկա,
- ծնողական տնից հեռանալը,
- ամուսնանալը,
- ծնող դառնալը[334]:

Սակայն երիտասարդների կենսափորձի երկարատև և խորքային ուսումնասիրությունները փաստում են, որ կրթությունը կարող է շարունակվել ողջ կյանքի ընթացքում, ընտանիքի ձևավորման հապաղումը կրում է սոցիալ-մշակութային գործոնների ազդեցությունը, հետևաբար, երիտասարդների անկախությունը ևս պետք է սահմանվի և չափվի՝ հաշվի առնելով այս խորքային վերափոխումները:

Երիտասարդների անկախությունը բազմաշերտ և տարասեռ գործընթաց է, ընդ որում, կարող է ընթանալ ընդհատումներով և զարգանալ ոչ գծային: Սոցիալ-տնտեսական արդի վերափոխումները «դրդել են, որ երիտասարդները վերասահմանեն անկախության ցուցիչների մասին դասական տեսությունները»[335]: Հետևաբար, երիտասարդության հարցերով հետազոտողները և գիտնականները սկսեցին քննարկել ոչ միայն անկախության ձեռք բերման ավանդական ուղղությունները, որտեղ շեշտադրվում էր օբյեկտիվ, նյութական կողմը, այլև ոչ նյութական, սուբյեկտիվ կողմը՝ նրանց կարծիքը, վերաբերմունքը[336], անհատականության հատկանիշները[337]:

Մանզոնին նշում է. «*Քանի որ կյանքի ընթացքը գնալով դառնում է ապաստանդարտացված և տարբերակված, տրամաբանական է, որ երի-*

---

[334] Տե՛ս Manzoni A. Conceptualizing and measuring youth independence multidimensionally in the United States. Acta Sociologica, 59(4), 2016, 362-377:

[335] Նույն տեղում:

[336] Տե՛ս Silva J.M. Constructing adulthood in an age of uncertainty. American Sociological Review 77(4): 2012, 505-522:

[337] Տե՛ս Berg J.A. Subjective age identity during the transition to adulthood: Psychological and sociological perspectives. Social Thought and Research 28: 2007, 145-163:

*պատանդների կյանքի տարբեր փուլերի միջև սահմանները տեսանելի չեն, և անկախությունը երիտասարդների մոտ նույն չափով չի դրսևորվում բոլոր ոլորտներում, բոլոր երիտասարդների համար: Երիտասարդների կյանքի տարբեր ոլորտներում անկախությունը կարող է զարգանալ ոչ համընթաց կամ հակառակ ուղղություններով: Օրինակ՝ նրանք կարող են բնակության առումով անկախ լինել իրենց ծնողներից, բայց տնտեսապես կախված լինել նրանցից: Երիտասարդները կարող են նաև տարբեր նշանակություններ տալ անկախության սուբյեկտիվ իմաստներին: Այսպիսով, եթե որոշ երիտասարդների համար տարբեր ոլորտներում անկախությունը կարող է համընկնել, մյուսների համար մի տիրույթում անկախությունը կարող է չհամընկնել այլ ոլորտներում անկախությանը: Այս առումով երիտասարդները կարող են լինել միատարր խումբ, փոխարենը կարող են տարբեր կերպ զգալ անկախությունը»*[338]:

Հայաստանյան երիտասարդության անկախության չափումը թույլ է տալիս ստանալ երիտասարդության ամբողջական պատկերը, ինչպես նաև վերլուծել այդ պատկերի փոփոխությունները ժամանակի ընթացքում:

Երիտասարդության ուսումնասիրության ոլորտում ակադեմիական գրականության և էմպիրիկ հետազոտությունների արդյունքների խորքային վերլուծությունը թույլ է տվել առաջարկել այն հիմնական տիրույթները, որոնք ազդեցություն ունեն երիտասարդների անկախության ձեռք բերման վրա և երիտասարդների անկախության համաթվի բաղադրիչ են: Այդ բաղադրիչների նկարագրությունը և ընտրության հիմնավորումը ներկայացված է հաջորդիվ.

- Ֆինանսական անկախությունը երիտասարդների անկախության առանցքային բաղադրիչներից է: Այն արտացոլում է երիտասարդի՝ որպես անձի՝ կենսական անհրաժեշտության կարիքները հոգալու և իրեն ֆինանսապես ապահովելու կարողությունը: Այն նաև վկայում է երիտասարդի մեջ տեղեկացված տնտեսական որոշումներ կայացնելու և ռեսուրսների արդյունավետ կառավար-

[338] Manzoni A. Conceptualizing and measuring youth independence multidimensionally in the United States. Acta Sociologica, 59(4), 2016, 362-377.

ման իմտության առկայության մասին: Ֆինանսական անկախությունը երիտասարդներին հնարավորություն է տալիս հասնելու իրենց նպատակներին առանց արտաքին միջավայրից չափազանց մեծ կախվածության: Ֆինանսական անկախությունը կարևոր խթան է երիտասարդի ինքնավարության համար:

- Տնտեսական անկախությունը վկայում է տնտեսական համակարգում երիտասարդի ակտիվ մասնակցության կարողության մասին: Երիտասարդների անկախության այս բաղադրիչը ներառում է երիտասարդների կյանքի այնպիսի տիրույթներ, ինչպիսիք են զբաղվածությունը, ձեռներեցությունը, տնտեսական ինքնաբավությունը և տնտեսական հնարավորությունների հասանելիությունը: Տնտեսական անկախությունը կենսական նշանակություն ունի երիտասարդների համար հասարակության մեջ իրենց տեղը հաստատելու և իրենց համայնքներում, սոցիալական միջավայրում տնտեսական զարգացմանը նպաստելու համար:
- Մտավոր (կամ արժեքային) ինքնուրույնությունը (mental self-direction) կամ անկախությունը վերաբերում է անձի՝ երիտասարդի ուղղվածությանը՝ գործել՝ հիմնվելով իր սեփական ուժերի վրա, ստեղծագործ նորարարական լուծումների վրա: Այդ արժեքներից են, համաձայն Շ. Շվարցի[339], *ինքնակառավարման* արժեքը, *խթանման* արժեքը, *նվաճումների* արժեքը, *իշխանության* արժեքը, և հակադիր արժեքները՝ *ավանդապաշտություն, համապատասխանություն* և *ապահովություն:*
- Առօրյա ինքնուրույնությունը վերաբերում է երիտասարդների կյանքի այնպիսի տիրույթներին, ինչպիսիք են ինքնասպասարկումը, ժամանակի կառավարումը և առօրյա գործերում որոշումներ կայացնելը: Այս բաղադրիչի դիտարկումը թույլ է տալիս ուսումնասիրել, թե արդյոք երիտասարդներն ունեն հմտություններ և վստահություն առօրյա պարտականությունները կատարե-

[339] Տե՛ս Schwartz S.H. Basic human values: Their content and structure across countries. In A Tamayo & J.B. Porto (Eds.), Values and behavior in organizations. Petrópolis, Brazil: Vozes, 2005, էջ 21-55:

լու համար: Առօրյա անկախությունը խթանում է ինքնաբավությունը և մեծահասակների կյանքին պատրաստ լինելու զգացումը[340]:

Երիտասարդների անկախություն ձեռք բերելու համար կարևոր են նաև քաղաքացիական ակտիվությունը և մասնակցությունը, ինչը արտացոլում են երիտասարդության ներգրավվածությունը հասարակական և քաղաքական գործընթացներում, պատասխանատվության զգացումը: Բաումանը նշում էր, որ արդի հասարակություններում անհատի ազատականացումը հանգեցնում է անտարբերության[341], հետևաբար կարևոր է նաև ուսումնասիրել երիտասարդների անկախության, քաղաքացիական ակտիվության փոխառնչությունները: Այս բաղադրիչի դիտարկումը երիտասարդների անկախության համատեքստում թույլ է տալիս գնահատել, թե ինչպիսին է երիտասարդների դերը հասարակության զարգացման գործում: Համայնքային և ժողովրդավարական գործընթացներում երիտասարդների ներգրավվածության չափը վկայում է նրանց քաղաքացիական ակտիվության և պատասխանատվության առկայության մասին: Քաղաքացիական ակտիվության ցուցանիշը չի ներառվել անկախության համաթվի մեջ, սակայն, որպես կարևոր բաղադրիչ ,ներառված է վերլուծական սխեմայում:

Երիտասարդների անկախությունը ամբողջականորեն գնահատելու համար աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության ընթացքում մշակվել են անկախության տարբեր կողմերը չափող ցուցիչներ: Վերլուծությունն ավելի հստակ և նպատակային դարձնելու համար իրականացվել է տվյալների կրճատում, այսինքն՝ առանձնացվել են միայն առավել կարևոր փոփոխականները: Սա հնարավորություն է տվել պարզեցնելու վերլուծության գործընթացը և ավելի հստակ բացահայտելու տարբեր ցուցանիշների միջև առկա կապերը: Արդյունքում ձևավորվել են երիտասարդների անկախության հիմնական ենթացուցանիշները, որոնք համադրվել են մեկ միասնական համաթվի մեջ և կիրառվել հետագա վերլուծության համար:

---

[340] Տե՛ս Galstyan, 2024:

[341] Տե՛ս Бауман З. Б29 Текучая современность / Пер. с англ. под ред. Ю. В. Асочакова. — СПб.: Питер, 2008, 240 էջ:

Տվյալների փոխակերպումից և երիտասարդների անկախության համաթվի կառուցումից առաջ իրականացվել է տվյալների միաչափության և հուսալիության ստուգում: Միաչափությունը կարևոր է, քանի որ ապահովում է, որ համաթիվը չափի մեկ հստակ երևույթ և համահունչ լինի հետազոտության տեսական հիմքերին: Սա նաև բարձրացնում է ցուցիչի վիճակագրական կայունությունն ու հուսալիությունը և հեշտացնում դրա մեկնաբանությունը: Երբ համաթվի բոլոր բաղադրիչները չափվում են նույն տրամաբանությամբ, հնարավոր է դառնում դրանք համեմատել միմյանց հետ և գնահատել յուրաքանչյուրի հարաբերական կարևորությունը: Բացի այդ, միաչափության ապահովումը հնարավորություն է տալիս իրականացնելու տարբեր խմբերի միջև համադրելի վերլուծություն և վստահ լինել, որ ստացված արդյունքները վավեր ու հուսալի են:

Տարբեր բնույթի հարցերից ստացված տվյալները համադրելի դարձնելու նպատակով դրանք վերափոխվել են մեկ միասնական սանդղակի՝ 0-ից 1 միջակայքում, որտեղ 0-ն արտահայտում է կախվածություն, իսկ 1-ը՝ անկախություն: Այս մոտեցումը հնարավորություն է տվել միավորելու մետրիկական, նոմինալ և կարգային տվյալները և ձևավորելու համադրելի ենթացուցանիշներ: Սանդղակների այսպիսի միավորումը նպաստել է երիտասարդների անկախության առավել ամբողջական և հուսալի չափմանը: Հուսալիության ստուգման արդյունքները (Cronbach’s Alpha = 0.834) վկայում են, որ օգտագործված փոփոխականները բավարար չափով համահունչ են միմյանց և կարող են դիտարկվել մեկ միասնական համաթվի շրջանակում:

Երիտասարդների անկախությանը վերաբերող սանդղակների փոխակերպման և համաթվի կազմավորման գործընթացի նկարագրությունն ըստ առանձին ենթացուցանիշների ներկայացված է հաջորդիվ:

*Ֆինանսական անկախություն*

Ֆինանսական անկախությունը գնահատվել է որպես երիտասարդի եկամտային ինքնաբավության աստիճան՝ հաշվի առնելով նրա անձնական ամսական եկամուտը և ընտանիքի մեկ անդամի հաշվով ամսական ծախսերը: Այս մոտեցումը թույլ է տալիս գնահատել, թե երիտասարդը որքանով է կարողանում սեփական եկամտով ապահովել իր հիմնական

կարիքները: Ֆինանսական անկախության ցուցիչը հաշվարկվել է եկամտի և ծախսերի հարաբերակցության հիման վրա՝ այն բերվելով 0-ից 1 միջակայքի, որտեղ 0-ն նշանակում է եկամտային ինքնաբավության բացակայություն, իսկ 1-ը՝ լիարժեք ֆինանսական անկախություն: Այն դեպքերում, երբ երիտասարդի եկամուտը գերազանցել է հաշվարկված ծախսերը, ցուցիչը սահմանափակվել է առավելագույնը՝ 1 արժեքով՝ ապահովելու համար տվյալների համադրելիությունը: Հաշվարկման հիմքում ընկած են երիտասարդի եկամուտը, ընտանիքի ընդհանուր ծախսերը և ընտանիքի անդամների թիվը, ինչը հնարավորություն է տալիս ծախսերը վերածելու մեկ անձի հաշվով ցուցանիշի և ապահովելու համադրելի գնահատում տարբեր կենսապայմաններում գտնվող երիտասարդների համար: Վերլուծությունը ցույց է տվել, որ օգտագործված փոփոխականները տրամաբանականորեն փոխկապակցված են և միասին ձևավորում են ֆինանսական անկախության հուսալի ցուցիչ: Որպես լրացուցիչ հսկիչ չափում օգտագործվել է նաև երիտասարդների՝ սեփական ծախսերը ինքնուրույն հոգալու սուբյեկտիվ գնահատականը: Ֆինանսական անկախության մակարդակները մեկնաբանվել են հետևյալ կերպ.

- 0.00–0.25 - ցածր ֆինանսական անկախություն
- 0.26–0.50 - ցածր միջին ֆինանսական անկախություն
- 0.51–0.75 - բարձր միջին ֆինանսական անկախություն
- 0.76–1.00 - բարձր ֆինանսական անկախություն:

*Տնտեսական անկախություն*

Տնտեսական անկախությունը գնահատվել է որպես երիտասարդի տնտեսական ակտիվության և զբաղվածության կայունության համակցված ցուցիչ: Այն ցույց է տալիս, թե արդյոք երիտասարդը ներգրավված է աշխատաշուկայում և որքանով է նրա զբաղվածությունը կայուն: Ցուցիչի կառուցման համար օգտագործվել են մի շարք բաղադրիչներ, որոնք բնութագրում են աշխատանքի առկայությունը, աշխատանքի բնույթը և գործազրկության տևողությունը: Տվյալները բերվել են միասնական՝ 0-ից 1 միջակայքի սանդղակի, որտեղ բարձր արժեքները արտահայտում են տնտեսական ավելի բարձր անկախություն: Քանի որ աշխատանքի բնույթը և գործազրկության տևողությունը կիրառելի են տարբեր խմբերի

համար, կիրառվել է միասնական մոտեցում. աշխատողների դեպքում հաշվի է առնվել աշխատանքի կայունությունը, իսկ չաշխատողների դեպքում՝ գործազրկության տևողությունը: Սա հնարավորություն է տվել ապահովելու համադրելի գնահատում ամբողջ ընտրանքի համար: Վերլուծությունը ցույց է տվել, որ ընտրված փոփոխականները բավարար չափով համահունչ են միմյանց և կարող են դիտարկվել մեկ միասնական ցուցիչի շրջանակում: Արդյունքում հաշվարկվել է տնտեսական անկախության ցուցիչը, որի արժեքները գտնվում են 0-ից 1 միջակայքում: Ցուցիչը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

0.00–0.25 - ցածր տնտեսական անկախություն,

0.26–0.50 - ցածր միջին տնտեսական անկախություն,

0.51–0.75 - բարձր միջին տնտեսական անկախություն,

0.76–1.00 - բարձր տնտեսական անկախություն:

*Մտավոր անկախություն (mental self-direction)*

Մտավոր անկախությունը բնութագրվում է մարդկային այն արժեքներով, որոնք բնութագրում են անձի ուղղվածությունը՝ գործել՝ հիմնվելով իր սեփական ուժերի վրա, ստեղծագործ նորարարական լուծումների վրա: Այդ արժեքներից են, համաձայն Շ. Շվարցի[342], *ինքնակառավարման* արժեքը, *խթանման* արժեքը, *նվաճումների* արժեքը, *իշխանության* արժեքը, և հակադիր արժեքները՝ *ավանդապաշտություն, համապատասխանության* և *անվտանգություն:*

Այդ արժեքների մեկնաբանությունները, ըստ Շվարցի, հետևյալն են.

- Ինքնակառավարում:
    1. Կարևորում է նոր գաղափարների ստեղծումը և ընդհանուր առմամբ ստեղծագործությունը, կարևորում է գտնել խնդիրների լուծումների իր ինքնատիպ ճանապարհը:
    2. Կարևորում է անձամբ ընդունել որոշումներ իր գործունեության վերաբերյալ, պատասխանատվություն կրել այդ գործողություն-

[342] Տե՛ս Schwartz S.H. Basic human values: Their content and structure across countries. In A. Tamayo & J.B. Porto (Eds.), Values and behavior in organizations. Petrópolis, Brazil: Vozes, 2005, 21-55 էջ:

ների համար, կարևորում է պլանավորել իր ազատությունը և ընտրել իր գործողությունները:

- Խթանում:
  1. Սիրում է անակնկալներ և որոնում է բազմաթիվ նորամուծություններ իր կյանքում:
  2. Որոնում է արկածներ և հակված է ռիսկային վարքի, ցանկանում է ունենալ հետաքրքիր կյանք:
- Նվաճում:
  1. Կարևորում է կարողությունները ցուցադրելը, ցանկություն ունի վայելելու իր նկատմամբ մարդկանց հիացմունքը:
  2. Կարևորում է հաջողակ լինելը, դուր է գալիս ուրիշների վրա տպավորություն թողնելը:
- Իշխանություն:
  1. Կարևորում է հարստությունը, ցանկանում է ունենալ մեծ գումարներ և թանկարժեք իրեր:
  2. Կարևորում է լինել առաջնորդ և ուղղորդել մարդկանց, ցանկանում է, որ մարդիկ կատարեն իր կարգադրությունները:
- Համապատասխանություն:
  1. Կարծում է, որ մարդիկ պետք է անեն այն, ինչ նրանց ասվում է, մարդիկ պետք է միշտ հետևեն կանոններին, անգամ եթե ոչ ոք չի տեսնում:
  2. Կարևորում է մշտական պատշաճ վարքը, խուսափում է այն վարքից, որը կարժանանա շրջապատի բացասական գնահատականի:
- Ավանդապահություն:
  1. Կարծում է, որ մարդիկ պետք է բավարարվեն նրանով, ինչ ունեն, ոչ ավելին:
  2. Աշխատում է անել այն, ինչ պահանջում է շրջապատը, կրոնը, ավանդույթը:
- Ապահովություն:
  1. Կարևորում է ապրել ապահով միջավայրում, խուսափում է այն ամենից, ինչը կարող է վտանգել իր անվտանգությունը:

2. Կարևորում է երկրի ներքին և արտաքին ապահովությունը, կողմնակից է առկա կարգերի պահպանմանը:

Երիտասարդների մտավոր անկախությանն առնչվող հարցերի համադրելիությունն ապահովելու նպատակով կիրառվել է Լայկերտի քառաստիճան սանդղակ, որի պատասխանները վերածվել են միասնական թվային գնահատականի: Ստացված արժեքները գծային ձևափոխման միջոցով բերվել են 0-ից 1 միջակայքի, որտեղ 0-ն արտահայտում է արժեքային կախվածություն, իսկ 1-ը՝ մտավոր անկախություն: Հուսալիության գնահատումը ցույց է տվել, որ սանդղակի բաղադրիչները բավարար չափով համահունչ են և միասին արտացոլում են նույն կառուցվածքը: Միաժամանակ, կառուցվածքային վերլուծությունը վկայում է, որ մտավոր անկախությունը միաչափ չէ, այլ ներառում է առնվազն երկու տարբեր ուղղություններ՝ կապված ինքնաիրացման և կոնֆորմիզմի հետ: Այս հիմքով ցուցիչը կառուցվել է որպես երկբևեռ մոդել, որտեղ մի կողմից արտացոլվում է ակտիվ ինքնաիրացումը և նախաձեռնողականությունը, իսկ մյուս կողմից՝ պահպանողական և կոնֆորմիստական կողմնորոշումները: Վերջնական ցուցիչը հաշվարկվել է այս երկու ուղղությունների հարաբերակցության հիման վրա և բերվել 0-ից 1 միջակայքի: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս մտավոր անկախությունը գնահատելու ոչ միայն որպես առանձին հատկանիշների գումար, այլև որպես արժեքային կողմնորոշումների համակցված արդյունք, ինչը ապահովում է ցուցիչի կառուցվածքային հստակությունն ու վավերականությունը: Ցուցիչի վերլուծությունը պարզեցնելու նպատակով այն դասակարգվել է չորս մակարդակների.

- 0.00–0.25 - ցածր մտավոր անկախություն (արտահայտված արժեքային կախվածություն, բարձր կոնֆորմիզմ)
- 0.26–0.50 - ցածր միջին մտավոր անկախություն (մասնակի ինքնավարություն, սակայն պահպանողական արժեքների զգալի ազդեցություն)
- 0.51–0.75 - բարձր միջին մտավոր անկախություն (ինքնավարության և ինքնաիրացման գերակշռություն, չափավոր արժեքային ինքնուրույնություն)

- 0.76–1.00 - բարձր մտավոր անկախություն (արտահայտված ինքնավարություն, նախաձեռնողականություն և արժեքային ինքնուրույնություն):

Այս դասակարգումը հնարավորություն է տալիս ոչ միայն գնահատելու մտավոր անկախության ընդհանուր մակարդակը, այլև տարբերակելու երիտասարդների արժեքային կողմնորոշումների ինտենսիվության աստիճանը:

*Առօրյա անկախություն (Living skills)*

Առօրյա անկախությունը գնահատվել է որպես երիտասարդի կարողություն՝ ինքնուրույն կազմակերպելու իր առօրյա կյանքը՝ ներառյալ ինքնասպասարկումը, կարևոր որոշումների կայացումը և սեփական ծախսերի կառավարումը: Ցուցիչի կառուցման համար օգտագործվել են մի շարք դատողություններ, որոնք արտացոլում են ինչպես ինքնագնահատված անկախությունը, այնպես էլ գործնական կարողությունները: Դրանք միավորվել են մեկ միասնական ցուցիչի մեջ և բերվել 0-ից 1 միջակայքի, որտեղ բարձր արժեքները արտահայտում են ավելի բարձր առօրյա ինքնուրույնություն: Վերլուծության համաձայն՝ ընտրված փոփոխականները փոխկապակցված են և միասին արտացոլում են նույն ընդհանուր կառուցվածքը՝ առօրյա ինքնուրույնությունը: Միաժամանակ, դրանք չեն կրկնօրինակում միմյանց, այլ լրացնում են՝ ապահովելով ցուցիչի բովանդակային ամբողջականությունը: Որպես լրացուցիչ հսկիչ չափում օգտագործվել է նաև երիտասարդների եկամտի աղբյուրների վերաբերյալ հարցը, ինչը հնարավորություն է տվել համադրելու առօրյա ինքնուրույնությունը և տնտեսական ինքնաբավությունը: Ցուցիչի արժեքները փոփոխվում են 0-ից 1 միջակայքում, որտեղ բարձր արժեքը վկայում է ավելի բարձր առօրյա անկախության մասին:

*Երիտասարդների անկախության համաթվի վերջնական հավաքական ցուցանիշը* հաշվարկվել է որպես 4 ենթացուցանիշների հանրագումարի թվաբանական միջին:

Հաշվարկման բանաձևը հետևյալն է.

$$YII = (Ind_f + Ind_e + Ind_m + Ind_l) / 4,$$

որտեղ՝

$Ind_f$ - ֆինանսական անկախության ենթացուցանիշ,
$Ind_e$ - տնտեսական անկախության ենթացուցանիշ,
$Ind_m$ - մտավոր անկախության ենթացուցանիշ,
$Ind_l$ – առօրյա անկախության ենթացուցանիշ:

*Քաղաքացիական ակտիվություն և մասնակցություն*

Երիտասարդների քաղաքացիական ակտիվության ցուցանիշը չի ներառվել անկախության համաթվի հաշվարկում, սակայն, որպես երիտասարդների կարևոր բնութագրական չափում, ներառված է վերլուծական շրջանակում: Քաղաքացիական ակտիվության ենթացուցանիշը գնահատվել է երիտասարդների քաղաքացիական ակտիվությանը վերաբերող փոփոխականների հիման վրա: Քաղաքացիական ակտիվությունը 14 առանձին փոփոխականների գումարային ինդեքս է, իսկ ցուցանիշի վերջնական սանդղակը գծային ձևափոխության օգնությամբ տեղափոխվել է [0; 1] միջակայք, որտեղ 0-ն նշանակում է քաղաքացիական պասիվություն, իսկ 1-ը՝ քաղաքացիական ակտիվության բարձրագույն մակարդակ: Քաղաքացիական ակտիվության ցուցիչը մասնավորապես հաշվարկվել է հետևյալ փոփոխականների ձևափոխման և հանրագումարի հիման վրա.

- Մասնակցե՞լ եք անցած ընտրություններին:
- Որևէ քաղաքական կուսակցության կամ քաղաքական երիտասարդական շարժման/ կազմակերպության անդամ հանդիսանո՞ւմ եք:
- Մինչ ընտրությունները ուսումնասիրո՞ւմ եք քաղաքական կուսակցությունների ծրագրերը:
- Հետաքրքրվա՞ծ եք երկրում և աշխարհում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններով / խնդիրներով:
- Վերջին մեկ տարվա ընթացքում տարածե՞լ եք թռուցիկներ, փակցրե՞լ քաղաքական պաստառներ կամ այլ կերպ մասնակցե՞լ եք քաղաքական քարոզարշավի՝ աջակցելով ինչ-որ կուսակցության, առաջնորդի կամ թեկնածուի:

- Վերջին մեկ տարվա ընթացքում մասնակցե՞լ եք քննարկումների քաղաքական գործիչների, տեղական կամ ազգային մարմինների ներկայացուցիչների կամ թեկնածուի հետ:
- Որքա՞ն հաճախ եք մասնակցել քաղաքացիական շարժումների:
- Որքա՞ն հաճախ եք մասնակցել բարեգործական միջոցառման:
- Որքա՞ն հաճախ եք մասնակցել հանրային քննարկման կամ հանդիպումների թաղամասում/կրթօջախում, աշխատանքի վայրում:
- Որքա՞ն հաճախ եք մասնակցել քաղաքային միջոցառումների:
- Որքա՞ն հաճախ եք մասնակցել բարեգործական դրամահավաքի:
- Որքա՞ն հաճախ եք մասնակցել ստորագրահավաքի:
- Որքա՞ն հաճախ եք մասնակցել կամավորական աշխատանքների:

Ներկայացված է երիտասարդների անկախության ցուցանիշի 2022 թ. և 2025 թ. հետազոտությունների համեմատական պատկերը (տե՛ս Գծապատկեր 32):

**Գծապատկեր 32. Երիտասարդների անկախության ցուցանիշները, 2022 թ., 2025 թ.**

*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, *2022թ., N=625, 2025թ., N=764, [0-1]*




Հայաստանյան երիտասարդների անկախության համաթիվը 0,58 է (ֆինանսական, տնտեսական, առօրյա և մտավոր անկախության համաթվերի միջինը), այն նվազել է՝ 2022 թ. համաթիվը 0,62 էր: Ընդ որում, բացի տնտեսականից, մյուս ենթացուցանիշներում առկա է նվազում.

մտավոր, ֆինանսական և առօրյա անկախության ենթացուցանիշները նվազել են 2022 թ. համեմատ:

2025 թ. արդյունքների հիման վրա յուրաքանչյուր ենթացուցանիշը ըստ անկախության մակարդակների ներկայացված է ստորև (տե՛ս Գծապատկեր 33):

**Գծապատկեր 33. ՀՀ երիտասարդների անկախության համաթիվը, 2025 թ.**
*Աղբյուր.* Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




*Ֆինանսական անկախություն*

Երիտասարդների ֆինանսական անկախության ենթացուցանիշը 0,43 է: Ֆինանսական անկախության վրա ազդեցություն ունեն բնակության վայրը, զբաղվածությունը, կրթական մակարդակը և տարիքը: Ֆինանսական անկախության ամենաբարձր ցուցանիշը բնորոշ է 30-35 տարեկան տղաներին՝ 0,60-0.62: Ֆինանսական անկախության ամենացածր ցուցանիշը հանդիպում է 18-22 տարեկան աղջիկների և նույն տարիքի գյուղաբնակ տղաների և աղջիկների շրջանում՝ 0.22 և 0.25:

Ֆինանսական անկախությունը բարձր է զբաղված երիտասարդների շրջանում՝ 0.51, իսկ աշխատանք չունեցող երիտասարդների շրջանում՝ 0.47 (տե՛ս Հավելված 2):

Հետաքրքիր է դիտարկել նաև երիտասարդների ֆինանսական անկախության սուբյեկտիվ գնահատականը: Ըստ սուբյեկտիվ գնահատականի՝ երիտասարդների ֆինանսական անկախության ենթացուցանիշը

0.55 է, ընդ որում, ամենաբարձր գնահատականը հանդիպում է երևանաբնակ և գյուղաբնակ 23-29 տարեկան տղաների, բոլոր տարիքային խմբի գյուղաբնակ աղջիկների շրջանում, իսկ ամենացածր ցուցանիշը քաղաքաբնակ 18-22 տարեկան քաղաքաբնակ տղաների շրջանում՝ 0.45 (տե՛ս Հավելված 2):

Դիտարկելով ֆինանսական անկախության և ֆինանսական անկախության սուբյեկտիվ գնահատականների առկա տարբերությունը՝ հետաքրքիր է արձանագրել, որ ամենաշատը այդ ցուցանիշները տարբերվում են 18-22 տարեկան գյուղաբնակ տղաների դեպքում՝ ֆինանսական անկախությունը 0.25 է, իսկ ֆինանսական անկախության սուբյեկտիվ գնահատականը՝ 0.55: Հետաքրքրական է, որ հակառակ իմաստով՝ ավելի քիչ տարբերվող ցուցանիշներ ստացվել են 30-35 տարեկան երևանաբնակ տղաների դեպքում՝ ֆինանսական անկախությունը 0.60 է, իսկ ֆինանսական անկախության սուբյեկտիվ գնահատականը՝ 0.58:

*Տնտեսական անկախություն*

Տնտեսական անկախության ենթացուցանիշը 0.62 է, ընդ որում, հստակ դրսևորվել է տարբերությունը ըստ տարիքի. ցուցանիշը ավելի բարձր է 23-ից բարձր տարիքային խմբում (տե՛ս Հավելված 2):

Տնտեսական անկախության ցուցանիշը երիտասարդների կրթական մակարդակին զուգընթաց աճում է. նախնական և միջին մասնագիտական կրթությամբ երիտասարդների շրջանում ցուցանիշը 0.62 է, բակալավրական կրթությամբ՝ 0.82 և մագիստրոսական կրթությամբ՝ 0.85: Իսկ ավագ դպրոցն ավարտած երիտասարդների շրջանում 0.57 է, ամենացածրը ուսանողների տնտեսական անկախությունն է՝ 0,32:

Տնտեսական անկախությունը նաև տարբեր է ըստ ամուսնական կարգավիճակի. ամուսնացած երիտասարդների դեպքում 0.72 է, իսկ չամուսնացած երիտասարդների դեպքում՝ 0.55:

Ամենաբարձր տնտեսական անկախությունը երևանաբնակ 23-29, 30-35 տարեկան աղջիկների և տղաների շրջանում է՝ 0.81 և 0.86: Իսկ ամենացածր տնտեսական անկախությունն ունեն 18-22 տարեկան գյուղաբնակ և քաղաքաբնակ աղջիկներն ու տղաները՝ 0.28 և 0.25:

*Մտավոր անկախություն*

Մտավոր անկախությունը ամենաբարձր ենթացուցանիշն է՝ 0.64: Հետաքրքրական է, որ այս ենթացուցանիշը ամենահամասեռ բաշխված ցուցանիշն է. անկախ սեռից, տարիքից, բնակության վայրից և մյուս փոփոխականներից, ենթացուցանիշը գրեթե նույնն է բոլոր երիտասարդների շրջանում: Առավել բարձր մտավոր անկախություն դրսևորվել է 18-22 տարեկան քաղաքաբնակ աղջիկների, իսկ առավել ցածր՝ 23-29 տարեկան գյուղաբնակ աղջիկների և 30-35 տարեկան երևանաբնակ տղաների շրջանում՝ 0.59 (տե՛ս Հավելված 2):

*Առօրյա անկախություն*

Երիտասարդների շրջանում այս ենթացուցանիշը ևս բարձր է՝ համեմատած մյուս ենթացուցանիշների հետ՝ 0.67, բայց այս ենթացուցանիշը կրում է մի շարք փոփոխականների հստակ ազդեցությունը՝ սեռ, զբաղվածություն, կրթություն և բնակության վայր:

Ըստ կրթական մակարդակի ցուցանիշը ևս տարբերվում է՝ միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդների շրջանում այն 0.64 է, նախնական և միջին մասնագիտական կրթություն ունեցողների շրջանում՝ 0.63, բակալավրիատական կրթությամբ՝ 0.70 և մագիստրոսական կրթությամբ երիտասարդների շրջանում՝ 0.80, իսկ բուհի ուսանողների շրջանում՝ 0,54:

Առօրյա անկախության ամենաբարձր ցուցանիշը բնորոշ է 30-35 տարեկան գյուղաբնակ և քաղաքաբնակ տղաներին՝ 0.80, իսկ ամենացածր ցուցանիշն է 18-22 տարեկան քաղաքաբնակ և գյուղաբնակ աղջիկների շրջանում է՝ 0.52 (տե՛ս Հավելված 2):

*Քաղաքացիական ակտիվություն և մասնակցություն*

Հետաքրքրական է, որ քաղաքացիական ակտիվության և մասնակցության ենթացուցանիշը ամենացածրն է մյուս ենթացուցանիշների համեմատ՝ 0.26: Այս ենթացուցանիշը կրում է մի շարք փոփոխականների ազդեցությունը՝ սեռ, տարիք, կրթություն և բնակության վայր:

Աղջիկների շրջանում ենթացուցանիշը 0.29 է, իսկ տղաների դեպքում՝ 0.25: Ըստ տարիքի ևս փոխվում է ցուցանիշը. 18-22 տարեկան

երիտասարդների շրջանում այն 0.31 է, 23-29 տարեկանների դեպքում՝ 0.25, իսկ 30-35 տարեկան երիտասարդների շրջանում ավելի բարձր՝ 0.26 (տե՛ս Հավելված 2)։

Ըստ կրթական մակարդակի ենթացուցանիշը ևս տարբերվում է. միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդների շրջանում այն 0.18 է, նախնական և միջին մասնագիտական կրթություն ունեցողների դեպքում՝ 0.21, բակալավրական կրթությամբ երիտասարդների շրջանում՝ 0.27 և մագիստրոսական կրթությամբ՝ 0.39, իսկ բուհերի ուսանողների ենթացուցանիշը ավելի բարձր է՝ 0,40։

Քաղաքաբնակ երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը 0.28 է, գյուղաբնակներինը՝ 0.27, երևանաբնակ երիտասարդներինը՝ ավելի ցածր՝ 0.25։

Քաղաքացիական ակտիվության ամենաբարձր ենթացուցանիշը բնորոշ է 18-22 տարեկան քաղաքաբնակ, գյուղաբնակ աղջիկներին և քաղաքաբնակ տղաներին՝ 0.34, 0,37, 0,35 իսկ ամենացածր ենթացուցանիշը՝ 30-35 տարեկան երևանաբնակ տղաներին՝ 0.19։

Այսպիսով, հայաստանյան երիտասարդները դրսևորում են առավել բարձր մտավոր, առօրյա անկախություն, տնտեսական և ֆինանսական անկախության համեմատ, ինչը կարող է հետևանք լինել երիտասարդների ներուժի ոչ լիարժեք իրացման և մարտահրավեր դառնալ ակտիվ սոցիալական հարմարման համար։

*Հայաստանի երիտասարդների անկախացման ոչ գծային ուղիները*

Հետպատերազմյան իրավիճակին արձագանքելու՝ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաների վրա ազդող գործոններն են՝ անկախությունը, ակտիվությունը, սուբյեկտությունը՝ նախաձեռնողականություն, նպատակադրում, ներկա իրավիճակի ընդունումը, ներկա իրավիճակի փոփոխելու ցանկությունը, ապագայի պատկերացումը[343]։ Երիտասարդների անկախությունը (կախվածությունը) կարևոր գործոն է, որը ազդում է ճգնաժամային իրավիճակներում հարմարման պրակտիկանե-

[343] Տե՛ս Galstyan, 2024։

րի վրա: Երիտասարդների անկախ լինելը կամ չլինելը ունի նշանակալի ազդեցություն հետևյալ պրակտիկաների վրա՝

- ճգնաժամային, բարդ իրավիճակներում խնդիրներին դիմակայելու համար նոր և հետաքրքիր լուծումներ գտնել,
- հետպատերազմյան իրավիճակն ընդունել այնպիսին, ինչպիսին կա,
- պատերազմի ընթացքում և պատերազմից հետո հետևել իրադարձություններին և որևէ մասնակցություն չունենալ,
- պլանավորել կյանքը առաջիկա մի քանի տարիների համար և շարժվել այդ ուղղությամբ անգամ բարդ իրավիճակներում,
- փորձել շարժվել սեփական և մեծամասնության կարծիքից տարբերվող ճանապարհով:

2022 թ. իրականացված հետազոտության արդյունքներով առանձնացվել էին երիտասարդների հինգ տիպաբանական խմբեր, որոնք արտացոլում էին նրանց հարմարման տարբեր ռազմավարությունները.

- «նորարար առաջնորդներ»,
- «կայունության ջատագովներ»,
- «համակերպվողներ, ռիտուալիստներ»[344],
- «հուսահատներ, մոլորվածներ»,
- «ինքնահաստատվողներ»[345]:

*«Նորարար առաջնորդներ»՝ խմբում է* երիտասարդների 18.2%-ը: Հիմնական բնութագրիչներն են՝

- մտավոր և առօրյա անկախության ամենաբարձր մակարդակ, բարձր քաղաքացիական ակտիվություն: Սա հատկապես դրսևորվում է ընտրություններին մասնակցությամբ և քաղաքա-

[344] Ռ. Մերտոնի հարմարման տեսակների առանձնացումը՝ կոնֆորմիզմ, նորարարություն, ռիտուալիզմ, փախուստ, բողոք, ազդեցություն թողել են այս տիպաբանության անվանումների մշակման գործընթացում, սակայն այստեղ համակերպվողներ և ռիտուալիստներ խմբի առանձնացումը չի ենթադրում մերտոնյան տիպաբանության երկու տարբեր տեսակների հետ այդ խմբի նույնացումը:

[345] Տե՛ս Galstyan M. Conceptualizing and Measuring Economic and Social Aspects of Youth Independence in Armenia //Journal of Sociology: Bulletin of Yerevan University. – 2024. – T. 15. – № 1 (39), էջ 28-42:

ցիական ակտիվությամբ, կամավորական աշխատանքներում ներգրավվածությամբ և առաջնորդությամբ,

- համայնքի բարելավման հարցում համեմատաբար ավելի շատ նախաձեռնողականության դրսևորում,
- 2020 թ. պատերազմին ամենամեծ մասնակցության մակարդակ՝ մյուս տիպերի համեմատ,
- սեփական բիզնես հիմնելը՝ որպես ապագայի պլանավորում:

Այս խմբում ընդգրկված երիտասարդները մեծ նշանակություն են տալիս իրենց անկախությանը և որևէ մեկից կախված չլինելուն: Նրանք նորարար մտածողներ են, ում համար կարևոր է, որ մարդիկ հետևեն իրենց հրահանգներին: Այս երիտասարդները մշտապես ձգտում են ավելիին և չեն բավարարվում ստատուս քվոյով: Նրանք բաց են մշտական փոփոխությունների ու նորարարությունների համար և հակված են առաջնորդելու և պնդելու իրենց համոզմունքները:

«Նորարար առաջնորդներ» խմբի երիտասարդների շարքում ավելի շատ են 23-29 տարիքային խմբի մայրաքաղաքում բնակվող երիտասարդները:

*«Կայունության ջատագովներ»*՝ 22.1%: Հիմնական բնութագրիչներն են՝

- տնտեսապես անկախություն: Այս խմբի երիտասարդները ստացել են մասնագիտական կրթություն, ունեն աշխատանքային փորձ, կայացած են իրենց ոլորտում: Պատերազմի ժամանակ կամավորությունը թիկունքում ավելի բարձր էր,
- պատերազմի հետևանքների հաղթահարման հարցում այս խմբի երիտասարդների սեփական ուժերին վստահությունը և պատրաստակամությունը ամենաբարձրն է,
- առաջիկայում մշտական բնակության նպատակով ամենաշատը երկրից պլանավորում են մեկնել այս խմբի երիտասարդները՝ ձգտելով կայունության:

Կայունության ջատագով երիտասարդները կայունության, խաղի կանոնների կողմնակիցներ են, հնարավոր է ցանկանան միջավայրը փոխել, բայց կայունության են ձգտում, նրանք առաջնահերթ են համարում իրենց ծնողների, մեծահասակների և հասարակության մեջ հարգանք

վայելող առաջնորդների կարծիքը, ինչպես նաև իրենց վարքագծով փորձում են տպավորություն թողնել և գնահատանքի արժանանալ հասարակության կողմից: Հասնելով կայունության և որոշակի ձեռքբերումների՝ նրանք փորձում են պահպանել ստատուս քվոն:

«Կայունության ջատագովների» հիմնական մասը 30-35 տարիքային խմբից է:

*«Համակերպվողներ, ռիփուալիստներ»*՝ 21.6%: Հիմնական բնութագրիչներն են՝

- համակերպվողների շրջանում չկա վառ արտահայտված անկախության որևէ դրսևորում, ֆինանսապես կախյալ խումբ է, ցածր է սեփական կարիքները հոգալու նրանց կարողության ինքնագնահատականը,
- պատերազմի հետևանքների հաղթահարման համար պատրաստակամությունը բարձր է,
- այս խմբի երիտասարդները գոհ չեն անձնական եկամուտից, սակայն նախընտրում են պասիվ դիրքորոշում ունենալ և էական քայլեր չնախաձեռնել իրավիճակը փոխելու ուղղությամբ,
- բնակարան ձեռք բերելը, ընտանիք կազմելը դիտարկում են որպես իրերի բնականոն ընթացք, առանց որևէ նպատակադրման:

«Համակերպվողներ» խմբի երիտասարդները ապագայի որևէ հստակ նպատակադրում չունեն, չեն ձգտում որևէ ձեռքբերման, անտարբեր են, առաջ չեն նայում, ընդունում են միջավայրային փոփոխությունները, չեն պլանավորում, կարելի է ասել՝ գտնվում են ճգնաժամի մեջ: «Համակերպվողների» հիմնական մասը 18-22 տարիքային խմբի գյուղաբնակ երիտասարդներն են:

*«Հուսահատներ, մոլորվածներ»*՝ 26.4%: Հիմնական բնութագրիչներն են՝

- բարձր մտավոր անկախություն, ֆինանսապես կախյալ են,
- ունեն մասնագիտական կրթություն, ամուսնացած չեն,
- նվազեցրել են իրենց նպատակները, ձգտումները, ցանկանում է փոխել ոլորտը,
- կարծում են, որ չեն կարող ոչինչ փոխել Հայաստանի ներկայիս իրավիճակում,

- պատերազմից հետո ամենաշատը այս խումբն է սահմանափակել իր շփումները և կապերը,
- նրանք ևս առաջիկայում մշտական բնակության նպատակով պլանավորում են մեկնել երկրից:

Այս խմբի երիտասարդներին բնորոշ են սթրեսայնության բարձր ցուցանիշները, հոգեկան առողջության խնդիրները, նրանք ունեն ֆրուստրացիա, վախեր, չեն հասկանում, թե ինչ է կատարվում, չեն հասկանում՝ ինչպես վարվեն և որ ուղղությամբ շարժվեն: Արդյունքում այս խմբի երիտասարդների հարմարման պրակտիկաները փոփոխական են և տարբերային: Նրանք պոտենցիալ միգրանտներ են:

Այս խմբի երիտասարդների հիմնական մասը 18-22 տարեկան քաղաքաբնակներն են:

*«Ինքնահաստատվողներ»*՝ 11.7%: Հիմնական բնութագրիչներն են՝

- ֆինանսական անկախություն և քաղաքացիական ակտիվություն, բարձր տնտեսական անկախություն: Կամավորական աշխատանքներում այս խումբը ակտիվ է, ինչը նրանց համար հարթակ է, որտեղ կարող են իրենց փորձել, ինքնադրսևորվել և գտնել,
- պատերազմի հետևանքների հաղթահարման պատրաստակամությունը ամենացածրը արտահայտված է այս խմբում,
- ընտանիք կազմելու նպատակադրում՝ որպես իրենց գտնելու, ինքնադրսևորման, ինքնաիրացման անբաժանելի մաս,
- ամենաշատը այս խումբն է ցանկանում մեկնել երկրից աշխատելու և ուսանելու նպատակով,
- ամենաշատը այս խումբն է ներգրավված կամ անդամ որևէ կազմակերպությունում:

Ինքնահաստատվող խմբի երիտասարդները ունեն հստակ նպատակներ, ձգտումներ, բայց չգիտեն ինչպես հասնել, փորձում են տարբեր եղանակներ, թեև հակված են լոկալ խնդիրների լուծումներ գտնելու, ինչը նաև պայմանավորված է հսկողության արտաքին լոկուսով: Այս խմբի երիտասարդներին բնորոշ է բարեկեցիկ կյանքով ապրելու և ավելիին ձգտելու կարևորությունը, նրանք պատրաստ են փոփոխությունների՝ ձգտելով հաջողության և ճանաչման: Չնայած միգրացիոն միտումներին՝ անձնական եկամուտը բավարարում է իրենց, սակայն ձգտում են ավե-

լիին: Նրանք հիմնականում մայրաքաղաքաբնակների 23-29 տարիքային խումբն են ներկայացնում: Ընդ որում, գենդերային հստակ տարբերություններ առկա չեն վերոնշյալ խմբերում, սեռը նշանակալի գործոն չէ. նշանակալի գործոն են բնակավայրը, տարիքը, կրթական մակարդակը և անկախությունը:

Հետպատերազմյան Հայաստանի սոցիալական միջավայրում երիտասարդների վարքագիծը և հարմարման պրակտիկաները շարունակում են ձևավորվել մի քանի հիմնարար գործոնների փոխազդեցության ներքո: Առանցքային են երիտասարդների անկախության տարբեր չափումները, նախաձեռնողականության մակարդակը, ներկա իրավիճակի ընդունման կամ մերժման ձևերը, իրականությունը փոխելու ցանկության և կարողության ընկալումը (վերահսկողության լոկուսը) և ապագայի պատկերացման հստակությունը: Այս գործոնների համադրությունը մեծապես պայմանավորում է, թե երիտասարդները ճգնաժամային և անկայուն պայմաններում ինչպիսի ռազմավարություններ են ընտրում՝ ակտիվ ներգրավում, նպատակադրում և պլանավորում, նոր լուծումների որոնում, թե հակառակը՝ պասիվացում, նահանջ, ռիտուալիստական վարքագիծ կամ «փախուստ» տարբեր ձևերով: Եթե 2022 թ. կարելի է առանձնացնել երիտասարդների հինգ խումբ՝ «նորարար առաջնորդներ», «կայունության ջատագովներ», «համակերպվողներ, ռիտուալիստներ», «հուսահատներ, մոլորվածներ» և «ինքնահաստատվողներ», ապա 2025 թ. տվյալների հիման վրա հնարավոր եղավ առանձնացնել երիտասարդների չորս խումբ՝ որպես տվյալների ստացված կառուցվածքում առավել կայուն, հավասարակշռված և մեկնաբանելի կլաստերներ: Սա ցույց է տալիս, որ 2025 թվականի կառուցվածքում նախկինում առանձին դիտվող կլաստերներից մեկն այլևս չի առանձնանում որպես ինքնուրույն բևեռ, այլ միաձուլվում է ավելի լայն խմբերի մեջ: Այս փոփոխությունը վկայում է այն մասին, որ ժամանակի ընթացքում երիտասարդության ներսում առկա տարբերությունները որոշ չափով նվազել են, և նախկինում առանձին դիտվող խմբերից մեկը կորցրել է իր ինքնուրույնությունը: Սոցիոլոգիական տեսանկյունից սա կարելի է հասկանալ որպես կառուցվածքային միավորում և հարմարման ռազմավարությունների կոնվերգենցիա, երբ հետպատերազմյան տարիների ընթացքում երիտասարդու-

թյան որոշ հատվածների ռազմավարությունները մոտեցել են իրար, կամ նախկին տարբերակիչ գծերը թուլացել են սոցիալական-տնտեսական և ինստիտուցիոնալ պայմանների փոփոխության հետևանքով: 2025 թ. տիպաբանության կառուցման համար որպես կլաստերացման հիմք ընտրվել են երիտասարդների անկախության չորս ենթացուցանիշները՝ ֆինանսական, տնտեսական, մտավոր և առօրյա անկախությունը, ինչպես նաև հարմարման ենթաինդեքսը: Անկախության ենթաինդեքսների տրամաբանությունը համահունչ է 2022-ին կիրառված մոտեցմանը: Ֆինանսական անկախությունը վերաբերում է ինքնուրույն եկամուտ ունենալու, ֆինանսական ռեսուրսների կառավարելիության, սեփական կարիքները առանց արտաքին կախվածության հոգալու կարողության ու վստահության շերտին: Տնտեսական անկախությունը արտացոլում է տնտեսական կայունության, աշխատանքի և մասնագիտական կայացման, նյութական հիմքերի ամրության և տնտեսական որոշումների ինքնուրույնության չափումը: Մտավոր անկախությունը կապված է ինքնուրույն մտածելու, դիրքորոշում ձևավորելու, տեղեկատվություն վերլուծելու, ընտրություն կատարելու և արտաքին ազդեցություններից անկախ լինելու դրսևորումների հետ: Առօրյա անկախությունը վերաբերում է կենցաղային ինքնակազմակերպմանը, առօրյա խնդիրների ինքնուրույն լուծմանը, գործառնական ինքնավարությանը և անձնական կյանքը «կառավարելու» կարողությանը: Հարմարման ենթացուցանիշը հանդես է գալիս որպես համադրական ցուցիչ, որն արտացոլում է երիտասարդների ընդհանուր կարողությունը՝ արձագանքելու փոփոխվող, սթրեսային կամ անկայուն պայմաններին և պահպանելու գործունակությունը: Վերլուծական իմաստով այն ամփոփում են այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝ իրավիճակը ընդունելու և վերաիմաստավորելու կարողությունը, նոր պայմաններին հարմարվելու պատրաստակամությունը, սեփական ռեսուրսները մոբիլիզացնելու հմտությունը, խնդիրների լուծման ուղիներ գտնելու կողմնորոշումը, ապագայի նվազագույն պատկերացումը և ընդհանուր դիմադրողականության մակարդակը: Այսինքն՝ հարմարման ենթացուցանիշը դիտարկվում է որպես երիտասարդի «գործելու կարողության» ընդհանուր չափում՝ համակարգային անորոշության պայմաններում, ոչ թե պարզապես տրամադրության կամ սուբյեկտիվ բավարար-

վածության ցուցիչ: Կլաստերացման արդյունքների կայունությունն ու տարբերակիչ ուժը գնահատելու համար կիրառվել է վարիացիաների վերլուծություն (տե՛ս Հավելված 2): Միջկլաստերային և ներկլաստերային վարիացիաների հարաբերակցությունը (F վիճակագրությունը) ցույց է տալիս՝ որքանով են ձևավորված խմբերը տարբեր միմյանցից ըստ կիրառված ցուցանիշների: 2025 թ. իրականացված վերլուծության արդյունքների համաձայն՝ բոլոր ցուցանիշների դեպքում Sig=0.000 է, ինչը վկայում է, որ խմբերի միջև տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են: Սա նշանակում է, որ առանձնացված խմբերը պայմանական կամ վերլուծական արհեստական բաժանում չեն, այլ արտացոլում են երիտասարդության ներսում առկա իրական կառուցվածքային տարբերությունները: Միաժամանակ, ուշադրության արժանի է, որ ամենաբարձր տարբերակիչ ուժն ունի ֆինանսական անկախությունը (F=350.729), ինչպես նաև բարձր են հարմարման ենթացուցանիշի (F=243.142) և առօրյա անկախության (F=207.908) արժեքները: Սա փաստում է, որ 2025 թ. տիպաբանական կառուցվածքի հիմնական առանցքները ձևավորվում են ֆինանսական ռեսուրսների ինքնուրույնության, առօրյա գործառնական ինքնավարության և ընդհանուր հարմարվողականության շուրջ: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ բազմաճգնաժամային պայմաններում երիտասարդների տարբերակման հիմքը աստիճանաբար դուրս է գալիս միայն արժեքային և վերաբերմունքային դաշտից և ավելի հստակ տեղափոխվում է գործնական և ռեսուրսային հարթություն: Այլ կերպ ասած, եթե նախկինում երիտասարդների միջև տարբերությունները ավելի շատ պայմանավորված էին նրանց արժեքային կողմնորոշումներով, աշխարհայացքով և վերաբերմունքով, ապա բազմաճգնաժամային միջավայրում ավելի որոշիչ են դառնում նրանց ունեցած ռեսուրսները և գործելու իրական կարողությունները: Այս պայմաններում երիտասարդների տարբեր խմբերը միմյանցից առանձնանում են ոչ միայն այն բանի հիման վրա, թե ինչպես են նրանք ընկալում իրականությունը, այլև առավելապես այն բանի, թե ինչ հնարավորություններ ունեն այդ իրականության մեջ գործելու համար: Ֆինանսական ինքնուրույնությունը, առօրյա ինքնակազմակերպման կարողությունը և փոփոխվող պայմաններին հարմարվելու ունակությունը դառնում են այն

հիմնական գործոնները, որոնք տարբերակում են երիտասարդներին և ձևավորում նրանց հարմարման ռազմավարությունները: Սոցիալական հարմարումը սոցիալական համակարգի (անհատ, խումբ, ինստիտուտ, հասարակություն) ներքին և արտաքին փոփոխություններին արձագանքումն է, այդ փոփոխությունների յուրացումն է, ընտելացումն է համակարգի, այնպես էլ համակարգի կողմից միջավայրի փոփոխությունների, սոցիալական պրակտիկաների, արժեքների, ինչպես նաև գործառույթների և կառուցվածքի փոփոխության ճանապարհով[346]:

Այսպիսով, արժեքային տարբերությունները շարունակում են կարևոր մնալ, սակայն դրանք այլևս հիմնական տարբերակիչ առանցք չեն. ավելի կարևոր են դառնում այն գործնական պայմանները, որոնք սահմանում են երիտասարդների վարքագծի իրական սահմաններն ու հնարավորությունները:

2025 թ. կլաստերային վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ չորս խմբերը՝

- «նորարար առաջնորդներ»,
- «կայունության ջատագովներ»,
- «համակերպվողներ, ռիտուալիստներ» և
- «հուսահատներ, մոլորվածներ»:

[346] Տե՛ս Корел Л.В. Социология адаптации: вопросы теории, методологии и методики, Новосибирск, 2005, էջ 39:

**Գծապատկեր 34. ՀՀ երիտասարդների տիպաբանությունը, 2022 և 2025 թթ.**
*Աղբյուր.* Երիտասարդների շրջանում հարցումներ




Հետազոտական արդյունքների համեմատությունը ի հայտ է բերում մի քանի կարևոր կառուցվածքային փոփոխություն:

- Նկատվում է «նորարար առաջնորդների» աճ՝ շուրջ 6 տոկոսով: Սա վկայում է, որ գործնական ինքնավարության և նախաձեռնողականության տիպը ընդլայնվել է:
- Զգալի է նաև «համակերպվողներ, ռիտուալիստներ» խմբի աճը մոտ 4 տոկոսով: Սակայն այս աճը պետք է մեկնաբանել ոչ թե որպես պասիվության աճ, այլ որպես կառուցվածքային վերաիմաստավորում, քանի որ 2025 թվականին այս խումբը անկախության ցուցանիշներով բավական բարձր ներկայացվածություն ունի:
- Աննշան է փոխվել «կայունության ջատագովների» մասնաբաժինը: Սա նշանակում է, որ սոցիալական կայունության պահանջը շարունակում է մնալ երիտասարդության համեմատաբար հաստատուն շերտ:
- Երիտասարդների մասնաբաժինը «հուսահատներ, մոլորվածներ» խմբում պահպանել է բարձր մակարդակ՝ նույնիսկ փոքր աճով: Սա փաստում է, որ սոցիալական խոցելիության և ռեսուրսային սահմանափակման շերտը շարունակում է մնալ կառուցվածքային կարևոր հատված:

- Ամենաէական փոփոխությունը վերաբերում է «ինքնահաստատվողներ» խմբի բացակայությանը 2025 թվականին: Այս տիպը այլևս չի առանձնանում որպես ինքնուրույն կառուցվածքային բևեռ: Դրա հատկանիշները բաշխվել են հիմնականում երկու ուղղությամբ՝ մի մասն ինտեգրվել է «նորարար առաջնորդների», մյուս մասը՝ «համակերպվողներ, ռիտուալիստներ» խմբին:

Ներկայացված տիպաբանությունը ցույց է տալիս, որ 2025 թ. երիտասարդների տարբերակման կառուցվածքը դարձել է ավելի համախմբված, քանի որ 2022 թ. առանձնացված «ինքնահաստատվողների» խումբը տարրալուծվել է, և նրան բնորոշ միջանկյալ ռազմավարությունները միաձուլվել են այլ, ավելի կայուն խմբերի մեջ: Սա փաստում է, որ բազմաճգնաժամային միջավայրում երիտասարդների տարբերակման հիմնական առանցքները տեղափոխվում են դեպի ավելի հստակ գործնական և ռեսուրսային հիմքեր: Եթե նախկինում որոշ խմբեր ձևավորվում էին արժեքային ինքնաիրացման և որոնման շուրջը, ապա 2025 թ. կառուցվածքում առավել որոշիչ են դառնում ֆինանսական ինքնուրույնությունը, առօրյա գործառական կարողությունները և հարմարվողականությունը:

*«Նորարար առաջնորդներ» խմբի կառուցվածքային բնութագիրը:* Այս խմբում ընդհանուր անկախության համաթիվը 0.67 է: Սա վկայում է միջինից բարձր համադրված ինքնավարության մասին, թեև այն զիջում է «համակերպվողներ, ռիտուալիստներ» խմբի ցուցանիշին: Խմբի ներսում տնտեսական և առօրյա անկախության միջինները հավասարապես բարձր են (0.77 և 0.77), ինչը վկայում է կայուն մասնագիտական դիրքավորման, աշխատանքի առկայության և առօրյա կյանքի կազմակերպման զարգացած հմտությունների մասին: Ֆինանսական անկախությունը նույնպես միջինից բարձր է (0.62), այսինքն՝ խմբի ներկայացուցիչները հիմնականում ունակ են սեփական եկամուտ ձևավորելու և ֆինանսական որոշումներ կայացնելու: Միևնույն ժամանակ մտավոր անկախության միջինը 0.52 է, ինչը միջինից բարձր է, քաղաքացիական ակտիվության ցուցանիշը 0.21 է, որը համեմատաբար ցածր է մյուս խմբերի համեմատ: Այս համադրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2025 թվականին «նորարար առաջնորդությունը» առավելապես հիմնված է գործնա-

կան, նյութական և կազմակերպչական ինքնուրույնության, այլ ոչ գաղափարական կամ բարձր հանրային մասնակցության վրա: Եթե 2022 թ. առաջնորդության բնութագրումը առավել ընդգծում էր մտավոր անկախությունը և արժեքային ինքնուրույնությունը, ապա 2025 թվականին այն ձեռք է բերում ավելի պրագմատիկ բնույթ: Այստեղ առաջնորդությունը արտահայտվում է կյանքի կազմակերպման, ռեսուրսների կառավարման և նախաձեռնողական գործողությունների միջոցով: Այս խումբը ներկայացնում է գործնականորեն ինքնուրույն և նախաձեռնող երիտասարդների շերտ, որոնց հանրային մասնակցությունը առկա է, սակայն առաջնահերթությունը տրվում է անձնական և մասնագիտական կայացմանը:

*«Համակերպվողներ, ռիտուալիստներ» փիպաբանական առանձնահատկությունները:* Անկախության համաթիվը ամենաբարձրն է «համակերպվողներ, ռիտուալիստներ» խմբում՝ 0.80: Սա նշանակում է, որ հենց այս խումբն է ֆինանսական, տնտեսական, մտավոր և առօրյա անկախության համադրությամբ ամենաբարձր դիրքում: Նրանց տնտեսական անկախության միջինը 0.91 է, առօրյա անկախությունը՝ 0.90, մտավոր անկախությունը՝ 0.76, իսկ ֆինանսական անկախությունը՝ 0.65: Այս թվերը վկայում են այն մասին, որ այս երիտասարդները ունեն կայուն նյութական հիմք, կարողանում են ինքնուրույն կազմակերպել իրենց առօրյան, ընդունել որոշումներ և գործել առանց մեծ կախվածության արտաքին աջակցությունից: Միևնույն ժամանակ նրանց քաղաքացիական ակտիվության միջինը 0.31 է: Այսպիսով, «համակերպվողներ, ռիտուալիստներ» խմբի հիմնական առանձնահատկությունը բարձր ինքնավարությունն է՝ զուգորդված չափավոր հանրային ներգրավվածությամբ: Նրանք կայացած են իրենց անձնական և գործնական կյանքում, բայց չեն ձգտում դառնալ համակարգային փոփոխությունների առաջատար ուժ:

*«Կայունության ջատագովներ» խմբի կառուցվածքային բնութագիրը*: Այս խմբում ընդհանուր անկախության համաթիվը 0.63 է, ինչը նույնպես միջինից բարձր է: Տնտեսական անկախությունը (0.70), մտավոր անկախությունը (0.69) և առօրյա անկախությունը (0.64) վկայում են համեմատաբար հավասարակշռված ռեսուրսների առկայության մասին: Այս խումբը ունի բավարար տնտեսական և մասնագիտական հենք, ինչպես

նաև որոշակի մտավոր ինքնուրույնություն: Հատկանշական է, որ քաղաքացիական ակտիվության միջինը 0.37 է, որը ամենաբարձրն է բոլոր խմբերի մեջ: Սա նշանակում է, որ «կայունության ջատագովները» ոչ միայն հարաբերականորեն ինքնուրույն են, այլև առավել հակված են մասնակցելու հանրային գործընթացներին, արտահայտելու դիրքորոշում և պաշտպանելու կայունության գաղափարը: Նրանց մոտ հանրային ներգրավվածությունը զուգորդվում է ռեսուրսային չափավոր ինքնավարությամբ:

*«Հուսահատներ, մոլորվածներ» խմբի կառուցվածքային բնութագիրը*: Այս խմբում ընդհանուր անկախության համաթիվը ընդամենը 0.35 է, ինչը զգալիորեն ցածր է մյուս խմբերի համեմատ: Ֆինանսական անկախությունը գրեթե բացակայում է (0.04), տնտեսական անկախությունը 0.35 է, առօրյա անկախությունը՝ 0.46: Միևնույն ժամանակ մտավոր անկախությունը 0.55 է, ինչը ցույց է տալիս որոշակի գաղափարական կամ մտածողական ինքնուրույնություն: Այստեղ առկա է կառուցվածքային հակասություն. մտավոր մակարդակում որոշակի ինքնուրույնություն առկա է, սակայն այն չի վերածվում նյութական և գործնական կայունության: Քաղաքացիական ակտիվությունը նույնպես ցածր է (0.20): Այս համադրությունը վկայում է ռեսուրսային խոցելիության և սահմանափակ գործնական ինքնավարության մասին: Խումբը բնութագրվում է սոցիալական անորոշությամբ, նյութական սահմանափակումներով և կայունության խնդիրներով:

Տարիքային բաշխումը ցույց է տալիս, որ տիպաբանական պատկանելությունը սերտորեն կապված է կյանքի փուլերի հետ: «Նորարար առաջնորդների» խմբում 30–35 տարեկանները 65.3% են: Սա վկայում է, որ առավել փորձառու և մասնագիտական առումով կայացած երիտասարդներն են ավելի հաճախ հանդես գալիս որպես բարձր գործնական ինքնավարությամբ սուբյեկտներ: «Համակերպվողներ, ռիտուալիստներ» խմբում նույնպես գերակշռում է 30–35 տարիքային խումբը (58.6%): Սա ևս մեկ անգամ հաստատում է, որ ռեսուրսային կայացածությունը հիմնականում ձևավորվում է կյանքի ավելի հասուն փուլում: «Հուսահատներ, մոլորվածներ» խմբում 18–22 տարեկանների մասնաբաժինը համեմատաբար բարձր է (26.1%), ինչը կարող է պայմանավորված լինել ան-

ցումային փուլում գտնվելու, մասնագիտական և տնտեսական դիրքավորման բացակայության գործոններով: Pearson-ի $\chi^2$=61.190 (p=0.000) արդյունքը հաստատում է, որ տարիքային բաշխումը կլաստերների միջև վիճակագրորեն նշանակալի է և ունի համակարգային բնույթ:

Բնակավայրի տեսակով տարբերությունները նույնպես վիճակագրորեն նշանակալի են ($\chi^2$=15.359, p=0.018): «Նորարար առաջնորդների» և «համակերպվողներ, ռիտուալիստներ» խմբերում Երևանի մասնաբաժինը բարձր է (43.5% և 47.7%): Սա ցույց է տալիս, որ մայրաքաղաքում կենտրոնացած ռեսուրսները և հնարավորությունները նպաստում են ավելի բարձր ինքնավարության ձևավորմանը: Ի տարբերություն դրա՝ «hուսահատներ, մոլորվածներ» խմբում առավել բարձր է գյուղաբնակների մասնաբաժինը (39.1%), ինչը վկայում է տարածքային ռեսուրսների անհավասար բաշխման և սոցիալական սահմանափակ հնարավորությունների ազդեցության մասին:

Այսպիսով, հետազոտության արդյունքների համապարփակ վերլուծությունը թույլ տվեց բացահայտել հայաստանյան երիտասարդության տիպաբանությունը սոցիալական հարմարման և անկախության փոխառնչությունների տեսանկյունից: Ներկայացված տիպաբանությունը ուսումնասիրության լայն հնարավորություններ է ընձեռնում, որը թույլ է տալիս հասկանալ երիտասարդության վարքագիծը բազմաճգնաժամի պայմաններում և համապատասխան տեսական և պրակտիկ կիրառական լուծումներ առաջարկել ծագող մարտահրավերներին և խնդիրներին արձագանքելու համար, հատկապես հետպատերազմյան հասարակություններում:

## Գլուխ 10. Երիտասարդների ապագայի ուրվագծումը հույսի հայեցակարգի ներքո

*«**Հույսը** ցանկալի նպատակներին հասնելու ուղիներ ձևավորելու և ինքն իրեն մոտիվացնելու կարողություն է»*[347]:

*«Մենք պետք է համարձակվենք հորինել ապագան»*[348]:

*«Հույսն է, որ կերտում է ապագան»*[349]:

Արդի ժամանակներում մարդկային կյանքի ընթացքը գնալով ավելի ու ավելի է վերածվում «նախագծի», որի սկիզբը (ծնունդ) և ավարտը (մահ) փուլ առ փուլ, ինչպես նաև կյանքի միջև ընկած ժամանակահատվածները կառավարվում են: Այն, ինչ նախկինում համարվում էր զարգացման փուլեր՝ փոքր երեխա, դպրոցական, դեռահաս, մեծահասակ, վերածվել է «նախագծի» այն մասերի, որոնք ունեն ինքնուրույն կարգավիճակ, և որոնք, միասին վերցրած, պարտադիր չէ, որ հանգեցնեն կյանքի հետևողական ընթացքի: «Նախագծերը» ցանկալի ապագայի նախագծեր են, ապագա, որը, ակնհայտորեն, երբեք իրականություն չի դառնա այնպես, ինչպես նախատեսված էր[350]: Ուշ արդիականությունը բնութագրվում է անհատականացման գործընթացով, որի դեպքում ռիսկը թափանցում է կյանքի բոլոր ասպեկտները: Այս պայմաններում երիտասարդների համար ավելի ու ավելի դժվար է դառնում նույնականացնել այն մարդկանց, ովքեր բախվում են *նման փորձառությունների:* Այս համատեքստում արդիական է դառնում քննարկելու հույսի հայեցակարգը՝ որպես ապագային միտված կարողություն:

---

347 Տե՛ս Snyder, C. R. (2002). Hope Theory: Rainbows in the Mind. Psychological Inquiry, 13(4), 249-275:

348 Տե՛ս Freire, P. 1992. Pedagogy of hope: Reliving pedagogy of the oppressed. London: Continuum:

349 Արթուր Մեսչյան, «Հույս» ստեղծագործությունից հատված:

350 Տե՛ս Furlong, 2013, էջ 9:

*Հույսի սոցիոլոգիական հայեցակարգը*

Հույսի սոցիոլոգիական հայեցակարգի հիմքերը դրվել են դեռևս սոցիոլոգիական գիտելիքի ձևավորման վաղ փուլում, սոցիալական փիլիսոփայության շրջանակներում: Սոցիալական փիլիսոփա Մ. Դոբրուշկայի սոցիալական փիլիսոփայության մեջ հույսը ներկայացվում է որպես մարդու մեծագույն երջանկությունը, քանի որ այն մարդուն ուղղորդում է դեպի ավելի հեռավոր, բարձր և իմաստալից նպատակներ: Նրա ընկալմամբ մարդիկ միմյանցից տարբերվում են կարողություններով, արժեքներով, ձգտումներով և ներուժով, ուստի յուրաքանչյուրի հույսն էլ ունի տարբեր բովանդակություն. ոմանք ձգտում են նյութական հաջողության, մյուսները՝ հոգևոր զարգացման, գիտելիքի կամ հասարակական դերակատարության: Սակայն, անկախ նպատակների տարբերությունից, հույսը բոլոր դեպքերում հանդես է գալիս որպես գործունեության շարժիչ ուժ, որը մարդուն դրդում է գործելու, զարգանալու և հասնելու ցանկալի ապագային: Ըստ հեղինակի՝ հույսն ունի նաև կարևոր հոգեբանական և զգացմունքային գործառույթ. այն մեղմում է անցյալի ցավը և թուլացնում ներկայի անհանգստությունը՝ ապագա հնարավոր բարիքների կանխազգացման միջոցով: Այսպիսով, հույսը ոչ միայն նպատակադրում է մարդուն, այլև օգնում է հաղթահարելու ներկայի անորոշությունը: Անհանգստությունը Դոբրուշկան հասկանում է ինչպես անհատական՝ կապված առօրյա խնդիրների կամ անձնական ապագայի հետ, այնպես էլ կոլեկտիվ՝ կապված քաղաքական ճգնաժամի և հասարակական անկայունության հետ: Հետևաբար, հեղափոխական և անկայուն ժամանակներում հույսը դառնում է ոչ միայն անձնական, այլև հասարակական դիմակայունության կարևոր ռեսուրս: Հույսի հայեցակարգի ձևավորման վաղ փուլում պոզիտիվիստական տեսության ներկայացուցիչների գործերում կարելի է հանդիպել «կոլեկտիվ հույս» հասկացությանը՝ որպես հասարակության վերափոխման և ազատագրման հավակնոտ «ուտոպիստական միտք»[351]: Հետագայում Է. Դյուրկհայմը, ունենալով ավելի «վատատեսական տեսանկյուն պոզիտիվիստների համեմատ», հույսի սոցիո-

[351] Տե՛ս Greco S. Hope in the Sociological Thoughts of some Founding Fathers //The American Sociologist. – 2023. – T. 54. – № 1, էջ 56-75:

լոգիական հայեցակարգը հարստացրեց «անհատական հույս» հասկացությամբ՝ որպես մարդկանց ապագա նպատակներին հասնելու և նրանց ակտիվացնելու կարողություն: Անհատական հույսի սոցիոլոգիական հայեցակարգում առկա են երկու ըմբռնումներ՝ միտված ներկային և միտված ապագային: Ըստ Դոբրուշկայի՝ անհատական հույսը խաղում է առաջնորդող դեր, փարոս, որը մղում է մարդկանց մարտահրավեր նետելու իրենց՝ իրենց առօրյա կյանքից ավելի բարձր նպատակներին հասնելու համար: Այդպիսի հույսը մղում է նրանց անցնելու հայտնիից այն կողմ և մտնելու անհայտի մեջ: Այսպիսով, հույսը դառնում է երջանկության բարձրագույն ձևը, որը հասկացվում է ոչ այնքան որպես մարդու ցանկությունների և նպատակների ժամանակավոր իրականացում, որքան որպես դինամիկ ուղի, որը մղում է մարդուն օգտագործելու սեփական ներուժը և հաղթահարելու անցյալի և ներկայի խոչընդոտները: Իսկ Դյուրկհայմի պատկերացմամբ հույսը մարդու հայացքն ուղղում է դեպի ապագա: Ըստ նրա՝ հույսը տատանող սոցիալական պատճառները նույնն են, ինչ ինքնասպանության հանգեցնողները՝ ինտեգրման բացակայություն, սոցիալական ներառման և նույնականացման չափազանցություն և անոմիա[352]: Հույսի սոցիոլոգիական հայեցակարգում տարբեր շեշտադրումներով ընդգծվում է հույսի հետ կապված հուզական չափման կարևորությունը. «Հույսը չի կարող առանձնացվել զգացմունքների ոլորտից»[353]:

Հույսի հայեցակարգի շուրջ մշտապես եղել են բանավեճեր, սակայն հույսի արժեքը ոչ միշտ է գնահատվել[354]: Երկրորդ համաշխարհային պատերազմը և դրա հետևանքների հաղթահարումը խթան դարձան նորից անդրադառնալու և շարունակելու զարգացնել հույսի հայեցակարգը: Պատահական չէ, որ հույսի հայեցակարգի համար ուղենիշային աշխատությունները գրվել են հենց հետպատերազմյան շրջանում՝ Հաննա Արենդտի «Մարդկային վիճակը» (1958 թ.)[355], Էռնստ Բլոխի «Հույսի

---

[352] Տե՛ս Greco նշվ. աշխ. էջ 73:
[353] Greco նշվ. աշխ.:
[354] Տե՛ս Mangone E. The Sociology of Hope //Encyclopedia. – 2025. – T. 5. – № 3, էջ 128:
[355] Տե՛ս Arendt, H. The Human Condition; The University of Chicago Press: Chicago, IL, USA, 1958:

սկզբունքը» (1959 թ.)[356] և Էրիկ Ֆրոմի «Հույսի հեղափոխությունը» (1968 թ.)[357]: Թեև այս երեք հեղինակները սկսել են շատ տարբեր տեսանկյուններից, բայց նրանց կարծիքով հույսը խորապես կապված է մարդու վիճակի և ճակատագրի հետ, և սա հատկապես նշանակալից էր պատմության այն ժամանակաշրջանում (Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո), երբ անհրաժեշտ էր գիտական մի հայեցակարգ, որը համատեղում էր ապագա ժամանակի չափումը կյանքի նախագծի հետ, որը կդրդեր անհատներին գործողության: Բլոխը պնդում է, որ հաղթահարելով «այստեղ և հիմա» (hic et nunc) տրամաբանությունը, հույսը այլևս պարզապես սոցիալական կառուցվածք չէ, այլ բարդ անձնական և սոցիալական փորձառություն[358]:

Հույսի ժամանակակից սոցիոլոգիական հայեցակարգը նոր նշանակություն է ստացել ուշ արդիականության, գլոբալ անորոշության և ռիսկերի պայմաններում: Բաումանը «հոսող արդիականության» տեսության շրջանակում հույսը դիտարկում է որպես կողմնորոշիչ ռեսուրս աշխարհում, որտեղ ավանդական ինստիտուտները կորցրել են կայունացնող գործառույթը: Ինչպես նշում է Դեվիսը, թեև Բաումանի աշխատանքները հաճախ ներկայացվում են որպես վատատեսական, իրականում պարունակում են «հույսի սոցիոլոգիայի» հիմքեր, քանի որ դրանք ուղղված են մարդկանց հնարավորություն տալուն՝ հասկանալու ներկայի հակասությունները և վերաիմաստավորելու ավելի արդար ապագայի հեռանկարները[359]: Հույսը այստեղ դառնում է ոչ թե լավատեսություն, այլ քննադատական կողմնորոշում ներկայի նկատմամբ: Բաումանը հույսը համարում էր ձախակողմյան քաղաքականության «երրորդ ճամբար»՝ պարզաբանելով, որ «եթե լավատեսը այն մարդն է, ով հավատում է, որ մենք ապ-

---

[356] Տե՛ս Bloch, E. The Principle of Hope; 3 Voll., Original work published 1959; The MIT Press: Cambridge, MA, USA, 1986:

[357] Տե՛ս Fromm, E. The Revolution of Hope: Toward a Humanized Technology, 1st ed.; Harper & Row: New York, NY, USA, 1968; American Mental Health Foundation: New York, NY, USA, 2010:

[358] Տե՛ս Bloch, E. The Principle of Hope; 3 Voll., Original work published 1959; The MIT Press: Cambridge, MA, USA, 1986:

[359] Տե՛ս Davis M. Bauman's compass: Navigating the current interregnum //Acta Sociologica. – 2011. – T. 54. – № 2, էջ 183-194:

րում ենք բոլոր հնարավոր աշխարհներից լավագույնում, իսկ վատատեսը՝ այն մեկը, ով կասկածում է, որ լավատեսը կարող է ճիշտ լինել, ձախերը իրենց դասում են երրորդ ճամբարին՝ հույսի ճամբարին»[360]: Նա նախկինում նաև պնդել էր, որ «հույսը վավերական է և իրական, նույնիսկ եթե անհիմն է, որ հույսը ապացույցի կարիք չունի. աշխարհն է, որ պետք է ապացուցի (և չի ապացուցի), որ այն փրկություն է և փրկությունից անդին է: Հույսն ավելի ուժեղ է, քան իրականության բոլոր պատկերացնելի «վկայությունները»: Հույսը մարդկության ճակատագիրն է, մի առանձնահատկություն, որը չի կարող հաղթահարվել[361]:

Հույսի սոցիոլոգիական հայեցակարգի ձևավորման հարցում կարևոր դեր ունեն նաև լատինամերիկյան հեղինակները[362]: Լինելով շարունակական փոփոխությունների, հեղափոխությունների, կոլեկտիվ գործողությունների տարածաշրջանի ներկայացուցիչներ՝ այս գիտնականները «քննադատաբար են անդրադառնում հեղափոխությանը և հույսին»[363]: Հույսը դիտարկվում է որպես հավաքական գործունակության և սոցիալական վերափոխման շարժիչ ուժ: Հույսը կարող է ձևավորվել կրթության, մասնակցության և իմաստալից ներառման միջոցով: Ըստ Ֆրեյրեի՝ հույսը քաղաքական և հավաքական գործողություն է, ոչ թե պասիվ սպասում[364]:

Երիտասարդության մասին ուսումնասիրություններում հույսը դիտարկվում է ոչ միայն որպես անհատական զգացում կամ հոգեբանական վիճակ, այլև որպես սոցիալականորեն ձևավորված, կառուցվածքային պայմաններով սահմանափակված և մշակութայնորեն պայմանավորված ապագայամետ դիրքորոշում: Հույսը հաճախ սահմանվում է որպես ապագային ուղղված վերաբերմունք, որը հնարավորություն է տալիս երիտասարդներին պատկերացնելու և հետապնդելու ցանկալի ապագաներ կամ «ապագայի նախագծեր»: Հույսը սերտորեն կապված է երիտասարդների գործունակության (agency), ձգտումների, դիմակայունության

---

360 Bauman, Z. (2007c) ‘Has the future a Left?’, Soundings.

361 Տե՛ս Bauman, Z. To Hope is Human. Tikkun 2004, 19, 64-–67:

362 Տե՛ս Scribano A., Sociology of Hope A New Theory, 2026, Taylor & Francis Group:

363 Նույն տեղում:

364 Տե՛ս Freire, 1994:

և անորոշ պայմաններում կողմնորոշվելու կարողության հետ: Ըստ Սնայդերի՝ հույսը բաղկացած է երկու հիմնական բաղադրիչից.

- *գործունակություն* (agency)՝ նպատակներին հասնելու մոտիվացիա,
- *ուղիներ* (pathways)՝ այդ նպատակներին հասնելու հնարավոր ուղիների ընկալում[365]:

Երիտասարդության վերաբերյալ ուսումնասիրություններում այս գաղափարը ընդլայնվում է՝ ընդգծելով, որ այդ «ուղիները» հավասարապես հասանելի չեն բոլորին. դրանք պայմանավորված են դասակարգով, սեռով, էթնիկ պատկանելությամբ, տարածքով, քաղաքական միջավայրով: Այսպիսով, հույսը ոչ թե պարզապես լավատեսություն է, այլ կառուցվածքայնորեն հնարավոր կամ անհնար դարձած ապագայի տեսլական: Հույսը դիտարկվում է որպես երիտասարդների ամենօրյա գոյատևման և առաջընթացի ռազմավարությունների մաս: Ըստ Ապադուրայի՝ հույսը *«ձգտելու կարողություն» է*. հույսը մշակութային կարողություն է, որը ձևավորվում է սոցիալական դիրքով[366], ըստ Հոնվանայի՝ հույսը սպասման երկարաձգված փուլ է. հույսը օգնում է դիմանալու երկարաձգված անցումներին դեպի մեծահասակություն[367], ըստ Վիղի՝ հույսը *սոցիալական նավարկում է*. հույսը հնարավորություն է տալիս շարժվելու անկայուն և ճգնաժամային միջավայրերում, այստեղ հույսը դառնում է նավարկման ռեսուրս, ոչ թե միամիտ ակնկալիք[368]:

Ժամանակակից տեսաբանները և հետազոտողները ուսումնասիրում են հույսը ճգնաժամի, պատերազմի և անհավասարության, գործազրկության և տնտեսական անկայունության, միգրացիայի և տեղահանության, քաղաքական անորոշության, պատերազմի և հետպատերազմյան վերականգնման պայմաններում, որտեղ հույսը հաճախ լինում է խոցելի, պրագմատիկ և հարմարվողական, այլ ոչ թե իդեալական: Ըստ Ջեֆրի՝ երիտասարդները պահպանում են հույսը առօրյա փոքր պրակտիկաների

---

[365] Տե՛ս Snyder, 2002:
[366] Տե՛ս Appadurai, 2004:
[367] Տե՛ս Honwana, 2012:
[368] Տե՛ս Vigh, 2009:

միջոցով, նույնիսկ երբ սոցիալական վերելքը փակուղում է[369]: Ըստ Ռեյի և Լյուսիի՝ աշխատավոր դասի երիտասարդների հույսերը ձևավորվում են իրական սահմանափակումների գիտակցումով: Այստեղ կիրառվում են նաև «սահմանափակ հույս», «իրատեսական հույս» հասկացությունները[370]:

Քննադատական մոտեցումները զգուշացնում են նաև կեղծ կամ պարտադրված հույսի վտանգների մասին: Բերլանթը խոսում է դաժան լավատեսության մասին, երբ հասարակությունը խրախուսում է երազելը, բայց չի ստեղծում իրական հնարավորություններ, այդ պարագայում հույսը կարող է դառնալ վնասակար[371]: Կրթական և երիտասարդական քաղաքականության մեջ սա վերաբերում է այն մոտեցումներին, որոնք քարոզում են «մեծ երազանք», բայց չեն վերացնում կառուցվածքային անհավասարությունները: Այսպիսով տարբերակում են՝

- զորացնող հույս (կապված իրական հնարավորությունների հետ),
- պատրանքային հույս (քողարկում է խոչընդոտները):

Հույսի սոցիոլոգիական հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը ուղղված է «գտնելու այնպիսի վերլուծական բանալի, որը հնարավորություն կտա հասկանալու և հնարավոր պատասխաններ ձևակերպելու ճգնաժամերի հետևանքներին, որոնք անխուսափելիորեն ազդում են հասարակության բոլոր ոլորտների՝ տնտեսական, քաղաքական, սոցիալմշակութային և բնապահպանական համակարգերի վրա, ինչպես նաև հասարակության բոլոր անդամների վրա՝ խորացնելով փոխկախվածության կապերը և պայմանավորելով սոցիալական հարաբերությունները»[372]:

*Ապագան որպես անորոշության և հույսի հորիզոն. երիտասարդների կենսագրական նախագծերը Հայաստանում*

Հայաստանի երիտասարդների ապագայի նախագծերում առկա են հույսի ճգնաժամ և գոյաբանական անորոշություն, ինչպես նաև երիտա-

369 Տե՛ս Jeffrey, 2010:
370 Տե՛ս Reay & Lucey, 2000:
371 Տե՛ս Berlant, 2011:
372 Mangone E. The Sociology of Hope //Encyclopedia. – 2025. – T. 5. – №. 3. – C. 128.

սարդների ապագայի ընկալումների խորքային հակասականություն, որտեղ միաժամանակ առկա են բարձր կրթական ձգտումներ, քաղաքացիական պարտավորության զգացում, և միևնույն ժամանակ՝ խորը հիասթափություն, անվստահություն ու հույսի կորստի դիսկուրս: Հայաստանյան երիտասարդների այն մասը, որն ունի ավելի շատ անկախություն՝ ունի աշխատանք, սովորում է, նրանց բնորոշ է զորացնող հույսը, իսկ երիտասարդների այն խումբը, որը զրկված է անկախությունից՝ աշխատանքից, սովորելու հնարավորությունից, նրանց բնորոշ է պատրանքային հույսը, ապագայի հանդեպ հուսալքությունը, ապակողմնորոշվածությունը: Ապագան այստեղ հանդես է գալիս ոչ թե որպես բաց հնարավորությունների տարածք, այլ որպես մշտական ռիսկի, խոցելիության և գոյաբանական անորոշության հորիզոն: Երիտասարդների շրջանում այս վիճակը արտահայտվում է ապագայի հանդեպ վստահության խաթարմամբ և վաղվա օրվա նկատմամբ մշտական լարվածությամբ: Պատերազմից առաջ երիտասարդները ապագան ընկալում էին որպես հարաբերականորեն կայուն և կանխատեսելի, մինչդեռ պատերազմից հետո ապագան այլևս չի ձևավորվում որպես վստահելի հորիզոն, նույնիսկ այն դեպքում, երբ խաղաղության մասին խոսքը շարունակվում է հանրային դիսկուրսում: Ապագայի հանդեպ վախը հաճախ ձևակերպվում է ոչ թե կոնկրետ սցենարներով, այլ ընդհանուր զգացողությամբ, որ «վստահությունը դեռ չի վերականգնվել»: Երիտասարդների ապագայի պատկերացումները ձևավորվում են միաժամանակ գործնական նպատակների, կենսափուլային անցումների և հետճգնաժամային անորոշության համատեքստում: Չնայած ընդհանուր անորոշությանը և սոցիալ-քաղաքական անկայունությանը՝ երիտասարդները ձևակերպում են համեմատաբար հստակ, սակայն կարճաժամկետ նպատակներ, որոնք հիմնականում կապված են աշխատանքի, տնտեսական ինքնուրույնության և կենսական կայունության հետ: Օրինակ՝ մարզերից Երևան տեղափոխված ուսանողների փորձառությունը ցույց է տալիս, որ ապագայի նախագծերը հաճախ ձևավորվում են առօրյա ռեսուրսների սահմանափակության պայմաններում: Տրանսպորտային դժվարությունները, ժամանակի մեծ մասը ճանապարհին անցկացնելը և ֆիզիկական ու մտավոր հոգնածությունը սահմանափակում են ոչ միայն ուսման արդյունավետությունը,

այլև ապագայի պլանավորման հնարավորությունը: Ապագան այստեղ կառուցվում է ոչ թե իդեալական նպատակների, այլ ռեսուրսների պահպանման և առօրյան կառավարելի դարձնելու տրամաբանությամբ: Հատկանշական է, որ նպատակները հիմնականում ձևակերպվում են ոչ թե սոցիալական կամ հասարակական լայն փոփոխությունների լեզվով, այլ անձնական կենսագրական նախագծերի շրջանակում՝ *«աշխատանքին վերադառնալ», «իմ ուզած բիզնեսը ունենալ»:* Սա համապատասխանում է երիտասարդության ուսումնասիրություններում լայնորեն քննարկվող անհատականացման գործընթացներին, երբ կյանքի ուղիները դառնում են «կենսագրական նախագծեր», իսկ ռիսկերի կառավարումը տեղափոխվում է անհատի պատասխանատվության դաշտ[373]: Միաժամանակ, նկատելի է երկարաժամկետ պլանավորման սահմանափակությունը: Երիտասարդների միայն փոքր մասն է հստակ խոսում 5–10 տարվա ռազմավարությունների մասին, ինչը կարելի է մեկնաբանել որպես ապագայի կառուցվածքային անորոշության և վստահության պակասի արտահայտություն: Ապագան ավելի շուտ ընկալվում է որպես պայմանական, հնարավորությունների պատահական դաշտ, քան կանխատեսելի և ծրագրելի ժամանակաշրջան:

Ապագայի նախագծերի կառուցման և ձևավորման հիմքում այն հիմնախնդիրներն ու մարտահրավերներն են, որոնց բախվում են այսօր Հայաստանի երիտասարդները: Երիտասարդների խնդիրների շարքում ավելի շատ նշվում են ֆինանսական դժվարությունները, ցածր եկամուտները, մարզերում ապրող երիտասարդների համար աշխատանքային հնարավորությունների պակասը, կրթության և աշխատանքի անհամապատասխանությունը: Ապագայի նկատմամբ անորոշությունը ևս նշվում է որպես հիմնախնդիր: Ֆինանսական դժվարությունները հատկապես սրվում են բնակարանային անապահովության համատեքստում: Սեփական տուն ունենալու անհնարինությունը կամ երկարատև վարձակալության մեջ գտնվելը ընկալվում է ոչ միայն որպես նյութական խնդիր, այլև որպես ապագայի կայունացման հիմնական խոչընդոտ: Երիտասարդների մի մասի համար մարտահրավեր է սեփական տուն ունենալը, իսկ

---

[373] Տե՛ս Furlong, նշվ. աշխ.:

տան վարձակալության ծախսերը հավելյալ ֆինանսական բեռ են: Տունը հանդես է գալիս որպես ապագայի հույսի խորհրդանշական հենարան, որի բացակայությունը խորացնում է անորոշության և կախվածության զգացումը:

> *«Էդ իմ մեծագույն չելենջն է՝ սեփական տուն չունենալը, ու որ վարձ ես անընդհատ տալիս, ու դրա համար սպացվում է ֆինանսական, հիմնականում որպես երիտասարդ խնդիրները ֆինանսական են»*[374]*:*

Մարզերի ուսանողների համար խնդիր են նաև տրանսպորտային անհարմարությունները, ինչպես նաև կրթության որակի, ուսուցիչների պակասը:

> *«Եթե շուտ եմ դուրս գալիս, խցանումներ չի լինում, շատ շուտ հասնում եմ, իմ ամբողջ օրը դիմացս ա լինում, ոնց ուզում, կարողանում եմ իմ օրը կառավարեմ, իսկ եթե 3-ից հետո ցանկացած ժամի գնում եմ, ես ժամ ու կես 2 ժամ ճանապարհին եմ լինում, ուղղակի կանգնած խցանման մեջ, հետո գնում եմ հոգնած, էլ ուղեղս ընդունակ չի լինում դաս անելու, պետք ա ինչ-որ ժամանակահատված հանգստանամ, տենց, չեմ կարողանում տրամադրվեմ, նորմալ դաս սովորեմ, դրա համար դասերս անելը հիմնականում թողնում եմ շաբաթ-կիրակի»*[375]*:*

Երևանում բնակվելու առումով ևս ուսանողները բախվում են ֆինանսական դժվարությունների հետ. որոշ բուհեր տրամադրում են հանրակացարաններ, սակայն դրանց քանակը շատ քիչ է և չի բավարարում բոլոր ուսանողներին, իսկ Երևանում բնակարան վարձակալելը հավելյալ ֆինանսական ծախս է, և ոչ բոլոր ընտանիքներն են կարողանում հոգալ այդ ծախսերը:

---

[374] Բլոգեր աղջկա հետ հարցազրույց:

[375] Մարզից ուսանողների հետ ֆոկուս-խմբային քննարկումից մեջբերում:

**Գծապատկեր 35. Ձեր կարծիքով որո՞նք են երիտասարդության ամենակարևոր խնդիրները Հայաստանում**

*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 13-35, % նշումներից




Այս առօրյա սոցիալ-տնտեսական սահմանափակումները ոչ միայն նյութական դժվարություններ են ստեղծում, այլև ազդում են երիտասարդների ժամանակի, ռեսուրսների և ապագայի նկատմամբ վերաբերմունքի վրա՝ աստիճանաբար փոխելով կյանքի կանխատեսելիության զգացողությունը:

> *«Պատերազմից առաջ ուղղակի, էնպես, չասեմ, միալար էր, բայց միալար լավ կյանք էր: Ու էդպես ապագայի մասին ինչ-որ բացասական պատկերացումներ, վախեր չեն եղել: Իսկ պատերազմից հետո, հիմա ինչքան էլ մենք անընդհատ խոսում ենք էս խաղաղության, շրջան և այլն, և այլն ....բայց իմ մոտ այդ ամեն հաջորդ օրվա նկատմամբ ինչ-որ վախի զգացողություն կա: Այսինքն, եթե մինչև պատերազմը գոնե ապագայի նկատմամբ ինչ-որ կայունության, կայունություն, վստահություն կար, հիմա պատերազմից հետո ես էդ վստահությունը ապագայի հանդեպ չունեմ: Իմ մոտ չի ձևավորվում, էնքան խաղաղություն խաղաղություն ենք ասում, բայց իմ մոտ դեռևս դա չի ձևավորվում»*[376]:

[376] Բիզնես ոլորտի աղջկա հետ հարցազրույց:

Երիտասարդների մի մասի համար ապագան կառուցվում է որպես հստակ կրթական և մասնագիտական նախագիծ. «բակալավրիատից մագիստրատուրա», ապա ասպիրանտուրա, գիտական կարիերա, առաջընթաց, սեփական բիզնեսի հիմնում և այլն: Սա դասական «անցումային» տրամաբանության օրինակ է, որտեղ կրթությունը դիտարկվում է որպես սոցիալական առաջխաղացման հիմնական ուղի: Սակայն երիտասարդների տարբեր խմբերում ապագան ավելի շատ ներկայացվում է որպես անհատական ներդրման արդյունք, այլ ոչ թե համակարգի աջակցությամբ ապահովվող ուղի: Միաժամանակ, երիտասարդների մի մասը բացահայտորեն հրաժարվում են «մեծ նպատակներից»՝ շեշտելով կայուն հիմք ստեղծելու, «ապահով լինելու» անհրաժեշտությունը: Այս դիրքորոշումը վկայում է երիտասարդների քաղաքական իդեալիզմի մաշվածության և պրագմատիկ ռացիոնալության ուժեղացման մասին: Ապագան ընկալվում է որպես անձնական գոյատևման և կայունացման մարտահրավեր: Ապագայի աշխարհագրական պատկերացումը ևս երկակի է: Մի կողմից՝ երիտասարդների մի մասը ապագան պատկերացնում է Հայաստանում՝ ընտանիք ստեղծելով, կայունանալով, «մնալու» պարտավորության զգացումով: «Մնա՞լ, թե գնա՞լ» հարցը հաճախ ձևակերպվում է ոչ թե որպես ազատ ընտրություն, այլ բարոյական պարտավորության և գոյաբանական վախի հակադրություն: Մնալը ընկալվում է որպես պատասխանատվություն՝ «եթե ես էլ գնամ, ո՞վ կմնա», մինչդեռ գնալու տարբերակը հաճախ ուղեկցվում է անվտանգության հետ կապված սուր վախերով: Այս երկվությունը վկայում է, որ ապագայի աշխարհագրական ընտրությունը երիտասարդների համար դարձել է ոչ թե կենսակերպի, այլ գոյության հարց: Մյուս կողմից՝ արտերկրում աշխատելու, սովորելու գաղափարը ներկայանում է որպես ռացիոնալ ռազմավարություն՝ տնտեսական անհավասարությունները հավասարակշռելու, նյութական անվտանգություն ապահովելու համար: Հատկանշական է, որ արտերկիր մեկնելու տարբերակները հաճախ ձևակերպվում են ոչ թե իդեալականացված միգրացիայի լեզվով, այլ սառը հաշվարկի տրամաբանությամբ: Սա ցույց է տալիս, որ միգրացիան ընկալվում է ոչ թե որպես «երազանք», այլ որպես սոցիալական հարմարման պրակտիկա:

Առավել ուշագրավ է հույսի հայեցակարգի շուրջ ձևավորվող դիսկուրսը. *«Հույս չկա ըսփ իս»:* Այս արտահայտությունը խորհրդանշական կերպով վկայում է հույսի սոցիալական ինստիտուցիոնալ հիմքերի փլուզման մասին: Հույսը այլևս չի սնվում քաղաքական, տնտեսական կամ հասարակական հեռանկարներից, այլ պահպանվում է միայն զգացմունքային, մշակութային, գենետիկ պատկանելիության մակարդակում՝ *«գեներով եկած սեր», «մենթալիտետ», «մշակույթ»:* Հույսը տեղափոխվում է ապագայից դեպի անցյալ: Այն այլևս ապագային ուղղված կողմնորոշում չէ, այլ անցյալից եկող պարտավորություն: Սա հակասում է հույսի դասական սահմանումներին որպես ապագայակենտրոն հասկացություն և վկայում է հետպատերազմյան, հետճգնաժամային հասարակությունների բնորոշ ժամանակային խզման մասին:

Մեկ այլ առանցքային լարվածություն կարելի է նկատել *«եթե ես էլ գնամ, ո՞վ կմնա»* արտահայտության մեջ: Այստեղ ապագայի ընկալումը խաչվում է բարոյական պատասխանատվության հետ: Մնալը ներկայացվում է ոչ թե որպես հնարավորություն, այլ որպես պարտք: Միաժամանակ, մյուս կողմում կա սառը գոյաբանական վախ. *«Մեզ չգան մեր տներում սպանեն»:* Այս լեզվամտածողությունը ցույց է տալիս, որ ապագան ընկալվում է գոյության սպառնալիքի պրիզմայով: Սա արդեն ոչ թե սոցիալական ապագայի, այլ ֆիզիկական գոյության հարց է: Այս մակարդակի անորոշությունը խորը հոգեբանական ազդեցություն ունի և ձևավորում է մշտական սթրեսի ֆոն: Երիտասարդների խոսքում շատ հստակ արտահայտվում է պետության ինստիտուցիոնալ անարդյունավետության ընկալումը: Նշվում է մասնագետների պակասը, համակարգային ճգնաժամը, ռեսուրսների չօգտագործումը: Սա ոչ թե պարզապես դժգոհություն է, այլ ապագայի կառուցելիության նկատմամբ կասկած. *«Հայաստանը տեմպից էնքան հետ ա, որ ինձ նույնիսկ չի վախեցնում, որ արթնանամ ուրիշ երկրի դրոշի տակ»:* Սա ցույց է տալիս, որ երիտասարդների վախը ոչ միայն կորուստն է, այլև անդառնալիության զգացողությունը:

Երիտասարդների կյանքի բարելավման մասին հարցին պատասխաններում հստակ շեշտվում է «մարդու պոտենցիալի օգտագործման» թեման: Ցածր աշխատավարձերը, արժեզրկված մասնագիտությունները, մասնագիտական արժանապատվության պակասը ներկայացվում են որ-

պես «ներուժի սպանություն»: Երիտասարդները չեն խոսում միայն նյութական աղքատության մասին, այլ կենսական էներգիայի, կարողությունների, ինքնաիրացման մասին:

Ապագայի հանդեպ զգացմունքային քարտեզագրման մեջ գերիշխում են վախը և անվստահությունը, ինչը ցույց է տալիս, որ երիտասարդների պատասխանների հիմքում առկա է խորքային տագնապ և հիասթափություն: Երիտասարդները մեկ բառով նկարագրում են, թե ինչ են զգում ապագայի նկատմամբ՝

- անորոշություն,
- անվտանգություն,
- վախ,
- հուզմունք,
- հավատ,
- հույս,
- կայունություն,
- անվստահություն,
- ճանապարհորդություն:

Ապագայի հետ ասոցացվող բառերը («հույս», «կայունություն», «ճանապարհորդություն») վկայում են երիտասարդների ներքին հակասական զգացողությունների մասին: Մի կողմից՝ կա կայունության և կանխատեսելի կյանքի պահանջ, մյուս կողմից՝ փախուստի, շարժման, սահմաններից դուրս գալու ցանկություն: Ճանապարհորդությունը այստեղ կարելի է մեկնաբանել ոչ միայն որպես ժամանց, այլև որպես ազատության, ինքնավարության և սահմանափակումներից դուրս գալու սիմվոլիկ ձև: Այս հակասությունը բնորոշ է հետճգնաժամային երիտասարդությանը, երբ միաժամանակ առկա է անվտանգություն փնտրելու և միջավայրից հեռանալու ձգտումը: Սա արտացոլում է «արմատավորման» և «հեռացման» երկակի լարվածությունը, որը հաճախ հանդիպում է պատերազմից, տեղահանությունից և սոցիալական ցնցումներից հետո ձևավորված կենսափորձ ունեցող խմբերում:

Երիտասարդների հիմնական մասն ունի ապագայի հստակ պլաններ՝ աշխատանքի, կրթության հետ կապված: Ապագայի հետ կապված

մյուս նպատակադրումը ուղղված է նյութական բարեկեցության ապահովմանը և ճանապարհորդելուն:

**Աղյուսակ 4. Որո՞նք են Ձեր կյանքի հիմնական նպատակներն առաջիկա 1-3 տարում**

*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 13-35, %

| | Երիտասարդների % | Նշումների % |
|---|---|---|
| Աշխատանքի հետ կապված պլաններ | 18.0% | **40.8%** |
| Կրթության հետ կապված պլաններ | 15.7% | **35.4%** |
| Ստեղծել ընտանիք | 7.1% | 16.1% |
| Բնակարան ձեռք բերել, տուն կառուցել | 4.2% | 9.5% |
| Հիմնել սեփական բիզնես, բիզնեսի ընդլայնում | 5.7% | 12.8% |
| Իմ և ընտանիքի համար նյութական բարեկեցություն ապահովել | 16.4% | **37.0%** |
| Ծառայել ՀՀ բանակում | 1.9% | 4.4% |
| Ճամփորդել, հանգստանալ, ժամանց կազմակերպել | 11.0% | **24.8%** |
| Գնել ավտոմեքենա և այլ թանկարժեք գույք | 3.4% | 7.6% |
| Մեկնել արտերկիր հիմնական բնակության | 3.1% | 6.9% |
| Շարունակել ապրել իմ բնականոն կյանքով | 11.3% | **25.5%** |
| Այդ մասին չեմ մտածել, ոչ մի նպատակ չունեմ | 1.2% | 2.8% |
| Այլ | 1.1% | 2.5% |

Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության մասնակից երիտասարդների պատասխանները վկայում են, որ հույսի զգացումը, աղբյուրը հաճախ կապված են կոնկրետ նյութական և վերահսկելի ռեսուրսների հետ: Սեփական տան առկայությունը, կայուն աշխատանքը, ընտանիքի գոյությունը հանդես են գալիս որպես հոգեբանական անվտանգության առանցքային հենարաններ՝ անվտանգության հիմքեր: Այս առումով տունը և աշխատանքը ձեռք են բերում ոչ միայն տնտեսական, այլև խորհրդանշական նշանակություն՝ որպես «կայունության», «ապահովության» և «արմատավորվածության» նշաններ: Հատկանշական է, որ հույսի ձևակերպումները մեծամասամբ ունեն անհատական և ընտանեկան հղում, այլ ոչ թե հանրային կամ ինստիտուցիոնալ: Երիտասարդները հազվադեպ են հույսը կապում պետության, քա-

ղաքական համակարգի կամ հասարակական ինստիտուտների հետ: Սա վկայում է վստահության և ինստիտուցիոնալ հենարանների թուլացման մասին, ինչի արդյունքում հույսը «նահանջում է» դեպի միկրոմակարդակ՝ ընտանիք, կրթություն, աշխատանք, անձնական ձեռքբերումներ: Այլոց փորձի հիշատակումը («մարդիկ ավելի մեծ տարիքում էլ կարողանում են ձեռքբերումների հասնել») ցույց է տալիս, որ հույսը հաճախ կառուցվում է համեմատական դիտարկման միջոցով: Սա սոցիալական ուսուցման մեխանիզմ է, երբ ուրիշների կենսագրական հաջողությունները հանդես են գալիս որպես ապագայի հնարավորության ապացույց:

Հայաստանի երիտասարդների ապագայի ընկալումները և տեսլականը միատարր չեն: Ապագայի պատկերացումները կառուցվում են ոչ թե պարզ «լավատեսություն-վատատեսություն» երկբևեռ սխեմայով, այլ ձևավորվում են հույսի և անորոշության համաժամանակյա ազդեցության հակասական պայմաններում: Դրանք տատանվում են հույսի, լավատեսության, տագնապի, հիասթափության և գոյաբանական անորոշության միջև: Երիտասարդների ապագայի պատկերացումները ձևավորվում են հույսի և անորոշության խաչմերուկում: Ապագան երիտասարդների համար միաժամանակ և՛ վտանգված է, և՛ հնարավորություններով լի:




Երիտասարդների մի մասը ապագայի հանդեպ տագնապային զգացողություններ ունի, այդ երիտասարդները ոչ միայն ապագան, այլև ներկան չեն համարում ընդունելի կամ կայուն (տե՛ս Գծապատկեր 36):

**Գծապատկեր 36. Երիտասարդների ցրվածությունը ըստ ապագայի տեսլականների**

*Աղբյուր.* Երիտասարդների շրջանում հարցում, 13-35, %




Վատատեսություն և հույսի կորուստ

> *«Հիմա եթե նույնիսկ էդ միլիոնավոր դոլարների փեխնիկան լինի Հայաստանում, ապա մասնագետ ուղղակի չկա, որ էդ ամեն ինչը անի, դրա համար ես ասում եմ Հայաստանը պեմպից էնքան հետ ա, որ ինձ նույնիսկ չի վախեցնում էն փաստը, որ կարող ա վաղը չէ մյուս օրը ես արթնանամ ուրիշ երկրի դրոշի տակ, ինձ վախեցնում ա էն փաստը, որ կարող ա էլ չվերադարձնենք էս ամեն ինչը»*[377]*:*

Վատատեսություն և անորոշություն

> *«Վաղվա օրվա կայունությունը, էդ ամենամեծ մարփահրավերը, որ դու քո երկրում ապրելով՝ դու էդ վաղվա օրվա վրա վստահություն չունես»*[378]*:*

---

[377] Ուսանողների հետ ֆոկուս-խմբային քննարկումից մեջբերում:

[378] Բիզնես ոլորտի աղջկա հետ հարցազրույցից մեջբերում:

Այս տիրույթում ապագան ներկայանում է ոչ թե որպես կանխատեսելի կենսագրական ընթացք, այլ որպես անկայուն և անվստահելի սոցիալական իրականություն:

Երիտասարդների մի մասը ապագան դիտարկում է ոչ թե որպես ինքնաբերաբար եկող բարելավում, այլ որպես սեփական մասնակցությամբ կառուցվող հեռանկար: Հույսն այստեղ գործողության շարժիչ ուժ է և բարոյական պատասխանատվություն (տե՛ս Գծապատկեր 36):

Լավատեսություն և հույսի պահպանում

*«Ասփված է հույս փալիս, որ ապագայում լավ է լինելու, որովհեփև, եթե միշփ գնար վափ ուղղությամբ, փիեզերքը չէր երևա: Ուրեմն պեփք է նաև լավը լինի, գիշերվանից հեփո պեփք է փեսնել առավոփը, ու, ի փարբերություն մյուսների, շափերի, ովքեր սպասում են էդ առավոփվան, ես գիփակցում եմ՝ էդ առավոփը մենք պեփք է լինենք, ու ես փորձում եմ վաղվա էդ լուսաբացը հիմնել»[379]:*

Լավատեսություն և անորոշություն

*«Ես ուզում եմ լավ փեսնեմ Հայասփանի ապագան, բայց էս պահին դեռևս էդ լավափեսության ոնց որ նշաններ չկան էլի, որ դա փեսնեմ, բայց հուսով եմ, որ մեր երկրում էդ լավ օղակը պահպանվել է, ու էս դժվարին իրավիճակից հնարավոր կլինի Հայասփանը դուրս բերել ու նորից ինչ-որ զարգացման ուղի բռնել»[380]:*

Հայաստանի երիտասարդների ապագայի ընկալումները ձևավորվում են անորոշության, ինստիտուցիոնալ անվստահության, գոյաբանական վախերի և, միևնույն ժամանակ, հույսի խաչմերուկում: Ապագան այլևս չի ընկալվում որպես բաց հնարավորությունների հորիզոն, այլ որպես ռիսկային, խոցելի և հաճախ փակ տարածք, քանի որ հույսը տեղափոխվել է հանրայինից դեպի անձնական, ապագայից դեպի անցյալ, համակարգից դեպի գենետիկ պատկանելիություն: Երիտասարդների դիմակայունությունը դառնում է ոչ թե համակարգային աջակցությամբ ապահովվող ռեսուրս, այլ հոգեբանական ինքնապաշտպանության մե-

---

[379] Քաղաքացիական ոլորտի առաջորդի հետ հարցազրույցից մեջբերում:

[380] Պատերազմի մասնակից երիտասարդի հետ անհատական հարցազրույցից մեջբերում:

խանիզմ: Սա վտանգավոր միտում է երկարաժամկետ հեռանկարում, քանի որ կարող է հանգեցնել ինչպես արտագաղթի, այնպես էլ ներքին արտահոսքի՝ անտարբերության և քաղաքացիական նահանջի: Միաժամանակ, նույնիսկ այս բարդ պայմաններում հույսը չի անհետանում, այլ վերաձևակերպվում է՝ տեղափոխվելով միկրոմակարդակ և դառնալով երիտասարդների ապագայի հնարավորության վերջին հորիզոնը: Այն առավել հաճախ արտահայտվում է ոչ թե համակարգային փոփոխությունների սպասումով, այլ անձնական զարգացման, կրթության, հմտությունների կուտակման և փոքր, վերահսկելի հաջողությունների միջոցով ապագան «կառուցելու» ռազմավարությամբ: Այս իմաստով հույսը հանդես է գալիս որպես ոչ միայն հուզական վիճակ, այլև գործնական կողմնորոշում և կարողություն, որը թույլ է տալիս երիտասարդներին պահպանել գործելու կարողունակությունը և իմաստավորել իրենց ապագան անորոշության և ճգնաժամային պայմաններում:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպիսով, Հայաստանի երիտասարդների անցումները անկախության ոչ գծային, հաճախ խզված և հակասական բնույթի են: Անկախության ձգտումը, միգրացիոն տրամադրությունները, ընտանիքից կախվածությունը և հարաբերությունների ոլորտում անորոշությունները ձևավորում են սոցիալական մի իրականություն, որտեղ երիտասարդների ապագայակենտրոն ընտրությունները պայմանավորված են ոչ միայն անհատական ցանկություններով, այլև կառուցվածքային սահմանափակումներով, քաղաքական, տնտեսական անապահովությամբ և անորոշությամբ:

Հայաստանում երիտասարդությունը սոցիալականորեն կառուցված, բազմաչափ և դինամիկ անցումային փուլ է, որի սկիզբն ու ավարտը սահմանվում են ոչ թե տարիքային շեմերով, այլ սոցիալական դերերի, պատասխանատվությունների և կենսագրական անցումների միջոցով: Երիտասարդների ինքնաընկալման մեջ առաջնային են ինքնուրույնությունը, կրթական և ինստիտուցիոնալ անցումները, ընտանիքից տարանջատումը և հասարակական ներգրավվածությունը: Աղջիկների և տղաների կողմից երիտասարդության ժամանակագրության տարբեր ընկալումները արտացոլում են գենդերային սոցիալականացման, ընտանիքաստեղծման և սոցիալական սպասումների անհամաչափ բաշխումը: Հետպատերազմյան համատեքստում երիտասարդության սահմանները ենթարկվում են էական վերաձևակերպումների: Պատերազմը և տեղահանության փորձառությունը հանդես են գալիս որպես կենսագրական բեկումներ, որոնք արագացնում են մանկությունից մեծահասակություն անցումը՝ ձևավորելով «արագացված հասունություն»: Այս երևույթը ցույց է տալիս, որ ճգնաժամային իրադարձությունները կարող են խախտել կենսափուլային նորմատիվ հաջորդականությունը՝ վերափոխելով երիտասարդության սոցիալական իմաստը և ժամանակային սահմանները: Երիտասարդության ավարտը կապվում է նաև ծնող դառնալու հետ, ինչը վկայում է, որ ընտանեկան պատասխանատվությունների ստանձնումը շարունակում է մնալ մեծահասակության հիմնական սահմանագիծ: Միաժամանակ, երիտասարդության ներսում առկա է երկակիություն. այն ըն-

կալվում է և՛ որպես ազատության, փորձարկման և ինքնահայտնաբերման շրջան, և՛ որպես պատասխանատվության, նպատակասլացության և ինքնուրույնության ձևավորման փուլ: Այս երկակիությունը ժամանակակից հայաստանյան երիտասարդության առանցքային բնութագիրն է:

Քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը երիտասարդների համար հակասական դաշտ է: Մի կողմից առկա է հետաքրքրվածություն և ներգրավվածության պատրաստակամություն, մյուս կողմից՝ ինստիտուցիոնալ անվստահություն և իրական ազդեցության սահմանափակ զգացում: Մասնակցության այս «ասիմետրիկ մոդելը» ցույց է տալիս, որ երիտասարդները հակված են ոչ ինստիտուցիոնալ և ցածր ռիսկայնություն ունեցող ներգրավվածության ձևերին՝ միաժամանակ խուսափելով քաղաքականության բարձր ռիսկայնությունից, որը պայմանավորված է ատելության խոսքի տարածմամբ և արդյունքների անորոշությամբ:

Կրթության և աշխատաշուկայի փոխազդեցությունը բացահայտում է կառուցվածքային խզումներ: Մասնագիտության ընտրությունը հաճախ ձևավորվում է ոչ թե աշխատաշուկայի ռացիոնալ գնահատման, այլ կրթական սոցիալականացման վաղ փուլերի և հասանելի հնարավորությունների ազդեցությամբ: Արդյունքում ձևավորվում է դինամիկ, ոչ գծային մասնագիտական ուղի, որտեղ մասնագիտական ինքնությունը կառուցվում է փորձի, փոփոխությունների և երբեմն հիասթափության միջոցով: Այս գործընթացը ուղեկցվում է տարածքային անհավասարություններով և կրթական համակարգի արդյունավետության սահմանափակումներով:

Երիտասարդների կյանքի կազմակերպման մեջ ակնհայտ է ինքնավարության և կախվածության համակցությունը: Թեև երիտասարդները ձգտում են ինքնուրույնության, նրանք շարունակում են լայնորեն հենվել ընտանիքի և սոցիալական շրջապատի աջակցության վրա: Այս երկակիությունը բնորոշ է երկարաձգված անցումային փուլերին և արտացոլում է տնտեսական և սոցիալական սահմանափակումների ազդեցությունը:

Միգրացիոն տրամադրությունները, բնակարանային պայմանների գնահատականները և սոցիալական միջավայրի ընկալումները վկայում են, որ երիտասարդների որոշումները պայմանավորված են ոչ միայն ան-

հատական նախասիրություններով, այլև կառուցվածքային գործոններով: Հատկապես կարևոր է այն, որ անկախության ձգտումը հաճախ սահմանափակվում է տնտեսական անապահովությամբ, ինչը վերածում է ինքնուրույնությունը ոչ թե հասանելի իրականության, այլ ձգձգվող նպատակի:

Միջանձնային հարաբերությունների ոլորտում նկատվում է նորմատիվ հստակության նվազում և հարաբերությունների «լղոզվածություն», ինչը արտացոլում է ժամանակակից սոցիալական կապերի անկայունությունը: Սա հաճախ ուղեկցվում է զգացմունքային անապահովությամբ և վստահության ճգնաժամով:

Երիտասարդների բարեկեցությունը ձևավորվում է բազմակի ճնշումների և գործոնների ազդեցությամբ՝ սոցիալ-տնտեսական անհավասարություններ, պատերազմական փորձառություններ, ապագայի անորոշություն և ինստիտուցիոնալ աջակցության սահմանափակումներ: Չնայած հարաբերականորեն դրական ինքնագնահատականին՝ առկա է թաքնված խոցելիություն և սթրեսի կուտակում, ինչը վկայում է դիմադրողականության անհատականացման մասին: Ժամանցը և թվային միջավայրը դառնում են երիտասարդության սոցիալականացման, ինքնության ձևավորման և վերականգնման առանցքային հարթակներ: Միևնույն ժամանակ, դրանք նաև գործիքային բնույթի են՝ ուղղված ապագայի պատրաստմանը և հմտությունների զարգացմանը:

Պատերազմը և դրա հետևանքները խաթարել են երիտասարդների կենսագրական անցումները, խորացրել են անապահովությունը, նվազեցրել են ինստիտուցիոնալ վստահությունը և սահմանափակել են ապագայի հորիզոնները: Միևնույն ժամանակ, նույն այդ փորձառությունները ձևավորել են ուժեղ բարոյական պատասխանատվություն, պատկանելության զգացում և հանրությանը ծառայելու պատրաստակամություն: Երիտասարդները փորձում են ակտիվ գործել լարված դաշտում՝ մշտապես բախվելով կառուցվածքային սահմանափակումների: Արդյունքում, ակտիվությունը հաճախ վերածվում է հիասթափության, իսկ հույսը՝ խոցելի, բայց չվերացած ապագայի կողմնորոշման: Այս համատեքստում հույսը պետք է ընկալել ոչ թե որպես պարզ հոգեբանական վիճակ, այլ որպես սոցիալապես պայմանավորված, քաղաքականապես լարված և

բարոյականորեն բեռնավորված պրակտիկա: Հայաստանի երիտասարդների ապագայի ընկալումները ձևավորվում են հույսի ճգնաժամի, ինստիտուցիոնալ անվստահության և գոյաբանական վախերի խաչմերուկում: Ապագան այլևս չի ընկալվում որպես բաց հնարավորությունների հորիզոն, այլ որպես ռիսկային, խոցելի և հաճախ փակ տարածք: Հույսը տեղափոխվել է հանրայինից դեպի անձնական, ապագայից դեպի անցյալ, համակարգից դեպի գենետիկ պատկանելություն: Երիտասարդները շարունակում են ապրել Հայաստանում ոչ թե վստահության, այլ պարտավորության, մեղքի և մշակութային կապի հիմքով: Այս պայմաններում երիտասարդների դիմակայունությունը դառնում է ոչ թե համակարգային աջակցությամբ ապահովվող ռեսուրս, այլ հոգեբանական անհատական ինքնապաշտպանության մեխանիզմ: Սա վտանգավոր միտում է երկարաժամկետ հեռանկարում, քանի որ կարող է հանգեցնել ինչպես արտագաղթի, այնպես էլ ներքին արտահոսքի՝ անտարբերության և քաղաքացիական նահանջի:

Այսպիսով, Հայաստանի երիտասարդների կյանքի առանցքը ձևավորվում է **անորոշության և հույսի փոխազդեցության մեջ**: Պատերազմը, սոցիալական փոփոխությունները և ինստիտուցիոնալ անվստահությունը սահմանափակում են ապագայի հորիզոնները՝ ձևավորելով «փակվող ապագայի» զգացողություն: Սակայն նույնիսկ այս պայմաններում հույսը չի վերանում. այն վերափոխվում է՝ դառնալով անհատականացված, խոցելի, բայց շարունակվող կողմնորոշում: Այս համատեքստում երիտասարդների ուսումնասիրման առանցքային հարցը դառնում է ոչ միայն այն, թե ինչպես են նրանք ինտեգրվում գոյություն ունեցող սոցիալական համակարգին, այլև այն, թե ինչպես են ապրում, վերաիմաստավորում և երբեմն դիմադրում այդ համակարգին՝ ձևավորելով նոր սոցիալական իրականություններ:

Թեև մեր հետազոտությունը ընդգրկում է Հայաստանի երիտասարդության խնդիրները, սակայն արդյունքները կարող են նպաստել հետպատերազմյան հասարակություններում երիտասարդների անցումների վերաբերյալ ավելի լայն տեսական քննարկումներին: Հայաստանի երիտասարդների վերաբերյալ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որպես հետպատերազմյան հասարակություն հույսը ո՛չ զուտ հոգեբանա-

կան է, ո՛չ էլ զուտ կառուցվածքային: Փոխարենը, այն ի հայտ է գալիս անձնական ճգտումների, ինստիտուցիոնալ վստահության և կրթական, աշխատանքային հնարավորությունների կառուցվածքների հատման կետում:

**Երիտասարդական քաղաքականությունների և միջամտությունների առաջարկներ**

Հայաստանի երիտասարդների անցումները անկախության տեղի են ունենում բարդ, հաճախ խզված և կառուցվածքայնորեն սահմանափակ միջավայրում: Հետևաբար, երիտասարդական քաղաքականությունը պետք է վերակառուցվի ոչ թե նորմատիվ «գծային անցումների» մոդելի, այլ իրական կենսափորձառությունների, խոցելիության և բազմազան ուղիների առկայության ընդունման հիման վրա:

- *Երիտասարդության սահմանման և քաղաքականության թիրախավորման վերաիմաստավորում:*

Երիտասարդական քաղաքականությունը պետք է հաշվի առնի, որ երիտասարդության սկիզբն ու ավարտը երիտասարդների կողմից ընկալվում են ոչ միայն տարիքային, այլև սոցիալական դերերի և փորձառությունների միջոցով: Առաջարկվում է մշակել փուլային մոտեցում երիտասարդությանը (օր.՝ վաղ երիտասարդություն, անցումային երիտասարդություն, ուշ երիտասարդություն), որտեղ յուրաքանչյուր փուլ կունենա թիրախային ծրագրեր՝ կրթության, աշխատանքի, ընտանիքաստեղծման և անկախության ոլորտներում: Գենդերային տարբերությունների հաշվառումը պետք է դառնա պարտադիր բաղադրիչ քաղաքականության մշակման մեջ, հատկապես կրթության, աշխատանքի, ծնողավարության և բնակարանային ապահովման ծրագրերում:

- *Կրթությունից աշխատանքի անցման համակարգային ամրապնդում:*

Անհրաժեշտ է զարգացնել կարիերայի ուղղորդման ինստիտուցիոնալ համակարգ՝ սկսած միջին դպրոցից մինչև բարձրագույն և մասնագիտական կրթություն: Մասնագիտական կողմնորոշումը պետք է հիմնված լինի աշխատաշուկայի իրական տվյալների, ոչ թե միայն անհատական նախասիրությունների վրա: Տարածքային անհավասարու-

թյունները մեղմելու համար անհրաժեշտ է թիրախային ներդրում մարզային կրթական հաստատությունների նյութատեխնիկական բազայի, դասախոսական կազմի և ծրագրերի արդիականացման մեջ:

- *Աշխատաշուկայի և երիտասարդների զբաղվածության քաղաքականություն:*

Անհրաժեշտ է մշակել երիտասարդների առաջին աշխատանքի մուտքի պետական աջակցման ծրագրեր (սուբսիդավորված աշխատատեղեր, աշխատավարձի համաֆինանսավորում, գործատուի հարկային խթաններ): Աշխատանքի որակը պետք է դառնա քաղաքականության առանցք, ոչ միայն զբաղվածության մակարդակը. երիտասարդների մեծ մասը աշխատում է ոչ իր մասնագիտությամբ և ցանկանում է փոխել աշխատանքը: Խորհուրդ է տրվում ներդնել մասնագիտական վերաորակավորման և հմտությունների զարգացման ճկուն ծրագրեր, հատկապես 23–29 տարիքային խմբի համար:

- *Բնակարանային քաղաքականություն և անկախության աջակցում:*

Բնակարանային անապահովությունը երիտասարդների անկախացման, ամուսնության պլանավորման և կյանքի կայունության հիմնական խոչընդոտներից է: Անհրաժեշտ է մշակել երիտասարդների համար մատչելի բնակարանային ծրագրեր (վարձակալության սուբսիդավորում, երիտասարդ ընտանիքների հիփոթեքային արտոնություններ, համայնքային բնակարանային նախագծեր): Բնակարանային քաղաքականությունը պետք է դիտարկվի ոչ թե որպես սոցիալական օգնություն, այլ որպես երիտասարդների անկախության ինստիտուցիոնալ հիմք: Քանի որ բնակավայրի սոցիալական միջավայրի վատթարացումը բարձրացնում է միգրացիոն տրամադրությունները, պետք է ներդնել համայնքային զարգացման ինտեգրված ծրագրեր՝ ենթակառուցվածքներ, մշակութային կյանք, անվտանգություն, ծառայությունների հասանելիություն: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել աղջիկների բնակարանային խոցելիությանը և անվտանգության ընկալումներին:

- *Միգրացիոն քաղաքականություն և «մնալու» խթանում:*

Միգրացիոն մտադրությունները պետք է դիտարկվեն ոչ թե միայն որպես անհատական ընտրություն, այլ որպես կառուցվածքային ազդան-

շան: Խորհուրդ է տրվում մշակել երիտասարդների պահպանում (retention) և վերադարձ (return) խթանող ծրագրեր՝ կրթաթոշակներ, աշխատանքի երաշխիքներ, բնակարանային աջակցություն: Երևանամետ կենտրոնացումը մեղմելու համար անհրաժեշտ է մարզերում երիտասարդական հնարավորությունների իրական ընդլայնում:

- *Հոգեկան առողջություն և բարեկեցություն:*

Հաշվի առնելով պատերազմի, անորոշության և սթրեսի կուտակման ազդեցությունը՝ անհրաժեշտ է ստեղծել երիտասարդներին ուղղված հոգեկան առողջության հանրային ծառայություններ՝ անվճար կամ մատչելի հոգեբանական աջակցություն, խորհրդատվություն, խմբային ծրագրեր: Պետք է ներդնել դպրոցական և բուհական հոգեբանական ծառայությունների պարտադիր համակարգ: Կարևոր է անցում կատարել անհատական հաղթահարման մոդելից ինստիտուցիոնալ դիմադրողականության կառուցման:

- *Քաղաքացիական և քաղաքական մասնակցության վերակառուցում:*

Երիտասարդների համար սոցիալական մեդիան դարձել է միակ հարթակը, որտեղ կարող են լսելի դառնալ: Սա վկայում է ոչ թե թվային ակտիվության ուժի, այլ ինստիտուցիոնալ մասնակցության բացակայության մասին: Առաջարկվում է ստեղծել ազգային և համայնքային մակարդակներում երիտասարդների մասնակցության մշտական հարթակներ, օրինակ՝ առցանց պաշտոնական պլատֆորմ, որտեղ երիտասարդները կարող են գրանցվել, ներկայացնել խնդիրներ, առաջարկներ և լուծումներ, համայնքային երիտասարդական խորհուրդներ՝ խորհրդատվական, բայց իրական ազդեցության մանդատով, ներդնել երկփուլային մասնակցության մոդել, որտեղ երիտասարդը ձևակերպում է իր խնդիրը, իսկ հաջորդ փուլում ներգրավվում է լուծման մշակման գործընթացում՝ մասնագետների աջակցությամբ, կազմակերպել կանոնավոր հանդիպումներ երիտասարդների և որոշում կայացնողների միջև՝ ոչ ֆորմալ, վստահության վրա հիմնված ձևաչափերով: Քանի որ երիտասարդները հետաքրքրված են սոցիալ-քաղաքական գործընթացներով, բայց խուսափում են ինստիտուցիոնալ մասնակցությունից, անհրաժեշտ է ստեղծել ցածր ռիսկային, վստահելի մասնակցության հարթակներ՝ երիտասար-

դական խորհուրդներ, մասնակցային բյուջետավորում, խորհրդատվական մարմիններ, երիտասարդական կենտրոններին կից աշխատանքային խմբեր և հարթակներ: Պետք է նվազեցնել քաղաքական դաշտում ատելության խոսքը՝ որպես երիտասարդների համար հիմնական վանող գործոն: Աղջիկների բարձր քաղաքացիական ակտիվությունը կարող է ծառայել որպես ռեսուրս՝ կանանց առաջնորդության ծրագրերի զարգացման համար:

- *Երիտասարդների նկատմամբ վստահության քաղաքականության ձևավորում:*

Առաջարկվում է մշակել հանրային հաղորդակցության ռազմավարություն, որտեղ երիտասարդը կներկայացվի որպես ռեսուրս, ոչ թե խնդիր, խրախուսել երիտասարդների հաջողությունների տեսանելիության բարձրացումը՝ կրթության, գիտության, բիզնեսի, մշակույթի, պաշտպանության ոլորտներում, ներգրավել երիտասարդներին պետական ծրագրերի մեջ, ոչ միայն որպես շահառու, այլև որպես համաստեղծող: Երիտասարդների նկատմամբ հավատը պետք է դառնա ոչ թե հռետորաբանություն, այլ կառուցվածքային սկզբունք պետական քաղաքականության մեջ:

- *Հարաբերությունների, ընտանիքի և սոցիալական կապերի աջակցում:*

Երիտասարդների հարաբերությունների ոլորտում առկա անորոշությունները և վստահության ճգնաժամը պահանջում են կյանքի հմտությունների կրթություն՝ հաղորդակցություն, սահմանների ձևակերպում, կոնֆլիկտների կառավարում: Խորհուրդ է տրվում ներդնել ընտանիքաստեղծման նախապատրաստման ծրագրեր, հատկապես երիտասարդ զույգերի համար: Վաղ ծնողավարության դեպքում անհրաժեշտ է ապահովել երիտասարդ ծնողների սոցիալական և հոգեբանական աջակցություն, որպեսզի ծնող լինելը չդառնա սոցիալական մեկուսացման աղբյուր:

- *Ժամանց, մշակույթ և ինքնազարգացում:*

Քանի որ ազատ ժամանակը ինքնության և բարեկեցության կարևոր հարթակ է, անհրաժեշտ է ներդնել մատչելի երիտասարդական մշակութային, սպորտային և կրթական ենթակառուցվածքներ՝ հատկապես

մարզերում: Պետք է խթանել ոչ ֆորմալ կրթության ծրագրերը, նոր հմտությունների ուսուցումը, ստեղծարար ոլորտների զարգացումը: Սոցիալական մեդիան կարելի է օգտագործել ոչ միայն որպես ժամանց, այլև որպես քաղաքացիական կրթության, մասնակցության և ինքնազարգացման գործիք:

- *Հույսի վերակառուցումը որպես քաղաքական նպատակադրում:*

Հույսը տեղափոխվել է հանրայինից դեպի անձնական դաշտ, ապագայից անցյալ: Անհրաժեշտ է մշակել հույսի վերակառուցման քաղաքականություն, որտեղ երիտասարդը կտեսնի ոչ միայն պարտավորություն, այլև իմաստ և հեռանկար: Սա պահանջում է կանխատեսելիություն, արդարություն, իրական մասնակցություն և տեսանելի արդյունքներ: Երիտասարդների ապագայի պլանավորումը, մասնագիտական ինքնության ձևավորումը և սոցիալական վստահությունը անմիջականորեն պայմանավորված են կրթական համակարգի որակով և արդարությամբ: Կրթությունը երիտասարդների համար թե՛ հմտությունների ձեռքբերման միջոց է, թե՛ ապագայի նկատմամբ հույսի հիմնական աղբյուր: Առաջարկվում է իրականացնել կրթական բովանդակության արդիականացում՝ շեշտը դնելով քննադատական մտածողության, կյանքի հմտությունների, քաղաքացիական կրթության և հոգեբանական կայունության վրա, ամրապնդել պրակտիկ ուղղվածությունը բուհերում և քոլեջներում, ներդնել կարիերայի ուղղորդման համակարգ դպրոցից սկսած, ապահովել տարածքային հավասարություն կրթության մեջ: Կրթական համակարգի բարեփոխումը պետք է դիտարկվի և՛ որպես տնտեսական ներդրում, և՛ որպես սոցիալական վստահության վերակառուցման ռազմավարություն:

# SUMMARY
# ARMENIAN YOUTH AT THE CROSSROADS OF UNCERTAINTY AND HOPE

MARINA GALSTYAN
PhD in Sociology, Yerevan State University
Director, Center for Educational Research and Consulting
Republic of Armenia
marina.galstyan@ysu.am
ORCID: https://orcid.org/0000-0001-9396-0550

This monograph examines the social condition of young people in Armenia within the context of uncertainty, post-war transformation, and polycrisis. It explores how Armenian youth construct identities, navigate transitions to adulthood, pursue education and employment, and imagine their futures in a social environment shaped by political change, war, displacement, socio-economic instability, and rapid societal transformation.

The book is situated within the broader framework of "polycrisis," referring to the interconnected social, political, economic, and security-related uncertainties that have significantly influenced Armenian society during the last decade. The 2016 April war, the 2018 political transformations, the COVID-19 pandemic, the 2020 Artsakh war, and the 2023 displacement of Armenians from Artsakh collectively formed a complex and unstable environment in which young people's life trajectories are shaped. In this context, youth are examined not merely as a demographic category, but as a social group experiencing structural uncertainty, changing opportunities, and contested futures.

The monograph adopts an interdisciplinary perspective grounded primarily in sociology and youth studies. Particular attention is paid to the concepts of uncertainty, resilience, hope, social adaptation, and future orientations. The research analyses how young people respond to instability through educational strategies, labour-market adaptation, civic participation, migration aspirations, and everyday practices of coping and self-development. Methodologically, the study is based on a mixed-methods research design combining quantitative and qualitative approaches. The

empirical research includes a nationwide survey conducted among young people aged 13–35 across all regions of Armenia, in-depth interviews, focus group discussions, consultative meetings with specialists and policymakers, and secondary analysis of statistical and policy documents. The participatory dimension of the research is also significant, as young people were involved not only as respondents but also as contributors to the research process.

This book presents the main aspects of Armenian youth experience adulthood transitions under conditions of prolonged uncertainty and fragmented institutional support. Educational and career choices are increasingly shaped by the search for stability, adaptability, and economic security rather than by linear professional planning. Territorial inequalities, unequal access to quality education and employment opportunities, socio-economic pressures, and post-war insecurities significantly affect young people's opportunities and life chances. At the same time, the research highlights the growing importance of non-formal education, self-education, digital skills, and flexible career strategies in youth adaptation processes.

The monograph also emphasizes that despite structural difficulties and widespread uncertainty, young people continue to articulate aspirations, hopes, and future-oriented strategies. Hope emerges not only as an emotional resource but also as a social practice connected to agency, resilience, and the reconstruction of meaningful futures.

Overall, the study contributes to the sociological understanding of youth in post-war and polycrisis contexts and provides an empirical basis for the development of evidence-based youth policies in Armenia. It offers insight into the challenges, capacities, and future perspectives of Armenian youth while opening broader discussions about youth, uncertainty, and social transformation in contemporary societies.

This book will interest those engaged in the youth studies, sociology of education, students of sociology, anthropology, psychology, as well as a broader audience.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արծրունի Գ., Աշխատություններ // հ.1, Թ., Մշակի խմբ., 1904:

Գալստյան Մ. Երիտասարդների մասնակցության հարթակները ՀՀ կրթական համակարգում, УДК 428, էջ 127-141, «Լրաբեր Հայ-ռուսական համալսարանի», սերիա՝ «Հումանիտար և հասարակական գիտություններ» (34), ՀՌՀ հրատարակչություն, № 1, 2020:

Գալստյան Մ. Մասնագիտական կրթության որակի արդի հիմնախնդիրները Հայաստանում, «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա», 2021, № 1, էջ 71-78:

Գալստյան Մ. Մասնագիտական դասընթացներին երիտասարդների մասնակցությունը որպես աշխատաշուկայի պահանջներին հարմարվելու գործիք, էջ 111-129, Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում, Ուսումնական նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2018:

Գալստյան Մ. Հեռավար ուսուցումը Հայաստանում համավարակի ժամանակ. դիսկուրս-վերլուծություն, 37.091.3, 77-86, «Կրթությունը 21-րդ դարում», Գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, թիվ 2(6), Երևան, ԵՊՀ հրատ., 2021:

Գալստյան Մ. ՀՀ երիտասարդների մասնակցությունը ոչ ֆորմալ կրթությանը և հարմարումը աշխատաշուկայում, «Կրթությունը 21-րդ դարում», DOI:10.46991/ai.2023.1.25, 2023:

Գալստյան Մ. Արցախից տեղահանված երեխաների և երիտասարդների հարմարումը Հայաստանի կրթական համակարգում, «Կրթությունը 21-րդ դարում», 10(2), DOI:10.46991/ai.2023.2.16, 2023, էջ 16–27:

Գալստյան Մ. ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարումը հետպատերազմյան իրականությունում. սոցիոլոգիական վերլուծություն, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, հատոր ԺԴ, # 1, 2023:

Գալստյան Մ. Կորուսյա՞լ, թե՞ ուսյալ սերունդ. երիտասարդները հետպատերազմյան իրականությունում, «Արցախի պետական համալսարանի ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ», Պրակ 1, 2023:

Գալստյան Մ. ՀՀ երիտասարդների քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը հետպատերազմյան իրականությունում. ընկալում-

ներ և պրակտիկաներ // Վերլուծական տեղեկագիր (ՔՄՀԿ), 16: 55-78 DOI: 10.56673/18294502-23.16-79, 2023:
Զաուլավսկայա Մ., Մանասյան Ա., Գալստյան Մ. Հայաստանյան երիտասարդների սոցիալական հարմարումը աշխատաշուկայում // ՀՀ ԳԱԱ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2025:
Թադևոսյան Ա. Պատերազմը մասնակիցների պատմություններում. մարդաբանական հետազոտություն, - Եր.: Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2022:
Լեո, Անցյալից: Հուշեր, թղթեր, պատումներ, Թիֆլիս, 1925:
Մարդկային զարգացման ազգային զեկույց, 2018/2019, Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Հայաստան, 2019:
Րաֆֆի, Երկերի ժողովածու, 9-րդ հատոր, Հայպետհրատ, Երևան, 1958:
Волков, Ю.Г. Социология молодёжи: учебное пособие/ Ю.Г. Волков, В.И. Добреньков и [др.] / Под ред. проф. Ю.Г. Волкова. – Ростов н/Д.: Феникс, 2001. – 576 с.
Зубкова Е., Послевоенное советское общество: политика и повседневность, 1945—1953 г., Москва, 2000.
Корел Л.В. Социология адаптации: вопросы теории, методологии и методики, Новосибирск, 2005. - 424 с.
Лисовский, В.Т. Социология молодёжи: учебник / В. Т. Лисовский. – СПб.: СПбГУ, 1996. – 460 с.
Маркарян, Э. С. Теория культуры и современная наука / Э.С. Маркарян. – М., 1983.
Маркарян, Э. С. Проблема целостного исследования культуры в антропологии США / Э.С. Маркарян // Этнология в США и Канаде. – М.: Наука, 1989, 14–61 С.
Маркарян Э.С Гуманизм XXI столетия. Идеология самосохранения человечества. - Ереван, 2008. 388 – 389 С.
Маркарян Э.С. К экологической характеристике развития этнических культур // Общество и природа. Исторические этапы и формы взаимодействия. - М., 1981. 96, 98 С.

Мертон, Р. (2006) Социальная теория и социальная структура: пер. с англ. М.: АСТ: АСТ Москва: Хранитель, 2006.

Парсонс, Т. О структуре социального действия. М.: Академ. Проспект. 2000, 880 с.;

Тоффлер Э. Футурошок. СПб.: Лань, 1997.

Философские проблемы теория адаптации», М., 1975, 232 с.

Фромм, Э. Душа человека: пер. с нем. и англ. / общ. ред., сост., предисл. П. С. Гуревича. М.: Республика, 1992, 430 с.

Ходаков А.И. Социально-психологические условия адаптации молодого рабочего в производственном коллективе: Автореф.дисс. канд. пед. наук. – Л., 1976., – 24 с.

Эриксон Э. Молодой Лютер. М. 1996.

Alwin, D. F. From Obedience to Autonomy: Changes in Traits Desired in Children, 1924-1978. Public Opinion Quarterly, 1988.

Anđić T. Futurelessness, migration, or a lucky break: narrative tropes of the ‘blocked future’among Serbian high school students //Journal of Youth studies. – 2020. – Т. 23. – №. 4. – С. 430-446.

Appadurai A. Hope and democracy //Public Culture. – 2007. – Т. 19. – №. 1. – С. 29-34.

Arendt, H. The Human Condition; The University of Chicago Press: Chicago, IL, USA, 1958:

Aries, P. Centuries of Childhood. New York: Vintage Books, 1962.

Arnett J.J. Emerging Adulthood: The Winding Road from the Late Teens through the Twenties. Oxford: Oxford University Press, Inc, 2004.

Arnett, J.J. Adolescence and Emerging Aduldhood. 3rd edn. London: Pearson Education Limited, 2009.

Arnett, J.J. Young People’s Conceptions of the Transition to Adulthood. Youth & Society, 29(1), 3–23. 1997.

Bandura A. Social Learning Theory. Englewood Cliffs, NJ: Prentice Hall, 1977.

Barakat S. Necessary conditions for integrated approaches to the post-conflict recovery of cultural heritage in the Arab World, International Journal of Heritage Studies, 27:5, 2021, 433-448,

Barford A., Coutts A., and Sahai G., Youth Employment in Times of COVID A global review of COVID-19 policy responses to tackle (un)employment and disadvantage among young people, International Labour Organization, 2021.
Bauman, Z. (2007c) 'Has the future a Left? ', Soundings:
Bauman, Z. To Hope is Human. Tikkun 2004, 19, 64–67:
Barrett P. et al. The impact of school infrastructure on learning: A synthesis of the evidence. – 2019.
Beck U. Toward a new critical theory with a cosmopolitan intent. Constellations, 10, 2003, 453-468.
Beck, U. Risk society: towards a new modernity, London, Sage., Beck, U. & Beck-Gernshiem, E. (2001) Individualization, Cambridge, Polity Press, 1992.
Beck, U. The anthropological chock: Chernobyl and the contours of the risk society. Berkley Journal of Sociology, 32, 1987, 153-165.
Bennet J.W. The Ecological Transition: Cultural Anthropology and Human Adaptation. — N.Y.: Pergamon Press, 1976.
Bennett, A., Cieslik, M. and Miles, S. (eds), Researching Youth. Basingstoke: Palgrave Macmillan, 2003.
Berlant L. Cruel Optimism, Duke University Press, 2011.
Berardi F. After the future. – AK press, 2011.
Berg J.A. Subjective age identity during the transition to adulthood: Psychological and sociological perspectives. Social Thought and Research 28, 2007, 145–163.
Berlant, Lauren. Cruel Optimism. Duke University Press, 2011. JSTOR, https://doi.org/10.2307/j.ctv1220p4w. Accessed 21 Jan. 2026
Bethlehem J. Selection bias in web surveys //International statistical review. – 2010. – T. 78. – №. 2. – C. 161-188.
Bloch, E. The Principle of Hope; 3 Voll., Original work published 1959; The MIT Press: Cambridge, MA, USA, 1986:
Bolten C., I Did It to Save My Life: Love and Survival in Sierra Leone, University of California Press, 2012.
Bolten C., Serious Youth in Sierra Leone: An Ethnography of Performance and Global Connection New York, Oxford University Press, 2020.

Bourdieu P. Youth is just a word //Sociology in question. – 1993. – T. 1993. – №. 1978. – C. 94-102.
Bourdieu P. and Passeron J.-C. Reproduction in Education, Society and Culture, 2nd edition. London: Sage, 1990.
Bourdieu P. The forms of capital in J. G. Richardson (ed.), Handbook of Theory and Research for the Sociology of Education. New York: Greenwood Press, 1986.
Bowlby, J. Child Care and the Growth of Love. Harmondsworth: Pengiun, 1953/1965.
Boyden, Jo, Jo de Berry, Feeny T. and Hart J. Children Affected by Armed Conflict in South Asia: A review of trends and issues identified through secondary research. RSC Working Paper No. 7. Refugee Studies Center, University of Oxford, Oxford, UK, 2002.
Bugental, J.F.T. The third force in psychology', Journal of Humanistic Psychology, 4 (1): 19-26, 1964.
Callegaro M., Manfreda K. L., Vehovar V. Web survey methodology. – Sage, 2015.
Carden-Coyne, A. Butterfly touch: Rehabilitation, nature and the haptic arts in the First World War. Critical Military Studies. 2019.
Children and Youth in Crisis Protecting and Promoting Human Development in Times of Economic Shocks Mattias Lundberg and Alice Wuermli Editors, International Bank for Reconstruction and Development / The World Bank, 2012.
Chisholm L. et al. EUROPEAN YOUTH STUDIES Integrating research, policy and practice, Deliverable 7.1 – M.A. EYS Reader, Innsbruck, 2011.
Cieslik M., Simpson D., Key concepts in Youth Studies, Sage publications Ltd, 2013.
Claudia Catani, "Mental Health of Children Living in War Zones: A Risk and Protection Perspective", World Psychiatry, Vol. 17, No. 1, 2018.
Cohen Y.A. (Ed.). Man in Adaptation: The Cultural Present. — Chicago: Aldine Publ. Co., 1968
Connerton P. The Spirit of Mourning: History, Memory and the Body. Cambridge: Cambridge University Press. 2011.

Cormon, F. Nouveau dictionnaire de sobrino, François, Espagnol et Latin. Nouvelle édition, corrigée et augmentée, tome second. Anvers, Piestre et Delamollière. Copie de l'exemplaire de la New York Public Library, numérisé le 5 oct. 2006. Consulté sur Internet le 27 mai 2008 sur., 1789.

Couper M. P. Web surveys: A review of issues and approaches //The public opinion quarterly. – 2000. – T. 64. – №. 4. – C. 464-494.

Davey, G.C.L., Albery, I.P., Chandler, C., Field, A. P., Jones, D., Messer, D., Moore, S., and Stirling, C., (eds) Complete Psychology. London: Hodder and Stoughton, 2004.

Davis M. Bauman's compass: Navigating the current interregnum //Acta Sociologica. – 2011. – T. 54. – №. 2. – C. 183-194:

Dillman D. A., Smyth J. D., Christian L. M. Internet, phone, mail, and mixed-mode surveys: The tailored design method //Indianapolis, Indiana. – 2014. – T. 17.

Doing Research with Children, A practical Guide, Greig A., J. Taylor, T. Mackay, 3rd edition, 2013.

Eastmond M., Selimovic J. M. Silence as possibility in postwar everyday life //International Journal of Transitional Justice. – 2012. – T. 6. – №. 3. – C. 502-524.

Eisenstadt S. N., From Generation to Generation: Age Groups and Social Structure, First published in 1956 by Routledge Reprinted in 1998, 2001 by Routledge 2 Park Square, Milton Park, Abingdon, Oxon, O X 14 4R N.

Elder Jr G. H. Time, human agency, and social change: Perspectives on the life course //Social psychology quarterly. – 1994. – C. 4-15.

English H.B., English A.C. Comprehensive Dictionary of Psychological and Psychoanalitical Terms: A Guide to Usage. — Longmans, 1958.

Erikson, E.H. Identity: Youth and crisis. New York: WW Norton & Company, 1968.

Eriksson M., Ghazinour M. and Hammarstrom A., "Different Uses of Bronfenbrenner's Ecological Theory in Public Mental Health Research: What Is Their Value for Guiding Public Mental Health Policy and Practice?", Social Theory and Health, Vol.16, No. 4, 2018.

Escamilla A., Lonean I., Brazienė R., Petkovic S., Meta-analysis of research on the impact of Covid-19 on the youth sector, 2021.
Étienne, J. et al. Dictionnaire de sociologie, Hatier, 2005.
Fanthorpe R. and Maconachie R., Beyond The 'Crisis of Youth'? Mining, Farming, And Civil Society in Post-War Sierra Leone, Published by Oxford University Press, 2010.
Freire, P. (1994). Pedagogy of the oppressed (3rd ed.). New York: Continuum Publishing Company.
Freire, P. 1992. Pedagogy of hope: Reliving pedagogy of the oppressed. London: Continuum.
Fromm, E. The Revolution of Hope: Toward a Humanized Technology, 1st ed.; Harper & Row: New York, NY, USA, 1968; American Mental Health Foundation: New York, NY, USA, 2010.
Furlong A. Future agendas in the sociology of youth, Youth Studies Australia, University of Glasgow, September 2011.
Furlong A., Cartmel F. Young people and social change: Individualization and risk in late modernity. – Open university press, 1997.
Furlong A., University of Glasgow, Future agendas in the sociology of youth, Youth Studies Australia, September 2011.
Furlong, A. & Cartmel, F., Young People and Social Change: New Perspectives, Buckingham: Open University Press, 2007.
Furlong, A. Handbook of youth and young adulthood. Roultledge, London-New York, 2009.
Furlong, A. Youth Studies: An Introduction. USA: Routledge, 2013.
Galstyan M. Conceptualizing and Measuring Economic and Social Aspects of Youth Independence in Armenia //Journal of Sociology: Bulletin of Yerevan University. – 2024. – T. 15. – №. 1 (39). – C. 28-42.
Galstyan, M. Re-Conceptualising Youth: Theoretical Overview. Journal of Sociology: Bulletin of Yerevan University, 13(2 (36), 22–27, 2022.
Galstyan., M. Development of Human Capital in Armenia: Youth Employment and Youth Policy, УДК 364(075). 3166303.7, сб. науч. ст. Всерос. науч.-практ. конф. с междунар. участием, С.-Петербург, 23–25 мая 2019 г. – СПб.: ПОЛИТЕХ-ПРЕСС, 2019. – 514 с., 56-59 с.

Giddens A., Sociology, Revised and updated with Philip W. Sutton polity, Polity Press, 2009.

Giddens, A. Consequences of modernity, Cambridge, Polity Press, 1990.

Giddens, A. Modernity and self-identity, Cambridge, Polity Press, 1991.

Gillis, J. Youth and History: Tradition and Change in European Age Relations 1770-Present. New York. Academic Press, 1974.

Goveas J., Coomarasamy S. Why am I still here? The impact of survivor guilt on the mental health and settlement process of refugee youth //Today's youth and mental health: Hope, power, and resilience. –Cham: Springer International Publishing, 2018. – С. 101-117.

Greco S. Hope in the Sociological Thoughts of some Founding Fathers //The American Sociologist. – 2023. – Т. 54. – №. 1. – С. 56-75:

Groves R. M., Couper M. P. Nonresponse in household interview surveys. – John Wiley & Sons, 2012.

Haidt J. The anxious generation: How the great rewiring of childhood is causing an epidemic of mental illness. – Penguin, 2024.

Hareven T. K. The Last Stage: Historical Adulthood and Old Age, Deadalus, 105(4), 1976

Hareven T.K. Aging and generational relations: A historical and life course perspective. Annual Review of Sociology 20(1), 1994, 437–461.

Hartmann H. Ego psychology and the Problem of adaptation. N-Y.,1958.

Heath, S. and Walker, C. (eds) Innovations in Youth Research. Basingstoke: Palgrave Macmillan, 2011.

Hoffman J. Psychological separation of late adolescents from their parents// Journal of Counseling Psychology. 1984. No 31. P. 170-178.

Honwana A. M. The Time of Youth: Work, Social Change //Politics in Africa. Sterling: Kumarian Press. – 2012.

Hromadžić, Azra. 2015. Citizens of an empty nation: youth and state-making in postwar Bosnia-Herzegovina. Philadelphia, PA: University of Pennsylvania Press, 2015.

ILO, ILO Monitor: COVID-19 and the World of Work. Fourth Edition; p. 3, 2020.

J.A. Fernandez. Youth residential independence and autonomy: a comparative study. Journal of Family Issues. N01, 1997.

Jacob C. Memories of the American Jewish Aliyah: Connecting Individual and Collective Experience.” In Social Memory and History: Anthropological Perspectives, edited by J. Climo and M.G. Cattell, 111–127. Lanham, MD: AltaMira Press, 2002.

Jakubowicz, A. Psychological adaptation in Encyclopediae Universalis, 2002, p. 247-250

Jeffrey C. Timepass: Youth, class, and the politics of waiting in India. – Stanford University Press, 2010.

John A. Shaw, “Children Exposed to War/Terrorism”, Clinical Child and Family Psychology Review, Vol. 6, No. 4, 2003.

John A. Shaw, “Children Exposed to War/Terrorism”, Clinical Child and Family Psychology Review, Vol. 6, No. 4, 2003.

Jonas-Simpson, C. The experience of being listened to: A human becoming study with music. Nursing Science Quarterly, 16, 2003, 232–238.

Jones, G. Youth. Cambridge: Polity Press, 2009

Kehily M.J. Understanding Youth: Perspectives, Identities and Practices. Milton Keynes: Open University Press., 2007, P 47.

Kennedy, J. H., & Kennedy, C. E. Attachment theory: Implications for school psychology. Psychology in the Schools, 41, 2004, 247-259.

Lazarus R. S. Stress, appraisal, and coping. – Springer, 1984. – T. 445.

Lesko, N. Act your age! The cultural construction of adolescence. Second Edi., p. 232, Oxford: Routledge, 2012.

Levi, G., & Schmitt, J. C. History of Youth in the West. Paris, 1996.

Livingstone S., Sefton-Green J. The class: Living and learning in the digital age. – NYU press, 2016. – T. 1.

Lucey H., Reay D. Identities in transition: Anxiety and excitement in the move to secondary school //Oxford Review of Education. – 2000. – T. 26. – №. 2. – C. 191-205.

Machel G. Impact of Armed Conflict on Children: Report of the Expert of the Secretary-General, Submitted Pursuant to UN General Assembly Resolution 48/157, UN, New York, 1996.

Machel G., Impact of Armed Conflict on Children: Report of the Expert of the Secretary-General, Submitted Pursuant to UN General Assembly Resolution 48/157, UN, New York, 1996

Macmillan Dictionary. Macmillan Publishers Limited. Retrieved 2013-8-15.

Malesevic S. How Pacifist Were the Founding Fathers? War and Violence in Classical Sociology, European Journal of Social Theory, 13(2), 2010.

Mangone E. The Sociology of Hope //Encyclopedia. – 2025. – T. 5. – №. 3. – C. 128:

Manheim K. The problem of generations, in P. Kecskemeti (ed.), Essays on the Sociology of knowledge. New York: Routledge and Kegan Paul (1st edn 1927), 1952.

Manzoni, A. Conceptualizing and measuring youth independence multidimensionally in the United States. Acta Sociologica, 59(4), 2016, 362–377.

Masten A. S. Ordinary magic: Resilience processes in development //American psychologist. – 2001. – T. 56. – №. 3. – C. 227.

Masten, A., and J. Obradovic. Competence and Resilience in Development. Annals New York Academy of Sciences 1094, 2006, 13–27.

Mead M. "Culture and Commitment. A Study of the Generation Gap". – New York, 1970.

Michelle Slone and Shiri Man, "Effects of War, Terrorism, and Armed Conflict on Young Children: A Systematic Review", Child Psychiatry and Human Development, Vol. 47, No 6, 2016.

Moran, E.F. Human adaptability (2nd edition). Boulder, CO: Westview Press, 2000, 446 p.

Nolen-Hoeksema S. The role of rumination in depressive disorders and mixed anxiety/depressive symptoms //Journal of abnormal psychology. – 2000. – T. 109. – №. 3. – C. 504.

Palmberger M., Between Past and Future: Young People's Strategies for Living a "Normal Life" in Postwar Bosnia and Herzegovina, In Montgomery W. David (ed.), Everyday Life in the Balkans. Bloomington, IN: Indiana University Press, 2018.

Parsons, T. The Social System. London: Routledge & Kegan Paul Ltd, 1970.

Park N. Character strengths and positive youth development //The Annals of the American Academy of Political and Social Science. – 2004. – T. 591. – №. 1. – C. 40-54.

Petkovic S., Ignatovich A., Galstyan M., YOUTH RESEARCH: THE ESSENTIALS, Council of Europe and European Commission, 2019.

Philips L. Human adaptation and his failures. Academic Press, N-Y&London, 1968.

Piaget, J. Biologie et connaissance: essai sur les relations entre les régulations organiques et les processus cognitifs, Éditions Gallimard, 1967.

Piaget, J. Construction of reality in the child. London: Routledge & Kegan Paul, 1957.

Pollock, G. Individualization and the transition from youth to adulthood. Young: Nordic Journal of Youth Research, 5, 1997, 55-68.

Popper K., The Myth of framework, In defense of science and rationality, Routledge, London and New York, 2006, 2-4 p.

Post-War Demographic Problems in Britain Author(s): Enid Charles, American Sociological Review, Vol. 11, No. 5 (Oct., 1946), 578-590 p.

Quintelier E., Differences in political participation between young and old people, Contemporary Politics, Volume 13, Number 2, 2007.

Rey, A. Ed. Dictionnaire historique de la langue française, Paris, Armand Colin, 2006.

Rey-Debove, J. & A. Rey Eds. Le nouveau Petit Robert, Paris, Dictionnaires Le Robert, 2007.

Richards P. No Peace, No War: An Anthropology of Contemporary Armed Conflicts, Athens/Oxford: Ohio University Press/James Currey, 2005

Roberts, K. Problems and priorities for the sociology of youth, in Bennett, A., Cieslik, M. and Miles, S. (2003) (eds), Researching Youth. Basingstoke: Palgrave Macmillan, 2003, 13-28 p.

Ruth V. Reed, Mina Fazel, Lynne Jones, Catherine Panter-Brick and Alan Stein, "Mental Health of Displaced and Refugee Children Resettled in Low-Income and Middle-Income Countries: Risk and Protective Factors", The Lancet, Vol. 379, No. 9812, 2012.

Schwartz, S.H. Basic human values: Their content and structure across countries. In A Tamayo & J.B. Porto (Eds.), Values and behavior in organizations. Petrópolis, Brazil: Vozes, 2005, 21-55 p.

Scribano A., Sociology of Hope A New Theory, 2026, Taylor & Francis Group:
Seligman E.R., Johnson A. (Eds.). Encyclopaedia of the Social Sciences. — N.Y.: McMillan Co., 1967. — Vol. 1: Adaptation.
Skinner B.F. The Behaviour of Organisms. New York: D. Appledon-Century, 1938.
Slone M. and Man S., “Effects of War, Terrorism, and Armed Conflict on Young Children: A Systematic Review”, Child Psychiatry and Human Development, Vol. 47, No 6, 2016;
Vindya Attanayake, Rachel McKay, Michel Joffres, Sonal Singh, Frederick Burkle Jr. and Edward Mills, “Prevalence of Mental Disorders among Children Exposed to War: A Systematic Review of 7,920 Children”, Medicine, Conflict and Survival, Vol. 25, No. 1, 2009.
Smit B.and Wandel J. Adaptation, adaptive capacity and vulnerability. Global Environmental Change 16, 2006, 282-292 p.
Snyder C. R. Hope theory: Rainbows in the mind //Psychological inquiry. – 2002. – T. 13. – №. 4. – C. 249-275.
Sorokin P. Man and Society and Calamity. — N.Y., 1942.
Sorokin P. Social and Cultural Dynamics. — N.Y., 1937–1941. — Vols. 1-4 p.
Strauss W., Howe N. Generations: The History of America's Future, 1584 to 2069, 1991.
Strauss W., Howe N. The Fourth Turning: An American Prophecy, Broadway Books, 1997.
The Role of Youth in Post-Conflict Reconstruction (The Case of Liberia), Marit Woods SIT Graduate Institute, 2011.
Therborn, G. Entangled Modernities. European Journal of Social Theory, 6, 2003, 293- 305
Theresa S. Betancourt, Dana L. Thomson, Robert T. Brennan, Cara M. Antonaccio, Stephen E. Gilman and Tyler J. VanderWeele, “Stigma and Acceptance of Sierra Leone’s Child Soldiers: A Prospective Longitudinal Study of Adult Mental Health and Social Functioning”, Journal of the American Academy of Child & Adolescent Psychiatry, 2019.

Understanding post-war British society, Edited by James Obelkevich and Peter Catterall, The Institute of Contemporary British History, 1994.

Vigh H. Motion squared: A second look at the concept of social navigation //Anthropological theory. – 2009. – Т. 9. – №. 4. – С. 419-438.

Vindya Attanayake, Rachel McKay, Michel Joffres, Sonal Singh, Frederick Burkle Jr. and Edward Mills, "Prevalence of Mental Disorders among Children Exposed to War: A Systematic Review of 7,920 Children", Medicine, Conflict and Survival, Vol. 25, No. 1, 2009.

Wadsworth, B. J. Piaget's theory of cognitive development: An introduction for students of psychology and education. New York: McKay, 1971.

War Child UK, War: The Next Generation – The Future of War and Its Impact on Children, 2013.

Which? Craft in Post-War Britain: The Consumers' Association and the Politics of Affluence Author(s): Lawrence Black, A Quarterly Journal Concerned with British Studies, Vol. 36, No. 1, Spring, 2004.

Willis, P. Learning to Labour: How Working Class Kids Get Working Class Jobs. Farnborough: Saxon House, 1977.

Wyn, J. and Woodman, D. Generation, youth and social change in Australia, Journal of Youth Studies, 2006, 9: 495–514 p.

Wyn, J., Educating for late modernity, in A. Furlong (ed.), Handbook of Youth and Young Adulthood, Abingdon: Routledge, 2009.

Youth in Europe / edited by Alessandro Cavalli and Olivier Galland. Cavalli, Alessandro, editor.; Galland, Olivier, editor. London: Pinter; 1995.

Zimmerman B. J. Attaining self-regulation: A social cognitive perspective //Self-regulation: Theory, research, and applications/Academic. – 2000.

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
## Հետազոտության մեթոդաբանություն

Աշխատանքը մշակվել է 2025 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին 13–35 տարեկան երիտասարդների շրջանում իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա, ինչը համապատասխանում է ՀՀ երիտասարդական քաղաքականության մասին օրենքում ամրագրված տարիքային սահմանմանը: Տարիքային խմբերի առանձնացումը (13-17, 18-22, 23-29, 30-35) թույլ է տվել վերլուծել երիտասարդության զարգացման փուլերում առկա տարբերությունները՝ ընդգծելով յուրաքանչյուր խմբի համար առավել կարևոր խնդիրներն ու կարիքները: Հետազոտությունը իրականացվել է Երևանում և բոլոր մարզերում: Բնակավայրերի ընտրության լրացուցիչ գործոններ են՝ համայնքների սահմանամերձ լինելը, պատերազմի ազդեցությունը առավել շատ կրելը: Հետազոտությունը իրականացվել է ***մասնակցային հետազոտության*** սկզբունքով՝ երիտասարդները փորձարկել և օգնել են կատարելագործել հետազոտական գործիքները, մասնակցել են տվյալների հավաքագրման գործընթացին՝ որպես հարցազրուցավարներ կամ ֆոկուս-խմբերի համակազմակերպիչներ, ինչպես նաև ընդգրկվել են արդյունքների նախնական վերլուծության փուլում:

Հետազոտության խնդիրները լուծելու համար կիրառվել են տվյալների հավաքման ***քանակական*** *և* ***որակական*** մեթոդներ, ինչը հնարավորություն է տվել համատեղելու վիճակագրական լայնածավալ տվյալները և երիտասարդների սուբյեկտիվ փորձառությունները:

*Տեղեկատվության հավաքագրման մեթոդներ*

Հետազոտությունն իրականացվել է խառը մեթոդների կիրառմամբ: Տվյալների հավաքման մեթոդաբանության հիմքում հետազոտության աղբյուրների, տվյալների ստացման մեթոդների և արդյունքների փոխլրացումն է: Մասնավորապես, փաստաթղթերի վերլուծության միջոցով ձեռք բերված հիմնավորումները համադրվել են դաշտային հետազոտությունների արդյունքների հետ, իսկ խորհրդատվական քննարկումները հնարավորություն են տվել ճշգրտելու ստացված եզրակացությունները:

Այսպիսով, մեթոդաբանական կառուցվածքը թույլ է տվել ստանալ ինչպես լայնածավալ վիճակագրական պատկեր, այնպես էլ խորքային վերլուծություն՝ հիմնված անհատական և խմբային փորձառությունների վրա:

- *Փաստաթղթերի վերլուծություն*

Հետազոտության սկզբնական փուլում իրականացվել է փաստաթղթերի երկրորդային վերլուծություն: Տեղեկատվության աղբյուրներն են՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի և այլ պետական կառույցների հրապարակումները, ժողովրդագրական և աշխատաշուկայի տվյալները, երիտասարդության վերաբերյալ գիտական ու գործնական հետազոտությունների զեկույցները, ինչպես նաև ՀՀ երիտասարդության մասին օրենքը, այլ օրենսդրական ու ծրագրային փաստաթղթեր: Այս վերլուծությունը ապահովել է դաշտային հետազոտության արդյունքների համադրելիությունն ու գիտական հիմքը:

- *Առանցքային փեղեկափուների հետ խորհրդափվական հանդիպումներ*

Հետազոտության ընթացքում իրականացվել են հանդիպումներ երիտասարդության հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների, պետական կառույցների և հասարակական, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև կազմակերպվել են խորհրդատվական քննարկումներ մանկավարժների, պատմաբանների, սոցիոլոգների, սոցիալական աշխատողների, հոգեբանների, մարդկային ռեսուրսների մասնագետների և քաղաքականություն մշակողների հետ: Այս հարցազրույցները և քննարկումները թույլ են տվել պարզել, թե ինչպիսի խնդիրներ են առաջնային համարվում պատերազմից հետո, ինչ ծրագրեր և նախաձեռնություններ են իրականացվում այս ուղղությամբ, ինչպես նաև բացահայտել այն տեղեկատվական բացերը, որոնք անհրաժեշտ է լրացնել երիտասարդական ռազմավարության և միջոցառումների արդյունավետ իրականացման նպատակով:

Խորհրդակցական հանդիպումներ իրականացվել են ինչպես հետազոտության նախնական, այնպես էլ հետազոտության ավարտական փու-

լում՝ շահագրգիռ կողմերի հետ ճշգրտման նպատակով քննարկելով հետազոտության արդյունքները:

- *Առցանց հարցում*

Քանակական տվյալների ստացման նպատակով անցկացվել են ինքնալրացվող հարցաթերթիկով հարցումներ Հայաստանի տարբեր տարածքներում ապրող 13-35 տարեկան 1000 երիտասարդների շրջանում: Այս մեթոդը հնարավորություն է տվել հավաքելու համապարփակ տեղեկատվություն՝ հոգեբանական վիճակի, կրթության և զբաղվածության, ապագայի պլանների, անվտանգության զգացման և քաղաքացիական մասնակցության, պատերազմի հետևանքների, միգրացիոն միտումների և այլ հիմնախնդիրների, փորձառությունների վերաբերյալ:

- *Ֆոկուս-խմբային քննարկումներ*

Ֆոկուս-խմբային քննարկումների իրականացման նպատակն է պարզել, թե ինչպես են երիտասարդների տարբեր խմբեր ընկալում հետպատերազմյան իրավիճակը, ինչ սպասումներ ունեն, ինչ հիմնական դժվարությունների են բախվում առօրյայում, ինչպես են տեսնում իրենց մասնակցությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, որոնք են խմբային ընկալումների, սպասումների և փորձառությունների ձևավորման մեխանիզմները: Ֆոկուս-խմբային քննարկումները կազմակերպվել են այնպես, որ յուրաքանչյուր խմբում ընդգրկվեն համեմատաբար նույնանման փորձառություն ունեցող երիտասարդներ: Այս մոտեցումը թույլ է տվել ավելի հստակ վերհանել յուրաքանչյուր ենթախմբի յուրահատուկ փորձառությունը, խնդիրները, արժեքներն ու ընկալումները: Ֆոկուս-խմբային քննարկումները իրականացվել են այն խմբերի երիտասարդների հետ, որոնք ունեն յուրահատուկ փորձառություն: Իրականացվել է 10 ֆոկուս-խմբային քննարկումներ աշխատող ուսանողների, ծագման համայնքից դուրս սովորող ուսանողների, **Արցախից տեղահանված** երիտասարդների, գործազուրկ երիտասարդների, չաշխատող և չսովորող երիտասարդների, **սահմանամերձ բնակավայրերի երիտասարդների**, մարզային քաղաքի երիտասարդների, գյուղաբնակ երիտասարդների հետ:

- *Անհատական խորին հարցազրույցներ*

Երիտասարդների հետ է իրականացվել է անհատական խորացված հարցազրույցներ: Նպատակն էր հասկանալ, թե ինչպիսին են տարբեր կարգավիճակ և զբաղվածություն ունեցող երիտասարդների փորձառությունը, հետպատերազմյան իրավիճակի հետ կապված ընկալումները, ապագա պլանները և ձգտումները: Խորին հարցազրույցների միջոցով հնարավոր է եղել ուսումնասիրել 15 երիտասարդների անհատական փորձառությունները, տեսակետները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կրում են հետպատերազմյան իրականության ազդեցությունը: Իրականացվել են 15 անհատական հարցազրույցներ **քաղաքական, քաղաքացիական առաջնորդների, հասարակական կարծիք ձևավորողների, տնտեսական առաջնորդների, մշակութային առաջնորդների, սահմանամերձ բնակավայրերում ապրող, Արցախից տեղահանված և պատերազմին մասնակցած երիտասարդների հետ**:

**Հետազոտության մասնակիցների սոցիալ-ժողովրդագրական տվյալներ:** Հետազոտության գլխավոր համախմբությունը Հայաստանի 13-35 տարեկան երիտասարդ բնակչությունն է, որը ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների[381]՝ կազմում է 929,313 մարդ: Ընտրանքի համախմբությունը *1,000* է: 929,313 գլխավոր համախմբության և 1,000 ընտրանքի դեպքում, վստահության միջակայքի 95%-ի պայմաններում, հաշվարկված սահմանային սխալը կազմում է ±3.1 տոկոս: Սա նշանակում է, որ ստացված արդյունքները կարող են տատանվել իրական արժեքից նշված միջակայքում՝ առանց վիճակագրական նշանակալի շեղումների: Ստորև ներկայացվում են հետազոտությանը մասնակցած երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական մյուս հիմնական բնութագրերը, որոնք կարևոր են հետազոտության արդյունքների մեկնաբանման և սոցիալական համատեքստի ամբողջական ըմբռնման համար:

---

[381] ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի և տարիքի, ըստ մարդահամարի հիմքով հաշվառման, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2024 թ.:

**Գծապատկեր 37. Հետազոտությանը մասնակցած երիտասարդների կրթական մակարդակը**

*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 13-35




Հետազոտության մասնակիցների գերակշիռ մասը՝ 92.7%-ը, նշում է, որ ծնվել և մշտապես բնակվել է Հայաստանում: Միաժամանակ, հարցման տվյալները հնարավորություն են տալիս արձանագրելու նաև շարժունության և հարկադիր տեղաշարժի փորձառություն ունեցող խմբերի առկայությունը. մասնակիցների ընդհանուր առմամբ 4.0%-ը ներկայացնում է Արցախից տեղահանված երիտասարդներին, որոնց մի մասը ՀՀ քաղաքացի է (2.7%), իսկ մյուս մասը՝ ժամանակավոր պաշտպանության կամ փախստականի կարգավիճակ ունեցող անձինք (1.3%): Այս թեև թվաքանակով փոքր խմբերի ընդգրկումը սոցիոլոգիապես կարևոր է, քանի որ թույլ է տալիս հետազոտության շրջանակում արտացոլել պատերազմական և հետպատերազմյան գործընթացների սոցիալական ազդեցությունը տեղահանված երիտասարդների կյանքի վրա: Բացի այդ, ընտրանքում ընդգրկված են նաև արտագաղթի և վերադարձի փորձառություն ունեցող երիտասարդներ. 1.7%-ը ծնվել է արտերկրում և տեղափոխվել Հայաստան ապրելու նպատակով, իսկ 0.7%-ը ծնվել է Հայաստանում, որոշ ժամանակ ապրել արտերկրում և վերադարձել:

**Գծապատկեր 38. Հետազոտությանը մասնակցած երիտասարդների ընտանեկան կարգավիճակը**
*Աղբյուր*. Երիտասարդների շրջանում հարցում, 18-35




Ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ հարցին պատասխանել են 18-35 երիտասարդները (N=764)։ Այս խմբում ամուսնացած է երիտասարդների 36.5%-ը, 56.2%-ը ամուրի է, 3.5%-ը՝ ամուսնալուծված, իսկ 1.0%-ն այրի։ Ըստ սեռի ընտանեկան կարգավիճակը դիտարկելիս առկա են որոշ տարբերություններ. ամուսնացած արական սեռի ներկայացուցիչների մասնաբաժինը (40.9%) ավելի բարձր է, քան իգական սեռի ներկայացուցիչներինը (32.5%)։

Երիտասարդների մեծ մասը բնակվում է միջին և մեծ ընտանիքներում։ Մասնավորապես, հարցվողների 53.4%-ը նշում է, որ իրենց ընտանիքը բաղկացած է 3-4 անդամից, ինչը համարվում է Հայաստանի սոցիալական կառուցվածքին բնորոշ ընտանիքի ամենատարածված մոդելը։ Միաժամանակ, բավական բարձր է նաև 5–6 անդամ ունեցող ընտանիքներում ապրող երիտասարդների մասնաբաժինը (36.4%)։ Փոքր ընտանիքներում՝ 1–2 անդամից կազմված, ապրում է հարցվածների միայն 3.1%-ը, ինչը ցույց է տալիս, որ երիտասարդների շրջանում առանձին ապրելու կամ միայնակ տնտեսություն վարելու պրակտիկան դեռևս սահմանափակ տարածում ունի։

**Հետազոտական գործիքների մշակում և փորձարկում:** Հետազոտության նպատակներին և խնդիրներին համահունչ մշակվել են գործիք-

ները, որոնց փորձարկումն իրականացվել է 20 երիտասարդների մասնակցությամբ: Փորձարկմանը մասնակից երիտասարդների հետ իրականացվել են հարցազրույցներ՝ հասկանալու, թե ինչպես են ընկալում, մեկնաբանում հարցման գործիքներում ներառված հարցերը երիտասարդները՝ տարընթերցումների, բազմապիսի ընկալումների հիմք հանդիսացող հարցերը ավելի հստակեցնելու, գործիքը ավելի հղկելու նպատակով: Տեղեկատվության հավաքագրումը իրականացվել է 2025 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

**Հետազոտության էթիկական չափանիշները:** Հետազոտությունն իրականացվել է երիտասարդների մասնակցությամբ հետազոտությունների էթիկական չափանիշներին համապատասխան՝ պահպանելով հետևյալ էթիկական նորմերը՝ կամավոր տեղեկացված համաձայնություն, 13-17 տարեկան երիտասարդների դեպքում կրկնակի համաձայնություն, գաղտնիության և անձնական տեղեկատվության պահպանում, չվնասելու սկզբունք:

# Հետազոտության տվյալներ

## Սոցիալ-ժողովրդագրական նկարագիր

**Աղյուսակ 5. ՀՀ 13-35 տարեկան երիտասարդների բաշխումն ըստ մարզերի**

| Մարզ | Երիտասարդների թիվն ըստ մարզերի (N) | | | Երիտասարդների բաշխումն ըստ մարզերի (%) | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Քաղաք** | **Գյուղ** | **Ընդամենը** | **Քաղաք** | **Գյուղ** | **Ընդամենը** |
| Արագածոտն | 7,937 | 34,281 | 42,218 | 0.9 | 3.7 | 4.5 |
| Արարատ | 22,865 | 62,688 | 85,553 | 2.5 | 6.7 | 9.2 |
| Արմավիր | 26,557 | 62,895 | 89,452 | 2.9 | 6.8 | 9.6 |
| Գեղարքունիք | 20,397 | 57,814 | 78,211 | 2.2 | 6.2 | 8.4 |
| Լոռի | 38,068 | 28,663 | 66,731 | 4.1 | 3.1 | 7.2 |
| Կոտայք | 42,610 | 39,223 | 81,833 | 4.6 | 4.2 | 8.8 |
| Շիրակ | 42,087 | 33,092 | 75,179 | 4.5 | 3.6 | 8.1 |
| Սյունիք | 26,516 | 15,181 | 41,697 | 2.9 | 1.6 | 4.5 |
| Վայոց Ձոր | 4,689 | 10,610 | 15,299 | 0.5 | 1.1 | 1.6 |
| Տավուշ | 14,840 | 22,718 | 37,558 | 1.6 | 2.4 | 4.0 |
| Երևան | 315,582 | | 315,582 | 34.0 | | 34.0 |
| **Ընդամենը** | **562,148** | **367,165** | **929,313** | **60.5** | **39.5** | **100** |

**Աղյուսակ 6. Հետազոտությանը մասնակցած 13-35 տարեկան երիտասարդների բաշխումն ըստ մարզերի**

| Մարզ | Հետազոտության մասնակիցների թիվ (N) | | | Հետազոտության մասնակիցների բաշխումն ըստ մարզերի (%) | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Քաղաք** | **Գյուղ** | **Ընդամենը** | **Քաղաք** | **Գյուղ** | **Ընդամենը** |
| Արագածոտն | 25 | 21 | 46 | 2.5 | 2.1 | 4.6 |
| Արարատ | 37 | 53 | 90 | 3.7 | 5.3 | 9.0 |
| Արմավիր | 46 | 44 | 90 | 4.6 | 4.4 | 9.0 |
| Գեղարքունիք | 42 | 36 | 78 | 4.2 | 3.6 | 7.8 |
| Լոռի | 51 | 22 | 73 | 5.1 | 2.2 | 7.3 |
| Կոտայք | 49 | 34 | 83 | 4.9 | 3.4 | 8.3 |
| Շիրակ | 42 | 36 | 78 | 4.2 | 3.6 | 7.8 |
| Սյունիք | 19 | 26 | 45 | 1.9 | 2.6 | 4.5 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Վայոց Ձոր | 13 | 10 | 23 | 1.3 | 1.0 | 2.3 |
| Տավուշ | 31 | 23 | 54 | 3.1 | 2.3 | 5.4 |
| Երևան | 340 | | 340 | 34.0 | | 34.0 |
| **Ընդամենը** | **695** | **305** | **1,000** | **69.5** | **30.5** | **100** |

**Աղյուսակ 7. ՀՀ 13-35 տարեկան երիտասարդների սեռատարիքային բաշխումը**

| Տարիք | Երիտասարդների թիվն ըստ մարզերի (N) | | | Երիտասարդների բաշխումն ըստ մարզերի (%) | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | Ընդամենը | Արական | Իգական | Ընդամենը |
| 13-17 | 105,657 | 93,113 | 198,770 | 11.4 | 10.0 | 21.4 |
| 18-22 | 88,035 | 78,368 | 166,403 | 9.5 | 8.4 | 17.9 |
| 23-29 | 125,759 | 127,086 | 252,845 | 13.5 | 13.7 | 27.2 |
| 30-35 | 146,902 | 164,393 | 311,295 | 15.8 | 17.7 | 33.5 |
| **Ընդամենը** | **466,353** | **462,960** | **929,313** | **50.2** | **49.8** | **100** |

**Աղյուսակ 8. Հետազոտությանը մասնակցած 13-35 տարեկան երիտասարդների սեռատարիքային բաշխումն ըստ մարզերի**

| Տարիք | Հետազոտության մասնակիցների թիվ (N) | | | Հետազոտության մասնակիցների բաշխումն ըստ մարզերի (%) | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | Ընդամենը | Արական | Իգական | Ընդամենը |
| 13-17 | 92 | 144 | 236 | 9.2 | 14.4 | 23.6 |
| 18-22 | 68 | 134 | 202 | 6.8 | 13.4 | 20.2 |
| 23-29 | 123 | 135 | 258 | 12.3 | 13.5 | 25.8 |
| 30-35 | 173 | 131 | 304 | 17.3 | 13.1 | 30.4 |
| **Ընդամենը** | **456** | **544** | **1,000** | **45.6** | **54.4** | **100** |

**Կրթություն**

**Աղյուսակ 9. ՀՀ պետական բուհեր ընդունվածների թիվը, 2015 թ.**

*Աղբյուր.* ՀՀ վիճակագրական կոմիտե - Հավելված

| Մասնագիտություն | Ընդունվածների թիվ |
|---|---|
| Հումանիտար գիտություններ | 4,858 |
| Տնտեսագիտություն և կառավարում | 3,439 |
| Ագրոպարենային ոլորտ | 1,628 |
| Մշակույթ և արվեստ | 1,145 |
| Կրթություն և մանկավարժություն | 1,114 |
| Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ | 913 |
| Առողջապահություն | 860 |
| Բնական գիտություններ | 630 |
| Շինարարություն և ճարտարապետություն | 358 |
| Կենսագործունեության անվտանգություն, բնապահպանություն, շրջակա միջավայրի պահպանություն և բնօգտագործում | 274 |
| Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա | 266 |
| Սոցիալական գիտություններ | 227 |
| Սպասարկման ոլորտ | 227 |
| Տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական անվտանգություն | 202 |
| Էլեկտրոնային տեխնիկա, ռադիոտեխնիկա և կապ | 190 |
| Տրանսպորտային համակարգեր | 171 |
| Էներգետիկա, էներգետիկական մեքենաշինություն և էլեկտրատեխնիկա | 161 |
| Մետալուրգիա, մեքենաշինություն և նյութերի մշակում | 67 |
| Երկրաբանություն, օգտակար հանածոների հետախուզում և մշակում | 34 |
| Ավտոմատացում և կառավարում | 26 |
| Սարքաշինություն և կենսաբժշկական տեխնիկա | 24 |
| Քիմիական տեխնոլոգիաներ և կենսատեխնոլոգիա | 18 |
| Պարենային մթերքների և ապրանքների տեխնոլոգիա | 13 |
| Պոլիգրաֆիա | 5 |

**Աղյուսակ 10. ՀՀ պետական բուհեր ընդունվածների թիվը, 2025 թ.**

*Աղբյուր.* ՀՀ վիճակագրական կոմիտե

| Մասնագիտություն | Ընդունվածների թիվ |
|---|---|
| Գործարարություն և վարչարարություն | 3,539 |
| Սոցիալական և վարքաբանական գիտություններ | 1,955 |
| Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ | 1,850 |
| Կրթություն | 1,730 |
| Արվեստ | 1,683 |
| Բանասիրական գիտություններ | 1,536 |
| Առողջապահություն | 1,288 |
| Իրավունք | 1,025 |
| Անհատական ծառայություններ | 847 |
| Ճարտարագիտություն | 604 |
| Հումանիտար գիտություններ | 358 |
| Ճարտարապետություն և շինարարություն | 326 |
| Մաթեմատիկա և վիճակագրություն | 317 |
| Ֆիզիկական գիտություններ | 200 |
| Արդյունաբերություն և տեխնոլոգիա | 173 |
| Անվտանգության ծառայություններ | 165 |
| Լրագրություն և տեղեկատվական գիտություններ | 115 |
| Շրջակա միջավայր | 111 |
| Գյուղատնտեսական գիտություններ | 96 |
| Կենսաբանական գիտություններ | 85 |
| Անասնաբուժություն | 61 |
| Սոցիալական աշխատանք | 55 |
| Քիմիա | 40 |
| Գիտություններ երկրի մասին | 38 |
| Անտառային տնտեսություն | 28 |

**Աղյուսակ 11. Հանրակրթական դպրոցների մարզային բաշխումը**

*Աղբյուր.* Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն emis.am հարթակ-հավելված

| Մարզ | Տոկոսային բաշխում |
|---|---|
| Երևան | 18% |
| Շիրակ | 12% |

| | |
|---|---|
| Լոռի | 12% |
| Արագածոտն | 8% |
| Տավուշ | 6 |
| Գեղարքունիք | 9 |
| Արարատ | 8 |
| Արմավիր | 8 |
| Կոտայք | 7 |
| Սյունիք | 8 |
| Վայոց Ձոր | 3 |

**Զբաղվածություն**

**Աղյուսակ 12. Երիտասարդների զբաղվածության ցուցանիշներն ըստ երկրների (2024-2025)**

| | Գործազրկություն (15-24, %) | Զբաղվածություն (15-29, %) | NEET (15-29, %) |
|---|---|---|---|
| Գերմանիա | 5.8 | 60 | 8 |
| Նիդերլանդներ | 8.0 | 70 | 7 |
| Ավստրիա | 9.0 | 58 | 9 |
| Դանիա | 10.5 | 62 | 9 |
| Շվեդիա | 23.0 | 55 | 8 |
| Ֆրանսիա | 17.0 | 50 | 12 |
| Բելգիա | 15.5 | 48 | 11 |
| Իռլանդիա | 12.0 | 57 | 10 |
| Իսպանիա | 27.0 | 43 | 13 |
| Իտալիա | 22.0 | 45 | 19 |
| Հունաստան | 28.5 | 40 | 15 |
| Պորտուգալիա | 20.0 | 50 | 11 |
| Լեհաստան | 10.0 | 54 | 10 |
| Չեխիա | 8.5 | 58 | 9 |
| Հունգարիա | 11.0 | 55 | 11 |
| Ռումինիա | 22.0 | 46 | 19 |
| Բուլղարիա | 14.0 | 48 | 17 |
| Վրաստան | 22–25 | 45 | 25 |
| Հայաստան | 28.2 | 37 | 23, 3 |

**Աղյուսակ 13. Երիտասարդերի գործազրկությունը 2019-2025 (%)**

| | 2019 | 2020 | 2025 |
|---|---|---|---|
| **Ընդամենը** | **18.3** | **18.2** | **17.5** |
| 15-24 | **32.6** | **32.3** | **30.5** |
| Տղամարդիկ | 31.2 | 31.6 | 23.4 |
| Կանայք | 34.4 | 33.3 | 32.4 |
| 25-34 | **18.8** | **21.1** | **17.8** |
| Տղամարդիկ | 16.9 | 20.3 | 16.4 |
| Կանայք | 22.0 | 22.4 | 19.9 |

**Երիտասարդների անկախության համաթիվ**

**Աղյուսակ 14. Երիտասարդների ֆինանսական անկախության ցուցանիշը ըստ սեռի, տարիքի և բնակության վայրի**

| | Արական | | | Իգական | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **18-22** | **23-29** | **30-35** | **18-22** | **23-29** | **30-35** |
| **Երևան** | 0.34 | 0.47 | 0.60 | 0.27 | 0.42 | 0.44 |
| **Այլ քաղաք** | 0.30 | 0.50 | 0.61 | 0.22 | 0.43 | 0.36 |
| **Գյուղ** | 0.25 | 0.51 | 0.62 | 0.25 | 0.28 | 0.34 |

**Աղյուսակ 15. Երիտասարդների ֆինանսական անկախության սուբյեկտիվ գնահատականը ըստ սեռի, տարիքի և բնակության վայրի**

| | Արական | | | Իգական | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **18-22** | **23-29** | **30-35** | **18-22** | **23-29** | **30-35** |
| **Երևան** | 0.58 | 0.60 | 0.58 | 0.54 | 0.48 | 0.52 |
| **Այլ քաղաք** | 0.45 | 0.59 | 0.53 | 0.55 | 0.53 | 0.53 |
| **Գյուղ** | 0.55 | 0.62 | 0.51 | 0.59 | 0.59 | 0.67 |

**Աղյուսակ 16. Երիտասարդների տնտեսական անկախության ցուցանիշը ըստ սեռի, տարիքի և բնակության վայրի**

| | Արական | | | Իգական | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **18-22** | **23-29** | **30-35** | **18-22** | **23-29** | **30-35** |
| **Երևան** | 0.36 | 0.81 | 0.86 | 0.31 | 0.81 | 0.81 |
| **Այլ քաղաք** | 0.44 | 0.78 | 0.77 | 0.25 | 0.63 | 0.63 |
| **Գյուղ** | 0.35 | 0.69 | 0.73 | 0.28 | 0.61 | 0.49 |

**Աղյուսակ 17. Երիտասարդների մտավոր անկախության ցուցանիշը ըստ սեռի, տարիքի և բնակության վայրի**

| | Արական | | | Իգական | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **18-22** | **23-29** | **30-35** | **18-22** | **23-29** | **30-35** |
| **Երևան** | 0.64 | 0.64 | 0.59 | 0.63 | 0.64 | 0.68 |
| **Այլ քաղաք** | 0.60 | 0.61 | 0.62 | 0.69 | 0.61 | 0.61 |
| **Գյուղ** | 0.67 | 0.63 | 0.63 | 0.67 | 0.59 | 0.60 |

**Աղյուսակ 18. Երիտասարդների առօրյա անկախության ցուցանիշը ըստ սեռի, տարիքի և բնակության վայրի**

| | Արական | | | Իգական | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **18-22** | **23-29** | **30-35** | **18-22** | **23-29** | **30-35** |
| **Երևան** | 0.55 | 0.73 | 0.76 | 0.54 | 0.74 | 0.75 |
| **Այլ քաղաք** | 0.62 | 0.68 | 0.80 | 0.52 | 0.64 | 0.59 |
| **Գյուղ** | 0.55 | 0.65 | 0.80 | 0.52 | 0.56 | 0.57 |

**Աղյուսակ 19. Երիտասարդների քաղաքացիական մասնակցության և ակտիվության ցուցանիշը ըստ սեռի, տարիքի և բնակության վայրի**

| | Արական | | | Իգական | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **18-22** | **23-29** | **30-35** | **18-22** | **23-29** | **30-35** |
| **Երևան** | 0.26 | 0.24 | 0.19 | 0.30 | 0.27 | 0.28 |
| **Այլ քաղաք** | 0.35 | 0.23 | 0.25 | 0.34 | 0.27 | 0.29 |
| **Գյուղ** | 0.26 | 0.21 | 0.29 | 0.37 | 0.28 | 0.23 |

**Աղյուսակ 20. Միջկլաստերային և ներկլաստերային վարիացիաները**

| | Cluster | | Error | | F | Sig. |
|---|---|---|---|---|---|---|
| | Mean Square | df | Mean Square | df | | |
| Ֆինանսական անկախություն | 18.226 | 4 | 3.049 | 15 | 5.978 | .000 |
| Առօրյա անկախություն | 32.862 | 4 | 3.000 | 15 | 10.954 | .000 |
| Մտավոր անկախություն | 1.489 | 4 | .120 | 15 | 12.408 | .000 |
| Տնտեսական անկախություն | 14.509 | 4 | 2.095 | 15 | 6.926 | .000 |
| Քաղաքացիական ակտիվություն | 4.148 | 4 | 1.157 | 15 | 3.585 | .000 |

***Ինդեքսներ***


*Ազատ ժամանակ, էջեր 114, 123, 135-138, 140, 142-144, 245*

*Ամուսնություն, էջեր 29, 55, 56, 60, 87, 92, 125, 126, 129, 131, 140, 186, 190, 203, 208, 243, 267*

*Անկախություն, էջեր 11-15, 25, 28, 34-36, 105, 116, 124, 125, 131, 147, 163, 164, 186- 196, 198-218, 226, 238, 240, 242, 243, 274, 275; անկախ, անկախ լինել, անկախ ապրել, էջեր 16, 25, 27, 29, 41, 58, 60, 123, 125, 126, 130, 133, 152, 153, 190, 191, 204, 206, 211, 220; Երիտասարդների անկախության համաթիվ, էջեր 189, 201, 202, 274; անկախության համաթիվ, էջեր 14, 36, 189, 191, 193, 194, 199-202, 215-217, 274; Ֆինանսական անկախություն, էջեր 34, 36, 105, 125, 189, 191, 192, 194, 195, 200, 202, 203, 205, 209, 212, 215, 216, 274; Տնտեսական անկախություն, էջեր 186, 192, 195, 196, 200, 203, 209, 211, 216, 217, 274, 275; Մտավոր անկախություն, էջեր 189, 196, 198, 199-201, 204, 208, 211, 215, 216, 275; Առօրյա անկախություն, էջեր 193, 199, 200, 202, 204-206, 211, 212, 215-217, 275; Սոցիալ-տնտեսական անկախություն, էջ 186; Քաղաքացիական անկախություն, էջ 13*

*Անորոշություն, էջեր 11-14, 24, 38, 39, 49, 51, 59, 61, 66, 67, 69, 76, 87, 91, 97, 108, 111, 113, 114, 116, 121, 122, 130, 131, 134, 147-151, 169, 170, 172-174, 176, 178, 183-186, 211, 217, 220, 222, 224-228, 231, 232, 234-239, 241, 244, 245*

*Անցումներ, էջեր 11-13, 29, 30, 36, 38, 39, 61, 124, 125, 131, 135, 145, 147, 148, 170, 224, 226, 238, 240, 241, 242*

*Աշխատաշուկա, էջեր 26, 38, 60, 65, 66, 74, 75, 80-86, 91, 95-97, 116, 150, 152, 157, 186, 190, 195, 239, 242, 243, 263*

*Ապագայի նախագիծ, էջեր 219, 223, 225, 226, 227*

*Ապագա նպատակներ, էջ 221*

*Ապագայի տեսլական, էջեր 12-14, 174, 224*

*Առողջություն, էջեր 12, 24, 39, 49, 114-117, 119, 120, 124, 132, 134-136, 151, 152, 158, 163, 180, 209, 244; հոգեկան առողջություն, էջեր 115-120, 124, 132, 134-136, 151, 152, 158, 163, 180, 244*

*Ապելության խութ, էջեր 108, 112, 239, 245*

*Արհեստական բանականություն, էջ 141*

*Արվեստ, էջեր 67, 181, 183, 271, 272*

Բազմաճգնաժամ, էջեր 39, 49, 147-150, 186, 212, 215, 218
Բարեգործություն, էջեր 104, 106, 112, 201
Բարեկեցություն, էջեր 23, 78, 116, 121–124, 132, 133, 135, 209, 233, 240, 244, 245
Բնակարանային պայմաններ, էջեր 126, 130, 159, 239
Բուհ, էջեր 14, 67, 70, 73–75, 79, 91, 164, 170, 204–205, 228, 244, 246, 271, 272
Գենդերային խզում, էջեր 14, 67, 70, 73–75, 79, 91, 164, 170, 204–205, 228, 244, 246, 271–272
Գրագիտություն, էջեր 65
Գործազրկություն, էջեր 81–87, 95, 96, 157, 195, 196, 224, 264, 273, 274
Դիմադրողականություն, էջեր 48, 59, 62, 72, 78, 80, 92, 116, 135, 137, 145, 181, 211, 240, 244
Երիտասարդական քաղաքականություն, էջեր 47, 53, 242, 262
Երիտասարդի սահմանում, էջեր 16-36
Երիտասարդների հիմնախնդիրներ, էջեր 47, 186, 264
Երիտասարդություն, էջեր 11–14, 16, 17, 20–22, 24–30, 34, 35, 37–39, 42, 45–48, 50–52, 56, 57, 59–66, 81, 82, 98, 101, 106, 113–118, 125, 147, 150–153, 157, 161, 162, 164, 166–168, 170, 176, 186–191, 193, 210, 212, 214, 218, 223, 224, 227, 229, 232, 238–242, 250, 262, 263
Զբաղվածություն, էջեր 11, 13, 21, 34, 35, 36, 47, 65, 81, 82, 83, 84, 85, 87, 88, 89, 92, 94, 95, 96, 123, 124, 125, 136, 137, 155, 157, 165, 180, 181, 192, 195, 202, 204, 243, 264, 265, 273; ինքնազբաղվածություն, էջեր 84, 88, 96
Էթիկական չափանիշներ, նորմեր, սկզբունքներ, էջեր 42, 43, 44, 175, 268
Ընթերցանություն, էջ 123
Ընկերներ, էջեր 62, 109, 125, 129, 130, 138, 139, 145, 164, 180, 182
Ընտանիք, էջեր 27, 34, 36, 45, 47, 61, 62, 69–70, 109–110, 122, 124–127, 129–131, 133–135, 145, 163, 166, 171, 176, 184, 190, 194–195, 208–209, 228, 230, 233, 234, 238, 239, 243, 245, 267
Թվային բնիկ, թվային միգրանտ, էջ 32
Թվային մասնակցություն, էջ 98
Թվային միջավայր, էջեր 104, 109, 114, 141, 145, 240
Թվային հմտություն, էջ 78
Թուլություն, էջեր 84, 120, 121
Ժամանց, էջեր 24, 114, 135–139, 141–145 164, 232, 233, 240, 245, 246
Ինքնաընկալում, էջեր 50, 56, 62, 238
Ինքնակրթություն, էջեր 77, 79
Ինքնասպանություն, էջեր 124, 221

*Ինքնություն, էջեր 21, 28, 30, 50–65*
*Ինքնուրույնություն, էջեր 14, 19, 36, 61, 69, 73, 130, 184, 192, 199, 210, 212, 216, 226, 239*
*Լավապետություն, էջեր 78, 222, 224, 225, 234, 236*
*Լռություն, էջեր 98, 111, 112, 166, 177, 178, 179, 180*
*Խունացք, էջեր 78, 111, 163*
*Ծնելիություն, էջեր 56, 158*
*Կենսակերպ, էջեր 64, 99, 113-117, 129, 134, 135, 145, 146, 230*
*Կամավորական աշխատանքներ, էջեր 104-106, 112, 201, 207, 209, 268*
*Կրթական անհավասարություն, էջ 71*
*Կրթական համակարգ, էջեր 38, 64, 65, 70, 74, 75, 80, 108, 239, 246, 249*
*Կրթության որակ, էջեր 117, 228*
*Համավարակ, էջեր 12, 49, 65, 81, 87, 116, 147-152, 154, 157, 163, 165, 172, 174, 177, 179*
*Հանրակրթական դպրոց, էջեր 61, 72, 80, 88, 272*
*Հարցազրույց, էջեր 265*
*Հեռուստապետություն էջեր 109, 110*
*Հետպատերազմյան հասարակություն էջեր 11, 155-160, 162, 163, 168, 178, 218, 241*
*Հմտություն, էջեր, 65, 66, 72-76, 78, 79, 91, 137, 142, 143, 192, 215, 237, 240, 243, 246; փափուկ հմտություն, էջեր 64, 74, 86; մասնագիտական հմտություն, էջ 75*
*Հոգնածություն, էջեր 80, 120, 121, 176*
*Հույս, հույսի հայեցակարգ, էջեր 183, 219-223, 225, 226, 228, 231-236, 241, 246*
*Ճգնաժամ, էջեր 11, 12, 14, 32, 33, 36, 39, 51, 69, 75, 92, 114, 147-150, 168, 170, 174, 178, 205, 206, 208, 210, 220, 224-226, 231, 232, 237, 238, 240, 241, 245*
*Մասնագիտության ընտրություն, էջեր 69, 75, 239*
*Մասնագիտական ինքնություն, էջեր 64, 75, 76, 81, 91, 239, 246*
*Մասնագիտական կողմնորոշում, էջեր 65, 68, 76, 80*
*Մասնագիտական կրթություն, էջեր 96*
*Մասնակցություն, էջեր 102, 169, 181, 216, 246; Քաղաքական մասնակցություն, էջեր 98-101, 239, 244; Քաղաքացիական մաս-նակցություն, էջեր 39, 45, 98, 101, 103-107, 109, 111, 152, 176, 193, 200, 239, 244*
*Մասնակցային հետազոտություն, էջ 42*
*Միգրացիա, էջ 230*
*Նվիրատվություն, էջեր 105, 106*
*Շարժումներ, էջեր 17, 21, 101, 104-106, 161*
*Ոչ ֆորմալ կրթություն, էջեր 76, 77, 246*
*Ուրախություն, էջ 120*

*Չովորող, չաշխապող երիփասարդ, էջ 70, 85*
*Պատերազմ, էջեր 12, 48, 62, 106, 120, 122, 147, 153, 154, 156, 158-160, 163, 164, 166-171, 179, 181-184, 224*
*Ռիսկ, ռիսկային, էջեր 21, 25, 38, 107, 108, 116, 123, 149*
*Ռիսկի հասարակություն, էջեր 21, 38*
*Սերունդ, էջեր 30-34, 81, 123, 150, 167, 184*
*Սերնդային միավոր, էջ 31*
*Սոցիալական մեդիա, էջեր 39, 104, 111, 139, 140, 244*
*Վախ, էջեր 177, 179, 180, 229-232*
*Վստահություն, էջ 239*
*Վտահություն, էջեր 111, 159, 174, 178, 185, 229, 235, 240, 246*
*Տագնապ, էջեր 122, 234*
*Տեղեկատվական աղբյուրներ, էջ 109 Տեղահանություն, էջեր 12, 15, 120, 122, 224, 238*
*Տրավմա, էջեր 49, 62, 78, 171, 172*
*Ցույցեր, էջեր 98, 107, 152*
*Ուսումնարան, քոլեջ, էջեր 72-74*
*Քննադատական մտածողություն, էջեր 23, 74, 160, 246*
*Ֆորմալ կրթություն, էջեր 60, 72, 73, 76, 80, 190*

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԻՆԱ ԿԱՐԵՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՅՍԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագիր՝ Ա. Հովակիմյան

*Հեղինակը հասփապում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրապարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փասփերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:*

Հրատարակվել է՝ 16.06.2026:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 17,5:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am



Մարինա Գալստյանը սոցիոլոգ է, կրթության սոցիոլոգիայի և երիտասարդության հիմնահարցերի հետազոտող: Ավարտել է Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետը, իսկ 2024 թ. պաշտպանել է «ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան Հայաստանում» թեմայով ատենախոսություն՝ ստանալով սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2012 թ. հիմնադրել և մինչ այժմ ղեկավարում է «Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը»: Զբաղվում է գիտահետազոտական և դասախոսական գործունեությամբ: Բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ է: Համահեղինակ է երիտասարդների և կրթության վերաբերյալ երեք գրքերի: 2018-2021 թթ. եղել է Եվրոպական երիտասարդական հետազոտողների ցանցի անդամ (Pool of European Youth Researchers):

«Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը» Հայաստանում գործող հետազոտական կազմակերպություն է, որը սկսել է իր գործունեությունը 2012 թվականին և մասնագիտացած է կրթական հետազոտությունների, երիտասարդական ուսումնասիրությունների ոլորտում:

www.e-research.am

2026

publishing.ysu.am